

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**  
**Ա**



ՀՐԱՄԱՆԱԻ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԳԻ**

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**F. - R. de CHATEAUBRIAND**

# **Le Génie du Christianism**

(Extraits)

Traduit du français  
préfacé et et annoté par  
Parkev Chahbazian

EDITIONS DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE  
ST. ETCHMIADZIN - 2008

ՇԱՏՈՔՐԻԱՆ

## ՔՐԻԱՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՃԱՐԸ

(ընտիր հատվածներ)

*Ֆրանսերենից թարգմանեց և ծանոթագրեց  
Պարգև Շահբաղյանը*

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ա. ԷԶՄԻԱԾԻՆ – 2008

ՀՏԴ ....  
ԳՄԴ ....  
Շ – ....

#### ՇԱՏՈՔՐԻԱՆ

Շ – ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՃԱՐԸ: Ֆրանսերենից թարգմանեց և ծանոթագրեց Պարզև Շահբազյանը: - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008. - 224 էջ:

ԳՄԴ .....

#### **Տպագրվում է մեկեմասությամբ**

ISBN

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008 թ.

## **ՇԱՏՈՐԻԱՆԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Ֆրանսուա-Ռընե դը Շատորիանը ծնվել է 1768 թ. սեպտեմբերի 4-ին Սեն-Մալոյում (Ֆրանսիա), որը նավահանգստային մի քաղաք է Ատլանտյան օվկիանոսի ափին: Նա տասներորդ զավակն էր գյուղական ծագում ունեցող բրետանացի ազնվական մի հին ընտանիքի: Մայրը պարզամիտ, հիվանդ մի կին էր, հայրը՝ խստաբարո և լռակյաց մարդ, որ մի օր նավ բարձրանալով՝ մեկնել էր Ամերիկա և կարճ ժամանակում կարողացել էր հարստանալ: Շատորիանը, ինչպես սիրում էր ասել, աշխարհ էր եկել պարսպապատ մի տան մեջ, ծովի դիմաց, որի «ալիքների շառաչը խեղդել էր իր մանկության առաջին ճիչերը, իսկ ծովային փոթորկի աղմուկը օրորել իր խաղաղ նինջը»: Նա երբեք չսիրեց իր ծնողներին: Նրա մանկության միակ ընկերը, որի վրա տարածվում էր իր ամբողջ գորովանքը, Լյուսիլա անունով իր քույրն էր՝ թուլակազմ, ջղային, անհանգիստ մի աղջիկ, որ երիտասարդ հասակում մահանում է մտային հավասարակշռությունը կորցրած, գրեթե ցնորված: Ահա այս քրոջ հետ է, որ նա անցկացնում է իր պատանեկության առաջին տարիները «Սեն-Մալոյի սալահատակների վրա», ծովի ափերին թափառելով ամբողջ օրը, կռվելով հասակակիցների հետ և վերադառնալով տուն՝ զզգված հագուստներով և երբեմն էլ՝ պատռված ականջով:

Այնուհետև սկսվում են նրա դպրոցական տարիները. պարբերական ընդհատումներով անկանոն ուսումնառություն Բրետանի շրջանի տարբեր քոլեջներում, ապա արձակուրդային դատարկ, ձանձրալի օրեր Կոմբուրգի հայրական տխուր դղյակում, որը «անգղերի բույն էր դարձել», և որտեղ

պատանհի Ֆրանսուան ամեն երեկո երկար ժամեր էր անցկացնում հազիվ լուսավորված ընդարձակ, ամայի մի սրահում երկու անխոս ծրուհիների և սոսկումից անդամալուծված մի քրոջ հետ: Իսկ գիշերները նա գնում էր քնելու առանձնացած մի փոքրիկ աշտարակում, մեն-մենակ, գիշերային սարսափներին դեմ հանդիման:

Այսպես է կազմավորվում Շատոբրիանի մտավոր և հոգեկան աշխարհը մելամաղձոտ երազանքի և անպտուղ առանձնության մեջ: Նա արդեն քսան տարեկան էր և գրեթե ոչինչ չգիտեր: Երկչոտ էր, բայց առույգ, հուսալքված իր կյանքի դատարկությունից: Սկզբում նա փորձում է դառնալ նավաստի, բայց այդ փորձը ձախողվում է: Հետո հայտնում է, որ ուզում է հոգևորական լինել: Հարկավոր էր, ի վերջո, ընտրել գործունեության որոշակի ասպարեզ: Հայրը նրա համար ձեռք է բերում ենթասպայի մի պաշտոն նավարայի զորագնդում: Ջորանոցային միօրինակ կյանքը, սակայն, շուտով ձանձրացնում է նրան, և նա մեկնում է Փարիզ: Քաղաքակրթության այս ոստանում նա նույնպիսի եռանդով անձնատուր է լինում մայրաքաղաքային աշխույժ կյանքի հոսանքին, ինչպիսի եռանդով մի ժամանակ անձնատուր էր եղել միստիկ առանձնությանը: Հաճախում է օպերա, թատրոններ, թանգարաններ, գրադարաններ, մուտք է գործում արքունիք, շփվում ազնվական դասի մարդկանց հետ, մասնակցում պարահանդեսների, արքայական որսորդությունների և այլն: Նրան հրապուրում է մասնավորապես փարիզյան գրական միջավայրը, ծանոթություններ է հաստատում հայտնի գրողների, արվեստագետների և մտավորականների հետ: Հրատարակվում են նրա գրական նախափորձերը «Մուսաների ալմանախ»-ում: Այդ տարիներին, մանավանդ, նա իրեն նվիրում է ընթերցանությանը. անհագ հետաքրքրությամբ կարդում է հնադարի հույն և հռոմեացի հայտնի բոլոր գրողների, փիլիսոփաների, պատմիչների երկերը, ուսումնասիրում Վե-

րածննդի դարաշրջանի նշանավոր դեմքերի, 17-րդ, 18-րդ դարերի ֆրանսիական գրականության դասական մեծ գրողների՝ հատկապես Ռասինի, Կոռնեյի, Բոսյուեի, Ֆենելոնի, Մոնտեսկյոյի, Ռուսոյի, Վոլտերի, Բեռնարդեն դը Սեն-Պիեռի և այլոց ստեղծագործությունները: Եթե քսան տարեկանին նա համարյա տգետ էր, ապա 25 տարեկանին, իր ընթերցումների շնորհիվ, ձեռք էր բերել մտավոր մեծ պաշար, դեռևս չձևավորված, բայց արտակարգ հմտություն:

Շատորբիանի՝ Փարիզում անցկացրած 45 տարիները, սակայն, զուգադիպում են Ֆրանսիական մեծ հեղափոխության իրադարձություններին. տապալվում էին միապետական կարգերը, գլխատվում կամ բանտարկվում էին ազնվականները, գրականությունն ապրում էր ծանր օրեր: Այդ շրջանում Շատորբիանն անձնապես չէր ասում հեղափոխությունը, բայց, լինելով ազնվական գերդաստանի շառավիղ և համարվելով հետադիմական հայացքների տեր անձ՝ նա մշտապես ենթակա էր հալածանքի և իրեն զգում էր ֆիզիկապես անապահով: Խոհեմություն էր առժամապես հեռանալ հայրենիքից:

1791 թվականն էր. անորոշ մի ժամանակաշրջան, անհեռանկար կյանք: Շատորբիան հայրը մահացել էր: Ահա այս թվականին էր, որ մտածում է իրականացնել իր հին երազներից մեկը՝ կատարել մի ճանապարհորդություն դեպի Ամերիկա այն պատճառաբանությամբ, թե ուզում է գտնել Զյուսիսից դեպի Զնդկաստան անցման ճանապարհ: Նա մեկնում է առանց նախնական ուսումնասիրությունների, առանց անհրաժեշտ տեղեկությունների և նախապատրաստությունների, որպես պարզ զբոսաշրջիկ: Տեսնում է Նիագարան, Միացյալ Նահանգները, ողջունում է Վաշինգտոնին, կտրում-անցնում է Լաբրադորը լինում Լուիզիանայում, Ֆլորիդայում և այլն: Այս ճանապարհորդության պատմությունը, զմայլելի նկարագրություններով ճոխացած, շարադրված է նրա «Ճանապարհորդություն Ամերիկայում» գրքում:

Լուդովիկոս 16-րդի սպանության լուրը փոխում է Շատոբրիանի կյանքի ուղղությունը: 1792 թ. նա Ամերիկայից վերադառնում է Եվրոպա, զինվորագրվում արտագաղթած ֆրանսիացիների բանակում, մասնակցում քաղաքացիական կռիվներին և ծանրորեն վիրավորվում Թիոնվիլի պաշարման ժամանակ: Գրեթե հրաշքով փրկվելով մահվանից՝ նա հիվանդ վիճակում, առանց նյութական միջոցների, քարշ է գալիս մինչև Բրյուսել, ապա Ջերսե կղզի և այնտեղից մի կերպ հաջողվում է իրեն զցել Անգլիա: Այնտեղ նա մատնվում է ծայրահեղ թշվառության. ցուրտը, քաղցը, հուսահատությունը նրան հասցնում են մինչև մուրացկանության: Իր ընտանիքի կողմից ուղարկված չնչին գումարը, գրավաճառների համար իր կատարած թարգմանությունները, մասնավոր անձանց իր տված ֆրանսերենի դասերը նրան փրկում են ստույգ սովամահությունից: Օժտված լինելով աշխատանքի անհավատալի կարողությամբ, աշխատելով օրական տասներկու ժամ անընդհատ՝ Լոնդոնում նա գրում և հրատարակում է իր «Էսսե հին և արդի հեղափոխությունների մասին» պատմական և քաղաքական երկը, որով փորձում է հին պատմության հետ մշտական զուգահեռներով հասկանալ և բացատրել ներկա իրադարձությունները:

Իր մոր և քույրերից մեկի մահվան լուրը, լոնդոնյան գաղթականական միջավայրում կրկնվող դժբախտությունների ծանր հարվածները և ամենայն հավանականությամբ նաև իր գաղափարների զարգացումն ու բարեշրջությունը Շատոբրիանի մեջ արթնացնում են միստիկ տրամադրություններ և նրան կողմնորոշում դեպի կրոնը: Լոնդոնում սկսում է պատրաստել քրիստոնեական կրոնի ջատագովությանը նվիրված ընդարձակ մի աշխատության առաջին ուրվագիծը, որով նպատակ ուներ պայքարելու հակակրոնության դեմ:

1800 թ. նրան թույլատրվում է վերադառնալ հայրենիք: Հեղափոխության ալիքը հանդարտվել էր, կրքերը մեղմացել



էին: Ֆրանսիայում Շատոբրիանը լծվում է գրական եռանդուն գործունեության: «Մերկյուր դը Ֆրանս» պարբերականում լույս է ընծայում ուշագրավ մի ուսումնասիրություն Ֆրանսիացի հայտնի գրագիտուհի Տիկին դը Ստալի մասին: Շուտով նրա շուրջը հավաքվում է նվիրված բարեկամների՝ գրողների, արվեստագետների և մտածողների մի փոքրիկ խումբ, որոնք զնահատում են նրա տաղանդը և քաջալերում նրան: Շտապելով արագ համբավի տիրանալ՝ նա Լոնդոնից իր հետ բերած «Քրիստոնեության հանճարը» մեծահատոր աշխատությունից անջատում է «Ատալայի» դրվագը, որը մի վիպակ էր կազմում, և 1801 թ. այն հրատարակում որպես առանձին գիրք: Այնուհետև լույս է ընծայում իր երկրորդ վիպակը «Ռընե» վերնագրով, ուր խտացած գույներով ներկայացված է «դարի ցավը», որ զգում է մի ամբողջ սերունդ: Հաջողությունը աննախընթաց է լինում: Այս երկու գործերով Շատոբրիանի համբավը միանգամից տարածվում է ամբողջ Ֆրանսիայում: Քաջալերված այս հաջողությունից՝ հաջորդ տարի հրատարակում է «Քրիստոնեության հանճարը» կոթողային աշխատությունը: Ոչ մի գիրք, ինչպես հեղինակը ինքն է ասում, ճիշտ իր ժամանակին հրապարակ չէր եկել: Ֆրանսիական հեղափոխությունը վարչաքաղաքական հին կարգերի տապալման հետ վերացրել, սրբել էր նաև հին հավատալիքներն ու հին բարքերը: Քարուքանդ էին արվել ու կողպատվել բազմաթիվ տաճարներ ու աղոթքի տներ, սրբապղծվել էին գերեզմաններ, եկեղեցական կոթողներ, ոտքի կոխան արվել հոգևոր անզնահատելի արժեքներ, համատարած քարոզվում և քաջալերվում էր անաստվածությունը: Սակայն այս բոլորի դիմաց ժողովրդի մտածողության մեջ առկա էր կրոնական հակազդեցությունը, և օրվա իշխանության դիրքն էլ նպաստավոր էր: Ահա թե ինչու Շատոբրիանի հիշյալ գործն արժանանում է ջերմ ընդունելության. այն թե՛ իր լեզ-

վով և թե՛ մանավանդ իր բովանդակությամբ ուղղություն էր տալիս ժամանակակից մտածողությանը:

«Քրիստոնեության հանճարը» գիրքը գրավում է նաև Նապոլեոնի ուշադրությունը. նա մեծապես գնահատում է այն, բարեկամանում նրա հեղինակի հետ և նրան դարձնում իր գործակիցներից մեկը, որպեսզի օգնի իրեն վերակառուցելու ֆիզիկապես և բարոյապես քայքայված Ֆրանսիան: Շատերի հանին ուղարկում է Հռոմ որպես դեսպանատան առաջին քարտուղար: Այդ օրվանից Շատրբրիանը մուտք է գործում քաղաքական ասպարեզ: Հռոմում գրողը մնում է երկու տարի: Այս Կալեուն նշանակվում է Ֆրանսիայի նախարար: 1804 թ. վերադառնում է Փարիզ և այն պահին, երբ պատրաստվում էր մեկնել Շվեցարիա որպես հավատարմատար, Փարիզում լսում է Անգենի դքսի սպանության լուրը: Խորապես հուզված՝ անմիջապես գալիս է տուն և կայսրին ուղարկում իր հրաժարականը: Եվ նա դարձյալ նվիրվում է գրականությանը՝ որդեգրելով, մասնավորապես «Մերկյուր դը Ֆրանսում», որի գլխավոր աշխատակիցներից մեկն էր դարձրել, քննադատական ուժեղ դիրք է գրավում Նապոլեոնի հանդեպ:

Ստադրված լինելով գրել արձակ մի մեծ դյուցազներգություն Արևելքի մարտիրոսների մասին՝ Շատրբրիանը 1806 թ. կատարում է երկար մի ճանապարհորդություն դեպի Արևելք. այցելում է Հունաստան, Թուրքիա, Երուսաղեմ, Իսպանիա: Այս ճանապարհորդության պատմությունն ամփոփված է «Մարտիրոսներ» և «Ուղեգրություն Փարիզից դեպի Երուսաղեմ» գրքերում, որոնցից առաջինը լույս է տեսնում 1809 թ., իսկ երկրորդը՝ 1811 թ.: Այս նույն թվականին նա ընտրվում է ֆրանսիական ակադեմիայի անդամ, բայց նրան չի թույլատրվում արտասանել իր ընտրության առթիվ պատրաստած պաշտոնական ճառը, քանի որ այն պարունակում էր խիստ ակնարկություններ բռնակալ կայսեր դեմ:

1814 թ. Շատոբրիանը ողջունում է Բուրբոնների վերադարձը Ֆրանսիա: Նա այդ վերադարձի նախապատրաստմանը մեծապես նպաստել էր իր «Բոնապարտի և Բուրբոնների մասին» հայտնի պարսավագրով: Էլբա կղզու աքսորավայրից Նապոլեոնի փախուստից հետո, Ֆրանսիայում նրա իշխանության վերջին հարյուր օրերին, Շատոբրիանը, խուսափելու համար կայսրի հավանական հալածանքից, դարձյալ ապրում է հայրենիքից դուրս՝ Բելգիայում, ապա 1815 թ. գարնանը Լուդովիկոս 18-րդի հետ վերադառնում Ֆրանսիա որպես նոր վարչակարգի կողմնակից: Այդ թվականից նա հեռանում է գրական-ստեղծագործական կյանքից և ամբողջապես ընդգրկվում քաղաքական կյանքի ոլորտը: Լինում է Ֆրանսիայի դեսպան Բեռլինում, Լոնդոնում, ապա 1823 թ. արտաքին գործերի նախարար և 1828 թ. դարձյալ դեսպան Դոմոնում: Նա հրատարակում է քաղաքական բովանդակությամբ բազմաթիվ հոդվածներ զանազան թերթերում: Լինելով միապետական ժայռահեղ վարչակարգի ընդդիմության շարքերում որպես չափավոր թագավորական՝ այդ տասնամյակներին նա «ժուռնալ դե դեբայում» հանդես է գալիս բանավիճային կրակոտ հոդվածներով, որոնք նրան դարձնում են լիբերալ երիտասարդության կուռքը:

1830 թ. Զուլիայան հեղափոխության ժամանակ, մերժելով միանալ Լուի Ֆիլիպ թագավորին, որին չէր սիրում բնավ, մերժելով նաև գործակցել հանրապետականների հետ, որոնց չէր համակրում նույնպես, ամենուրեք տեսնելով ստորաքարշություն, եսասիրություն և նյութապաշտություն, նա որոշում է միառժամանակ հեռանալ Ֆրանսիայից և կատարել մի նոր ճանապարհորդություն Եվրոպայում: Վերադառնալով այդ ճանապարհորդությունից՝ ընդմիջտ քաշվում է քաղաքական կյանքից և ձեռնամուխ լինում ավարտելու իր «Անդրշիրիմյան հիշողություններ» գործը, որի վրա նա աշխատում էր դեռևս 1803 թվականից՝ անընդհատ այն վերա-

նայելով ու հղկելով: Շատորբիանի այս վերջին ստեղծագործությունը, ըստ հեղինակի կամքի, լույս է տեսնում հետմահու 1849-1850 թվականներին: Մինչ այդ այն հրատարակվել էր որպես թերթոն «Պրես» հանդեսում:

Հիասթափված թագավորական իշխանության վերահաստատումից, ինչպես նաև բուրժուական Ֆրանսիայի «շահարկու բարոյականությունից»՝ Շատորբիանը իր կյանքի վերջին տարիներն անցկացնում է հասարակությունից քաշված, ստեղծագործական խաղաղ առանձնության մեջ, անձնատուր իր միակ մխիթարությունը կազմող «Հիշողություններին», որոնք, քնարական մի շքեղ արձակի մեջ, ամփոփում են անհատի և հավաքականության պատմությունը ծովի, սիրո և ավերակների ոգեկոչման միջոցով:

Հռչակավոր գրողը մահանում է 1848 թ. հուլիսի 4-ին 80-ամյա հասակում, իր խոստովանահոր թևերի մեջ, որպես ճշմարիտ քրիստոնյա: Նա հանգչում է Սեն-Մալո քաղաքի մոտակայքում գտնվող մի փոքրիկ, ժայռոտ կղզու առափնյա խոնարհ գերեզմանում, օվկիանոսի դիմաց, հեռու աշխարհային կյանքի ժխորից, իր հավերժական քնի մեջ ունկնդիր այն նույն ալիքների աղմուկին, որոնք մի ժամանակ օրորել էին իր առաջին նիւնջը: Այսօր այդ գերեզմանը դարձել է բանաստեղծական ուխտատեղի նրան համակրող և նրա տաղանդին երկրպագու բազմաթիվ երիտասարդ գրողների համար:

\* \* \*

Սույն հատորում առանձին վերնագրերի տակ թարգմանաբար տեղ գտած հատվածները կազմում են «Քրիստոնեության հանճարը» ընդարձակ գրքի մեկ փոքր մասը միայն: Ինչպես նշեցինք, գիրքը լույս է տեսել Ֆրանսիայի պատմության խառնաշփոթ ժամանակաշրջանում: Ահա թե այդ մասին ինչ է ասում հեղինակը գրքի 1828 թ. հրատարակության առ-

թիվ իր գրած առաջաբանում. «Երբ «Քրիստոնեության հանճարը» լույս տեսավ, Ֆրանսիան նոր էր դուրս գալիս հեղափոխության քառույց: Հասարակության բոլոր տարրերը խառնվել էին իրար: Այն սարսափելի ձեռքը, որն սկսել էր բաժանել նրանց, դեռևս չէր ավարտել իր գործը. հասարակարգը դուրս չէր եկել բռնատիրությունից... Ամենուրեք երևում էին եկեղեցիների և վանքերի մնացորդներ, որոնց քանդումը շարունակում էին իր ավարտին հասցնել: Մի տեսակ զվարճանք էր դարձել նույնիսկ գնալ զբոսնել այդ ավերակների մեջ... Ահա, այսպես ասած, այդ տաճարների փլատակների մեջտեղում է, որ ես հրատարակեցի իմ այս գործը, որի երևումով հավատացյալները հոգեպես փրկված զգացին իրենք իրենց, որովհետև այն լավագույնս արձագանքում էր նրանց ներքին տրամադրություններին. մարդիկ այդ ժամանակ հավատի ուժեղ պահանջ էին զգում, կրոնական մխիթարանքի ծարավ, որն առաջ էր գալիս հենց այդ մխիթարանքից զրկված լինելուց... Որքան վիրավոր ընտանիքներ, փշրված սրտեր, միայնակ մնացած քանի-քանի հոգիներ աստվածային մի ձեռքի օգնությանն էին դիմում, որպեսզի բժշկի իրենց: Մարդիկ Աստծու տներն էին խուժում այնպես, ինչպես մարդ բժշկի տունն է վազում ժանտախտի ժամանակ...»:

Հիրավի, այդպիսին է եղել ժամանակաշրջանը: Քրիստոնեությունը, որ հանիրավի հալածանքի էր ենթարկվել, կարիք ուներ վերականգնվելու իր իրավունքների մեջ: 18-րդ դարի ազնվականությունը Ֆրանսիայում անկրոն էր, բուրժուազիան, որը հավակնում էր, թե գիտության լույսով է ներթափանցված, նվազ անկրոն չէր, քան ազնվական դասակարգը: Այն մտավորականությունը, որը գաղափարապես այդ հեղափոխությունն էր նախապատրաստել, նույնպես բացասաբար էր տրամադրված քրիստոնեության նկատմամբ: Այդ դարի հայտնի փիլիսոփաների կողմից ստեղծված մի նախապաշարում քրիստոնեությունը ներկայացնում էր որպես «բարբա-

րոս, անհեթեթ և ծիծաղելի» մի կրոն, որին պարզամիտներն ու տկարամիտները միայն կարող էին հավատալ: Հարկավոր էր ստեղծել դրան հակառակ մի մտայնություն, ժողովրդի լայն խավերին ազատագրել կրոնասիրության պատճառով ծիծաղելի լինելու վախից, քրիստոնեությունը ներկայացնել նրանց որպես գեղեցիկ, գրավիչ և հարգանքի արժանի մի բան: Հենց դա է, որ շատ լավ կարողանում է զգալ Շատոբրիանը և հաջողում ցրել այդ նախապաշարունը: Նրա «Քրիստոնեության հանճարը» գիրքը նշում է սկսվող 19-րդ դարի նոր կողմնորոշումը: Հեղինակի ծրագիրն էր եղել, ինչպես այդ գեղեցիկ կերպով ներկայացված է նրա գրքի ներածականում, «... ապացուցել, որ այն բոլոր կրոններից, որոնք երբևէ գոյություն են ունեցել, քրիստոնեական կրոնը ամենաբանաստեղծականն է, ամենամարդկայինը, ամենանպաստավորն ու օգտակարը ազատությանը, արվեստներին և գրականությանը... որ արդի աշխարհը ամեն ինչ պարտական է նրան... որ ոչինչ չկա ավելի հրաշալի, քան նրա բարոյականը, ոչինչ ավելի սիրելի, ավելի վսեմ ու շքեղ, քան նրա վարդապետությունն ու նրա պաշտամունքը... որ նա նպաստում է մարդու իմացականությանը, նրբացնում ճաշակը, զարգացնում առաքինի ցանկությունները, ուժգնություն հաղորդում մտածմանը, ազնիվ ներշնչումներ տալիս գրողին, կատարյալ կաղապարներ՝ արվեստագետին...»:

«Քրիստոնեության հանճարը» թեև նվիրված է քրիստոնեական կրոնի ջատագովությանը, սակայն այն բոլորովին նման չէ Եկեղեցու հին Հայրերի դասական «ջատագովականներին», ուր գերազանցապես գերիշխում է հակաճառական և ուսուցողական ոգին: Այդ ոգին, անշուշտ, մասամբ առկա է նաև Շատոբրիանի այս գրքում, քանի որ այն ուղղված է **հանրագիտարանականների** և անաստվածություն քարոզող փիլիսոփաների դեմ՝ տեղ-տեղ նույնիսկ վերածվելով պարսավագրի: Սակայն տիրապետողն այստեղ այնքան նրա գա-

ղափարները չեն, որքան նրա զգացումները, քանի որ Շատորբիանը, նույնիսկ որպես քրիստոնյա, ավելի շուտ բանաստեղծ է, արվեստագետ ու հռետոր, քան բարոյագետ և փիլիսոփա: Նրա հիմնական նպատակն է եղել ոչ թե ապացուցել, այլ վերակենդանացնել քրիստոնեական հավատը՝ ցույց տալով նրա գեղեցկությունները:

19-րդ դարի ֆրանսիացի ականավոր գրաքննադատ Էմիլ Ֆագեն, բացատրելով հռետեսությունից և սկեպտիկությունից Շատորբիանի անցումը դեպի քրիստոնեություն, նշում է. «Գեղեցիկն է նրան գրավել և առաջնորդել քրիստոնեության: Նա հոգով քրիստոնյա է դարձել այն օրը, երբ գրտակցել է **քրիստոնեական կրոնի գեղեցկությունները** (այդ է եղել նրա գրքի սկզբնական խորագիրը): Նա հրաշալի մի գեղեցկություն է տեսնում նրա մեջ և իր ամբողջ էությամբ այնտեղ է վազում... Դա հայտնագործություն էր այդ ժամանակաշրջանում, որովհետև ամբողջ 18-րդ դարի քրիստոնեությունը հայտարարել է «անվայելուչ, կոպիտ, անարվեստ» մի կրոն»:

Արդարև, գեղեցիկը և ճշմարիտն են կազմում քրիստոնեական կրոնի էությունը: Ըստ Շատորբիանի, Հիսուս Քրիստոսի ծննդից ի վեր, որպես վավերական արժեք, ինչ որ արվել է գրականության և արվեստների մեջ, քրիստոնեական է, քրիստոնեական սկզբնաղբյուրի գործ, քրիստոնեական ճշմարտության ապացույց: Եվ Շատորբիանը իր «Քրիստոնեության հանճարը» գործով ուրիշ բան չի ցանկացել անել, քան քրիստոնեությունը դնել իր ճիշտ տեղը՝ այն ներկայացնելով իբրև հարուստ աղբյուր բանաստեղծության և արվեստների: Քրիստոնեության պատմության մեջ նրա այս գործը կապրի ոչ այնքան ի նպաստ քրիստոնեության փաստարկումներով լի իր երկար գլուխներով, որքան հզոր երևակայությամբ օժտված մեծ արվեստագետի **տպավորություններով**, որոնք փայլուն նկարագրությունների և գեղեցիկ էջերի մի ժողովածու են կազմում:

\* \* \*

Տպագրության հանձնելով այս հատընտիրը՝ մեր նպատակն է եղել հայ ընթերցողների մեջ ևս վերակենդանացնել քրիստոնեական հավատը և վերականգնել հոգևոր արժեքների կարևորության գիտակցությունը, քանի որ հայրենաբնակ մեր ժողովուրդը նույնպես լիուլի ճաշակել է Հոկտեմբերյան հեղափոխության առաջ բերած բոլոր դառնությունները: Ամբողջ յոթ տասնամյակ մեր պետության դեկը բռնի իրենց ձեռքում պահած մարդիկ և նրանց հլու կամակատարները քարոզել են անկրոնություն և անաստվածություն՝ փորձելով, երբեմն նույնիսկ անթույլատրելի միջոցներով, մեր ժողովրդի զավակների սրտից արմատախիլ անել մեր պապերից ժառանգված քրիստոնեական հավատը և դրա հետ կապված հայրենական բոլոր գեղեցիկ ավանդությունները: Այսօր անվերադարձ անցել են այդ սև տարիները, և հայ ժողովուրդը իրավունք է ձեռք բերել ազատ և ինքնուրույն տնօրինելու իր ճակատագիրը: Եթե այս գիրքը կարողանա դուրս հանել նախատել մեր ժողովրդի, հատկապես մեր երիտասարդ սերնդի հոգևոր զարթոնքին, ապա լավագույնս ծառայած կլինի իր նպատակին:

***Թարգմանիչ***





## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԱՏՆԵՐ ԵՎ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հին փիլիսոփաների մեծ մասը բաժանում է կատարել բարոյական արատների և առաքինությունների միջև: Սակայն այս հարցում ևս կրոնի իմաստությունը գերիվեր է մարդկանց իմաստությունից:

Նախ և առաջ ի նկատի ունենանք միայն գոռոզությունը, որ Եկեղեցին դասել է արատների առաջին շարքում: Գոռոզությունը սատանայի մեղքն է, աշխարհ եկած առաջին մեղքը: Գոռոզությունը չարիքի բուն աղբյուրն է, նա խառնված է մարդու հոգու բոլոր թուլություններին. փայլում է նախանձոտ մարդու ժպիտի միջից, ի հայտ է գալիս հեշտանքի զեխությունների մեջ, հաշվում է ժլատության ոսկիները, կայծկլտում գայրացկոտի աչքերի մեջ և գնում մեղկ կյանքի հաճույքների հետևից:

Գոռոզությունն է, որ սայթաքեցրեց Ադամին, գոռոզությունն է, որ Կայենին զինեց եղբայրասպան մահակով, գոռոզությունն է, որ բարձրացրեց Բաբելոնի աշտարակը և կործանեց Բաբելոնը: Գոռոզության պատճառով կորստյան մատնվեց Աթենքը Հունաստանի հետ: Գոռոզությունը տապալեց Կյուրոսի գահը, բաժան-բաժան արեց Ալեքսանդրի կայսրությունը և վերջապես ճգմեց Հռոմը աշխարհի ծանրության տակ:

Կյանքի առանձին հանգամանքներում գոռոզությունը մարդուն առաջնորդում է առավել չարաղետ հետևանքների. նա իր ոճրային հարձակումներն ուղղում է մինչև իսկ Աստծու դեմ:

Անաստվածության պատճառները փնտրելիս մենք հանգում ենք այն տխուր եզրակացությանը, որ մեծ մասը

նրանց, ովքեր ըմբոստանում են երկնքի դեմ, ինչ-որ բանում զանգատվում են հասարակութունից կամ բնությունից (բացի, անշուշտ, աշխարհիկ կյանքով հրապուրված երիտասարդներից կամ այն գրողներից, որոնք սիրում են միայն աղմկել): Բայց նրանք, ովքեր զրկված են այն սին առավելութուններից, որ բախտը կամ դիպվածը մերթ տալիս է նրանց և մերթ խլում նրանցից, ինչպե՞ս չգիտեն գտնել այդ աննշան դժբախտության դարմանը՝ մոտենալով և ապավինելով Աստծուն: Աստված շնորհների իսկական աղբյուրն է, նա գերազանցապես գեղեցկութունն է. բավական է միայն, որ նրա անունն արտասանվի սիրով, որպեսզի նա ինչ-որ աստվածային բան տա բնությունից ամենաքիչ նպաստավորված մարդուն, ինչպես այդ եղել է Սոկրատի նկատմամբ: Անաստվածութունը թողնենք նրանց, որոնք, չունենալով նկարագրի բավականաչափ մեծութուն՝ վեր բարձրանալու ճակատագրի անարդարութուններից, Աստծու և կրոնի դեմ իրենց հայհոյանքներով ցույց են տալիս միայն իր էության ամենագեղայուն մասի մեջ զրգուված մարդու բարոյական առաջին արատը՝ գոռոզութունը:

Եթե Եկեղեցին մարդկային արատների դասակարգման մեջ առաջին տեղն է տվել գոռոզությանը, նա նվազ խեղամտությամբ չի դասավորել նաև մյուս վեց գլխավոր բարոյական արատները: Չպետք է կարծել, որ այն կարգը, որով դրանք դասավորված են, կամայական է: Բավական է քննության առնել այն՝ տեսնելու համար, որ կրոնը ընդհանուր առմամբ հասարակությանը հարվածող ծանր ոճիրներից խելացի կերպով անցնում է այն հանցանքներին, որոնք կուտակվում են մեղավորի վրա: Այսպես, օրինակ, նախանձը կամ խանդը, ցոփությունը, ժլատությունը և բարկությունը անմիջապես հետևում են գոռոզությանը, որովհետև դրանք ի գործ են դրվում մեկ ուրիշի վրա և գոթություն ունեն միայն մարդկանց մեջ, մինչդեռ որկրամո-

լուծյունը և ծուլուծյունը, որոնք վերջին տեղն են բռնում, ամոթալի առանձին հակումներ են, որոնք դատապարտված են իրենք իրենց մեջ փնտրելու իրենց գլխավոր հաճույքը:

Քրիստոնեությունն առաջինը առաքինությունների և դրա համար նրա սահմանած կարգի մեջ բնության նույն ճանաչողությունը կա: Հիսուս Քրիստոսից առաջ մարդու հոգին քառու էր: Լսվեց մարմնացած Բանը, և իսկույն ամեն ինչ պարզվեց իմացական աշխարհում, ինչպես սկզբից նույն խոսքով ամեն ինչ կարգավորվել էր Ֆիզիկական աշխարհում. դա տիեզերքի բարոյական ստեղծագործությունն էր: Առաքինությունները, մաքրամաքուր կրակների նման, բարձրացան երկինք: Դրանցից մի քանիսը, որպես պայծառ արեգակներ, իրենց վրա հրավիրեցին մարդկանց հայացքը իրենց փայլուն լույսով. մյուսները, որպես համեստ աստղեր, փնտրեցին գաղտնապահ սովերենները, որտեղ, սակայն, չկարողացան թաքնվել: Այդ ժամանակվանից էլ հիանալի մի հավասարակշռություն հաստատվեց ուժերի և տկարությունների միջև: Կրոնը իր ցասումն ուղղեց գոռոզության՝ բարոյական այն արատի դեմ, որը, ինչքան էլ տարօրինակ թվա, սնվում է առաքինություններով: Կրոնը այդ արատը հայտնաբերեց մեր սրտի ծալքերում, հետապնդեց նրան իր բոլոր կերպարանափոխությունների մեջ, Եկեղեցու խորհուրդները շարժեցին նրա դեմ իրենց սուրբ բանակով, և խոնարհությունը, քուրճ հագած, մեջքին պարան կապած, ոտաբոբիկ, ճակատը մոխրով պատած և լացակումած աչքերը գետին հառած, դարձավ հավատացյալի առաջին առաքինություններից մեկը:





## ՀԱՎԱՏԻ, ՀՈՒՅՍԻ ԵՎ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Իսկ, որո՞նք էին այն գլխավոր առաքինությունները, որ շատ հաճախ մեզ հանձնարարում էին Հունաստանի իմաստունները. ուժը, չափավորությունը և խոհականությունը: Միայն Հիսուս Քրիստոս կարող էր ուսուցանել աշխարհին, որ Հավատը, Հույսը և Սերը առաքինություններ են, որոնք պատշաճում են մարդու անգիտությանն ու թշվառությանը: Անկասկած սքանչելի մի դատողություն է այն, որ առաքինությունների աղբյուրը գտնվում է Հավատի մեջ: Ուրե՛կ դատողություն, բանաստեղծություն կամ նկար մեզ ուժեղ, կատարյալ և գեղեցիկ է թվում, որովհետև մեր միտքը կամ աչքը, որ դատում է դրանք, համոզված է, որ ինչ-որ թաքնված ճշմարտություն կա այդ դատողության, այդ բանաստեղծության և այդ նկարի մեջ: Մի խումբ փոքրաթիվ զինվորներ, եթե վստահ են իրենց զորավարի հմտությանը, կարող են հրաչքներ գործել: Երեսունհինգ հազար հույներ հետևեցին Ալեքսանդր Մակեդոնացուն աշխարհը նվաճելու համար: Լակեդեմոնիան (Սպարտան) վստահեց Լիկուրգոսին<sup>1</sup>, և Լակեդեմոնիան դարձավ ամենախելացի քաղաքը. Բաբելոնը համարվեց մեծությունների քաղաք, և մեծությունները պոռնկացան՝ հանձնվելով նրա աշխարհիկ բարքերին. մի պատգամախոս երկիրը խոստացավ հռոմեացիներին, և հռոմեացիները տեր դարձան երկրին. Քրիստափոր Կոլոմբոսը՝ միակ մարդը աշխարհում, համառեց հավատալ մի նոր ցամաքամասի գոյությանը, և մի նոր ցամաքամաս դուրս ելավ ալիքներից: Բարեկամությունը, հայրենասիրությունը, սերը, բոլոր ազնիվ զգացումները մի տեսակ հավատ են: Իրենց հավատով է, որ Կոլորոսները<sup>2</sup>, Պուլլադեսները<sup>3</sup>, Ռեզուլտոսները<sup>4</sup>, Առհրանոսները<sup>5</sup> կարողացան

հրաշքներ գործել: Այն մարդիկ, որոնք ոչնչի չեն հավատում, որոնք պատրանք են համարում հոգու ամուր կապերը և հիմարութուն՝ գեղեցիկ գործերը, որոնք արգահատանքով են նայում երևակայությանը և հանճարի պոռթկումներին, այդ մարդիկ չեն կարող իր ավարտին հասցնել որևէ վսեմ և ազնիվ գործ. նրանք հավատում են միայն նյութին ու մահվանը և անզգա են ինչպես նյութը և սառած՝ ինչպես մահը:

Հին ասպետական լեզվում հավատս եմ խոստանում արտահայտութունը հոմանիչ էր և մի տեսակ հավաստիք պատվի համար կատարվելիք բոլոր մեծագործութունների: Հավատի համար մարտնչող Ռոլանդը, Դյու Գեսկլենը<sup>6</sup>, Բայարը<sup>7</sup> հավատարիմ ասպետներ էին, և Ռոնսովոյի<sup>8</sup>, Օրելի<sup>8</sup>, Բրեսի<sup>8</sup> ճակատամարտերը, ինչպես նաև մավրիտանացիների, անգլիացիների, լոմբարդացիների հետնորդները դեռ այսօր էլ ասում են, թե ովքեր են եղել այն մարդիկ, որոնք հավատ և պատիվ էին ընծայում իրենց Աստծուն, ազնվազարմ կանանց և իրենց թագավորին: Ինչպիսի՜ վաղանջական և սրտառուչ մտքեր են կապված մեր միակ օջախ բառի հետ, որի ստուգաբանությունն այնքան ուշագրավ է: Հարկ կա՞ հիշելու մարտիրոսներին, այն հերոսներին, որոնք, ըստ սուրբ Ամբրոսիոսի<sup>9</sup>, «առանց բանականների, առանց լեգեոնների հաղթեցին բռնակալներին, մեղմացրին առյուծների կատաղությունը, վերացրին կրակի սաստկությունը և բթացրին սուսերների սրությունը»: Հավատը նույնպես, այս տեսանկյունից դիտված, այնպիսի սարսափելի ուժ է, որ կարող է կործանել աշխարհը, եթե գործադրվի չար նպատակներով: Չկա մի բան, որ մարդ արարածը, լինելով ներքին մի համոզման ստրուկը կամ իր բանականությունը առանց պայմանի ենթարկելով մի այլ մարդու բանականությունը, ի վիճակի չլինի կատարելու, ինչը ապացուցում է, որ ամենաբարձր առաքինությունները, երբ մարդ

դրանք բաժանում է Աստծուց և ուզում է դնել իրենց բարոյական պարզ հարաբերությունների մեջ, դառնում են մեծագույն արատներ:

Եթե փրկիստիաները այս հանգամանքը քննության առած լինեին, այնքան դժվարություն չէին ունենա հաստատելու բարու և չարի սահմանները: Քրիստոնեությունը կարիք չունի Արիստոտելի նման հնարելու մի աստիճանաչափ, որպեսզի այնտեղ ճարտարորեն տեղադրի մի առաքինություն բարոյական երկու արատների միջև: Քրիստոնեությունը վստահորեն լուծել է այդ դժվարությունը՝ ցույց տալով մեզ, որ առաքինությունները առաքինություններ են միայն այն չափով, որչափով դրանք վերադառնում են դեպի իրենց սկզբնաղբյուրը, այսինքն՝ դեպի Աստված: Այս ճշմարտությունը մեզ համար կմնա անկասկածելի, եթե մենք հավատը գործադրենք մարդկային այդ նույն հարաբերությունների մեջ՝ թույլ տալով սակայն, որ այն ի հայտ գա կրոնական գաղափարների միջնորդությամբ: Հավատից պիտի ծնվեն հասարակության առաքինությունները, քանի որ ճշմարիտ է, իմաստունների իսկ միաձայն հավանությամբ, որ այն պատվիրանը, որը հրահանգում է հավատալ վարձահատույց մի Աստծո, ամենամուր հենարանն է բարոյականության և քաղաքականության:

Վերջապես, եթե դուք հավատը իր բուն նպատակին՝ ի բարին գործադրեք, եթե դուք ամբողջապես այն շրջեք դեպի Արարիչը, եթե այն դարձնեք ձեր իմացական աչքը, որով դուք կարող կլինեք հայտնաբերել երկնային Քաղաքի հրաշալիքներն ու իրական գոյությունների կայսրությունը, եթե այն թևեր տա ձեզ՝ կյանքի դառնություններից վեր բարձրանալու, այժմ դուք կընդունեք, որ սուրբ գրքերը շատ չեն գովաբանում այդ առաքինությունը, երբ խոսում են դրա շնորհիվ կատարված հրաշագործությունների

մասին: Ո՛վ երկնային և մխիթարիչ հավատ, դու լեռները տեղից տեղ փոխադրելուց ավելի՛ մի բան ես անում. դու վերացնում ես այն ահավոր բեռները, որ ծանրանում են մարդու հոգու և մարմնի վրա:

Հույսը՝ աստվածաբանական այս երկրորդ առաքինութիւնը, համարյա նույն ուժն ունի, ինչ որ հավատը: Յանկուլթյունը գորութեան հայրն է. ով ուժգնորեն է ցանկանում, ձեռք է բերում: «Փնտրեցե՛ք, - ասում է Հիսուս Քրիստոսը, - և կգտնեք, բախեցե՛ք, և կբացվի ձեզ համար»: Նույն իմաստով Պյութագորասն<sup>10</sup> ասում էր. «Զորութիւնը բնակվում է անհրաժեշտութեան մոտ», որովհետև անհրաժեշտութիւնը ենթադրում է զրկանք, իսկ զրկանքը ցանկութեան հետ համատեղ է ընթանում: Յանկուլթյունը կամ հույսը, լինելով գորութեան հայրը, իսկական մի ոգի է՝ օժտված ծննդագործելու առնականութեամբ և այնպիսի մի ծարավով, որ բնավ չի հագենում: Եթե մի մարդ զգում է, որ սխալվել է իր ծրագրերի մեջ, նշանակում է՝ նա աստիկ չի ցանկացել, չի ունեցել այն սերը, որը վաղ թե ուշ հասնում է իր տենչացած առարկային, այն սերը, որն աստվածային վերացման մեջ ընդգրկում է ամեն ինչ և հրճվում համայն տիեզերքով, հրճվում մշտապես բավարարվող և անընդհատ վերածնվող անսահման մի հույսով:

Այսուհանդերձ էական մի տարբերութիւն կա հավատի և որպես ուժ համարվող հույսի միջև: Հավատի աղբյուրը մեզնից դուրս է գտնվում, նա գալիս է դեպի մեզ օտար մի առարկայից: Հույսը, ընդհակառակը, ծնվում է մեր ներսում, որպեսզի դուրս գա: Առաջինը պարտադրվում է մեզ, երկրորդը ծնվում է մեր սեփական ցանկութեանից. առաջինը հնազանդութիւնն է, երկրորդը՝ սեր: Բայց քանի որ հավատը ավելի հեշտութեամբ է ծնունդ տալիս մյուս առաքինութիւններին, քանի որ այն ուղղակի գալիս է Աստծուց և հետևաբար բխումն է անսկիզբ և անվախճան Հորը, ա-



ուավել գեղեցիկ է, քան հույսը, որը մարդու մեկ մասն է միայն: Եվ Եկեղեցին հարկ է համարել հավատը դասել առաջին շարքում:

Բայց հույսը ինքնին հատկանշվում է մի առանձնահատկութամբ, որով նա հարաբերություն մեջ է գտնվում մեր թշվառության հետ: Անտարակույս նա հայտնվել է երկնքից, այն կրոնից, որը առաքինություն է համարել հույսը: Խեղճերի և թշվառների այդ դայակը, գտնվելով մարդու մոտ, ինչպես մայրը՝ իր հիվանդ երեխայի մոտ, օրորում է նրան իր թևերի մեջ, դնում կրծքին ու դիեցնում իր ստինքների մշտաբուխ կաթով, որն ամոքում է նրա ցավերը: Նա հսկում է նրա սնարի մոտ միայնակ և մոգական երգերով քնեցնում նրան: Զարմանահրաշ մի բան է հույսը, և այնքան քաղցր է այն պահելը. նա թվում է հոգու բնական մի շարժում, որը քրիստոնյա մարդու համար փոխակերպվում ու դառնում է խստորեն պահանջված առաքինություն: Այնպես որ, նա ինչ էլ որ անի, պարտավորվում է կում-կում խմել այդ կախարդական բաժակից, որին այնքան թշվառներ ուրախությամբ պիտի ուզեին մոտենալ՝ թեկուզ մի պահ թրջելու համար իրենց շուրթերը: Կա ավելին (և այստեղ է հրաշքը). նա վարձատրված պիտի զգա իրեն, որ հույս է ունեցել, այլ կերպ ասած՝ որ այն դարձրել է իր սեփական երջանկությունը: Հավատացյալը, որ շարքային մի գինվոր է կյանքում և մշտապես պայքարում է թշնամու դեմ, չի անտեսվում Եկեղեցու կողմից իր պարտության ժամանակ, ինչպես պարտություն կրած այն զորավարները, որոնց Հռոմի սենատը պատվով ու շուքով է ընդունում սոսկ այն պատճառով, որ նրանք իրենց հույսը չէին կտրել վերջնական փրկությունից: Բայց, եթե հին ժամանակներում մարդիկ պատիվ ու մեծարանք էին մատուցում այն մարդկանց, որոնց երբեք չէր լքում հույսը, ապա ի՞նչ պիտի մտածեին քրիստոնյա մարդու մասին, որն իր

զարմանալի լեզվում չի օգտագործում հույս փայփայել արտահայտությունը, այլ՝ հույս կիրարկել:

Ինչ վերաբերում է մյուս առաքինությունը, որը սերն է՝ Հիսուս Քրիստոսի դուստրը, ապա իր բուն իմաստով նշանակում է շնորհ և ուրախություն: Կրոնը, ցանկանալով բարեփոխել մարդկային սիրտը և մեր խանդաղատանքն ու գործովը շրջել դեպի առաքինությունները, հնարել է մի նոր բառ՝ *caritas, charite\**: Նա չի օգտագործել ո՛չ համակրանք բառը, որը բավականաչափ ուժեղ է, ո՛չ բարեկամություն բառը, որը չքանում է գերեզմանում և ո՛չ էլ գլխասիրությունը, որը շատ մոտ է հպարտությանը, այլ գտել է *caritas* բառը, որն իր մեջ պարունակում է այդ երեքի իմաստը և որը, միաժամանակ, առնչվում է ինչ-որ երկնային բանի հետ: Դրանով նա մեր հակումներն ուղղում է դեպի երկինք՝ բյուրեղացնելով դրանք և վերադարձնելով Արարչին: Դրանով նա մեզ ուսուցանում է այն հրաշալի ճշմարտությունը, որ մարդիկ պետք է իրար սիրեն Աստծու միջոցով, որը ոգեղինացնում է նրանց սերը և թողնում միայն նրա անմահ էությունը՝ կամուրջ ծառայելով նրան:

Բայց, եթե սերը քրիստոնեական մի առաքինություն է՝ ուղղակի Աստծուց և նրա մարմնացած Բանից բխած, ապա նա սերտորեն կապված է նաև բնության հետ: Երկնքի և երկրի, Աստծու և մարդկության այդ շարունակական ներդաշնակությունը է, որ մենք ճանաճչում ենք ճշմարիտ կրոնի բնույթը: Հնադարի բարոյական, գիտական և քաղաքական հաստատությունները հաճախ հակադրության մեջ են եղել մարդու հոգեկան աշխարհի հետ, նրա զգացումների հետ: Քրիստոնեությունը, ընդհակառակը, միշտ ունկնդիր մարդկանց սրտի պահանջներին, բնավ չի հանձնարա-

---

\* *Caritas* (լատ), *charité* (ֆրանս.) բառիմաստին համագոր են հայերեն աստվածասիրություն, եղբայրասիրություն բառերը, այսինքն՝ սեր իր ամենալայն իմաստով (ծնթ. քարզմ.):

ըրում առանձին վերացական առաքինություններ, այլ՝  
այնպիսի առաքինություններ, որոնք բխում են մեր ներ-  
քին պահանջներից և օգտակար են բոլորին: Նա սերը դրել  
է կյանքի անապատներում որպես անցամաքելի ջրհոր:

«Սերը, ~ ասում է Պողոս առաքյալը, ~ համբերող է,  
քաղցրաբարո. սերը չի նախանձում, չի հանդգնում, չի ամ-  
բարտավանանում, չի գոռոզանում, իրենը, չի փնտրում, չի  
գրգռվում, չար բան չի խորհում, անիրավության վրա չի  
ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտության վրա. ա-  
մեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում, ամեն բա-  
նի համար հույս ունի, ամեն բանի համբերում է»:





**ԲԱՐՈՅԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ  
ԵՎ ՏԱՍՆԱԲԱՆՅԱ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Մեր հպարտութիւնը նվաստացնող բան է մտածել, որ մարդկային իմաստութեան ծնունդ հանդիսացող առածները կարող են պարփակվել մի քանի էջերի մեջ: ԵՎ այդ էջերի մեջ էլ ինչքա՛ն սխալներ... Մինոսի<sup>1</sup> և Լիկուրգոսի օրենքները այն ժողովուրդների կործանումից հետո, որոնց համար հաստատվեցին դրանք, ի զորու և կանգուն մնացին ինչպես անապատի բուրգերը, որոնք մահվան մշտնջենական պալատներ են:

**Երկրորդ Զարթուստրայի<sup>2</sup> օրենքները**

Անեզր և ինքնագո ժամանակը ստեղծիչն է ամեն ինչի: Բանը եղավ նրա դուստրը, և նրա դուստրից ծնվեցին Օրմուզգը<sup>3</sup> բարու աստվածը և Ահրիմանը<sup>3</sup> չարի աստվածը:

Օգնութեա՛ն կանչիր երկնային ցուլին՝ խոտի և մարդու հորը:

Ամենաարժանավոր գործը իր արտը լավ հերկելն է:

Աղոթի՛ր մաքուր մտքով, մաքուր խոսքով և մաքուր գործով:

Սովորեցրո՛ւ բարին և չարը քո հինգ տարեկան որդուն:

Օրենքը թող հարվածի ապերախտ մարդուն:

Թող մեռնի այն զավակը, որը երեք անգամ անհնազանդ է եղել իր հորը:

Օրենքը պիղծ է հռչակում երկրորդ անգամ ամուսնացած կնոջը:

Խաբեբային հարվածի՛ր ճիպոտով:

Արհամարհի՛ր ստախոսին:

Տարեվերջին և տարեմուտին տասը օր տոնախմբուլթյուն արա:

### Հնդկական օրենքներ

Վիշնուն<sup>4</sup> տիեզերքն է: Նա՛ է, ինչ որ եղել է, նա՛ է, ինչ որ կա, նա՛ է, ինչ որ լինելու է:

Մարդի՛կ, եղե՛ք հավասար:

Սիրի՛ր առաքինուլթյունը հանուն առաքինուլթյան. հրաժարվի՛ր քո գործերի արդյունքից:

Ո՛վ մահկանացու, եղի՛ր իմաստուն, և դու տասը հազար փղի ուժ կունենաս:

Հոգին աստված է:

Քո երեխաների սխալները խոստովանի՛ր արևին ու մարդկանց և գնա մաքրվի՛ր Գանդեսի ջրերում:

### Եգիպտական օրենքներ

Առաջնորդ ընդհանրական աստված, անծանոթ խավար, անթափանցելի մլթուլթյուն:

Օգի՛րիսը<sup>5</sup> բարի աստված է, Տիֆոնը<sup>6</sup> չար աստված:

Պատվի՛ր քո ծնողներին:

Հետևի՛ր քո հոր արհեստին:

Եղի՛ր առաքինի. լճի դատավորները քո մահվանից հետո վճիռ պիտի կայացնեն քո գործերի մասին:

Լվա՛ քո մարմինը երկու անգամ օրը և երկու անգամ գիշերը:

Ապրի՛ր քչով:

Մի՛ բացահայտիր երբեք գաղտնիքները:

### **Միևուսի օրենքները**

Մի՛ երգվիր բնավ աստվածների անունով:  
Ո՛վ երիտասարդ, մի՛ քննիր բնավ օրենքները:  
Օրենքը անպատիվ է հռչակում նրան, ով բարեկամ չու-  
նի;  
Շնացող կինը թող պսակվի բրդով և վաճառվի:  
Թող ձեր ճաշերը հայտնի լինեն ամենքին, ձեր կյանքը  
լինի պարզ և անպաճույճ, և ձեր պարերը՝ ռազմական:  
(Այստեղ գանց ենք առնում Լիկուրգոսի օրենքները, ու-  
րոնք մասամբ կրկնուլթյունն են Միևուսի օրենքների) (ծնթ.  
հեղինակի):

### **Սուլոնի օրենքները**

Թող մեռնի այն զավակը, որը աչքաթող է անում ու չի  
թաղում իր հորը կամ չի պաշտպանում նրան:  
Շնացող մարդուն թող արգելվի տաճար մտնել:  
Հարբած դատավորը թող մոլեխինդ խմի:  
Մա՛հ վախկոտ զինվորին:  
Օրենքը թույլ է տալիս սպանել այն քաղաքացուն, որը  
չեզոք դիրք է բռնում քաղաքացիական երկպառակու-  
թյունների ժամանակ:  
Ով ուզում է մեռնել, թող հայտնի արխոնտին\* և ապա  
մեռնի:  
Սրբապղծութուն կատարող մարդը թող մեռնի:  
Ո՛վ կին, առաջնորդի՛ր քո կույր ամուսնուն:  
Կենցաղավարութուն չունեցող մարդը չի կարող կառա-  
վարել:

---

\* Բարձրագույն պաշտոնյա հին Հունաստանում (ծնթ. քարգմ.):

### Հոռմեական հնագույն օրենքներ

Հարգի՛ր համեստ հարստությունդ:  
Թող մարդը լինի հողագործ և ռազմիկ:  
Գինին վերապահի՛ր ծերերին:  
Մահվա՛ն դատապարտիր այն հողագործին, որը եզան  
միս է ուտում:

### Գալիլացիների կամ կելտական քրմերի օրենքները

Տրեզերքը հավիտենական է, հոգին՝ անմահ:  
Հարգի՛ր բնությունը:  
Պաշպանի՛ր քո մորը, քո հայրենիքը, հողը:  
Խորհուրդներ տուր նաև կնոջը:  
Հարգի՛ր օտարականին և մի կողմ դիր նրա բաժինը քո  
բերքից:  
Ստոր մարդը թող թաղվի ցեխի մեջ:  
Տաճար մի՛ կառուցիր բնավ և անցյալի պատմությունը  
վստահի՛ր միայն քո հիշողությանը:  
Ո՛վ մարդ, դու ազատ ես. սեփականութուն մի՛ ունե-  
ցիր:  
Հարգի՛ր ծերերին, և թող երիտասարդը դատարանում  
վկայություն չտա նրա դեմ:  
Ազնիվ մարդը իր մահվանից հետո պիտի վարձատրվի,  
իսկ ստոր մարդը՝ պատժվի:

### Պյութագորասի օրենքները

Հարգի՛ր անմահ աստվածներին՝ ինչպես որ նրանք հաս-  
տատված են օրենքով:  
Հարգի՛ր քո ծնողներին:  
Արա՛ այն բանը, ինչը չի տանջելու քո հիշողությունը:



Մի՛ թող, որ աչքերիդ վրա քունը ծանրանա, մինչև երեք անգամ չքննես քո հոգում քո ամենօրյա գործերը:

Հարցրո՛ւ ինքդ քեզ. «Որտե՞ղ եմ եղել, ի՞նչ եմ արել, ի՞նչ պետք է անեի»:

Սրբությամբ անցկացրած քո կյանքից հետո, երբ մարմինդ վերադառնա սկզբնական տարրերին, դու կդառնաս անմահ ու անապական և այլևս չես կարող մեռնել\*:

Ահա այս է մոտավորապես այն ամենը, ինչ կարող ենք քաղել հին դարերի այնքան ուշագրավ իմաստությունից: Այստեղ Աստված ներկայացված է որպես ինչ-որ մթին բան, բայց, անկասկած, ուժեղ լույսի պատճառով. չէ՞ որ խավարը պատում է մեր աչքերը, երբ մենք փորձում ենք արևին նայել: Բարեկամ չունեցող մարդն այստեղ անպատիվ է հռչակվում: Այդ ժամանակաշրջանի օրենսդիրն, ուրեմն, անվանարկված, անպատիվ է համարում գրեթե բոլոր անբախտ ու թշվառ մարդկանց: Ուրիշ մի տեղ ինքնասպանությունն օրենք է դառնում: Վերջապես այդ իմաստություններից ոմանք թվում է, թե բոլորովին մոռանում են, որ գոյություն ունի գերագույն մի էություն: Եվ տակավին ինչքա՛ն անորոշ, տարտամ, անկապակից ու հասարակ բաներ կան այս ասույթների մեծ մասի մեջ: Հնարարյան կաճառների իմաստունները մեկը մյուսի հետևից հորինում էին այնպիսի հակասական առածներ, որ հաճախ առածների նույն գրքով կարելի է ապացուցել, որ դրա հե-

---

\* Ասույթների այս ցուցակին կարելի է ավելացնել նաև մի քաղվածք Պլատոնի «Հանրապետություն» աշխատությունից կամ, ավելի շուտ, նրա օրենքների տասներկու գրքերից, որոնք, մեր կարծիքով, նրա գործերի լավագույն մասն են կազմում որքան այն գեղեցիկ տեսարանով (ուր երեք ծերունիներ ճառեր են արտասանում աղբյուր գնալիս), նույնքան և այդ երկխոսության մեջ սիրող մտքի խորությամբ: Սակայն այդ օրենքները կամ պատվիրանները երբեք չեն գործադրվել, ուստի մենք հրաժարվում ենք այդ մասին խոսելուց: Ինչ վերաբերում է Դուրանին, ապա սուրբ, ճիշտ և արդար ինչ բան որ կա նրա մեջ, գրեթե բառ առ բառ փոխ է առնված մեր Սուրբ Գրքից: Մնացածը մի հավաքածու է ուարունական օրենքների (ծնթ. հեղինակի):

դինակը թե՛ հավատում և թե՛ չէր հավատում Աստծուն, որ նա ընդունում և միաժամանակ չէր ընդունում դրական մի առաքինություն, որ ազատությունը ամենամեծ բարիքն է, և բռնատիրությունը՝ լավագույն իշխանությունը:

Եթե այսքան անորոշությունների և երկմտությունների մեջ մենք նկատեինք բարոյական օրենքների մի ամբողջություն առանց հակասությունների և առանց սխալների, որը վերջ տար մեր վարանումներին, որը մեզ սովորեցներ, թե պետք է հավատանք Աստծուն, և թե, որո՞նք են մեր ճշմարիտ հարաբերությունները մարդկանց հետ, եթե բարոյական օրենքների այդ ժողովածուն ձևակերպված լիներ ինքնավստահ տոնով և մինչ այդ մեզ անձանոթ եղող լեզվի պարզությամբ, ապա չպիտի՞ եզրակացնեինք, որ այդ օրենքները գալիս են երկնքից, արդյունք են աստվածային ներշնչման: Մենք ունե՞նք այդ օրենքները, այդ աստվածային պատվիրանները. և ինչպիսի՞ պատվիրաններ խելացի մարդու համար, ինչպիսի՞ կենդանի պատկեր բանաստեղծի համար...:

Ահա, նայեցե՛ք այդ մարդուն, որն իջնում է բոցեղեն բարձունքներից: Նրա ձեռքերը քարե մի տախտակ են պահում իր կրծքի վրա, նրա ճակատը պսակված է կրակե երկու ճառագայթներով, նրա դեմքը շողում է Տիրոջ փառքով. Աստու ահը նրա առաջ է. հեռու հորիզոնում ձգվում է Լիբանանի լեռնաշղթան իր հավերժական ձյունով և դեպի երկինք սլացող իր մայրիներով: Հակոբի հետնորդը, ծնկի իջած լեռան ստորոտում, երկյուղից քողարկում է իր գլուխը, որպեսզի չտեսնի Աստծուն ու չմահանա: Այդ ժամանակ խլացուցիչ որոտը դադարում է, և գալիս է մի ձայն.

«Լսի՛ր դու, ո՛վ Իսրայել. ես եմ Տերը՝ քո Աստվածը, որ քեզ հանեցի եգիպտացիների երկրից՝ ստրկությունից տնից:

1. Ինձնից բացի ուրիշ Աստված չպիտի ունենաս:

2. Քեզ համար կուռք չպիտի կերտես ո՛չ վերևում՝ երկնքում, ո՛չ ներքևում՝ երկրի վրա, և ո՛չ երկրի խորքի ջրերում եղած որևէ բանի նմանությամբ: Չպիտի երկրպագես դրանց ու չպիտի պաշտես, որովհետև ես եմ քո Տեր Աստվածը՝ մի նախանձոտ Աստված, որ հայրերի մեղքերի համար պատժում եմ որդիներին՝ մինչև երրորդ և չորրորդ սերնդին, որ ատում են ինձ. իսկ ինձ սիրող և իմ պատվիրանները պահող մարդկանց մինչև հազարերորդ սերնդին ողորմում եմ:

3. Քո Տեր Աստծու անունը զուր տեղը չպիտի արտասանես, որովհետև Տերը անպատիժ չի թողնում նրան, ով իր անունը զուր տեղն է արտասանում:

4. Հիշի՛ր շաբաթ օրը, որպեսզի սուրբ պահես այն: Վեց օր պիտի աշխատես և պիտի կատարես քո բոլոր գործերը. բայց յոթներորդ օրը քո Տեր Աստծու հանգստյան օրն է. այդ օրը դու ոչ մի գործ չպիտի անես, ո՛չ դու, ո՛չ քո որդին, ո՛չ քո աղջիկը, ո՛չ քո ծառան ու աղախինը, ո՛չ քո նասունը, ո՛չ էլ քո դռան մոտ բնակվող օտարականը, որովհետև Տերը վեց օրում ստեղծեց երկինքն ու երկիրը, ծովն ու այն ամենը, ինչ դրանց մեջ է, իսկ յոթներորդ օրը հանգստացավ: Դրա համար էլ Տերն օրհնեց հանգստյանը օրը և այն սրբացրեց:

5. Պատվի՛ր քո հորն ու մորը, որպեսզի քո օրերը երկարեն այն երկրի վրա, որ քո Տեր Աստվածը տալու է քեզ:

6. Մի՛ սպանիր:

7. Մի՛ շնացիր:

8. Մի՛ գողացիր:

9. Քո հարևանի դեմ սուտ վկայություն մի՛ տուր:

10. Աչք մի՛ ունեցիր ո՛չ քո հարևանի տան, ո՛չ քո հարևանի կնոջը, ո՛չ նրա ծառայի, ո՛չ նրա աղախնու, ո՛չ նրա եզան, ո՛չ նրա էջի, ո՛չ այն ամենի վրա, ինչ քո հարևանին է»:

Ահա այն օրենքները, որ Աստված փորագրեց ոչ միայն Մինայի լեռան քարե տախտակի վրա, այլ նաև մարդկանց սրտի մեջ: Ամենից առաջ մեր ուշադրությունը գրավում է այս աստվածային օրենքների տիեզերական բնույթը, որը առանձնացնում է դրանք մարդկային մյուս օրենքներից: Այստեղ են ամփոփված բոլոր ժողովուրդների, մարդկային կյանքի բոլոր պայմաններին ու բոլոր ժամանակներին հատուկ օրենքները: Պյութագորասի և Ջարաթուստրայի օրենքներն ուղղված են հույներին և մեդացիներին, մինչ Աստված խոսում է բոլոր մարդկանց հետ: Մենք ճանաչում ենք ամենակարող և ամենազոր այդ Աստծուն՝ Հորը, որը հսկում է ողջ արարչագործության վրա և իր ձեռքից վայր է գցում միաժամանակ թե՛ ցորենի հատիկը, որը կերակրում է միջատին, և թե՛ արևը, որը լուսավորում է նրան:

Այնուհետև, չկա ավելի հիասքանչ բան, քան եբրայեցիների բարոյական այս օրենքները, որոնք իրենց պարզության մեջ լի են ճշմարտությամբ: Հեթանոսները հանձնարարել են պատվել մեր օրերի հեղինակներին: Իսկ ի՞նչ է անում Աստված. նա կյանք է խոստանում նրան, ով սեր և ակնածանք է ցուցաբերում իր հոր հանդեպ: Այս պատվիրանը հուշում է հենց ինքը բնությունը: Աստված պատվիրան է տալիս որդիակա՛ն սիրո մասին և ոչ թե հայրական սիրո, որովհետև նա գիտե, որ որդին, որի մեջ գալիս միանում են հոր բոլոր հիշողություններն ու հույսերը, անչափ շատ է սիրվում այս վերջինից: Ահա թե ինչու նա որդուն է հրամայում սիրել իր հորը, քանզի նա լավ է ճանաչում երիտասարդության հպարտությունն ու անկայուն վարքը:

Տասնաբանյա պատվիրանների, ինչպես նաև Աստծու այլ խոսքերի մեջ ներքին իմաստի ուժին միանում են ձևի վեհությունն ու մեծավայելչությունը: Հնադարյան օրենսդիրները իրենց հաստատած օրենքների մեջ նշել են ազգե-

րի տոները ժամանակաշրջանները, բայց Իսրայելի ժողովրդի հանգստյան օրը հենց իր Աստծու հանգստյան օրն է: Եբրայեցին և նրա ժառանգորդը, որ հեթանոս էր կոչվում, իր կնճռոտ ու խրթին աշխատանքի ժամերին իր աչքի առաջ էր բերում հենց տիեզերքի հաջորդական ստեղծագործությունը: Հույները, որոնք թեև այնքան բանաստեղծական ժողովուրդ են եղել, երբեք չեն մտածել հիշատակության արժանացնել հողագործի կամ աշխատավորի հոգածու աշխատանքը այն պահերին, երբ Աստված ստեղծեց լույսը, գծեց արևի ճանապարհը և շունչ տվեց մարդու սրտին:

Ո՛վ աստվածային օրենքներ, ինչքան քիչ էք նման մարդկանց կողմից սահմանված օրենքներին: Լինելով հավիտենական, ինչպես այն Սկզբունքը, որից բխեցիք, դուք դիմադրում եք դարերին, դիմադրում եք նույնիսկ ժողովուրդների հալածանքներին ու նրանց ապականված բարքերին: Կրոնական այս օրենսդրությունը, որը ձևավորված է քաղաքական օրենսդրություններին առընթեր (սակայն անկախ նրանց ճակատագրից), մի մեծ հրաշալիք է: Մինչ թագավորություններն ու նրանց ձեռքը անցողիկ են ու փոփոխական, և մինչ իշխանությունները ձեռքից ձեռք են անցնում ըստ ճակատագրի տնօրինության, մի քանի քրիստոնյաներ, հակառակ կյանքի հարափոփոխ պայմաններին, հավատարիմ իրենց հավատին, շարունակում են պաշտել միևնույն Աստծուն և ենթարկվել միևնույն օրենքներին՝ չթուլացնելով բնավ իրենց բարոյական կապերը հեղափոխությունների և զանազան դժբախտությունների պատճառով: Նախնադարյան ո՞ր կրոնը չի կորցրել իր բարոյական ազդեցությունը՝ կորցնելով իր քրմերին և նրանց բոլոր զոհագործությունները: Ո՞ւր են Տրոֆոնիոսի<sup>8</sup> քարանձավի խորհուրդները ու Ցերես<sup>9</sup> Էլեզինայի<sup>10</sup> գաղտնիքները: Ապոլոնը չկործանվե՞ց Դելփիսի<sup>11</sup>, Բաադը<sup>12</sup> Բաբելոնի, Սե-

րապիսը<sup>13</sup> Թեբեսի<sup>14</sup>, Յուպիտերը<sup>15</sup> Կապիտոլի<sup>16</sup> հետ: Միայն քրիստոնեությունն էր, որ շատ հաճախ ականատես եղավ այն գեղեցիկ շինությունների կործանմանը, ուր մատուցվում էին իր մեծաշուք արարողությունները՝ առանց սակայն սասանվելու դրանց անկումից: Հիսուս Քրիստոսը միշտ տաճար չի ունեցել, սակայն կենդանի Աստծու համար ամեն ինչ տաճար է՝ թե՛ գերեզմանատները, թե՛ լեռան քարայրները և թե՛ մանավանդ արդար մարդկանց սրտերը: Հիսուս Քրիստոսը միշտ չի ունեցել պորփյուրե խորաններ, մայրու փայտից շինված բեմեր և մեծահարուստ երջանիկ մարդիկ որպես սպասավորներ: Բավական է անապատում մի համեստ քար՝ կատարելու իր խորհուրդները, մի ծառ՝ քարոզելու իր օրենքները և փչե մի խշտյակ՝ գործադրելու իր առաքինությունները:



**ՄՈՎՍԵՍԻ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ  
ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՅՈՒՍ ԲՈՂՈՐ  
ԿՈՍՄՈԳՐԱՖԻԱՆԵՐԻ (տիեզերածնությանը)  
ՆԿԱՏՄԱՄԲ**

Ճշմարտություններ կան, որ ոչ ոք չի մերժում, թեև հնարավոր է դրանց մասին անմիջական ապացույցներ բերել: Այդ ճշմարտությունների թվին են պատկանում ըմբոստությունն ու հպարտության ոգու կործանումը, աշխարհի ստեղծումը, սկզբնական երջանկությունը և մարդու մեղքը: Անկարելի է հավատալ, որ մի անհեթեթ սուտ դառնա համաշխարհային ավանդություն: Բայց արեք երկրորդ Զարաթուստրայի<sup>1</sup> գրքերը, կարդացե՛ք Պլատոնի և Լուսինի<sup>2</sup> երկխոսությունները, Պլուտարկոսի<sup>3</sup> բարոյագիտական աշխատությունները, չինացիների հիշատակարանները, եբրայեցիների Սուրբ Գիրքը, սկանդինավյան հին ժողովուրդների էդեաները<sup>4</sup>, փոխադրվեցե՛ք Աֆրիկայի սևամորթների կամ Հնդկաստանի գիտնական քրմերի մոտ, այդ բոլորը ձեզ կպատմեն չարի աստծու կատարած ոճիրների մասին, կնկարագրեն մարդու երջանկության խիստ կարճատև շրջանները և երկար շարանն այն աղետների, որոնց ենթարկվել է նա իր անմեղությունը կորցնելուց հետո:

Վուլտերը մի տեղ այն միտքն է հայտնում, որ մեզ՝ մարդկությունը, որպես ժառանգություն է մնացել աշխարհի ծագման և այն կազմող ֆիզիկական ու բարոյական տարրերի մասին եղած բոլոր ավանդությունների ամենավատ պատկերը: Արդյոք նա տիեզերածնության մասին հին եգիպտացիների ունեցած պատկերացո՞ւմն էր նախընտ-

րում՝ Թեբեսի<sup>5</sup> քրմերի պատկերացրած թեւավոր մեծ ճո՞ւն: Տեսեք, թե ինչե՛ր է դուրս տալիս Մովսեսից հետո ամենա-  
հին պատմագիրն ամենայն լրջությամբ.

«Տիեզերքը սկզբնապես եղել է մռայլ և փոթորկոտ օդ, մռայլ օդից և անհանդարտ, խռովահույզ քառսից կազմ-  
ված քամի: Այն եղել է անեզր ու երկար ժամանակ չի ու-  
նեցել ո՛չ սահման, ո՛չ կերպարանք: Բայց երբ այդ քամին սիրահարվեց իր սեփական սկզբին՝ օդին ու քառսին, դրան-  
ցից առաջ եկավ մի խառնուրդ, և այդ խառնուրդը կոչվեց ցանկություն կամ սեր: Այդ խառնուրդը, լինելով ամբող-  
ջական, դարձավ ամեն ինչի սկզբնաղբյուրը: Բայց քամին չէր ճանաչում իր իսկ կատարած գործը՝ խառնուրդը: Այս վերջինը իր հոր՝ քամու հետ, իր հերթին ծնեց կավը կամ հո-  
ղը, և սրանից էլ դուրս եկան տիեզերքի բոլոր ծնունդները»:

Գալով հույն փիլիսոփաներին՝ հոնիական աղանդի հիմ-  
նադիր Թալեսը<sup>6</sup>, որպես տիեզերքի սկիզբ, ընդունում է ջուրը: Պատո՞նը հաստատում էր, որ Աստված կարգավորել է աշխարհը, բայց չի կարողացել այն ստեղծել: «Աստված, ասում է նա, տիեզերքը ձևավորել է ըստ այն օրինակի, որ գոյություն է ունեցել ինքն իր մեջ հավիտենապես: Տեսա-  
նելի առարկաները Աստծու գաղափարի ստվերներն են միայն՝ միակ ճշմարիտ գոյացությունները: Բացի այդ, Աստված իր կյանքից մի շունչ է հոսեցրել էակների մեջ: Դրանով նա կազմել է մի երրորդ սկիզբ, որը եղել է միա-  
ժամանակ ոգի և նյութ, և այդ սկիզբը կոչվում է աշխարհի հոգին»:

Տիեզերքի ծագման մասին Արիստոտելը համարյա նույն բանն էր ասում, ինչ որ Պատոնը, բայց նա կարողացավ ե-  
րևակայել էակների շղթայի գեղեցիկ համակարգը և, գոր-  
ծողությունից գործողություն դեպի ետ գնալով, ապացու-  
ցեց, որ ինչ-որ տեղ գոյություն ունի առաջնագույն մի դրդապատճառ:



Ջենոնը<sup>7</sup> պաշտպանում էր այն տեսակետը, որ աշխարհը կարգավորվել է իր սեփական ուժականությամբ, որ բնությունը ներկայացնում է այն ամբողջը, որն իր մեջ ընդգրկում է համայնը, և այդ համայնը կազմված է երկու սկիզբներից՝ մեկը ներգործող, մյուսը կրավորական, որոնք, սակայն, գոյություն չունեն առանձին-առանձին, այլ միավորված են. այդ երկու սկիզբները ենթակա են մի երրորդի՝ ճակատագրին, Աստված, նյութը և ճակատագիրը մեկ ամբողջություն են, դրանք միաժամանակ կազմում են մեքենայի թե՛ անիվները, թե՛ շարժումը և թե՛ օրենքները և, որպես մասեր, հնազանդվում են այն օրենքներին, որ նրանք թելադրում են իբրև ամբողջություն:

Ըստ էպիկուրյան փիլիսոփայության, տիեզերքը գոյություն ունի հավիտենապես: Բնության մեջ կա միայն երկու բան՝ մարմին և դատարկություն: Մարմինները կազմված են նյութերի անհունորեն փոքր մասնիկների՝ հյուլեների կուտակումից, որոնք ունեն ներքին շարժում, ձգողականություն: Դրանց շրջանաձև շարժումը կկատարվեր ուղղահայաց մակարդակով, եթե, առանձնահատուկ մի օրենքով, դրանք մի կորագիծ չգծեին դատարկության մեջ:

էպիկուրը<sup>8</sup> ենթադրեց, որ այդ շարժումը կատարվում է թեքությունով՝ խուսափելու համար ճակատագրապաշտների այն սխտեմից, որն առաջ կգար, եթե հյուլեները շարժվեին ուղղահայաց մակարդակով: Բայց այս վարկածն անհեթեթ է, որովհետև, եթե թեքությունով կատարվող հյուլեի շարժումը օրենք է, դա անհրաժեշտությունից է. իսկ անհրաժեշտ մի պատճառ ինչպե՞ս կարող է առաջ բերել ազատ արդյունք:

Երկիրը, երկինքը, աստղերը, բույսերը, հանքային նյութերը, կենդանիները, ներառյալ մարդիկ, առաջացել են հյուլեների պատահական հանդիպումից, և, երբ երկրազնդի արտադրողական ուժն սպառվել է, կենդանի օրգա-

նիզմները շարունակել են իրենց գոյութիւնը ծննդագործութեամբ: Կենդանիների պատահաբար կազմված անդամներն սկզբնապես առանձին ոչ մի օգտագործման համար սահմանված չեն եղել: Գոգաձև ականջը չէր փոսացել լսելու համար, գմբեթարդ աչքը չէր կլորացել տեսնելու համար, բայց տարբեր գործածութիւնների համար սահմանված այս անդամները կենդանիներն օգտագործել են մեքենաբար՝ նախընտրելով մի այլ զգայարանից:

Տիեզերածնութեան վերաբերյալ փիլիսոփայական այս տեսութիւնները ներկայացնելուց հետո ավելորդ կլիներ խոսել նույն նյութին վերաբերող բանաստեղծների տեսութիւնների մասին: Ո՞վ ծանոթ է Դեկալիոնին և Պիրհային<sup>9</sup>, ոսկե դարին և երկաթե դարին: Գալով աշխարհի մյուս ժողովուրդների մոտ տարածված ավանդութիւններին՝ ասենք, որ Հնդկաստանում փիղն իր վրա էր պահում ամբողջ երկրագունդը. Պերուում ամեն ինչ արևն էր արել. Կանադայում մեծ նապաստակը աշխարհի հայրն էր. Գրոենլանդում մարդը դուրս էր եկել մի խեցուց, և, վերջապես, Սկանդինավիան տեսել էր Ասկուսի և Էմլայի<sup>10</sup> ծնունդը, որոնց Օդինը<sup>11</sup> տվել էր հոգի, Հեներուսը<sup>12</sup> բանականութիւն, և Լեդուրը<sup>13</sup> արյուն և գեղեցկութիւն:

Տիեզերքի ծագման վերաբերյալ այս այլազան տեսութիւնները մեզ կանգնեցնում են մանկական հեքիաթների և փիլիսոփայական վերացարկումների միջև: Եթե ստիպված լինենք ընտրութիւն կատարել, անշուշտ ավելի լավ կլիներ կողմնորոշվել դեպի առաջինները:

Բազում ընդօրինակութիւնների մեջ մի գեղանկարի բնագիր օրինակը կարողանալ որոշելու համար հարկավոր է փնտրել այն մեկը, որն իր միութեամբ, իր մասերի ներդաշնակութեամբ ու կատարելութեամբ ի հայտ է բերում վարպետ նկարչի հանճարը: Հենց այդ է, որ մենք գտնում ենք «Մենդոց գրքում», որը հանդիսանում է բնագիր օրի-

նակն այն գեղանկարների, որոնք վերարտադրված են ժողովուրդների ավանդույթյան մեջ: Ի՞նչ կա ավելի բնական և, հետևաբար, ավելի սքանչելի, ի՞նչ կա մարդու համար ավելի հեշտ ըմբռնելի և ավելի համապատասխան նրա բանականությանը, քան Արարիչը, որ իջնում է վաղնջական, խավարային գիշերի մեջ՝ ստեղծելու համար լույսը իր մեկ խոսքով: Այդ նույն պահին արևը կախվում է երկնքում, կապույտ անսահման մի կամարի կենտրոնում, իր անտեսանելի ցանցերի մեջ է առնում մոլորակները և դրանք պահում իր շուրջը որպես իր որսը: Ծովերն ու ան տառները սկսում են օրորվել երկրագնդի վրա, և նրանց առաջին ձայները վեր են բարձրանում՝ ավետելու համար տիեզերքին այն շքեղ ամուսնությունը, որին Աստված քահանա է լինելու, հողը՝ հարսանեկան անկողինը, իսկ մարդկային ցեղը՝ ապագա սերունդները\*:



---

\* «Կալկաթայի ընկերակցության» հիշատակարանները հաստատում են Ծննդոց գրքի ճշմարտությունները: Այդ հիշատակարանները մեզ ցույց են տալիս հնագույն դիցաբանությունը՝ բաժանված երեք ճյուղի, որոնցից մեկը տարածվում էր Հնդկաստանում, մյուսը՝ Հունաստանում, և երրորդը՝ Հյուսիսային Ամերիկայի վայրենիների մոտ: Այդ դիցաբանությունը կապված է առավել հին մի ավանդության հետ, որը նույն ինքը՝ Մովսեսի ավանդությունն է: Հնդկաստան այցելող ժամանակակից ճանապարհորդներն այնտեղ ամենուր գտնում են այն եղելությունների հետքերը, որոնք հիշատակված են Աստվածաշնչում: Այդ եղելությունների վավերականությունը երկար ժամանակ մերժվելուց հետո այժմ գիտնականների կողմից ընդունվել է (ծնթ. հեղինակի):

**ՄԱՐԴՈՒ ԱՆԿՈՒՄԸ. ՕՋԸ. ԵԲՐԱՅԵՐԵՆ ՄԻ ԲԱՌ**

Մարդ հիացմունքով է լցվում Սուրբ Գրքում նշված մի այլ ճշմարտություն նկատմամբ. դա մեռնող մարդն է կյանքի պողով իրեն թունավորած լինելու պատճառով, այլ խոսքով՝ կորստյան դատապարտված մարդը, որը ճաշակել էր գիտությունից, չափից դուրս էր ճանաչել բարին և չարը և դադարել Ավետարանի երեխաներին նմանվելուց: Ենթադրենք մի պահ Աստուծո կողմից դրված ուրիշ ամեն արգելք, որ վերաբերում է մարդու հոգու այս կամ այն հակումին. ի՞նչ կդառնային Ամենաբարձրյալի հաստատած կարգի իմաստությունն ու խորությունը: Այդպիսի արգելքը կլիներ Աստուծոն անարժան մի քմայք, և ոչ մի բարոյականությունն առաջ չէր գա Ադամի անհնազանդությունից: Մարդկային ամբողջ պատմությունը, ընդհակառակը, բխում է մեր նախահորը պարտադրված օրենքից: Աստված գիտությունը հասու դարձրեց մարդկանց. նա այդ չէր կարող նրան մերժել, որովհետև մարդը ծնվել էր մտացի և ազատ: Բայց Աստված նախապես ասել էր Ադամին, որ, եթե ուզենար չափից դուրս գիտենալ, ապա իրերի ճանաչողությունը կլիներ նրա և նրան հաջորդող սերունդների մահ: Ժողովուրդների քաղաքական և բարոյական կյանքի գաղտնիքը, մարդկային հոգու ամենախորունկ խորհուրդները պարփակված են այդ հիանալի, բայց ազետաբեր ծառի ավանդության մեջ:

Արդ, ահա հրաշալի շարունակությունը իմաստությունից դեմ Աստուծո դրած արգելքի. մարդն ընկնում է, և նրա անկման պատճառ է դառնում գոռոզության դեմ: Գոռոզությունը երևան է գալիս սիրո ճայնով՝ հրապուրելու համար նրան, և Ադամը մի կնոջ համար է, որ փորձում է հա-

վասարվել Աստծուն: Դա նրա սրտում զարգացումն էր առաջին երկու մեծ կրքերի՝ ունայնամտության և սիրո:

Բոսյուեն<sup>\*</sup> իր «Վերացումներ առ Աստված» գրքում, ուր մենք հաճախ վերագտնում ենք «Դամբանական ճառեր»-ի<sup>\*\*</sup> հեղինակին, խոսելով օձի խորհրդի մասին՝ ասում է, որ «հրեշտակները խոսում էին մարդու հետ այնպիսի տեսքով, ինչպիսի տեսքով Աստված նրանց թույլ էր տալիս երևալ, և հաճախ՝ կենդանիների դեմքով: Ուստի Եվան բնավ անակնկալի չեկավ, երբ տեսավ, որ օձը խոսում է, ինչպես որ չգարմացավ՝ տեսնելով Աստծուն իսկ, որ երևում էր ընկալելի ձևով»: Բոսյուեն ավելացնում է. «Ինչո՞ւ Աստված որոշեց, որ գեղեցիկ հրեշտակն ավելի շուտ երևա այդ տեսքով, քան մի այլ տեսքով: Թեև անհրաժեշտ է այդ բանը գիտենալ, այսուհանդերձ Աստված անուղղակիորեն մեզ հասկացնում է դա՝ ասելով, որ օձը բոլոր կենդանիների մեջ ամենախորամանկն է, այսինքն՝ նա լավագույնս ներկայացնում է դեին իր չարությամբ, իր որոգայթներով և, այնուհետև, իր չարչարանքներով»:

Մեր դարը ամբարտավանորեն մերժում է ամեն ինչ, որ կապ ունի հրաշքի կամ հրաշալիքի հետ: Բայց օձը, հաճախ, առարկա է դարձել մեր դիտարկումներին, և (եթե մեզ թույլ տանք համարձակորեն ասել) մենք հավատացել ենք, որ նրա մեջ կա այն կորստաբեր ոգին և այն խորագիտությունը, որ նրան վերագրում է Աստվածաշունչը: Այս անհասկանալի սողունի մեջ ամեն ինչ խորհրդավոր է, ամեն ինչ թաքնված, զարմանալի: Նրա շարժումները տար

---

\* Ժակ Բ. Բոսյուե (1627-1704) Ֆրանսիացի հռչակավոր աստվածաբան, գրող, քարոզիչ, քարոյագետ, որ հովվական մեծ աշխատանք է ծավալել իր հայրենիքում որպես կաթոլիկ Եկեղեցու եպիսկոպոս: Թողել է գրական մեծ ժառանգություն մեծ մասամբ կրոնական բովանդակությամբ: 1671 թ. ընտրվել է ֆրանսիական ակադեմիայի անդամ:

\*\* «Դամբանական ճառեր» Բոսյուեի ամենահայտնի երկը, որով նա ձեռք բերեց մեծ համբավ և հեղինակություն:

բերվում են մյուս բոլոր կենդանիների շարժումներից: Մարդ չի կարող ասել, թե ինչի մեջ է կայանում նրա տեղափոխվելու գաղտնիքը, որովհետև նա ոչ լողակ ունի, ո՛չ ոտք, թև, սակայն փախչում է ստվերի նման, անհետանում կախարդական կերպով, վերստին հայտնվում և ապա անհայտանում՝ նման մի բարակ կապույտ ծխի կամ մթության մեջ մի ակնթարթ երևացող սրտի փայլի: Մերթ ոլորվում և սլաքի նման դուրս է հանում կրակե լեզուն, մերթ ցցվում ու կանգնում է պոչի ծայրին, մերթ առաջանում է ուղղաձիգ դիրքով՝ կարծես կախարդված, նետվում առաջ՝ մեջքը կորացրած, բարձրանում ու իջնում պարուրած, օղակներն է շարժում ոլոր-ոլոր, մերթ փաթաթվում է ծառերի ճյուղերին և մերթ սահում մարգագետնի խոտերի վրա կամ ջրերի մակերեսին: Նրա գույները նույնքան անորոշ են, որքան նրա ընթացքը, դրանք փոփոխվում են համաձայն լույսի տարբեր անդրադարձումների, և, ինչպես նրա շարժումները, այդ գույներն ունեն հրապուրանքի կեղծ փայլն ու խաբուսիկ այլազանությունները:

Առավել զարմանալի են նրա սովորությունները. նա գիտե, ինչպես սպանություն գործած մարդը, դեն գցել իր արյունաթաթախ շապիկը՝ վախենալով, որ կարող է ճանաչվել: Տարօրինակ մի հատկությունը նա կարող է ետ իր արգանդը մտցնել այն փոքրիկ հրեշները, որ սերն էր դուրս բերել այնտեղից: Նա քնում է ամբողջ ամիսներ, հաճախում է գերեզմանները, բնակվում անծանոթ վայրերում, պատրաստում մահացու թույներ, որոնք իր գոհի մարմինը սառեցնում, այրում կամ բծավորում են այնպիսի գույներով, որոնցով հենց ինքն է դրոշմված: Մի տեղ նա ցցում է երկու սպառնալից գլուխներ, մի այլ տեղ հնչեցնում զանգակի սուր ձայն, սուլում է լեռնային արծվի նման և Փշշում ու մռնչում ինչպես կատաղած ցուլ: Նա հաղորդակից է լինում մեր բարոյական կամ կրոնական գաղափար-

ներին՝ ասես ազդեցութիւն ունենար մեր ճակատագրերի վրա: Որպես սոսկումի կամ հիացումի առարկա, մարդիկ անհաշտ ատելությամբ են լցվում նրա հանդեպ կամ ուժաթափ ընկնում նրա ոգու առաջ: Սուտը կանչում է նրան, խոհեմութիւնը՝ պահանջում, նախանձը նրան կրում է իր սրտում, իսկ պերճախոսութիւնը՝ եպիսկոպոսական գավազանի գլխին: Դժոխքում նա վրեժխնդրութեան դիցուհիներին գինում է մտրակներով, իսկ երկնքում հավերժութիւնը իր խորհրդանիշն է դարձնում նրան: Եվ դեռ նա տիրապետում է անմեղութիւնը հրապուրելու արվեստին. նրա հայացքից կախարդվում են օդում թռչող թռչունները, իսկ մսուրում պառկած նորածին գառնուկը թողնում է նրան իր կաթը: Բայց ինքն էլ, իր հերթին, հրապուրվում է քաղցր հնչյուններով, և հովիվը հեշտությամբ նրան հնազանդեցնում է իր սրինգով:

1791 թվականի հուլիսին մենք ճանապարհորդում էինք Վերին Կանադայում Օնոնտագոների ցեղին պատկանող վայրերի մարդկանցից բաղկացած մի քանի ընտանիքներով: Մի օր, երբ մենք կանգ էինք առել ընդարձակ մի դաշտավայրում՝ Գենեգի անունով մի գետի ափին, բոժոժավոր մի օձ մտավ մեր ճամբարը: Մեր խմբում կար կանադացի մի սրնգահար: Սա, ցանկանալով մեզ զվարճացնել, առաջացավ դեպի օձը՝ զինված նոր տեսակի երաժշտական գործիքով: Նկատելով իր թշնամու մոտենալը՝ սողունը իսկույն ոլորվեց, տափակացրեց իր գլուխը, ուռցրեց այտերը, կծկեց շրթունքները՝ ցույց տալով իր թունալից ատամներն ու արնագույն երախը: Նա շողացրեց իր երկճյուղ լեզուն գույգ բոցերի պես. նրա աչքերը նման էին երկու հրաշեկ ածուխների. կատաղութիւնից ուռած նրա մարմինը իջնում ու բարձրանում էր դարբնի փքոցի նման. մաշկը, լայնանալով, դարձել էր անփայլ և թեփոտ, իսկ պոչը, որից չարագուշակ մի աղմուկ էր դուրս գալիս, այն-

պիսի արագութեամբ էր ճոճվում, որ ասես թեթև գոլորշի լիներ:

Այն ժամանակ կանադացին վերցրեց իր սրինգն ու սկսեց նվագել: Օձը, հանկարծակիի եկած, անսպասելի մի շարժում կատարեց և ետ քաշեց իր գլուխը: Նվագի մոգական ազդեցութեամբ բռնված՝ նրա աչքերը հետզհետե կորցրին իրենց դաժան փայլը, նրա պոչի թրթռումները դանդաղեցին, և այն աղմուկը, որ նա հանում էր, թուլանալով՝ կամաց-կամաց չքացավ: Հմայված օձի մարմնի օղակները, իրենց կորագծի վրա նվազ ուղղահայաց դիրք ընդունելով, լայնացան և իրար հետևից, աստիճանաբար, իջան ցած՝ գետնի վրա համակենտրոն շրջանակներ կազմելով: Կապույտ, կանաչ, սպիտակ և ոսկեգույն երանգները վերստացան իրենց փայլը նրա սարսուռացող մաշկի վրա, և նա, մեղմորեն շուռ տալով գլուխը, մնաց համակ ուշադրութեան և հաճույքի դիրքում:

Այդ պահին կանադացին մի քանի քայլ արեց՝ իր սրինգից արտաբերելով մեղմ և միօրինակ հնչյուններ: Օձը ցած իջեցրեց իր երփներանգ վիզը, գլխով կիսով չափ բաց արեց գետնի նուրբ խոտերը և սկսեց սողալ երաժշտի ոտնահետքերի վրայով՝ մերթ կանգ առնելով, երբ նա կանգ էր առնում, և մերթ վերսկսելով հետևել նրան, երբ նա սկսում էր հեռանալ: Այսպիսով օձն առաջնորդվեց մեր ճամբարից դուրս ինչպես տեղաբնիկ վայրենիներից, այնպես էլ եվրոպացիներից բաղկացած մի մեծ բազմութեան հայացքի տակ, որոնք հագիվ կարողանում էին հավատալ իրենց աչքերին: Երաժշտութեան հրաշագործ ազդեցութեան տակ քարացած ամբոխի միջից մի ձայն լսվեց միայն, որը խնդրում էր թույլ տալ կենդանուն, որ փախչի հեռանա:

Օձի սովորութիւններից մակաբերված այս ճշմարտութեան վրա, որը խոսում է ի նպաստ Սուրբ Գրքի ճշմարտութիւնների, մենք կցանկանայինք ավելացնել մեկ ուրի-



չը՝ փոխ առնված եբրայերեն մի բառից: Խիստ տարօրինակ և միևնույն ժամանակ խորապես փիլիսոփայական չէ՞ արդյոք այն, որ մարդ բառը իր ծագումով եբրայերենում նշանակում է ջերմություն կամ վիշտ: Եբրայերեն էնոշ (=մարդ) բառարմատն առաջացել է անաշ բայից, որը նշանակում է ծանրորեն հիվանդանալ: Աստված այդ անունը չէր տվել մեր նախահորը. նա նրան անվանում էր պարզապես Ադամ (=կարմիր հող, կավ): Սկզբնական մեղքից հետո է, որ Ադամի սերունդն ստացավ այդ էնոշ կամ մարդ անունը, որ կատարելապես պատշաճում էր նրա թշվառություններին և պերճախոս կերպով արտահայտում թե՛ հանցանքը և թե՛ պատիժը: Գուցե, իր անձկության մեկ պահին, Ադամը, որը վկա էր լինում իր կնոջ տաժանագին աշխատանքին, իր թևերի մեջ առնելով Կայենին՝ իր անդրանիկ որդուն, բարձրացրեց նրան դեպի երկինք՝ բացականչելով. «Էնո՛շ, ո՛վ վիշտ»: Տխո՛ւր բացականչություն, որով հետագայում ներկայացվելու էր մարդկային ցեղը:





## ԽՈՐՀՐԴԻ ԷՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### I

Կյանքում ոչ մի բան այնքան գեղեցիկ չէ, այնքան քաղցր ու մեծ, որքան խորհրդավոր բաները: Ամենահրաշալի զգացումները այն զգացումներն են, որոնք մեզ հուզում են մի քիչ անորոշ կերպով: Ամոթխածությունը, մաքուր սերը, առաքինի բարեկամությունը լեցուն են գաղտնիքներով: Ասում են, որ իրար սիրող սրտերը կես բառով հասկանում են միմյանց և ամբողջովին չեն բացվում մեկմեկու: Անմեղությունը, որը մի սուրբ անգիտություն է, իր հերթին ամենից ավելի անհիմանալի խորհուրդներից մեկը չէ՞ միթե: Մանկությունը շատ երջանիկ շրջան է հենց միայն նրա համար, որ մանուկը ոչինչ չգիտե, իսկ ծերությունը՝ թշվառության շրջան, որովհետև ծեր մարդը ամեն ինչ գիտե: Բարեբախտաբար, երբ նրա համար կյանքի խորհուրդները վերջանում են, մահվան խորհուրդներն են սկսվում:

Արդ, եթե այսպիսին են զգացումները, այսպիսի՛ն են նաև առաքինությունները: Ամենահրեշտակային առաքինությունները այն առաքինություններն են, որոնք, ինչպես գթասիրությունը, բխելով ուղղակի Աստուծոց, սիրում են թաքնվել մարդկային հայացքից, ինչպես՝ դրանց աղբյուրը:

Անցնելով մտքի հարաբերություններին՝ գտնում ենք, որ մտածման հաճույքները նույնպես գաղտնիքներ են: Գաղտնիքն այնպիսի աստվածային բնույթ ունի, որ Ասիայի առաջին մարդիկ խորհրդանշաններով էին խոսում միայն: Ո՞ր գիտությանն ենք մենք վերագառնում անընդհատ. այն գիտությանը, որը միշտ ինչ-որ բան է թողնում մեզ գուշակելու և, որը մեր հայացքը բեկում է անսահ-

ման մի հեռանկարի վրա: Եթե մենք մոլորվում ենք անապատում, մի տեսակ բնագոյ մեզ հեռու է պահում դաշտերից, որտեղ ամեն ինչ երևում է մի՛ հայացքով: Մենք պիտի փնտրենք կրոնի օրրան հանդիսացող անտառները, այն անտառները, որոնց աղմուկն ու լռությունը լցված են զարմանահարաչ բաներով, պիտի փնտրենք այն մենավոր վայրերը, որտեղ ագռավներն ու մեղուները կերակրում էին Եկեղեցու առաջին Հայրերին, և որտեղ այդ սուրբ մարդիկ այնքան շատ հաճույքներ էին վայելում, որ բացականչում էին. «Տե՛ր, բավակա՛ն է, ես կմեռնեմ այսքան քաղցրությունից, եթե չչափավորեա իմ ուրախությունը»: Վերջապես, մենք չենք կանգնի ժամանակակից մի հուշարձանի առջև, որի սկիզբը հայտնի է: Բայց, եթե ամայի մի կղզում, օվկիանոսի մեջտեղում, հանկարծ գտնենք բրոնզե մի արձան, որի պարզած թևը մեզ ցույց տա այն շրջանները, ուր արևը մայր է մտնում, որի հիմքը ծածկված լինի ծովի ջրերով ու ժամանակակից աղարտված մեհենագիր արձանագրություններով, խոկումների ինչպիսի՛ աղբյուր կլինի դա մեզ՝ ճանապարհորդներին համար: Տիեզերքում ամեն ինչ թաքնված է, ամեն ինչ՝ անհայտ: Մարդն ինքը զարմանալի մի խորհուրդ է՞ միթե: Որտեղի՞ց է սկիզբ առնում փայլակը, որը մենք գոյություն ենք կոչում, և որտե՞ղ է հանգում նա: Աստված ծնունդը և մահը, քողարկված երկու ուրվականների ձևով, դրել է մեր կյանքի երկու ծայրերին. մեկը սկզբնավորում է մեր կյանքի անըմբռնելի պահը, իսկ մյուսն շտապում է այն կլանել:

Ի նկատի ունենալով մարդու հակումը խորհուրդների հանդեպ՝ զարմանալի է, ուրեմն, որ բոլոր ժողովուրդներն ունեն իրենց անթափանցելի գաղտնիքները: Հին Հունաստանի քրմերը սովորում էին Դոդոնների<sup>1</sup> աղավնիների զարմանալի խոսքերը: Հնդկաստանը, Պարսկաստանը, Եթովպիան, Սկյութիան, գալիացիները, սկանդինավյան հին ժո-

ղովուրդներն ունեին իրենց քարայրները, իրենց սրբազան լեռներն ու սրբազան կաղնիները, որտեղ հնգիկ բրահմանը, պարսիկ մոգերը, գիմնոսոֆիստները<sup>2</sup>, գալիացի քրմերը արտասանում էին անմահների անբացատրելի պատգամը:

Աստված ոչ անի, որ մենք փորձենք այս խորհուրդները համեմատել ճշմարիտ կրոնի խորհուրդների հետ, կամ երկնքում բնակվող գերագույն էակի անհեղլի խորությունները բաղդատենք այն աստվածների հեղհեղուկ խրթնությունների հետ, որոնք մարդկանց ձեռակերտներն են: Մենք պարզապես ցանկացանք դիտել տալ, որ առանց խորհուրդների չկա կրոն, և այդ խորհուրդներն են, որոնք, զոհազործության հետ միասին, էապես կազմում են կրոնի հիմքը: Աստված ինքը բնության մեծագույն գաղտնիքն է: Աստվածությունը քողարկված էր Եգիպտոսում, և սֆինքսը նստում էր նրա տաճարների շեմքին:



## ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

### II

Խորհուրդների բաժնուժ առաջին հայացքից նկատում ենք, որ քրիստոնեական կրոնը մեծ առավելություն է ներկայացնում հնադարի կրոնների բաղադատմամբ: Այս վերջինների խորհուրդները ոչ մի առնչություն չունեն մարդու հետ և ամենաշատը խորհրդածուխյան նյութ են հանդիսանում միայն փիլիսոփայի համար կամ երգերի նյութ՝ բանաստեղծի համար: Մեր խորհուրդները, ընդհակառակը, մեզ են ուղղված. դրանք մեր էության, մեր բնության գաղտ նիքներն են պարունակում: Խնդիրն այստեղ թվերի պարզ դասավորությանը չի վերաբերում, այլ՝ մարդկային ցեղի փրկությանն ու երջանկությանը: Մարդը, որ այնքան լավ էր զգում իր տգիտությունն ու տկարությունը ամեն օր, կարո՞ղ է դեն գցել Հիսուս Քրիստոսի խորհուրդները, չէ՞ որ դրանք դժբախտների խորհուրդներն են:

Երրորդությունը՝ քրիստոնյաների առաջին խուրհուրդը, ընդարձակ մի դաշտ է բաց անում փիլիսոփայական ուսումնասիրությունների համար, լինի Աստուծու ստորագելիները նկատի ունենալու, լինի անցյալում Արևելքի մեջ շատ տարածված այս վարդապետության հետքերը որոնելու իմաստով: Տրամաբանելու շատ վատ եղանակ է դեն գցել կամ մերժել այն, ինչը չես կարող հասկանալ: Կյանքում, սկսած ամենապարզ բաներից, հեշտ է ապացուցել, որ մենք անգիտանում ենք ամեն ինչ և ուզում ենք թափանցել Իմաստության խորամանկությունների մեջ:

Երրորդությունը գուցե ծանոթ է եղել հին եգիպտացիներին: Հռոմում Մեծ կրկեսի հսկայական կոթողի վրա կա

Հունարեն հետևյալ արձանագրությունը. «Մեծն Աստված, Աստծուց բխածը, Պայծառափայլը» (Ապոլոնը, Հոգին):

Պոնտացի Հերակլիդեսը<sup>3</sup> և Պորփյուրը<sup>4</sup> հիշատակում են Սերապիսի<sup>5</sup> հռչակավոր պատգամը. «Սկզբից ամեն ինչ Աստված է. ապա՝ Բանը և Հոգին. երեք համածին աստվածներ՝ միավորված մեկի մեջ»:

Մոզերն ունեին մի տեսակ Երրորդություն իրենց Մետրիսի<sup>6</sup>, Օրոմասիսի<sup>7</sup> և Արամինիսի<sup>8</sup> մեջ: Թվում է, թե Պլատոնը այս վարդապետության մասին է խոսում իր գրվածքների շատ տեղերում:

«Ոչ միայն, նշում է Դասիեն, ասում են, որ նա (Պլատոնը) ճանաչել է Բանը՝ Աստծու հավիտենական Որդին, այլև հաստատում են նույնիսկ, որ նա ճանաչել է Սուրբ Հոգին և այսպիսով որոշ գաղափար է ունեցել Երրորդության մասին, որովհետև նա հետևյալն է գրում կրտսեր Դենիսիոսին<sup>9</sup>.

«Պետք է, որ ես Արքեդեմոսին հայտնեմ այն, ինչը շատ ավելի արժեքավոր է ու հրաշալի, և դուք շատ եք ցանկանում այն գիտենալ, քանի որ դուք նրան հատուկ ուղարկել եք ինձ մոտ. քանզի, ըստ այն բանի, որ նա ինձ ասաց, դուք չեք կարծում, որ ես բավարար չափքով ձեզ բացատրել եմ, թե ինչ եմ մտածում առաջին պատճառի էության մասին: Պետք է այդ մասին ձեզ գրեմ առեղծվածային լեզվով, որպեսզի, եթե նամակս, ծովում թե ցամաքում, ուրիշի ձեռքն անցնի, ապա նա կարդալով՝ ոչինչ չհասկանա: Գոյություն ունեցող բոլոր բաները իրենց Թագավորի շուրջն են գտնվում. դրանք կան՝ Նրա՛ պատճառով, և Նա՛ է միակ պատճառը բոլոր լավ բաների, երկրորդականների, ինչպես և երրորդականների»:

«Էպիհնոմիսում»<sup>10</sup> և այլուր նա, որպես սկիզբ, դնում է առաջին Բարին, ապա Բանը կամ Իմացությունը՝ Հոգին: Առաջին Բարին Աստված է. Բանը կամ Իմացությունը այդ

առաջին Բարու որդին է, որին նա ծնել է իր նմանությամբ. իսկ Հոգին, որը սահմանն է Հոր և Որդու միջև, Սուրբ Հոգին է»<sup>\*</sup> :

Պատոնը Երրորդության այս վարդապետությունը փոխ էր առել Տիմալոս Լոկրեսացուց<sup>11</sup>, որը, իր հերթին, այն վերցրել էր հին իտալական փիլիսոփայական դպրոցից: Մարսիլիո Ֆիչինոն<sup>12</sup> Պատոնի մասին իր դիտարկումներից մեկում, ըստ Յամբլիքոսի<sup>13</sup>, Պորփյուրի, Պատոնի և Մաքսիմոս Տյուրոսացու<sup>14</sup>, ցույց է տալիս, որ Պյութագորասի հետևորդները նույնպես ճանաչում էին Եռյակի գերազանցությունը:

Երրորդությունը ծանոթ է եղել Հնդկաստանում: «Ամենաուշագրավ և ամենազարմանալի բանը, - ասում է Հայր Կալմեստը<sup>15</sup>, - որ ես տեսա այնտեղ (Հնդկաստանում), մի բնագիր էր՝ քաղված Լամաստամբամից<sup>16</sup>՝ նրա մի գրքից... Բնագիրն այսպես է սկսվում. Տերը՝ Բարին, Մեծն Աստված. նրա բերանում է Բանը: Այնուհետև խոսվում է Սուրբ Հոգու մասին այս բառերով՝ Քամի կամ կատարյալ Հոգի և վերջանում արարչագործությունը, որը վերագրվում էր միակ Աստծուն<sup>\*</sup> »:

Երրորդությունը ծանոթ է եղել նաև Թիբետում:

«Ահա թե ինչ սովորեցի Թիբետի կրոնից. նրանք Աստծուն կոչում են Կոնսիոզա, և թվում է, թե որոշ գաղափար ունեն պաշտելի Երրորդության մասին, որովհետև մերթ նրան անվանում են Կոնսիկոնսիոկ՝ միանձնյա Աստված, և մերթ՝ Կոնսիոկսում եռանձնյա Աստված: Նրանք գործածում են մի տեսակ համրիչ, որի հատիկները քաշելիս արտասանում են հետևյալ բառերը. օմ, հա, հում: Երբ նրանց հարցնում ենք դրանց բացատրությունը, պատասխանում են, որ օմ նշանակում է իմացականություն կամ թև, այսինքն՝

\* Պատոնի երկերը, թարգմ. Դասիեի (Ֆրանս.), հատ. 1, էջ 194:

\*\* Հայր Կալմեստ, Հոգեշահ նամակներ (Ֆրանս.), հատ. ԺԴ, էջ 9:



ուժ, հնա նշանակում է Բան, խոսք, իսկ հում սիրտ կամ սեր, և այդ երեք բառերը նշանակում են Աստված»<sup>\*</sup> :

Անգլիացի միսիոներները Տաճիտիում գտել են Երրորդ դուլթյան որոշ հետքեր այդ կղզու բնակիչների կրոնական ուսմունքի մեջ:

Ի դեպ, հենց բնուլթյան մեջ մենք նկատում ենք Երրորդ դուլթյան մի տեսակ ֆիզիկական ապացույցը: Երրորդ դուլթյունը տիեզերքի նախատիպն է կամ, եթե ուզում եք, նրա աստվածային ատաղձը: Հնարավոր չէ՞ արդյոք մտածել, որ տիեզերքի արտաքին և նյութական ձևը ներկայացնում է այդ ներքին և ոգեկան ատաղձը, որը պահում է այդ ձևը, ինչպես որ Պլատոնը Ֆիզիկական բաները ներկայացնում էր որպես Աստծու մտածումների ստվերը: Բնուլթյան մեջ երեք թիվը թվում է, թե գերազանց թիվն է: Նա չի ծնված, նա ինքն է ծնում մյուս բոլոր կոտորակները, դրա համար էլ Պյութագորասի կողմից այն կոչվում է անմայր թիվ: Երրորդ դուլթյան մասին մի քանի անհայտ ավանդուլթյուններ կարելի է հայտնաբերել մինչև իսկ բազմաստվածյան կրոնին վերաբերող առասպելների մեջ: Հունահռոմիական դիցաբանուլթյան մեջ գեղեցկուլթյան աստվածուհիները՝ Ծնորհները, երեքն էին: Երեք թիվը գոյուլթյուն ուներ Տարտարոսում<sup>17</sup> և վերաբերում էր մարդու կյանքին, մահվանը և երկնային վրեժխնդրուլթյանը: Վերջապես իրար եղբայր երեք աստվածներ, միմյանց միանալով, կազմում էին տիեզերքի ամբողջ հզորուլթյունը: Փիլիսոփաները բարոյական մարդուն բաժանում էին երեք մասի, իսկ Եկեղեցու մեծ Հայրերը հավատում էին, որ Երրորդ դուլթյան հոգևոր պատկերը վերագտել են մարդու հոգու մեջ: «Եթե լուլթյուն պարտադրենք մեր զգայարաններին, - ասում է Բոսյունեն, - և կարճ ժամանակով ներփակվենք մեր հոգու խորքում, այսինքն՝ մեր էուլթյան այն մասում, ուր լսվում

<sup>\*</sup> Նույնը, հատ. ԺԲ, էջ 437:

է ճշմարտութիւնը, մենք այնտեղ կտեսնենք մեր պաշտամունքին առարկա դարձած Երրորդութեան որոշ մեկ պատկերը: Մտածումը, որի ծնունդն ենք զգում մեր մեջ որպէս մեր հոգու ծլարձակումը, որպէս մեր իմացականութեան զավակը, որոշ գաղափար է տալիս մեզ Աստուծու Որդու մասին, որը հավերժորեն հղացված է երկնային Հոր իմացականութեան մեջ: Ահա թե ինչու Աստուծու այդ Որդին ստանում է Բան անունը, որպէսզի մենք իմանանք, որ նա ծնվում է Հոր ծոցում, բայց ոչ ինչպէս ծնվում են մարմինները, այլ ինչպէս ծնվում է մեր հոգում այն ներքին խոսքը, որ մենք զգում ենք այնտեղ, երբ մտորում ենք ճշմարտութեան մասին:

«Բայց մեր հոգու արգասավորումը չի ավարտվում այդ ներքին խոսքով, այդ հոգեւոր իմացութեամբ, ճշմարտութեան այն պատկերով, որը կազմվում է մեր մեջ: Մենք սիրում ենք թե՛ այդ ներքին խոսքը և թե՛ այն հոգին, որտեղ նա ծնվում է. և, սիրելով այն, զգում ենք ինչ-որ բան, որը մեզ համար նվազ արժեքավոր չէ, քան մեր հոգին և մեր մտածումը, որը արգասիքն է թե՛ մեկին և թե՛ մյուսի, որը միանում է նրանց և նրանց հետ կազմում միեւնոյն կյանքը:

«Այսպիսով, այն չափով, ինչ չափով որ կարող է առնչութիւն գոյութիւն ունենալ Աստուծու և մարդու միջև, ասում եմ՝ այսպիսով առաջանում է Աստուծու մեջ հավիտենական սերը, որը դուրս է գալիս Հորից, որ մտածում է, և Որդուց, որ Նրա մտածումն է՝ կազմելու համար Հոր և Նրա մտածման հետ միեւնոյն էութիւնը՝ հավասարապէս երջանիկ և կատարյալ»<sup>\*</sup>:

Ահա գեղեցիկ մի մեկնաբանութիւն «Ծննդոց գրքի» հետևյալ միակ խոսքի վերաբերյալ. «Ստեղծենք մարդուն»:

---

<sup>\*</sup> Բոյոյե, Տիեզերական պատմություն (ֆրանս.), Բ. հատ. Բ մաս, էջ 167-168:

Տերտուղիանոսը<sup>18</sup> իր «Ձատագովական»-ի մեջ այսպես է արտահայտվում մեր կրոնի այս մեծ խորհրդի մասին. «Աստված աշխարհն ստեղծեց իր խոսքով, իր բանականությամբ, իր զորությամբ: Ձեր փիլիսոփաներն իսկ համաձայն են, որ լողոսը՝ Բանը՝ Բանականությունը տիեզերքի արարողն է: Քրիստոնյաներն ավելացնում են միայն, որ Բանին և Բանականությունը հատուկ գոյացությունը, այն գոյացությունը, որով Աստված ամեն ինչ ստեղծել է, հոգի է. որ այդ խոսքը կամ Բանը պետք է արտասանված լինի Աստծու կողմից, որ Աստված այն արտասանելիս այն ծնել է, և, հետևաբար, նա Աստծու Որդի է և Աստված՝ գոյացություն միություն պատճառով: Եթե արեգակը մի ճառագայթ է արձակում, դրա գոյացությունը անջատված չէ արեգակից, այլ՝ տարածված: Այսպես էլ Բանը Հոգի է հոգուց և Աստված՝ Աստծուց, ինչպես այն լույսը, որը լուսավորվում է մի ուրիշ լույսից: Այսպես, ինչ որ գալիս է Աստծուց, Աստված է, և այդ երկուսը, իրենց հոգու հետ, մի են. տարբերվում են իրենց հատկությամբ, բայց ոչ թվով, իրենց կարգով, բայց ոչ էությունով: Որդին գուրս է եկել իր աղբյուրից՝ առանց նրանից բաժանվելու: Արդ, Աստծու այս ճառագայթը իջել է մի կույսի արգանդի մեջ, մարմնավորվել է, մարդացել՝ միացած Աստծուն: Այս մարմինը, պաշտպանված հոգուց, սնվում է, աճում, ուսուցանում, գործում. դա Քրիստոսն է»:

Երրորդությունը այս բացատրությունը կարող է հասկանալի լինել նույնիսկ ամենապարզ մտքերին: Պետք է հիշել, որ Տերտուղիանոսը իր խոսքն ուղղում էր այն մարդկանց, որոնք հալածում էին Հիսուս Քրիստոսին, և որոնց համար ամենացանկալի բանն էր գտնել մի միջոց՝ հարձակվելու համար քրիստոնեական ուսմունքի և նույնիսկ այն պաշտպանողների վրա: Մենք կարիք չենք զգում ավելի առաջ մղելու այս ապացույցները և դրանք թողնում ենք

մարդկանց, որոնք ուսումնասիրել են իտալական հին աղանդի ուսմունքն<sup>19</sup> ու քրիստոնեական բարձրագույն աստվածաբանությունը:

Գալով այն պատկերներին, որոնք մեր տկար զգայարանների առաջ են դնում քրիստոնեական մեծագույն խորհուրդը, մենք դժվարանում ենք ըմբռնել, թե ամպերի մեջ դրոշմված կրակե ահավոր եռանկյունը ծիծաղելի ի՞նչ բան կարող է ունենալ բանաստեղծություն մեջ: Հայր Աստծու՝ բոլոր ժամանակների մեր մեծաքանչ Նախահոր կերպարը, ներկայացված ծերունու կերպարանքով կամ հեղեղանման լույսի պատկերով, մի՞թե ավելի ցածրորակ գեղանկար կլինի, քան դիցաբանական գեղանկարները: Հրաշալի բան է՞ արդյոք տեսնել Սուրբ Հոգին՝ Տիրոջ վեհապանծ Հոգին՝ ներկայացված քաղցրություն, սիրո և անմեղություն խորհրդապատկերով: Աստված իր խոսքը սերմանելու կարիքից կնեղվի՞ երբևէ: Հոգին այլևս այն աղավնին է, որը մարդկանց ծածկում էր իր խաղաղարար թևերով. նա տեսանելի Բանն է, այն կրակե լեզուն, որ խոսում է աշխարհի բոլոր լեզուներով, և որի պերճախոսությունը բարձրացնում կամ տապալում է կայսրություններ: Աստվածորդուն պատկերելու համար բավական է, որ փոխ առնենք այն մարդու խոսքերը, որ Նրան տեսավ իր փառքի մեջ. «Նա նստած էր մի գահի վրա, ասում է առաքյալը, Նրա դեմքը փայլում էր ինչպես հրավառ արև, և Նրա ոտքերը՝ ինչպես հնոցի մեջ ծխացող հրաշեկ պղինձ: Նրա աչքերը կրակե զույգ բոցեր էին: Նրա բերանից դուրս էր գալիս սրած երկսայրի սուր: Իր աջ ձեռքում Նա ուներ յոթը աստղեր, իսկ ձախ ձեռքում՝ մի գիրք՝ կնքված յոթը կնիքով: Նրա շրթների առջև կար լույսի մի հեղեղ: Աստծու յոթը հոգիները փայլում էին Նրա առաջ նման կրակի յոթը ջահերի, և Նրա աթոռից ելնում էին ձայներ, փայլատակումներ և որոտներ»<sup>\*</sup>:

---

<sup>\*</sup> Հայտնություն, գլ. 1 և 4:

III

Ինչպես որ Երրորդության խորհուրդը պարունակում է բնագանցական կարգի գաղտնիքներ, նույնպես և փրկագործության խորհուրդը իր մեջ պարունակում է մարդու և նրա սրտի պատմության հրաշալիքները: Եթե մի քիչ համենանք բարձրագույն կարգի խոկումների մեջ, զարմանքով կնկատենք առաջացումն այս երկու մեծ խորհուրդների, որոնք իրենց մեջ թաքցնում են Աստուծու առաջին մտադրություններն ու տիեզերքի ամբողջ համակարգը: Երրորդության խորհուրդը մեզ շշմեցնում և զգալ է տալիս մեր փոքրությունը, ճգմում մեր զգայարաններն իր փառքով, և մենք, ոչնչանալով, ետ ենք քաշվում նրա առջևից: Բայց Փրկագործության հուզիչ խորհուրդը, արցունքով լցնելով մեր աչքերը, արգելում է, որ դրանք չափից դուրս շլանան՝ թույլ տալով մեզ, գոնե մի պահ, մեր հայացքը սևեռել խաչի վրա:

Նախ տեսնում ենք, որ այս խորհրդից դուրս է գալիս սկզբնական մեղքի վարդապետությունը, որով բացատրվում է մարդը: Առանց ընդունելու այս ճշմարտությունը, որին ավանդաբար ծանոթ են բոլոր ժողովուրդները, մենք կմնանք անթափանցելի մի խավարի մեջ: Արդարև, առանց սկզբնական այդ արատի գոյություն՝ ինչպե՞ս կարող ենք անդրադառնալ մեր բնության հոռի հակումներին՝ հաղթահարված այն ներքին ձայնից, որը մեզ հայտնում է, թե մենք ստեղծված ենք եղել առաքինության համար: Ինչպե՞ս կարելի է բացատրել ցավին դիմանալու մարդու ունակությունը, նրա թափած քրտինքի կաթիլները, որոնք

սարսափելի կնճիռներ են առաջացնում նրա դեմքի վրա, ինչպե՞ս բացատրել արդար մարդու արցունքները, նրա կրած վշտերը, դժբախտությունները, չարագործի՝ անպատիժ մնացած հաղթանակներն ու հաջողությունները, այո՛, ասում եմ, ինչպե՞ս կարելի է բացատրել այս բոլորը՝ առանց մարդու սկզբնական անկման: Այդ անկումը, այդ այլասերումը չճանաչելու պատճառով է, որ հնադարի փիլիսոփաներն ընկան տարօրինակ սխալների մեջ և հնարեցին աղոտ վերհիշողության ուսմունքը: Համոզվելու համար այն ճակատագրական ճշմարտությունը, որից ծնվում է մեզ փրկագործող խորհուրդը, մենք կարիք չունենք ուրիշ ապացույցների, քան այն անեծքը, որ արտասանվեց Եվայի դեմ, անեծք, որ ամեն օր կատարվում է մեր աչքերի առջև: Ինչպիսի՛ խորհրդավոր բաներ կան կնոջ երկունքի գալարումների և ապա մայրության երջանկության մեջ, ինչպիսի՛ խորհրդավոր հայտնություններ մարդու և նրա կրկնակ ճակատագրի մասին, որը կանխագուշակվում է նրան ծննդաբերող կնոջ երկունքով և միաժամանակ նրա ուրախությունը: Չենք կարող սխալ կարծիք կազմել Ամենաբարձրյալի ուղիների մասին՝ մարդու երկու մեծ նպատակները վերագտնելով իր մոր երկունքի մեջ: Պետք է Աստծուն ճանաչել մինչև իսկ իր անեծքի մեջ:

Ի վերջո, ամեն օր տեսնում ենք, որ զավակը պատժվում է իր հոր պատճառով, և չարագործի կատարած ոճրի հակահարվածը գնում խփում է նրա առաքինի որդուն, ինչը լավագույնս ապացուցում է սկզբնական մեղքի վարդապետությունը: Բայց բարի և ներողամիտ Աստված, գիտենալով, որ մենք կորստյան ենք մատնվում առաջին մարդու այդ անկումով, եկավ մեզ փրկելու իր մահվամբ: Մենք բոլորս, տկար և մեղավոր մարդիկ, հարց ուղղենք ոչ թե մեր մտքին, այլ՝ մեր սրտին, թե Աստված ինչպե՞ս կարող է մահանալ: Եթե բարի Որդու այս կատարելատիպը, հավա-

տարիմ Բարեկամի այս տիպարը, եթե նրա առանձնացումը Զիթենյաց լեռան վրա, դառնության այդ բաժակը, արյան կաթիլների նման թափված քրտինքը, հոգու այդ քաղցրությունը, մտքի վսեմությունը, այդ խաչը, պատուված վարագույրը, ճեղքված ժայռը, բնության այդ խավարը և, վերջապես, եթե մարդկանց համար ոգեվարող այդ Աստվածը չի կարող ո՛չ հրապուրել մեր սիրտը և ո՛չ էլ բոցավառել մեր մտածումները, ապա կասկածելի է, որ մեր գործերի մեջ երբևէ գտնվեն «փառահեղ հրաշքներ»:

Շտապենք մի քանի խոսք ասել այստեղ Փրկագործության խորհրդի մասին՝ ցույց տալու համար, որ քրիստոնեությունը տեսությունն այնքան էլ անհեթեթ չէ, որքան կարծում են:

Եթե մարդն ստեղծված է, ապա նա ստեղծված է որևէ նպատակի համար: Արդ, ստեղծված լինելով կատարյալ՝ որի համար նա ստեղծված է, կարող է միայն կատարյալ լինել: Բայց մարդու վերջնական նպատակը խաթարված է արդյոք իր անկումով: Ո՛չ, քանի որ նա նորից չի ստեղծվել, քանի որ մարդկային ցեղը չի ոչնչացել իր տեղը տալու համար մի ուրիշ ցեղի:

Այսպես, մարդն իր անհնազանդությունը պատճառով դառնալով մահկանացու և անկատար՝ այսուհանդերձ պահպանել է անմահության և կատարելության նպատակը: Ինչպե՞ս նա կկարողանա հասնել իր նպատակին անկատարության իր ներկա վիճակի մեջ: Նա այդ բանն այլևս չի կարող անել իր սեփական ուժով ճիշտ այն պատճառով, ինչ պատճառով որ հիվանդ մարդը չի կարող հասնել մտածումների այն բարձրությանը, որին կարող է հասնել առողջ մարդը: Ուրեմն անհավասարությունն կա ուժի և այն ծանրության միջև, որը պետք է բարձրացնել այդ ուժով: Այստեղ արդեն զգացվում է օգնության կամ փրկագործության անհրաժեշտությունը:

«Այս դատողութիւնը, - կասեն մեզ, - ճիշտ է առաջին մարդու համար, բայց մենք՝ այսօրվա մարդիկս, ի վիճակի՛ ենք հասնելու մեր նպատակին: Ինչպիսի՛ անարդարութիւն, ինչպիսի՛ անհեթեթութիւն է մտածել, թե մենք բոլորս պատժված ենք մեր նախահոր հանցանքի պատճառով»:

Առանց որոշելու այստեղ, թե Աստված իրավացի՞ է, թե՞ անիրավ՝ պատասխանատու համարելու մեզ՝ բոլորիս, ինչ որ գիտենք և ինչ որ բավական է, որ գիտենանք այժմ, այն է, որ այդ օրենքը գոյութիւն ունի: Մենք տեսնում ենք, որ ամենուրեք անմեղ զավակը իր վրա է կրում իր մեղավոր հոր պատիժը, որ այդ օրենքն այնքան է կապված իրերի էութեանը, որ այն կրկնվում է մինչև անգամ տիեզերքի ֆիզիկական կարգի մեջ: Երբ մի երեխա աշխարհ է գալիս ախտահարված՝ իր հոր գեխութիւնների պատճառով, ինչո՞ւ չենք գանգատվում բնութիւնից, որովհետև, ի վերջո, ի՞նչ է արել այդ անմեղ նորածինը, որ ուրիշի հոռի կենցաղի համար ինքը պատժվի: Դե ինչ, հոգեկան հիվանդութիւններն էլ մարմնական հիվանդութիւնների նման, փոխանցվելով, տւեականանում են, և մարդը, մինչև իր վերջին սերունդը, պատժվում է այն սխալի համար, որը հարկադրվել է նրան իր մեջ կրել ոճրի առաջին սաղմը:

Անկումն, այսպիսով, հաստատվում է ընդհանուր ավանդութեամբ, բարոյական և ֆիզիկական չարիքի փոխանցումով կամ վերածնումով: Մյուս կողմից՝ մարդու նպատակը, չնայած նրա այլասերվածութեանը, պահպանված լինելով նույնքան կատարյալ, որքան անհնազանդութիւնից առաջ էր, հետևում է, որ փրկագործութիւնը կամ որևէ միջոց, որ կարող է մարդուն ունակ դարձնել հասնելու իր նպատակին, բնական հետևանքն է այն վիճակի, որի մեջ ընկած է մարդկային բնութիւնը: Փրկագործութեան անհրաժեշտութիւնն ընդունած համարելով՝ այժմ



փնտրենք այն կարգը, որտեղ կկարողանանք այն գտնել: Այդ կարգը կարող է լինել կա՛մ մարդու մեջ, կա՛մ մարդու բնությունից վեր:

Մարդու մեջ: Որպեսզի փրկություն լինի, հարկավոր է, որ փրկագիրն զոնե համապատասխան լինի փրկվելիք բանին: Արդ, ինչպե՞ս կարելի է ենթադրել, որ անկատար և մահկանացու մարդը կարողանա ինքն իրեն մատուցել՝ վերստին ձեռք բերելու համար կատարյալ և անմահ մի վախճան: Սկզբնական մեղքին մասնակից մարդը փրկվելու համար կարո՞ղ էր բավարար լինել որքան իր մեղքի բաժնի, նույնքան և մարդկային ցեղի մնացած մասին վերաբերող մեղքի համար: Նման մի գոհողություն չէ՞ր պահանջի բնությունից գերիվեր եղող սեր և առաքինություն: Թվում է, թե երկինքը կամեցել է թույլ տալ, որ մարդու անկումից մինչև նրա վերահաստատումը անցնի չորս հազար տարի, որպեսզի ժամանակ տա մարդկանց, որ հենց իրե՛նք դատեն, թե իրենց խաթարված առաքինություններն ինչքան անբավարար էին այդպիսի մի գոհողության համար:

Մնում է երկրորդ ենթադրությունը, այսինքն՝ այն, թե փրկագործությունը պետք է բխի մարդկային բնությունից գերիվեր մի պայմանից: Տեսնենք, թե դա կարո՞ղ է արդյոք առաջ գալ մարդու և Աստծու միջև գտնվող միջնորդ էակներից: Միլտոնը՝ մի գեղեցիկ գաղափար է ունեցել՝ ենթադրելով, որ առաջին մեղքից հետո Աստված հարցրել է վհատության մատնված երկնքին, թե կա՞ արդյոք երկնային որևէ գործություն, որ կցանկանար իրեն զոհել մարդու փրկության համար: Երկնային բոլոր դասերը մնում են լուռ: Եվ բազմաթիվ սերովբեներից, քերովբեներից, հրեշտակապետներից և հրեշտակներից ոչ մեկը բավարար ուժ չի ունենում որպես զոհ մատուցվելու: Բանաստեղծի այս մտածումը աստվածաբանական անառարկելի մի ճշմարտություն է: Հիրավի, հրեշտակները որտեղի՞ց պիտի ունե-

նային այն անսահման սերը մարդու հանդեպ, որ անհրաժեշտորեն պահանջում է խաչի խորհուրդը: Կարող ենք ասել, որ ստեղծված ամենաբարձր երկնային զորություններն անգամ բավականաչափ ուժ չէին ունենա այդպիսի սեր իրագործելու: Հրեշտակային ոչ մի գոյացություն, իր էության տկարության իսկ պատճառով, չէր կարող հանձն առնել այն ցավերը, որոնք, ըստ Մասիյոնի<sup>2</sup>, Հիսուս Քրիստոսի գլխին կուտակեցին մարդկային ցեղերի գոյության սկզբից ի վեր գործված ենթադրյալ մեղքերի պատիժը հանդիսացող Փիզիկական այն բոլոր նեղությունները, բարոյական այն բոլոր տանջանքներն ու բոլոր խղճահարուցիչությունները, որ կարող էին զգացած լինել մեղավորները մեղք գործելիս: Եթե մարդու Որդին հենց ինքը գտավ դառնության բաժակը, ապա մի հրեշտակ ինչպե՞ս կկարողանար այն տանել իր շրթներին: Նա երբեք չէր կարողանա խմել մրուրը, և զոհողությունը լրիվ ի կատար ածված չէր լինի:

Ուրեմն, որպես Փրկիչ, մենք կարող էինք ունենալ հավիտենապես գոյություն ունեցող երեք անձերից միայն մեկին: Արդ, տեսնում ենք, որ այս երեք անձերից Որդին, իր բնությամբ իսկ, միակ անձը պիտի լիներ մեզ փրկագործող: Լինելով տիեզերքի մասերն իրար կապող Սեր, ծայրամասերն իրար միավորող Կենտրոն, բնության կենդանարար Սկզբունք՝ Նա՛ միայն կարող էր Աստծուն հաշտեցնել մարդու հետ: Այս նոր Աղամբ եկավ որպես մարդ ըստ մարմնի, որպես մարդ ըստ բարոյականի՝ իր Ավետարանով, որպես մարդ ըստ Աստծու՝ իր էությամբ: Նա ծնվեց մի կույսից, որպեսզի մասնակից չլինի սկզբնական մեղքին և լինի անարատ զոհ: Աշխարհ եկավ մի գոմում, մարդկային ամենահետին պայմաններում, որովհետև մենք ընկել էինք գոռոզության պատճառով: Այստեղ սկսվում է այս խորհր-

դի խորութիւնը. մարդը դողում է, և առագաստներն իջնում են:

Այսպէս, այն նպատակը, որին կարող էինք հասնել անհանգանդութիւնից առաջ, կրկին առաջարկվում է մեզ, բայց դրան հասնելու ճանապարհն այլևս նույնը չէ: Անմեղ Ադամը դրան կհասնէր զմայլելի ճանապարհներով, իսկ մեղավոր Ադամը այնտեղ կարող է բարձրանալ միայն անդունդներ եզերելով: Բնութիւնը փոխվեց այն օրից, երբ մեր նախահայրը գործեց իր առաջին հանցանքը, իսկ փրկագործութեան առարկան մի նոր նախահայր ստեղծել չէր, այլ գտնել վերջնական փրկութիւնն առաջինի համար: Մարդու հետ, ուրեմն, ամեն ինչ մնաց այլայլասերված: Եվ տիեզերքի այս թագավորը, որ նախապէս ծնվելով անմահ՝ առանց գոյափոխվելու պիտի բարձրանար ու հասնէր երկնային գորութիւնների երջանկութեանը, այժմ չի կարող այլևս վայելել Աստուծոյ ներկայութիւնը՝ առանց անցնելու գերեզմանի անապատների միջով, ինչպէս ասում է սուրբ Հովհան Ոսկեբերանը<sup>3</sup>: Փրկագործութեամբ նրա հոգին փրկվեց վերջնական կործանումից, բայց նրա մարմինը, նյութի բնական դյուրաբեկութեանը միացնելով մեղքի պատահական թուլութիւնը, ենթարկվում է սկզբնական վճռին իր ամբողջ խստութեամբ. ընկնում է, հալվում, լուծվում, քայքայվում: Մեր առաջին հայրերի անկումից հետո Աստված, ընդառաջելով իր Որդու խնդրանքին և չկամենալով ամբողջապէս կործանել մարդուն, հնարեց մահը որպէս կեսանէութիւն, որպէսզի մեղավոր մարդը զգա սարսափն այն ամբողջական անէութեան, որին նա դատապարտված կլինէր առանց երկնային սիրոյ հրաշալիքների:

Համարձակվում ենք հավատալ, որ, եթէ հստակ ինչ-որ բան կա բնագանցութեան մեջ, ապա դա դատողութեան այս շղթան է: Այստեղ չկան չարչարված բառեր, չկան բաժանումներ և ենթաբաժանումներ, չկան մթին և անճիշտ

եզրեր: Քրիստոնեութունը այդպիսի բաներից բաղկացած է, ինչպես թերահավատներն ուզում են հավատացնել մեզ իրենց խայթող հեզնանքով: Ավետարանը քարոզվել է հոգով աղքատներին և լավել հոգով աղքատներից: Նա գոյութուն ունեցող ամենահասակ գիրքն է աշխարհում. նրա գահը չի հաստատված մարդու գլխում, այլ՝ նրա սրտում. նա չի սովորեցնում վիճել, այլ՝ լավ ապրել: Այսուհանդերձ նա զերծ է գաղտնիքներից: Աստվածաշնչի մեջ իսկապես անբացատրելի է այն, որ նա շարունակական մի խառնուրդ է խորագույն խորհուրդների և ծայրագույն պարզության, հատկանիշներ, որոնցից ծնվում են սրտառուչն ու վսեմը: Զպետք է զարմանալ ուրեմն, որ Հիսուս Քրիստոսի գործն այնքան հուզիչ կերպով խոսում է մարդու սրտին: Այդպիսին են մեր կրոնի ճշմարտությունները, հակառակ գիտական անբավարար այն հիմքին, ըստ որի ընդունելի մեկ կետը ձեզ ստիպում է ընդունել մյուս բոլորը: Կա ավելին. եթե հույս ունեք խույս տալ այդ բանից՝ ուրանալով սկիզբը, ինչպես, օրինակ, սկզբնական մեղքը, ապա շուտով, հետևութունից հետևութուն մղվելով, դուք ստիպված կլինեք ընկնել անաստվածության գիրկը և կորչել: Հենց այն պահին, որ դուք ընդունում եք Աստծուն, քրիստոնեական կրոնը, ձեզնից անկախ, գալիս է դեպի ձեզ իր բոլոր վարդապետութուններով, ինչպես այդ նկատել են Քլարքը<sup>4</sup> և Պասկալը<sup>5</sup>: Ահա, թվում է մեզ, ամենաուժեղ ապացույցներից մեկը ի նպաստ քրիստոնեության:

Ի դեպ, չպետք է զարմանալ, որ նա, ով առանց շփոթելու միլիոնավոր աստղեր է թավալեցնում մեր գլխավերևում, այսքան ներդաշնակութուն սփռած լինի իր կողմից հաստատված մի կրոնի հիմունքների մեջ. չպետք է զարմանալ, որ նա կարողանում է իր խորհուրդների հրապույրներն ու մեծութունները պտտեցնել իրենք իրենց վրա, որպեսզի նրանք ամեն տարի մեզ բերեն եղանակների

կա՛մ ծաղիկները, կա՛մ շանթերը: Ցավով ենք հաստատում մեր դարի սանձարձակ հարձակումները քրիստոնեությունից դեմ: Եթե ճիշտ է, որ կրոնն անհրաժեշտ է մարդկանց, ինչպես դրան հավատացել են բոլոր փիլիսոփաները, ապա ինչպիսի՞ կրոնով մարդիկ ուզում են փոխարինել մեր հայրերի կրոնը: Դեռ երկար ժամանակ կհիշվեն այն օրերը, երբ արյունարբու մարդիկ հավակնեցին առաքինության խորաններ բարձրացնել քրիստոնեության փլատակների վրա: Նրանք մի ձեռքով կառափնարաններ էին կանգնեցնում, մյուսով մեր տաճարների ճակատներին մեծ տառերով Աստծուն երաշխավորում էին հավիտենություն, իսկ մարդուն՝ մահ: Եվ այդ նույն տաճարները, ուր մի ժամանակ մենք տեսնում էինք համայն աշխարհին հայտնի այդ Աստծուն և բազում դժբախտների մխիթարող Աստվածամոր նկարները, այդ նույն տաճարները նվիրված էին այն «ճշմարտությունը», որին ոչ մի մարդ ծանոթ չէ, և այն «բանականությունը», որը երբեք չի չորացրել ոչ մի կաթիլ արցունք:





## ՀՈԳՈՒ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՊԱՅՈՒՑՎԱԾ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՎ ԵՎ ԶԳԱՅՈՒՄՈՎ

### Ա. Երջանկության ցանկությունը մարդու մեջ

Եթե որպես Աստծու գոյությունից ապացույցներ բնության հրաշալիքները լինեին միայն, ապա այդ ապացույցներն այնքան ուժեղ են, որ բավական կլինեին համոզելու ճշմարտությունն որոնող ամեն մարդու: Բայց նրանք, ովքեր ժխտում են Նախախնամությունը, առանց նրան չեն կարող բացատրել ստեղծագործության հրաշքները: Այդպիսիներն առավել ևս շփոթվում են՝ պատասխանելու համար իրենց սեփական սրտի առարկություններին: Ուրանալով գերագույն էակին՝ նրանք ստիպված են ուրանալ մի այլ կյանքի գոյությունը: Եվ, սակայն, նրանց հոգին խռովում է նրանց: Նա, այսպես ասած, ներկայանում է նրանց առաջ և, ի հեճուկս ստիպաներին, ստիպում նրանց խոստովանել իր գոյությունն ու իր անմահությունը:

Նախ և առաջ թող ասեն մեզ. եթե հոգին հանգչում է գերեզմանում, ապա որտեղի՞ց է մեր մեջ երջանկության այն ծարավը, որ անընդհատ անհանգստացնում է մեզ: Մեր բոլոր կրքերն ու ցանկությունները այս արեգակի տակ կարող են հեշտությամբ հազեցում գտնել. սերը, փառատենչությունը, բարկությունը լիովին բավարարվելու հնարավորություն ունեն: Երջանկության պահանջը միակն է, որ ո՛չ հազեցում ունի, ո՛չ էլ՝ առարկա, որովհետև մարդ չգիտե, թե ի՛նչ է այդ երջանկությունը, որին նա տենչում է: Պետք է համաձայնել, որ, եթե ամեն ինչ նյութ է, ապա բնությունն այս պարագայում տարօրինակ կերպով սխալվել է. ստեղծվել է մի զգացում, որ ոչնչի չի պատշաճում:

Ստույգ է, որ մեր հոգին հավիտենապես պահանջում է: Հազիվ իր տենչանքի առարկան ձեռք բերած՝ նա էլի է պահանջում: Ամբողջ աշխարհը չի գոհացնում նրան: Անհունը այն միակ դաշտն է, որը պատշաճում է նրան: Նա սիրում է մոլորվել թվերի մեջ, երևակայել ամենամեծ, ինչպես և ամենափոքր տարածությունները: Վերջապես փքված, բայց չհագեցած այն ամենից, ինչ արդեն կլանել սպառել է, նա վազում նետվում է Աստծու գիրկը, ուր գալիս միավորվում են անհունի գաղափարները որպես կատարելություն, որպես ժամանակ և տարածություն: Բայց նա խորասուզվում է Աստծու գաղափարի մեջ հենց նրա համար, որ այդ գաղափարը լեցուն է մթնոլորտներով. անըմբռնելի է Աստված: Եթե նա հստակ գաղափար ունենար նրա մասին, կարհամարհեր նրան, ինչպես այն բոլոր առարկաները, որ նա ի վիճակի է սահմանելու: Կարող ենք նույնիսկ ասել, որ նա որոշ չափով կլիներ իրավացի, քանզի, եթե հոգին կարողանար հասկանալ հավիտենական Սկզբնապատճառը, նա կլիներ կա՛մ նրանից բարձր, կա՛մ գոնե նրան հավասար: Աստվածային իրողությունների կարգը նույնը չէ, ինչ որ մարդկային իրողությունների կարգը. մարդ կարող է հասկանալ թագավորի հզորությունը առանց թագավոր լինելու, բայց, եթե մի մարդ հասկանար Աստծուն, ապա կլիներ Աստված:

Արդ, կենդանիները բնավ չեն խռովվում այն հույսով, որը խռովում է մարդու սիրտը: Նրանք վայրկենապես հասնում են իրենց գերագույն երջանկությունը. մի քիչ խոտ գոհացնում է գառանը, մի քիչ արյուն հագեցնում է վագրին: Ըստ մի քանի փիլիսոփաների, եթե պաշտպանեինք այն տեսակետը, թե մարմնի զանազան մասերի կազմությամբ է բացատրվում միակ տարբերությունը մեր և անասունի միջև, կարող էինք այդ դատողությունն ընդունելի համարել առավելաբար նյութական գործունեու-



Թյան համար: Բայց ի՞նչ կարևորություն կարող է ունենալ իմ ձեռքը իմ մտածման համար, երբ, գիշերային անդորրուլթյան մեջ, ես սավառնում եմ՝ գտնելու համար անհաշիվ աշխարհներ կարգավորողին: Ինչո՞ւ եզրը նույն բանը չի անում: Նրա աչքերը բավական են նրան. և, եթե նա ունենար իմ ոտքերը կամ թևերը, դրանք բոլորովին անօգուտ կլինեին այդ բանի համար: Նա կարող է պառկել մարգագետնի կանաչ խոտերի վրա, աչքերը բարձրացնել դեպի երկինք և իր բառաչներով կանչել անծանոթ էակին, որը լցնում է այդ անսահմանությունը: Բայց ո՛չ. նախընտրելով իր տրորած մարգախոտը՝ նա հարց չի ուղղում երկնքի բարձունքում սփռված այն արևներին, որոնք մեծագույն ապացույցն են Աստծու գոյություն: Նա անզգա է բնություն այդ տեսարանի դիմաց՝ առանց կասկածելու, որ այն ծառի տակ, ուր այժմ հանգստանում է, ինքը ևս մի փոքրիկ ապացույց է աստվածային իմացականություն:

Ուրեմն միակ արարածը, որը որոնում է իրենից դուրս և ինքն իրենով ամբողջություն չի կազմում, մարդն է: Ասում են, որ հասարակ ժողովուրդը չունի այդ անհանգստությունը: Անկասկած նա նվազ դժբախտ է, քան մենք, որովհետև նա, կլանված լինելով ֆիզիկական աշխատանքով, մոռանում է իր ցանկությունների մասին. նա երջանկություն ծարավը խեղդում է իր թափած քրտնքի մեջ: Բայց, երբ դուք տեսնում եք նրան, որ շաբաթվա վեց օրը հյուսվում սպառվում է, որպեսզի յոթերորդ օրը մի քիչ ուրախանա, երբ նա, միշտ հուսալով հանգիստ գտնել և երբեք չգտնելով այն, հասնի մահվան շեմին առանց ցանկանալուց դադարելու, կասե՞ք, որ չի բաժանում անծանոթ գեղեցիկ մի կյանքի տենչանքը, որ հատուկ է բոլոր մարդկանց: Իսկ, եթե ասեն, որ նրա համար այդ տենչանքը սահմանափակվում է երկրային հաճույքներով, դա, իհարկե, առավել քան հավաստի է. տվեք ամենաչքավոր մարդուն

աշխարհի բոլոր գանձերը, դադարեցրեք միաժամանակ նրա ծանր աշխատանքը, բավարարեք նրա կարիքները, և դուք կտեսնեք, որ մի քանի ամիս չանցած՝ նա կսկսի դարձյալ ձանձրանալ և հուսալ:

Ճիշտ է արդյոք, որ հասարակ ժողովուրդը, նույնիսկ իր թշվառ վիճակում, գուրկ է երջանկուլթյան այնպիսի ցանկուլթյունից, որը տարածվում է սովորական կյանքից այն կողմ: Որտեղի՞ց է գալիս այն բնածին մելամաղձոտ վիճակը, որ մենք նկատում ենք հանդում աշխատող գյուղացու մեջ: Հաճախ կիրակի կամ տոնական օրերին, երբ գյուղի բնակչուլթյունը գնում է աղոթելու լավ սերմը որոմից զատող Հնձվորի նկարի առջև, պատահում է, որ մենք ականատես ենք լինում իր խրճիթի դռան առանձին մնացած ուրևէ գյուղացու: Նա ականջ է դնում եկեղեցու զանգի զողանջին, կանգնած է մտախոհ մարդու դիրքով, անուշադիր չէ ո՛չ մոտակա կալում թռչկոտող ճնճղուկներին, ո՛չ էլ իր շուրջը բզզացող միջատներին: Հեթանոսական մի աստծու նման՝ իր խրճիթի սեմին կանգնած այդ մարդու ազնվական դեմքը, նրա վեհ ճակատը, հոգ չէ, թե հոգսերով բեռնավոր, սև վարսերով ծածկված նրա ուսերը, որոնք կարծես բարձրացել են իրենց վրա պահելու համար երկինքը, հոգ չէ թե կյանքի բեռան տակ կքած, նրա ամբողջ փառավոր արտաքինը, հոգ չէ, թե թշվառական, այդ պահին ոչ մի բանի մասին չէի՞ն խորհում կամ միայն այս աշխարհի բաների մասի՞ն էին մտորում: Նրա կիսաբաց շրթների արտահայտուլթյունը, նրա անշարժ մարմինը, հողին գամված նրա հայացքը, այլ խոսքով՝ նրա ողջ էուլթյունը այդ պահին այնտեղ չէր. այնտեղ Աստծու հիշողուլթյունն էր եկեղեցու զանգերի կրոնաշունչ զողանջի հետ:

Եթե անհնար է ժխտել, որ մարդն իր հույսը չի կտրում մինչև գերեզման, եթե ճիշտ է, որ այս աշխարհի բարիքները ոչ միայն չեն գոհացնում մեր ցանկուլթյունները, այլև

փորփրում են մեր հոգին՝ խորացնելով նրա դատարկութիւնը, ապա պետք է եզրակացնել, որ ինչ-որ բան կա ժամանակից այն կողմ:

«Աշխարհը, - ասում է սուրբ Օգոստինոսը, - ունի այնպիսի կապեր, որոնք լեցուն են իսկական բրտությամբ և կեղծ քաղցրությամբ, ունի որոշակի ցավեր, անորոշ հաճույքներ, տարապարհակ աշխատանք, տագնապալից հանգստութիւն, թշվառությամբ լեցուն բաներ և... երջանկութեան դատարկ հույս»: Փոխանակ գանգատվելու, որ երջանկութեան ցանկութիւնը գտնվում է այս աշխարհում, իսկ նրա նպատակը՝ այն աշխարհում, դրանում տեսնենք Աստծու բարութիւնը և հիանանք: Քանի որ վաղ թե ուշ դուրս ենք գալու այս կյանքից, Նախախնամութիւնը սահմանից այն կողմ դրել է մի կախարդանք, որ քաշում հրապուրում է մեզ, որպեսզի պակասեցնի մեր սարսափը գերեզմանից: Երբ մի մայր ուզում է իր երեխային անցկացնել մի արգելքի վրայից, նա մյուս կողմից նրան մեկնում է գրավիչ մի առարկա, որպեսզի ստիպի համարձակ անցնել այդ արգելքը:

### **Բ. Խղճի խայթի և խղճմտանքի մասին**

Հոգու անմահութեան երկրորդ ապացույցը մեր խղճմտանքն է: Յուրաքանչյուր մարդ իր սրտի խորքում ունի մի դատարան, ուր նա սկսում է դատել ինքն իրեն՝ սպասելով, որ գերագույն Իրավարարը հաստատի դատավճիռը: Եթե բարոյական արատը կազմախոսական երևույթ է և սոսկ հետևանք մեր ֆիզիկական առանձնահատկութեան, ապա որտեղի՞ց է գալիս այն սարսափը, որը պղտորում է մեր «մեղապարտ երջանկութեան» օրերը: Ինչո՞ւ խղճի խայթն այնքան սոսկալի է, որ մարդ նախընտրում է ենթարկվել աղքատութեան և հանձն առնել առաքինու-

Թյան պարտադրած բոլոր խստությունները, քան թե ձեռք բերել անօրինական բարիքներ: Ինչո՞ւ մի ձայն կա արյան մեջ, մի խոսք՝ քարի մեջ: Վագրը պատառոտում է իր որսը և հանգիստ քնում: Մարդը դառնում է մարդասպան և մնում անքուն: Նա փնտրում է ամայի վայրեր, սակայն առանձնությունը սարսափեցնում է նրան, քարչ է գալիս գերեզմանների շուրջը, սակայն վախենում է գերեզմաններից: Նրա հայացքը շարժուն է և անհանգիստ, նա չի համարձակվում նայել խնջույքի սրահի պատերին՝ վախենալով, որ իր աչքերն այնտեղ կտեսնեն չարագուշակ գրեր: Նրա զգայարաններն ասես սրվում են՝ տանջելու համար նրան: Գիշերվա կեսին նա տեսնում է սպառնացող ազոտ լույսեր, ամեն ըոպե նախճիրի արյան հոտ է առնում իր շուրջը, թույնի համ է զգում իր իսկ պատրաստած ճաշերի մեջ, նրա ականջը, տարօրինակ գերզգայնությամբ, աղմուկ է լսում այնտեղ, ուր լռություն է տիրում, և երբ, նա համբուրում է իր բարեկամին, կարծում է, թե նրա հագուստների տակ մի դաշույն կա թաքնված:

Ո՛վ խղճմտանք, երևակայությունից ծնված դու մի ուրվակա՞ն ես լուկ, թե՞ պատիժներից մարդկանց զգացած ահը: Ես ինձ հաճախ հարցուփորձ եմ անում. ինքս ինձ տալիս եմ հետևյալ հարցը. «Եթե, ցանկությունից մղված, կարողանայի սպանել մի մարդու Չինաստանում և նրա հարստությունը ժառանգել Եվրոպայում այն հաստատ համոզումով, որ ոչ ոք ոչինչ չի իմանալու բնավ, կհամաձայնեի՞ր իրագործել այդ ցանկությունդ»: Ինչքան էլ ես փորձեմ ինքս ինձ արդարացնել՝ պատճառաբանելով իմ ծայրահեղ չքավորությունը, ինչքան էլ ուզենամ մեղմացնել այդ մարդասպանությունը՝ ենթադրելով, որ չինացին, ըստ իմ ցանկության, կմեռնի իսկույն առանց ցավ զգալու, որ նա չունի ժառանգ, և որ նրա մահից հետո նրա ամբողջ ունեցվածքը կորած կհամարվի պետության համար, ինչքան

էլ ես ինձ ասեմ, թե մահը բարիք է նրա համար, թե ինքն իսկ կանչում է այն, թե նա հազիվ մի վայրկյան ունի ապրելու, այնուամենայնիվ, հակառակ իմ ինքնարդարացման բոլոր ջանքերին, իմ սրտի խորքում ինչոր ձայն այնքան ուժեղ է բողբոջում հենց միայն այդպիսի ենթադրութայան դեմ, որ մի րոպե անգամ չեմ կասկածում խղճմտանքի գոյութայանը:

Ուստի տխուր մի անհրաժեշտություն պետք է համարել այն, որ ոմանք ստիպված են ժխտել խղճմտանքի գոյությունը, որպեսզի ժխտեն հոգու անմահությունն ու վրեժխնդիր մի Աստծու գոյությունը: Մենք չենք անգիտանում, որ ծայրահեղութայան տարված անաստվածությունը դիմում է այդ ամոթալի ժխտմանը: Սոփեստ մարդը սաստիկ հոգացավերի մեջ բացականչում է. «Ո՛վ ցավ, ես երբեք չեմ խոստովանելու, որ դու չարիք ես»: Իսկ, եթե ճիշտ է, որ կարող են գտնվել այնքան ղեփախտ մարդիկ, որ խեղդեն իրենց մեջ խղճի ձայնը, ապա ի՞նչ պետք է եզրակացնել դրանից: Իր մարմնի անդամները ազատ կերպով գործածող մարդուն չդատենք բնավ անդամալույծ մարդու օրինակով, որն այլևս ի վիճակի չէ շարժելու իր ձեռքերն ու ոտքերը: Ոճիրը կատարման վերջին պահին նման է այն թույնին, որը խարանում անզգայացնում է խիղճը: Տապալելով կրոնը՝ մարդիկ ոչնչացրել են այն միակ դեղամիջոցը, որը կարող էր վերականգնել զգայնությունը սրտի մահացած մասերում: Քրիստոսի այս զարմանալի կրոնը մի տեսակ լրացումն էր այն բանի, որը պակասում էր մարդկանց: Մեղավոր ենք դառնում մեր ծայրահեղութայան, անչափ բախտավորութայան կամ մեր դյուրաբորբոք բնավորութայան պատճառով. կրոնը միշտ ներկա է՝ ազդարարելու համար մեզ, որ բախտը հեղհեղուկ է, իսկ մեր բորբոքումը՝ վտանգավոր: Կամ, ընդհակառակը, մեր թերությունները՝, մեր կարոտության, մեր հոգու անտարբերության պատճառով

ենք երեսի վրա թողնված. կրոնը մեզ սովորեցնում է արհամարհել բոլոր տեսակի հարստությունները, միաժամանակ ջերմացնում է մեր հոգու սառնությունը և մեզ տալիս է, այսպես ասած, ներքին ուժեղ մղումներ, ցանկություններ, մեծ կրքեր: Նրա գլխախրությունն անսպառ է մանավանդ մեղավորի հանդեպ: Չկա մի սրբապիղծ մարդ, որի զղջումը նա չընդունի, չկա մի պժգալի բորոտ, որին նա չզիպչի իր մաքրամաքուր ձեռքերով: Անցյալի համար նա պահանջում է միայն խղճահարություն, ապագայի համար՝ առաքինություն: «Ուր որ մեղքը շատացավ, - ասում է նա, - շնորհն առավել ևս շատացավ\*»: Միշտ պատրաստ լինելով զգուշացնելու մեղանչող մարդուն՝ Աստվածորդին հաստատել էր իր կրոնը որպես երկրորդ խղճատանք այն մեղսագործի համար, որը կարող էր դժբախտությունն ունենալ կորցնելու իր բնական խղճատանքը. դա ավետարանական խղճատանք էր, բարեպաշտությունը և քաղցրությունը լեցուն մի խղճատանք, որին Հիսուս Քրիստոս իրավունք էր տվել ներելու, և որից գուրկ էր առաջինը:

Խոսելուց հետո հանցագործությունը հետևող խղճահարություն մասին, անօգուտ կլինեք այլևս խոսել առաքինությունն ուղեկցող գոհունակության մասին: Այն ներքին գոհունակությունը, որ մարդ զգում է մի լավ գործ կատարելիս, առաջ չի գալիս նյութական հաշվարկներից, ինչպես խղճի մեղադրանքը՝ օրենքի վախից, երբ մարդ մի վատ արարք է կատարում:

Եթե սովիեստները պաշտպանում են այն տեսակետը, թե առաքինությունն ուրիշ բան չէ, եթե ոչ քողարկված ինքնասիրություն, իսկ գլխաբառությունը՝ եսապաշտություն, ապա հարց տանք նրանց, թե իրենց սրտի խորքում երբևէ ոչինչ չե՞ն զգացել մի դժբախտի վիշտն ամոքելուց հետո,

---

\* Հոով 5, 20: Բնագրում լատիներեն:

կամ արդյո՞ք մանկամիտ դառնալու վախից է, որ նրանք այդպես գործովանք են զգում մի անմեղ նորածնի հանդեպ:

Առաքինությունն ու արցունքները մարդկանց հույսի աղբյուրն են և հավատի հիմքը: Արդ, այն մարդը, որ չի հավատում ո՛չ առաքինության իրականությունը և ո՛չ էլ արցունքների ճշմարտությունը, ինչպե՞ս կարող է հավատալ Աստծուն: Կարծում եմ, որ մեղանշած կլինեինք ընթերցողների առջև, եթե բավարարվեինք ցույց տալով միայն, թե ինչպես հոգու անմահությունն ու Աստու գոյությունը ապացուցվում են այն ներքին ձայնով, որ խղճմտանք է կոչվում: «Մարդու մեջ կա մի ուժ, - ասում է Ցիցերոնը, - որ նրան մղում է դեպի բարին և հեռու պահում չարից, մի ուժ, որ գոյություն ունի ոչ միայն ավելի վաղ, քան բոլոր ժողովուրդների և քաղաքների առաջացումը, այլևս նույնքան հին է, որքան այն Աստվածը, որի միջոցով երկինքն ու երկիրը գոյատևում են և ղեկավարվում. քանզի Բանականությունը էական մեկ հատկանիշն է աստվածային իմացականության, և այդ Բանականությունը, որ Աստու մեջ է, անպայմանորեն ինքն է որոշում, թե ինչը բարոյական արատ է և ինչը՝ առաքինություն»:

#### **Գ. Եթե չկա հանդերձալ կյանք, ապա չկա բարոյականություն**

Բարոյականությունը հասարակության հիմքն է կազմում. բայց եթե ամեն ինչ նյութ է մեր մեջ, ապա իրապես չկա ո՛չ արատ և ո՛չ էլ առաքինություն, հետևաբար, չկա նաև բարոյականություն: Մեր օրենքները, որոնք միշտ հարաբերական են և փոփոխական, չեն կարող որպես հենարան ծառայել բարոյականությանը, որ միշտ բացարձակ է և անեղծանելի: Պետք է, ուրեմն, նրա աղբյուրը լինի ավելի կայուն մի աշխարհում, քան մեր այս աշխարհն է, և

նա ունենա ավելի ապահով երաշխիքներ, քան մեր կասկածելի վարձատրություններն ու վաղանցուկ պատիժներն են: Մի քանի փիլիսոփաներ կարծում են, որ կրոնը հնարվել է ամուր պահելու համար բարոյականությունը: Նրանք չեն անդրադառնում, որ արդյունքը չփոթում են պատճառի հետ: Կրոնը չէ, որ բարոյականությունից է առաջանում, այլ բարոյականությունն է, որ ծնունդ է առնում կրոնից, քանի որ, ինչպես նշեցինք այդ մասին, ստույգ է, թե բարոյականության սկզբնաղբյուր չի կարող լինել Ֆիզիկական մարդը կամ պարզ նյութը. ստույգ է նմանապես, որ մարդիկ, երբ կորցնում են Աստուծո գաղափարը, ընկնում են ամեն տեսակ ոճիրների մեջ, չնայած օրենքների և դահիճների գոյություն:

Մի կրոն, որ ուղեց բարձրանալ քրիստոնեության փլատակների վրա և կարծեց գերազանցել Ավետարանը, մեր եկեղեցիներում տարածեց Տասնաբանյայի հետևյալ պատվիրանը. «Երեխանե՛ր, պատվեցե՛ք ձեր հայրերին և մայրերին»: Ինչո՞ւ աստվածամարդասերները\* հապավել են պատվիրանի վերջին մասը՝ «որպեսզի նրանք երկար ապրեն»: Հավանաբար նրա համար, որ մի գաղտնի դժբախտություն նրանց սովորեցրել է, որ այն մարդը, որը ոչինչ չունի, ոչինչ չի կարող տալ: Մարդ ինչպե՞ս կկարողանա խոստանալ երկար տարիներ, երբ ապահով չէ, թե ինքը կապրի՞ արդյոք երկու վայրկյան: «Դու ինձ երկար կյանք ես պարգևում, - կասեին նրան, - բայց դու չես մտածում, որ ինքդ փոշիա-

---

\* Այս անունով էին կոչվում 1796թ. Ֆրանսիայում, Դիրեկտորիայի իշխանության ժամանակ, ֆրանսիացի մի շարք աստվածաբաններից և բարոյագետներից բաղկացած մի աղանդի անդամները, որոնք ուսուցանում էին հավատալ միաժամանակ Աստծուն և սիրել մարդկանց: Աստվածամարդասերները, ներշնչվելով 18-րդ դարի փիլիսոփաների (մասնավորապես Վոլտերի և Ռուսոյի) աստվածաբանական մտքերից և գերագույն Էակի պաշտամունքի որոշ երևույթներից, Աստծու գոյության նկատմամբ բանական հավատի մեջ էին տեսնում անհատական և քաղաքացիական բարոյականի անհրաժեշտ հիմքը (ծնթ. թարգմ.):



նում ես: Ինչպես Տերը, դու ինձ համար ապահովում ես երկարատև գոյություն. իսկ դու նրա նման տե՞րն ես հավիտենության, որ կարողանաս այնտեղից օրեր դուրս հանել: Անխոհեմ մարդ, այն ժամը, որ դու հիմա ապրում ես, քեզ չի պատկանում. մա՛հն է միայն քո սեփականությունը. քո գերեզմանի խորքից դու ի՞նչ կարող ես դուրս բերել բացի անէությունից՝ վարձատրելու համար ինձ իմ լավության դիմաց»:

Եվ, վերջապես, հոգու անմահության վերաբերյալ կա բարոյական մի ուրիշ ապացույց, որի վրա պետք է կանգ առնել. դա մարդկանց ունեցած հարգանքն է գերեզմանների հանդեպ: Այնտեղ, անհաղթահարելի մի թովչանքով, կյանքը կապված է մահվան: Այնտեղ մարդկային բնությունն ավելի բարձր է դրսևորվում, քան մնացած ստեղծագործությունը: Անասունը գիտե՞, թե ինչ բան է դագաղը, մտահոգվո՞ւմ է իր աճույնով: Ի՞նչ նշանակություն ունեն նրա համար իր հոր ոսկորները, և կամ նա կիմանա՞, թե ո՛վ է եղել իր հայրը, երբ այլևս վերջացած լինեն իր մանկական կարիքները: Որտեղի՞ց է հաճախում մեզ մահվան մասին մեր ունեցած ուժեղ գաղափարը: Փոշու մի քանի հատիկ արժանի՞ են մեր պատվին ու մեծարանքին. ո՛չ անտարակույս: Մենք մեր նախնիների աճյունները հարգում ենք նրա համար, որ ներքին մի ձայն մեզ ասում է, թե ամեն ինչ ջնջված վերջացած չէ նրանց մեջ: Եվ այդ ձայնն է, որ սրբագործում է հոգեհանգստյան պաշտոնը երկրագնդի բոլոր ժողովուրդների մոտ: Բոլորն էլ հավասարապես համոզված են, որ քունը տևական չէ նույնիսկ գերեզմանում, և որ մահն ուրիշ բան չէ, եթե ոչ փառավոր մի այլակերպություն:

## ԱՆԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳԸ ԵՎ ԱՆՕԳՈՒՏ ԼԻՆԵԼԸ

Կան երկու տեսակի անաստվածներ՝ իրարից մեծապես տարբեր. առաջինները, սկզբունքային և հետևողական մարդիկ, առանց վարանելու հայտարարում են, որ Աստված չկա և, հետևաբար, չկա էական ոչ մի տարբերություն բարու և չարի միջև, որ աշխարհը պատկանում է ամենաուժեղներին, ամենաճարպիկներին և այլն: Երկրորդները անաստվածություն «ազնիվ» ներկայացուցիչներն են, կեղծավոր անհավատները, անհեթեթ անձինք, որոնք մեղմ ու անուշ խոսքերով կարող են գնալ ամեն տեսակ ծայրահեղությունների՝ պաշտպանելու համար իրենց տեսակետը: Նրանք ձեզ կկոչեն սիրելի եղբայր՝ խեղդելով ձեզ: Բարոյականություն, մարդկայնություն բառերը անվերջ նրանց բերանում են: Նրանք երիցս չար մարդիկ են, որովհետև անաստվածների հոռի բոլոր կողմերին միացնում են ազանդավորի անհանդուրժողությունն ու առաջնորդի եսասիրությունը:

Այս մարդիկ պնդում են, որ անաստվածությունը չի վերացնում ո՛չ երջանկությունը և ո՛չ էլ առաքինությունը, և այս կյանքում չկա մի պարագա, ուր անհավատությունը նույնքան օգտակար չլինի, որքան բարեպաշտությունը: Ահա այս հարցն է, որ ուզում ենք քննության առնել:

Եթե մի բան պիտի գնահատվի իր ավելի կամ նվազ օգտակարություն պատճառով, ապա անաստվածությունը արժանի է ամենայն արհամարհանքի, որովհետև նա ոչ ոքի օգտակար չէ:

Աչքի անցկացնենք մարդկային կյանքը: Սկսենք աղքատներից և դժբախտներից, քանի որ նրանք մեծամաս-

նություն են կազմում երկրի վրա: Դե՛ ուրեմն, անթիվ-անհամա՛ր թշվառներ, անաստվածությունը ձե՞զ համար է օգտակար, պատասխանեցե՛ք: Ի՞նչ է, ոչ մի ձայն չկա՞: Ես լսում եմ հուսո մի օրհներգ և հառաչանքներ, որ բարձրանում են առ Աստված: Սրանք հավատում են. անցնենք երջանիկներին:

Մեզ թվում է, որ երջանիկ մարդը ոչ մի շահ չունի անհավատ լինելու մեջ: Նրա համար անչափ քաղցր է մտածել, թե իր օրերը կշարունակվեն նաև մահվանից հետո: Ինչպիսի հուսահատությունք նա կբաժանվեր այս աշխարհից, եթե հավատար, թե ընդմիշտ բաժանվում է իր երջանկությունից: Եթե աշխարհի բոլոր բարիքներն էլ թափվեին իր գլխին, դրանք կծառայեին միայն առավել սարսափելի դարձնելու անէությունը: Հարուստը նաև կարող է ապահով զգալ իրեն, որ կրոնը կավելացնի իր հաճույքները՝ անպատում մի քաղցրություն խառնելով դրանց: Նրա սիրտը երբեք չի կարծրանա, նա չի հագենա ուրախությունից: Կրոնը թույլ չի տա, որ հոգին չորանա: Հենց այդ նշանակությունն ունի սուրբ մյուռոնը, որով քրիստոնեությունը սրբազործում է թագավորական իշխանությունը, երիտասարդությունը և մահը, որպեսզի դրանք անպտուղ չլինեն:

Ռազմիկն առաջ է շարժվում մարտում. կարո՞ղ է միթե անաստված լինել փառքի այս զավակը: Ով փնտրում է անվախճան մի կյանք, համաձայն կլինի՞, որ այն վերջանա: Ո՛վ անհաշվելի զինվորներ, ո՛վ հայրենիքի վաղնջական լեզեոններ, երևացե՛ք ձեր որոտացող ամպերի վրա: Ֆրանսիայի անվանի՛ զորքեր, որ հիմա երկնքի գորություններ եք դարձել, ցոլ՛յց տվեք ձեզ: Երկնային քաղաքի բարձունքից ասացե՛ք մեր դարի հերոսներին, որ քաջ մարդն ամբողջովին գերեզմանում չէ, որ նրանից հետո մնում է ինչ-որ բան, որ ավելին է, քան ունայն համբավը:

Հնադարի մեծ զորավարները հայտնի են եղել իրենց բարեպաշտությամբ: Էպամինոնդասը<sup>1</sup> իր հայրենիքի ազատարարը, համարվում է ամենաբարեպաշտ մարդկանցից մեկը: Քսենոֆոնը՝ փիլիսոփա այս ուղմիկը, բարեպաշտության տիպար էր: Ալեքսանդրը՝ աշխարհակալների հավերժական օրինակը, ինքն իրեն համարում էր Յուդիսի որդի: Հռոմի Հանրապետության հին հյուպատոսներ Յինցինատոսը<sup>2</sup>, Փաբիոսը<sup>3</sup>, Պապիրիոս Կուրսորը<sup>4</sup>, Էմիլիոս Պաուլոսը<sup>5</sup>, Սցիպիոն Աֆրիկացին<sup>6</sup> իրենց հույսը դնում էին միայն Կապիտոլի աստծու վրա: Պոմպեոսը<sup>7</sup> մարտի էր գնում՝ ոգեկոչելով աստվածային օգնականությունը: Կեսարն ուզում էր երկնային ազգի շառավիղ լինել: Նրա հակառակորդը՝ Կատոնը, համոզված էր, որ հոգին անմահ է: Կեսարին սպանող Բրուտոսը հավատում էր գերբնական զորություններին, իսկ նրա հաջորդ Օգոստոս կայսրը իշխեց սոսկ աստվածների անունով: Ավելի ուշ ժամանակների ազգերի մեջ անհավատ էր միթե հռոմեացիներին և գալիացիներին հաղթող հպարտ Սիկամբը<sup>8</sup> որը, խոնարհվելով մի քահանայի ոտքերի առջև, Ֆրանսիական ժողովրդի հիմքերն էր դրոշմում: Անհավատ էր միթե սուրբ Լուդովիկոսը<sup>9</sup>՝ թագավորների իրավարարը, որը հարգված էր նույնիսկ անհավատներից, Դյու Գեսկլենը, որի դադաղը քաղաքներ էր գրավում, Բայարը<sup>10</sup>՝ անվեհեր և անստգյուտ ասպետը, Մոնմորանսի<sup>11</sup> ծեր սպարապետը, որ իր ազոթքներն էր արտասանում ուղմական ճամբարներում: Այս բոլորը անհավատ մարդիկ էին:

Չկա ավելի հիանալի կերպար, քան քրիստոնյա հերոսի կերպարը: Այն ժողովուրդը, որին նա պաշտպանում է, ընդունում է նրան, ինչպես իր հորը: Նա պաշտպանում է հողագործին և նրա արտերի հունձը, հեռացնում անարդարությունը, նա մի տեսակ պատերազմի հրեշտակ է, որին Աստված է ուղարկել՝ մեղմացնելու համար այդ աղետը:

Քաղաքները բաց են անում նրա առջև իրենց դռները, պատնեշները խորտակվում են նրա առաքինությունների դիմաց, նա գինվորների սերն է, ազգերի կուռքը: Նա ուզում է փրկել իր ժողովրդին, նա խոսակցությունը հուշում է և դաստիարակում է, նրա խոսքերը կատարյալ պարզությամբ շնորհն ունեն: Մարդ զարմանում է այդքան քաղցրություն գտնելով մի մարդու մոտ, որը սովոր է իր կյանքն անցկացնել բազում վտանգների մեջ: Այսպես մեղրն է թաքնվում կաղնու կեղևի տակ, որը դիմազրավել է ահավոր փոթորիկների:

Եզրակացնելով՝ ասենք, որ անաստվածությունը ոչ մի տեսակետից պիտանի չէ ռազմիկին:

Եթե բարոյականությունն ամբողջովին հենվում է Աստծու գոյություն և հոգու անմահության գաղափարի վրա, ապա հայրերը, որդիները, ամուսինները ոչ մի շահ չունեն անհավատ լինելու մեջ: Ինչպե՞ս կարելի է մտածել, օրինակի համար, որ կինը կարող է անաստված լինել: Ո՞վ պիտի պահպանի այս դյուրաբեկ եղեգին, եթե ոչ կրոնը: Բնության ամենաթույլ այս էակը մահվան նախօրյակին կամ կանացի իր հրապույրները կորցնելուց հետո ո՞ւմ մոտ պաշտպանություն պիտի գտնի, եթե նրա հույսը վաղանցուկ այս գոյությունից այն կողմ չի անցնում: Հենց միայն ի շահ իր գեղեցկության՝ կինը պետք է բարեպաշտ լինի:

Քաղցրությունը, հնազանդությունը, շնորհալիությունը, քնքշությունը մեկ մասն են այն հրապույրների, որ Արարիչը շուրջը պարգևել է մեր առաջին մորը: Կինը, որ բնական կերպով խորհրդավորության բնագոյն ունի, որ հաճույք է գգում քողարկելով իրեն, որ իր շնորհների ու իր մտածման կեսն է բացահայտում միայն, որ կարող է գուշակվել, բայց չճանաչվել, որ, իբրև մայր և իբրև կույս, լեցուն է գաղտնիքներով, որ հրապույրում է մեզ մանավանդ իր անգիտությամբ, որ ստեղծվել է առաքինության, ամե-

նախորհրդավոր զգացման, ամոթխածություն և սիրո համար, այս կինը, ուրեմն, հրաժարվելով իր սեռին հատուկ բնածին մղումներից, իր թույլ և հանդուգն ձեռքով պիտի փորձի վերացնել Աստծուն ծածկող հաստ վարագույրը: Ո՞ւմ է մտածում նա դուր գալ իր այդ սրբապիղծ արարքով:

Անհավատ կինը քիչ անգամ իր պարտականությունների գիտակցություն ունի: Նա իր օրերն անց է կացնում կա՛մ դատարկաբանելով առաքինության մասին առանց այն ի գործ դնելու, կա՛մ էլ հետևելով իր հաճույքներին կյանքի հորձանքի մեջ: Նրա գլուխը դատարկ է, հոգին՝ ունայն: Զանձրույթը ուտում է նրան, նա չունի ո՛չ Աստված, ո՛չ ընտանեկան հոգսեր իր ժամերի անդունդը լցնելու համար:

Մոտենում է վրեժխնդիր օրը. գալիս է ժամանակը՝ բերելով իր հետ Ծերությունը ձեռքից բռնած: Սպիտակ մազերով, կորացած ուսերով, սառած ձեռքերով ուրվականը նստում է անհավատ կնոջ տան սեմին: Կինը տեսնում է նրան և ճիչ արձակում: Բայց ո՞վ կարող է լսել նրա ձայնը: Նայելով իր անցյալին՝ նա այնտեղ տեսնում է միայն անապատ, ուր իր առաքինությունները բնավ հետք չեն թողել: Առաջին անգամ լինելով՝ նրա մտածումը դառնում է դեպի երկինք. նա սկսում է հավատալ, որ ավելի լավ կլիներ, եթե ունենար մի կրոն: Սակայն անօգուտ է զղջումը: Այս աշխարհում աստվածություն վերջին պատիժն է հավատալու ցանկություն ունենալն ու չկարողանալ այն ձեռք բերելը: Երբ մարդիկ իրենց կյանքի վերջալույսին անդրադառնում են կեղծ փրկիսոփայության ստույգություններին, երբ անէությունը, չարագուշակ աստղի նման, սկսում է բարձրանալ մահվան հորիզոնի վրա, ուզում են վերադառնալ Աստծուն, բայց արդեն ուշ է լինում. անհավատությունը անզգայացած միտքը վանում է ամեն համոզմունք: Օ՛հ, այդ պահին ինչքա՛ն խորն է լինում առանձ-

նությունը, երբ, թե՛ Աստված և թե՛ մարդիկ ետ են քաշվում միաժամանակ:

Որքա՛ն տարբեր է բարեպաշտ կնոջ ճակատագիրը: Նրա օրերը ուրախությամբ են անցնում, նրա կյանքը լցնում են սիրով: Նրա ամուսինը, երեխաները, սպասավորները հարգում ու սիրում են նրան, բոլորն ունեն կույր վստահություն նրա հանդեպ, որովհետև հաստատապես հավատում են նրա հավատարմությանը, քանի որ ինքն էլ հավատարիմ է Աստծուն: Այս քրիստոնյա կնոջ հավատը զորանում է իր երջանկությամբ, իսկ երջանկությունն էլ՝ իր հավատով: Նա հավատում է Աստծուն:

Բավական է, որ մի մայր տեսնի իր երեխայի ժպիտը, որպեսզի համոզվի գերագույն մի երանության գոյությունը: Նախախնամության բարությունն ամբողջովին երևում է մարդու օրորոցից սկսած:

Արդ, կյանքում ամեն ինչ այնպես լինելով՝ մարդ պետք է շատ համառ լինի, որպեսզի չթեքվի դեպի այն կողմը, ուր ոչ միայն բանականությունը գտնում է ամենամեծ թվով փաստեր, այլև բարոյականությունը, երջանկությունը, հույսը, նույնիսկ բնազդը և հոգու ցանկությունները բնական կերպով մեզ մղում են այնտեղ: Եթե ճիշտ լիներ (թեև սխալ է) այն տեսակետը, թե միտքը հավասար դիրքի վրա է պահում կշեռքի երկու թաթերը Աստծու և անաստվածություն միջև, ապա կշեռքի մեկ թաթը վստահաբար շատ կթեքվեր առաջինի կողմը, քանզի մարդը, բացի իր բանականություն կեսից, Աստծու նժարի մեջ դնում է իր սրտի ամբողջ ծանրությունը:

Մենք կհամոզվենք այս ճշմարտությունը, եթե քննենք այն եղանակը, որով առաջնորդվում են անաստվածությունն ու կրոնը իրենց ապացույցների մեջ: Կրոնն օգտագործում է սոսկ ընդհանուր փաստեր. նա դատում է՝ հիմնվելով միայն երկնային կարգավորության, տիեզերքի օրենքների վրա: Նա տեսնում է լոկ բնության ներդաշնա-

կուլթյունը, կենդանիների սքանչելի բնագույները և դրանց համապատասխանուլթյունը մարդու հետ:

Անաստվածուլթյունը ձեզ տալիս է միայն շփոթեցնող բացառուլթյուններ. բնուլթյան մեջ նա տեսնում է սոսկ անկարգուլթյուններ, ճախճախուտներ, հրաբուլթներ, վնասակար անասուններ և, կարծես ուղեկար ցեխի մեջ թաքնվել, դիմում է սողուններին ու միջատներին, որպեսզի Աստուղեմ ապացուլթյունը հայթայթի իր համար:

Կրոնը խոսում է միայն մարդու մեծուլթյան և գեղեցկուլթյան մասին:

Անաստվածուլթյունը միշտ ձեզ մատուցում է բորոտուլթյունն ու ժանտախտը: Կրոնն իր փաստարկները քաղում է հոգու զգայնուլթյունից, կյանքի ամենաքաղցր զգացումներից՝ որդիական հարգանքից, ամուսնական սիրուց, մայրական գորովից:

Անաստվածուլթյունը ամեն ինչ վերածում է անասնական բնագույնի և, իբրև առաջին փաստարկ իր տեսակետի, պարծենկոտուլթյամբ ձեզ ցուլթ է տալիս մի սիրտ, որին ոչ մի բան չի կարող հուղել:

Վերջապես, քրիստոնեական կրոնով մեզ վստահեցնում են, որ մեր ցավերը վերջ պիտի ունենան, մխիթարում են մեզ, սրբում մեր արցունքները, մեզ խոստանում են մի այլ կյանք:

Անաստվածի կրոնի մեջ մարդկային վշտերը խուսկ են ծխում. մահը զոհարարն է, զոհասեղանը՝ դագաղը, և անլթյունը՝ նրա աստվածը:





**ԱՆՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՏՃԱՌԻ  
ԾԱՇԱԿԻ ԵՎ ՈԳՈՒ ԱՆԿՄԱՆ**

Երբ Աթենքում և Հռոմում մարդիկ ոչ մի բանի չհավատացին, աստվածներն անհետացան, և մուսաները բարբարոսությանը հանձնեցին այն մարդկանց, որոնք այլևս հավատ չունեին իրենց հանդեպ:

Լուսավորության այս դարում մարդ չի կարող հավատալ, թե մինչև ո՛ր աստիճան լավ բարքերը կախված են լավ ճաշակից, և լավ ճաշակը՝ լավ բարքերից: Ռասիների երկերը, որոնք հետզհետե ավելի գեղեցիկ և ավելի անթերի էին դառնում այն չափով, որ չափով որ դրանց հեղինակն ինքը հետզհետե ավելի բարեպաշտ էր դառնում, ի վերջո ավարտվեցին «Աթալիա»-ով: Ընդհակառակը, ուշադրություն դարձրեք, թե Վոլտերի անկրոնությունն ու հանճարը միաժամանակ ինչպես են նրա գրվածքների մեջ ի հայտ գալիս ազնիվ զգացմունքների և ատելի բաների խառնուրդով: Վատ ճաշակը, երբ այն անսրբագրելի է, դատողության սխալ է և գաղափարների բնական շեղում: Արդ, քանի որ միտքը ներգործում է սրտի վրա, դժվար է, որ երկրորդի ճանապարհները լինեն ուղիղ, երբ ուղիղ չեն առաջինի ճանապարհները: Նա, ով սիրում է տգեղությունն այնպիսի մի ժամանակ, երբ հազարավոր գլուխգործոցներ այսօր կարող են զարթեցնել և վերականգնել նրա ճաշակը, այնքան էլ հեռու չէ հոռի և արատավոր բաներ սիրելուց: Ով անզգա է գեղեցիկի հանդեպ, նա կարող է և չգնահատել առաքինությունը:

Մի գրող, որ մերժում է հավատալ տիեզերքն ստեղծող Աստծուն՝ Դատավորին, որ մարդկանց հոգիներին անմահություն է տվել, նախ և առաջ իր ստեղծագործություններ

րից վանում է անհունությունը: Նա իր մտածումը պարփակում է տղմոտ մի շրջանակի մեջ, որից այլևս չի կարող դուրս գալ: Նա ոչ մի ազնիվ բան չի տեսնում բնության մեջ, ամեն ինչ այնտեղ կատարվում է ապականության և այլասերվածության անմաքուր միջոցներով: Ըստ նրան՝ անդունդն ուրիշ բան չէ, եթե ոչ կպրախառն մի ջրակույտ, լեռները՝ կրաքարից բաղկացած ուռուցիկ դարավանդներ, իսկ երկինքը, որտեղ առավոտյան արեգակը պատրաստում է անեզր ու անսահման մի առանձնարան՝ ասես որպես ճամբար ծառայելու համար աստղերի երկնային զորքին, որոնց այնտեղ է բերում գիշերն անաղմուկ, երկինքը, ուրեմն, ուրիշ բան չէ, եթե ոչ մի նեղ կամար՝ ժամանակավորապես առկախված Պատահականության քմահաճ ձեռքով:

Եթե անհավատն այսպես հոգով սահմանափակ է բնության վերաբերող բաներում, ապա ինչպե՞ս նա կկարողանա գեղեցկորեն պատկերել մարդուն: Նրա համար բառերը զուրկ են հարստությունից, իսկ արտահայտության գանձերը՝ ընդմիջտ փակված: Դիտեք գերեզմանի խորքում հանգչող այս դիակը՝ պատանքի մեջ փաթաթված անէության այս արձանը: Հենց դա է անաստվածի մարդը՝ կնոջ մարմնից դուրս եկած պտուղ, որ բնագոյով ավելի ցածր է, քան կենդանիները, փոշի է նրանց նման և կրկին փոշի է դառնալու ինչպես նրանք, որ չունի կրքեր, այլ միայն՝ ախորժակներ, որ չի հնազանդվում բարոյական օրենքների, այլ միայն՝ ֆիզիկական մղումների և իր առջև, որպես ամեն բանի վախճան, տեսնում է միայն գերեզման և որդեր: Ահա այսպիսին է այն էակը, որ ինքն իր համար ասում էր, թե տոգորված է անմահ շնչով: Այլևս մի՛ խոսեք մեզ հոգու խորհուրդների, առաքինության հրապույրների մասին. ո՛վ մանկության շնորհներ, երիտասարդակա՛ն սերեր, ազնի՛վ բարեկամություն, մտածումների վեհություն, գերեզմանների և հայրենիքի հրապույր, ձեր կախարդանքները խորտակված վերջացա՛ծ են... :

Անհավատութիւնը նաև անպայմանորեն իր հետ բերում է տրամաբանող չոր միտք, վերացական սահմանումներ, գիտական ոճ և դրա հետ մեկտեղ նորաբանութիւն, որոնք հարված են հասցնում ճաշակին և պերճախոսութեանը: Հնարավոր է, որ 18-րդ դարի հեղինակներին շնորհված տաղանդի չափը հավասար լինի այն գրողների տաղանդի չափին, որոնք պատկանում են 17-րդ դարին: Ինչ<sup>օ</sup>ւ, սակայն, 18-րդ դարի մեր գրականութիւնն ավելի ցածր է, քան դրան նախորդող դարինը. որովհետև (այդ բանը չենք կարող ծածկել այլևս) մեր դարի գրողներն ընդհանրապես չափազանց բարձր են դասված: Եթե Ռուսոյի և Վոլտերի գործերի մեջ կան շատ բաներ, որոնք վերանայման և ուղղվելու կարիք ունեն (այդ մասին կարծում եմ բոլորն ինձ հետ համաձայն են), ապա ի՞նչ պետք է ասել Ռենալի<sup>1</sup> և Դիդրոյի<sup>2</sup> երկերի մասին: Անչափ գովաբանվել է (անկասկած իրավացիորեն) մեր վերջին բնագանգագետների մեթոդը: Եվ, սակայն, պետք է նկատի առնվեր, որ գոյութիւն ունի երկու տեսակի հստակություն. մեկը բխում է գոեհիկ կարգի գաղափարներից (հասարակ, սովորական միտքը հստակ է բացատրվում), մյուսը առաջ է գալիս ուժեղ և բարդ մի մտածում հստակորեն հղանալու և արտահայտելու հիանալի կարողութիւնից: Առվի հատակին գտնվող խիճերը դժվար չէ տեսնել, որովհետև ջուրը խորունկ չի լինում, բայց համպար, մարջան և մարգարիտներ հայտնաբերելու համար սուզակի աչքը պետք է մխրճվի անդունդի թափանցիկ ալիքների տակ գտնվող անսահման խորութիւնների մեջ:

Արդ, եթե մեր գրական դարը ցածր է Լուդովիկոս ԺԴ-ի դարից, դրա պատճառը միայն մեր կրոնն է: Մենք արդեն ցույց ենք տվել, թե Վոլտերն ինչքան կշահեր, եթե քրիստոնյա լիներ: Նա այսօր կմրցակցեր Ռասինի հետ՝ տիրանալու համար մոլոսաների հաղթութեան պսակին: Նրա

գրվածքները կստանային այն բարոյական երանգը, առանց որի ոչինչ կատարյալ չէ: Դրանց մեջ տեղ կգտնեին նաև հին ժամանակների այն հիշատակները, որոնց բացակայութիւնը այնքան մեծ դատարկութիւն է կազմում այնտեղ: Ով ուրանում է իր երկրի Աստծուն, նման է այն մարդուն, որը հարգանք չունի իր հայրերի հիշատակի հանդեպ: Գերեզմանները անհետաքրքիր բաներ են նրա համար, նրա նախնիների հաստատած կանոնները, ավանդույթները նրան թվում են սոսկ բարբարոսական սովորութիւններ, նա ոչ մի հաճույք չի զգում վերհիշելով իր մոր ասացվածքները, նրա իմաստութիւնը, ճաշակը, հակումները:

Ճշմարիտ է, սակայն, որ մարդու հանճարի մեծ մասը բաղկացած է այդ կարգի հիշողութիւններից: Ամենագեղեցիկ բաները, որ մի հեղինակ կարող է դնել իր գրքում, նրա երիտասարդութեան առաջին օրերից եկող այն զգացումներն են, որոնք հիշողութեամբ վերհայտնվում են նրա մեջ: Վուտերը շատ է մեղանչել այս պարտադիր (և սակայն այնքան քաղցր) կանոնների դեմ, մի մարդ, որ տևապես ծաղրել է իր նախնիների բարքերն ու սովորութիւնները: Ինչպե՞ս կարող է պատահել, որ այն, ինչ հմայում է ուրիշ մարդկանց, լինի ճիշտ այն բանը, ինչ զգվանք է պատճառում անհավատին:

Կրօնը ամենահզոր շարժիչ ուժն է հայրենասիրութեան: Բարեպաշտ գրողները այս ազնիվ զգացումը միշտ լայնորեն դրսևորել են իրենց գրվածքներում: Ինչպիսի՞ բարձր գնահատանքով են խոսում 17-րդ դարի մեր գրողները Ֆրանսիայի մասին: Վա՛յ նրան, ով նախատում է իր երկիրը. հայրենիքն ինչքան էլ ապերախտ լինի մեր նկատմամբ, մենք չդադարենք այն սիրելուց: Թող մեր սիրտն ավելի մեծ լինի, քան նրա անարդարութիւնները:

Եթե հավատացյալ մարդը սիրում է իր հայրենիքը, նշանակում է, որ նրա հոգին պարզ է, և այն բնական զգա-

ցումները, որ նրան կապում են իր նախնիների դաշտերին ու լեռներին, նույնքան պարզ են, որքան նրա սրտի խորքը և նրա սովորությունները: Նա իր ձեռքը տալիս է իր հայրերին և իր զավակներին. նա տնկված է հայրենի հողի մեջ՝ նման այն կաղնուն, որ իր ներքևում զգում է հողի մեջ մխրձված իր հին արմատները, իսկ իր գագաթին՝ նորածին բողբոջներ, որոնք ձգտում են դեպի երկինք:

Ռուսոն մեկն է 18-րդ դարի այն գրողներից, որի ոճը ամենից ավելի գրավիչ է, որովհետև այս մարդը, որ շինծու տարօրինակություններ ուներ, գոնե իր համար ստեղծել էր կրոնի պես ինչ-որ բան: Նա հավատում էր մի բանի, որ Քրիստոսը չէր, բայց Ավետարանն էր: Քրիստոնեություն այս ուրվականը, ինչպիսին որ կա, երբեմն նրա հանճարին տվել է մեծ շնորհ և վայելչություն: Նա, որ այնպիսի ուժով ծառացել է սոփեստների դեմ, ավելի լավ բան արած չէ՞ր լինի, եթե իրեն հանձներ իր հոգու քնքշությունը, փոխանակ նրանց նման մոլորվելու փրկիսոփայական այնպիսի դրույթների մեջ, որոնցով նա նորոգեց միայն հին սխալները:

Բյուլֆոնին<sup>3</sup> ոչինչ չէր պակասի, եթե ունենար նույնքան զգայնություն, որքան պերճախոսություն: Առանց կրոնի չկա զգայնություն. սա անսովոր մի դիտողություն է, որը մենք տեղին ենք համարել անել ամեն բոպե, կրկնում ենք առանց ձանձրանալու, բայց չենք կարողանում մեր ժամանակակիցներին համոզել, որ դա ճիշտ է: Բյուլֆոնը մեզ զարմացնում է իր ոճով, բայց հազվադեպորեն է հուզում: Կարդացե՛ք նրա սքանչելի մեկ գրվածքը շան մասին. բոլոր տեսակի շներն այդտեղ են՝ որսորդական շունը, հովվական շունը, վայրի շունը, ազնվացեղ շունը, փոքր, երիտասարդ շունը և այլն: Ո՞րն է պակասում դրանց մեջ. կույր մարդուն առաջնորդող շունը: Ամենից առաջ հենց դրա՛մասին կհիշեք քրիստոնյա գրողը:

Զգացական հարաբերություններն ընդհանրապես վրիպել են Բյուզնդի ուշադրությունից: Այսուհանդերձ արդար պետք է լինենք բնության այս մեծ նկարչի հանդեպ. նրա ոճը փայլում է հազվագյուտ կատարելությամբ: Լավագույնս պահպանելու համար պատշաճությունները, չլինելու համար ո՛չ չափազանց բարձր և ո՛չ չափազանց ցածր, մարդ ի՛նքը պետք է ունենա չափի մեծ զգացում ինչպես իր մտքի, այնպես էլ վերաբերմունքի մեջ: Գիտենք, որ Բյուզնդը հարգում էր այն ամենը, ինչ հարկավոր է հարգել: Նա չէր հավատում, որ փիլիսոփայության նպատակն է հրապարակավ անհավատություն քարոզել, նախատել քսանչորս միլիոն մարդկանց\* կրոնը: Նա օրինապահ էր քրիստոնյայի իր պարտականությունների մեջ և իր ծառաներին էլ օրինակ էր հանդիսանում: Ռուսոն, կապված լինելով քրիստոնեության խորքին և մերժելով քրիստոնեական պաշտամունքի ձևերը, իր գրվածքներում դրսևորում է կրոնական զգացմունք, բայց սոփեստի վատ տոնով: Դրան հակառակ, Բյուզնդն ունի փիլիսոփայական չորություն՝ կրոնական պատշաճություններով: Քրիստոնեությունը առաջինի ոճի մեջ դրել է թովչանք, անբռնագրոսություն և սեր, իսկ երկրորդի ոճի մեջ՝ կարգավորություն, պայծառություն և շքեղություն: Այսպիսով, այս հռչակավոր մարդկանց ստեղծագործությունները, իրենց լավ և վատ կողմերով, կրում են դրոշմն այն բանի, ինչ մերժել են կրոնից:

Մոնտեսկյոյի<sup>4</sup> անունը տալիս՝ մենք հիշում ենք 18-րդ դարի իսկական մեծ մարդուն: «Օրենքների ոգին» և «Նկատողություններ հռոմեացիների մեծության և նրանց անկման պատճառների մասին» երկերը կապրեն այնքան երկար, որքան այն լեզուն, որով դրանք գրվել են: Եթե

---

\* Հեղինակի ակնարկությունը ֆրանսիացի ժողովրդի մասին է, որն այդ թվականին բաղկացած էր քսանչորս միլիոն մարդուց (ծնթ. թարգմ.):

Մոնտեսկյոն երիտասարդական շրջանի իր մի գրվածքի մեջ մեր բարքերի դեմ ուղղված իր խայթող սլաքներից մի քանիսն էլ կրոնի դեմ արձակեց, դա ժամանակավոր, անցողիկ սխալ եղավ միայն, մի տեսակ հարկ, որ նա վճարեց ինամակալության ժամանակաշրջանի ապականված բարքերին: Բայց իր այն գրքով, որը նրան դասեց համբավվոր մարդկանց շարքում, նա հիանալիորեն ուղղեց իր սխալները՝ գովաբանելով այն կրոնը, որի վրա հարձակվելու անխոհեմությունն էր ունեցել: Տարիների ընթացքում իր ձեռք բերած հասունությունը և իր փառքի նկատմամբ ունեցած շահագրգռությունը հասկացնել տվեցին նրան, որ մնայուն մի հուշարձան բարձրացնելու համար հարկավոր է նրա հիմքերը հաստատել այնպիսի հողի մեջ, որը նվազ շարժուն լինի, քան այս աշխարհի փոշին: Նրա հանճարը, որն ընդգրկում էր բոլոր ժամանակները, հենվեց այն միակ կրոնի վրա, որին խոստացված են բոլոր ժամանակները:

Մեր ժամանակաշրջանում, չհաշված մի քանի բացառություններ, տեղի է ունեցել տաղանդների մի տեսակ վիժում: Կարելի է նույնիսկ ասել, որ անկրոնությունը, որն ամեն ինչ ամլացնում է, դրսևորվում է նաև մարդու ֆիզիկական կառուցվածքի աղքատացումով: Մի հայացք գցեք այն սերունդների վրա, որոնք հաջորդեցին Լուդովիկոս Ժ-ի ժամանակաշրջանին: Ու՞ր են խաղաղ և վեհաշուք դեմքով, ազնվական քայլվածքով, վայելուչ զգեստներով, բարեկիրթ և մաքուր խոսվածքով, դասական տեսքով, տիրական կեցվածքով, արվեստներով ներշնչված այն մարդիկ: Փնտրում ենք նրանց և այլևս չենք գտնում: Աֆրիկյան թզուկների նման փոքրիկ անծանոթ մարդիկ այժմ ման են գալիս մի այլ դարաշրջանում կառուցված կամարակապ բարձր ճեմասրահների տակ: Նրանց պինդ ճակատների վրա դրոշմված է եսասիրությունը և արհամարհանքն Աստծու հանդեպ: Նրանք կորցրել են թե՛ հագվածքի վա-

յելչությունը և թե՛ խոսվածքի մաքրությունը: Նրանք ասես լինեն ոչ թե գավակները, այլ խեղկատակներն այն մեծ ցեղի, որ նախորդել է նրանց:

Նոր դպրոցի աշակերտներն աղարտում են երևակայությունը չգիտես ինչպիսի մի ճշմարտությամբ, որ իրական ճշմարտությունը չէ: Այս մարդկանց ոճը չոր է, արտահայտչաձևը՝ ոչ անկեղծ, երևակայությունը՝ առանց սիրո և առանց հրայրքի: Նրանք չունեն ոչ մի շնորհալիություն, ոչ մի բնականություն, ոչ մի պարզություն: Նրանց գրվածքներում չեն գգում լիարժեք, միտք սնուցող ինչ-որ բան: Այնտեղ չկա անհունություն, որովհետև չկա աստվածայինը: Փոխանակ քրիստոնեական հոգեպարար կրոնին՝ այն ներդաշնակ գործիքին, որ 17-րդ դարի հեղինակներն օգտագործում էին գտնելու համար իրենց պերճախոսությանը հարազատ տոնը, ժամանակակից գրողները դավանում են սահմանափակ մի փրկիսոփայություն, որ բաժանում է ամեն ինչ, կարկինով է չափում զգացումները, հոգին ենթարկում է հաշվարկի և տիեզերքը, ներառյալ նաև Աստված, վերածում անէության վաղանցուկ մասնիկի: 18-րդ դարը, ապագայի հեռանկարի վրա, ամեն օր նվազում փոքրանում է, մինչդեռ 17-րդ դարը, թվում է, բարձրանում է՝ ինչքան մենք հեռանում ենք նրանից. մեկը կքում իջնում է, մյուսը՝ բարձրանում երկինք: Իզուր են ճգնում նսեմացնել Բոսյուեի և Ռասինի հանճարը, նրանք կունենան ճակատագիրը Հոմերոս կոչվող այն մեծ դեմքի, որը մենք տեսնում ենք դարերի հեռվից. այդ դեմքը երբեմն խավարում է կործանվող մի դարի հարուցած փոշով, բայց հենց որ փարատվում է փոշին, վերհայտնվում է նույն վեհաշուք դեմքը առավել մեծացած՝ իշխելու համար նոր փլատակների վրա:



## ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հուշարձանների ավերակները մեր հոգում արթնացնում են վեհագույն հիշողություններ, իսկ արվեստագետների համար դրանք հանդիսանում են աղբյուր հուզիչ ստեղծագործությունների: Փորձենք նվիրել մի քանի էջ ննջեցյալների բանաստեղծական այս աշխարհին:

Բոլոր մարդիկ գաղտնի մի մղում են զգում ավերակների հանդեպ: Այդ զգացումը առաջ է գալիս մեր մարդկային բնութայն անկայունությունից, այն գաղտնի նմանությունից, որ որ կա այդ կործանված հուշարձանների և մեր վաղանցուկ գոյություն միջև: Բացի այդ, դրան միանում է նաև մեր տկար անձերը մխիթարող այն միտքը, որ ամբողջ ժողովուրդներ, երբեմն նույնիսկ այնքան անվանի և հզոր մարդիկ, այնուամենայնիվ, չեն կարողացել ապրել մեր անշուք կյանքի համար սահմանված սակավ օրերից անդին: Այսպես, ուրեմն, բնութայն զանազան վայրերում գտնվող ավերակները բարոյական մեծ խորհրդածություն առիթ են տալիս մարդկանց: Երբ դրանք տեղադրված են բնութայն որևէ անկյունում, մարդ իզուր փորձում է իր աչքերն ուղղել այլ տեղ. նրա հայացքը միշտ գալիս կանգ է առնում դրանց վրա: Իսկ ինչո՞ւ մարդկանց ձեռքի գործերն անցավոր չպիտի լինեին, երբ դրանք լուսավորող արևը ինքն անգամ մի օր պիտի ընկնի իր կամարից: Նա, ով այդ արևը տեղադրեց երկնքում, այն միակ գերագույն էությունն է, որի թագավորությունը բնավ չի ճանաչում ավերակներ:

Կան երկու տեսակի ավերակներ. մեկը ժամանակի կատարած գործն է, մյուսը՝ մարդկանց ձեռքի գործը: Առաջինները աչքի համար տհաճ ոչինչ չունեն, որովհետև բնությունը տարիների հետ աշխատում ու կատարում է իր

գործը: Ուր որ տարիները փլատակներ են առաջացնում, բնությունն այնտեղ ծաղիկներ է ցանում, ուր որ տարիները մի գերեզման են բաց անում, բնությունն այնտեղ տեղադրում է աղավնու մի բույն: Անընդհատ զբաղված լինելով վերարտադրելով՝ բնությունը մահը չըջապատում է կյանքի ամենաքաղցր պատրանքներով:

Երկրորդ տեսակի ավերակներն ավելի շուտ քանդումներ են, քան ավերակներ. դրանք ներկայացնում են անդարմանելի ոչնչության պատկերը: Լինելով ոչ թե տարիների, այլ դժբախտության, չարիքի գործը, դրանք նման են երիտասարդների անժամանակ սպիտակած մազերին: Մարդկանց ձեռքով կատարված ավերումներն ավելի սոսկալի, ավելի ամբողջական են լինում, քան դարերի կատարած ավերումները. երկրորդները կամաց-կամաց են կրծում քայքայում, առաջինները՝ միանգամից տապալում-կործանում: Երբ Աստված, մեզ անհայտ պատճառներով, ուզում է փութացնել աշխարհի կործանումը, հրամայում է, որ ժամանակը իր գերանդին տա մարդու ձեռքը, և ժամանակը սարսափով է տեսնում, որ մարդը մի ակնթարթում քարուքանդ է անում այն, ինչ ինքը դարեր պիտի տրամադրեր ավերելու համար:

Մի օր մենք զբոսնում էինք Լյուքսեմբուրգի պալատի հետևում և անցնում այն մենաստանի մոտից, որի գովքն է հյուսել պրն. դը Ֆոնտանը<sup>1</sup>: Այնտեղ մենք տեսանք մի եկեղեցի, որի տանիքը փլված էր, պատուհանների արճիճները պոկված էին և դռները փակված ուղղահայաց դիրքով դրված գերաններով: Մենաստանի մյուս շինությունների մեծ մասը գոյություն չունեն: Մենք երկար թափառեցինք սև մարմարե գերեզմանաքարերի մեջ, որոնք այս ու այն կողմ ցրված էին գետնի վրա: Դրանցից մի քանիսը լրիվ ջարդուփշուր էին եղած, մյուսների վրա դեռ երևում էին տապանագրերի որոշ մնացորդներ: Մենք մտանք մենաս-

տանի բաց սյունաշարերով ներքին ճեմասարահը, որի բա-  
կում աճել էին վայրի սալորենիներ բարձր խոտերի և փլա-  
տակների կույտի մեջ: Պատերին երևում էին կիսով չափ  
ջնջված որմնանկարներ, որոնք ներկայացնում էին սուրբ  
Բրունոյի<sup>2</sup> կյանքը: Արեգակնային մի ժամացույց էր մնա-  
ցել եկեղեցու արտաքին եռանկյունաձև պատի վրա, իսկ  
ավագ խորանում խաղաղական այն մեղեդիի փոխարեն, ո-  
րը մի ժամանակ բարձրանում էր ննջեցյալների պատվին,  
լսվում էր գերեզմանաքարեր սղոցող բանվորի գործիքի  
խլացուցիչ ճռնչյունը:

Այն խորհրդածուլթյունները, որ մենք արեցինք այս  
վայրում, կարող է անել ամեն մարդ: Մենք այնտեղից  
դուրս ելանք ճմլված սրտով և խորացանք հարևան ար-  
վարձանի մեջ՝ առանց իմանալու, թե ուր ենք գնում: Գիշե-  
րը մոտենում էր: Երբ երկու նեղ պատկերի միջով մտանք  
մի ամայի փողոց, հանկարծ մեր ականջին հասավ մի երգե-  
հոնի քաղցրալուր հնչյունը, և մոտակա եկեղեցու խորքից  
լսվեցին «Փառաբանե՛ք Տիրոջը, բոլո՛ր մարդիկ» օրհներգի  
բառերը: Գոհաբանության խորհրդի ութօրյակն էր: Չեմ  
կարող նկարագրել այն հուզումը, որ մեզ պատճառեցին  
կրոնական այդ երգերը: Մեզ թվաց, թե երկնքից լսում ենք  
մի ձայն, որ ասում էր. «Անհավա՛տ քրիստոնյա, ինչո՞ւ ես  
կորցնում հույսդ: Կարծո՞ւմ ես, որ ես կփոխեմ իմ մտադ-  
րությունները մարդկանց նման, կարծո՞ւմ ես, որ ես կհրա-  
ժարվեմ դրանցից, որովհետև պատժում եմ: Փոխանակ  
պարսավելու իմ հրամանները, ընդօրինակի՛ր այս հավա-  
տարիմ սպասավորներին, որոնք օրհնում են իմ ձեռքի  
հարվածները, նույնիսկ, երբ ես նրանց վերածում եմ  
ճգմված բեկորների»:

Մենք մտանք եկեղեցուց ներս այն պահին, երբ քահա-  
նան իր օրհնություններն էր բաշխում: Աղքատ կանայք,  
ծերունիներ, երեխաներ ծնրադրել էին: Իսկույն մենք ծնկի

իջանք գետնին նրանց մեջտեղում: Արցունքները հոսում էին մեր աչքերից: Մեր սրտի խորքից ասացինք. «Ո՛վ Տեր, ների՛ր մեզ, որ տրտնջացինք՝ տեսնելով քո ավերված տաճարը, ների՛ր մեր ցնցված բանականությունը»: Մարդն ինքն իսկ տապալված ընկած մի շինություն է միայն, մեղքի և մահվան բեկոր. նրա սերը գաղջ է, հավատը՝ երերուն, գլխասրտությունը՝ սահմանափակ, զգացումները՝ թերի, մտածումները՝ անբավարար, սիրտը՝ փշրված. նրա մեջ ամեն ինչ սոսկ ավերակ է:



## Ավերակների գրավիչ գեղեցկությունը

### Ա.

Ավերակները, եթե դրանք դիտվեն որպես բնապատկեր, ավելի գրավիչ են մի գեղանկարի մեջ, քան նորակառույց ամբողջական հուշարձանը: Այն տաճարների մեջ, որ դարերը դեռ չեն հերձատած, պատերը ծածկում են տեղանքի և արտաքին առարկաների մեկ մասը և խափանում կառույցի սյունաշարի և կամարների տեսքը: Բայց, երբ այդ տաճարները փուլ են գալիս, և մնում են միայն առանձին բեկորներ, դրանց միջից աչքը, վերևում և հեռվում, նշարում է աստղերը, ամպերը, լեռները, զետերն ու անտառները: Այդ ժամանակ, տեսողական մի պատրանքով, հորիզոնը ետ է գնում, և ճեմասրահները՝ օդում կախված ուրվագծերն իրարից անջատվում են երկնքի և երկրի Ֆոնի վրա: Այս առանձին երևույթներն անձանոթ չեն եղել հներին, որոնք կրկեսներ էին կառուցում առանց միակտոր փակ զանգվածի՝ ազատ ընթացք տալու համար հեռանկարի պատրանքներին:

Ավերակներն այնուհետև առանձնահատուկ ներդաշնակույթյուններ ունեն իրենց միջավայրի հետ ըստ իրենց ճարտարապետական ոճի, ըստ այն վայրերի, ուր տեղադրված են, և ըստ այն բանի, թե ո՞ր միջօրեականի վրա բնության ինչպիսի՛ պայմաններում են գտնվում:

Տաք երկրներում, որոնք այնքան էլ նպաստավոր չեն խոտերի և մամուռների առաջացման համար, ավերակներն զուրկ են այն սիզատեսակներից, որոնք զարդարում են մեր դղյակներն ու աշտարակները: Բայց նաև կան բարձր բույսեր, որոնք ներդաշնակվում են դրանց ճարտարապետական բարձր ձևերի հետ: Պալմիրում<sup>3</sup> արմավենին կարծես ճեղքում է մարդկանց և առյուծների գլուխները, ո-

րոնք պահում են «Արևի տաճարի» խոյակները: Նարգիլահենին\* իր երկարավուն վերասլաց բունով փոխարինում է տաճարի տապալված սյունը, իսկ դեղձենին, որ հները ընծայաբերում էին Հարպոկրատեսին<sup>4</sup>, բարձրանում է լուսթյան այս կայանում: Այստեղ կա նաև ծառի մի տեսակ, որի խառնիխուռն տերևները և բյուրեղանման թափանցիկ մրգերը ավերված տաճարի առկախյալ բեկորների հետ գեղեցիկ, բայց տխուր մի ներդաշնակութուն են կազմում: Երբեմն ուղտերի մի քարավան, կանգ առնելով այս անապատներում, բազմապատկում է շրջավայրի տպավորիչ գեղեցկությունը: Արևելյան գունագեղ հագուստները ներդաշնակվում են այս ավերակների վեհություն հետ, իսկ ուղտերն, ասես, առավել զգալի են դարձնում այդ վեհությունը, երբ, պառկելով այս ու այն կողմ տարտղնված բեկորների մեջ, ցույց են տալիս միայն իրենց ճաղատ գլուխներն ու կուզիկ կռնակները:

Ավերակներն իրենց բնույթը փոխում են Եգիպտոսում: Հաճախ, մի փոքր տարածություն մեջ, դրանք ներկայացնում են բազմատեսակ ճարտարապետություն՝ արթնացնելով այլազան հիշողություններ: Հին ոճի եգիպտական սյուները բարձրանում են կորնթական ոճի սյուների կողքին. տոսկանական սյունակարգի մի կտոր միանում է արաբական հորինվածքով մի աշտարակի, կամ խաշնարած ժողովրդի մի հուշարձան՝ հռոմեական մի հուշարձանի: Սֆինքսներ, Անուբիսներ<sup>5</sup>, բազմաթիվ կոտրված արձաններ, խորտակված կոթողներ գլորված են Նեղոս գետի մեջ, թաղված՝ հողի տակ, ծածկված՝ բրնձի արտերում կամ բակլայի և առվույտի դաշտերում: Երբեմն, գետերի վարարումների ժամանակ, այս ավերակները նմանվում են ջրերի վրա լողացող մի մեծ նավատորմիղի, իսկ, երբեմն բուրգերի կողերին քսվող ալիքաձև ամպեր բաժանում են դրանք

---

\* Հնդկընկույզի բարձր ծառ:

երկու մասի: Դատարկ մի պատվանդանի վրա բարձրացած շնագայլն իր դունչը երկարում է խոյի գլխով մի Պանի կիսանդրու հետևից. վիթը, ջայլամը, եգիպտահավը (իբրև), աֆրիկյան ճագարը ցատկոտում են փլատակների մեջ, մինչև սուլթանահավը անշարժ կանգնում է ավերակի մի բեկորի վրա գրանիտե և պորֆիրե մեհենադրոշմ թռչնի նման:

Տամպերի<sup>6</sup> հովտում, Օլիմպոսի անտառներում, Ատտիկեի և Պելոպոնեսի ափերին սփռված են Հունաստանի ավերակները: Այստեղ արդեն սկսում են երևալ մամուռները, մագլցող բույսերն ու առապարների մեջ աճող ծաղիկները: Հասմիկի մոլորված մի դրասանգ համբուրում է արձանացած մի վեներայի՝ կարծես նրան վերադարձնելու համար նրա գոտին. սպիտակ մամուռից մի մորուք է կախված Հեբեի<sup>7</sup> կզակից. խաշխաշն\* աճում է Մնեմոզինայի<sup>8</sup> գրքի թերթերի վրա, որը խորհրդանիշն է անցյալում համբավված, իսկ այժմ մոռացված այս վայրերի: Եգեականի ալիքները, որոնք գալիս խորտակվում են խարխլված կամարակապ ճեմասրահների տակ, Ֆիլոմելան<sup>9</sup>, հեծեծող Ալկիոնը<sup>10</sup>, Կադմոսը<sup>11</sup>, որն իր օղակները ոլորում է մի գոհասեղանի շուրջը, կարապը, որն իր բույնը դնում է ինչ-որ Լեդայի<sup>12</sup> գրկում, հազարավոր դեպքեր, որոնք, թվում է, առաջացել են երեք Շնորհների կողմից, կախարդանք են հաղորդում այս բանաստեղծական բեկորներին: Ասես աստվածային մի շունչ տակավին կենդանացնում է Ապոլոնի և մուսաների տաճարների փոշին: Ծովի ջրերով ողողված ամբողջ բնակարը նման է Ապելեսի<sup>13</sup> մի նկարի՝ նվիրված Նեպտունին<sup>14</sup> և կախված նրա ափերին:

\* Բոլորակաձև, մուգ կարմիր վայրի կակաչ:

## Քրիստոնեական հուշարձանների ավերակները Բ

Քրիստոնեական հուշարձանների ավերակները չունեն այն վայելչագեղութունը, որ հատուկ է Հռոմի և Հունաստանի հուշարձանների ավերակներին: Բայց, այլ տեսանկյուններից դիտած, դրանք կարող են համեմատվել: Ամենագեղեցիկները, որ ծանոթ են այս տեսակի մեջ, այն ավերակներն են, որոնք գտնվում են Անգլիայում, Քրմբեռլենդ<sup>15</sup> լճի ափին, Շոտլանդիայի լեռներում, մինչև Օրքնեյի<sup>16</sup> կղզիները: Եկեղեցու դասի երկու թևերը, լուսամուտների կամարները, դրանց քանդակազարդ մասերը, ճեմասրահների մույթերը և զանգակատների անկյունավոր ճակատները գլխավորապես այն մասերն են, որոնք ամենից ավելի դիմացել են ժամանակի ավերներին:

Հունական ոճի հուշարձանների մեջ կամարներն ու ներքնակամարները զուգահեռ են երկնքի կամարին, այնպես որ ամպերի գորշ հյուսվածքի կամ մուրթ մի բնանկարի վրա դրանք կորչում են խորքերում: Գոթական ոճի մեջ, ընդհակառակը, հուշարձանների սուր ծայրերը հակադրություն են կազմում երկնքի կլորությունների և հորիզոնի կորությունների հետ: Գոթական ոճի հուշարձանները, բազկացած լինելով դատարկ մասերից, հետագայում ավելի հեշտություններ են զարգարվում խոտերով և վայրի ծաղիկներով, քան հունական ոճի հուշարձանների լեցուն մասերը: Մույթերի կրկնակի գծազարդերը, տերևաձև կտրվածքով կամ մրգի սակառիկի ձևով փորված գմբեթները դառնում են յուրատեսակ զամբյուղներ, որտեղ քամիները, փոշուհ հետ միասին, բերում լցնում են սերմեր: Գառնադմակը մխրճվում ու կպչում է կրաղյուսե շաղախին, մամուռները փլատակների անհավասար կույտեր են փաթաթում իրենց



առաձգական մազմզուկներով, մորմենին մի պատուհանի նեղ անցքից դուրս է հանում իր շրջանակաձև թուխ ճյուղերը, իսկ բաղեղը, սողոսկելով հյուսիսային ճեմասրահի երկայնքով, իր դրասանգներն է կախում կամարներից:

Չկա մի ավերակ, որ ավելի գեղեցիկ ու տպավորիչ լինի, քան այս փլատակները: Ամպամած մի երկնքի տակ, քամիների և փոթորիկների մեջտեղում, այն ծովի ափին, որի սաստկաշունչ մրրիկներն է երգել Օսիանը<sup>17</sup>, ավերված այս կառույցների գոթական ճարտարապետությունն ունի մեծղի և մռայլ ինչ-որ բան՝ նման Սինայի Աստծուն, որի հիշատակն է նա հավերժացնում: Նստած խորտակված մի խորանի վրա, Օրքնեյի այս կղզում, ճանապարհորդը զարմանում է այս վայրենի տխրություն վրա. կատաղի մի օվկիանոս, մառախլապատ շարժուն ավազակույտեր, լայն հովիտներ, որտեղ բարձրանում է մի շիրմաքար, հեղեղատներ, որոնք հոսում են մի ցախաստանի միջով և մի քանի կարմրավուն սոճիներ՝ անփութորեն կանգնած ձյան շերտերով ծածկված մի տխուր զառիթափի մերկություն վրա. ահա այն ամենը, ինչ պարզվում է մարդու հայացքին: Քամին պտտվում է ավերակների մեջ, և դրանց անհամար ճեղքերը դառնում են երգեհոնի փողեր, որտեղից ողբագին հեծեծանքներ են դուրս գալիս: Անցյալում երգեհոնն ուներ նվազ հառաչանքներ այս կրոնաբույր կամարների տակ: Երկարավուն խոտեր դողդողում են գմբեթների ճեղքերի մեջ: Այդ ճեղքերի հետևում երևում են չվող ամպի մի ծվեն և թևածող հյուսիսային մի թռչուն: Երբեմն ճանապարհը կորցրած մի նավ, ծածկված իր ուռած առագաստների տակ ինչպես ջրերի մի ոգի, որ քողարկված է իր թևերի մեջ, ահոսում է ամայի ալիքները: Հյուսիսային սաստկաշունչ հողմի ազդեցություն տակ նա կարծես ամեն քայլափոխի ծնրադրում և ողջուն է տալիս ծովերին, որոնք թրջում են Աստծու ավերված տաճարի բեկորները:

Այս անծանոթ ավերից են անցել այն մարդիկ, որոնք պաշտում էին Իմաստությունը, որը ման էր եկել այս ալիքների վրա: Երբեմն, հանդիսավոր օրերին, նրանք առաջանում էին ծովեզերքի երկայնքով՝ Սաղմոսերգուհի հետ երգելով. «Որքա՛ն ընդարձակ է այս ծովը, որն իր լայնատարած թևերը երկարում է հեռվում»: Երբեմն էլ, նստած Ֆինգալի<sup>18</sup> քարայրում, օվկիանոսի մոտ, նրանք կարծես լսում էին այն ձայնը, որ ասում էր Հոբին. «Գիտե՞ս, թե ով է փակել ծովն ամբարտակներով, երբ այն հորդում էր՝ դուրս գալով իր մոր որովայնից» (Հոբ, 38, 8): Գիշերը, երբ ձմեռային փոթորիկներն իջնում էին, երբ վանքն անհետանում էր պտուտահողմերի մեջ, խաղաղ վանականները, քաշված իրենց խցիկները, քնում էին փոթորիկների մռնչյունի տակ՝ երջանիկ, որ պատսպարվել են Տիրոջ այս նավի մեջ, որը երբեք չի խորտակվելու:

Ո՛վ սրբազան բեկորներ քրիստոնեական հուշարձանների, ինչպես ուրիշ շատ ավերակներ, դուք բնավ չեք հիշեցնում արյուն, անարդարություններ, բռնություններ: Դուք պատմում եք միայն խաղաղ պատմությունների կամ, ամենաշատը, Աստվածորդու խորհրդավոր տառապանքների մասին: Իսկ դուք, սու՛րբ ճգնավորներ, դուք, որ ավելի հանգիստ, ավելի բախտավոր մենաստաններ գտնելու համար աքսորել էիք ձեզ մինչև բևեռային սառույցները, այժմ վայելում եք ձեր զոհողությունների պտուղը: Եթե հրեշտակների մոտ էլ, ինչպես մարդկանց մոտ, կան բնակեցված գյուղեր և ամալի վայրեր, դուք, ինչպես որ ձեր առաքինությունները ծածկեցիք երկրային մենաստանների մեջ, այնպես էլ, անկասկած, կընտրեիք երկնային մենաստանները՝ այնտեղ թաքցնելու համար ձեր երջանկությունը:

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶԵՐՄԵՌՄԱՆ ԴՈՒԹՅՈՒՆ

Մենք բաժանվում ենք կրոնական հուշարձանների և բնության տեսարանների ֆիզիկական ներդաշնակություններին՝ մուտք գործելու համար քրիստոնեության բարոյական ներդաշնակությունների մեջ: Այդ ներդաշնակությունների առաջին շարքում պետք է դասել ժողովրդական ջերմեռանդությունը, որը կայանում է որոշ հավատալիքների և ժողովրդի կողմից գործադրվող որոշ ծեսերի մեջ: Այդ հավատալիքները և այն ծեսերը, որ գործադրում են մարդիկ առանց անպայման լինելու ո՛չ Եկեղեցու պաշտպաններ և ո՛չ էլ նրա կողմից բացարձակապես մերժված անձինք, իրապես կրոնի և բնության ներդաշնակություններ են միայն: Երբ ժողովուրդը կարծում է, թե լսում է մեռելների ձայնը քամիների միջից, երբ նա խոսում է գիշերային ուրվականների մասին կամ երբ ուխտագնացության է մեկնում իր ցավերն ամոքելու համար, այդ հավատալիքները սոսկ հուզիչ հարաբերություններ են բնական որոշ երևույթների, որոշ անխախտ համոզումների և մեր սրտի թշվառության միջև: Դրանից հետևում է, որ ինչքան մի դավանանք կամ մի կրոն հարուստ է այդպիսի կրոնական ջերմեռանդությամբ, այնքան նա բանաստեղծական է, քանի որ բանաստեղծությունը հիմնվում է հոգու շարժումների և բնության երևույթների վրա, որոնք առավել խորհրդավոր են դառնում կրոնական գաղափարների միջամտությամբ:

Կարեկցանքի արժանի կհամարվեինք մենք, եթե, ուզենալով ամեն ինչ ենթարկել բանականության կանոններին, խստորեն դատապարտեինք այդ հավատալիքները, որոնք օգնում են ժողովրդին տանելու կյանքի ցավերը և, որոնք

ուսուցանում են այնպիսի մի բարոյականութուն, որ ամենալավ օրենքները երբեք չեն սովորեցնի նրան: Ինչ էլ որ ասեն, լավ է, գեղեցիկ է, որ մեր բոլոր գործերը լեցուն լինեն Աստուծով, և մենք անընդհատ շրջապատված լինենք նրա հրաշքներով:

Ժողովուրդը շատ ավելի իմաստուն է, քան փիլիսոփաները: Ամեն աղբյուր, ճանապարհի վրա գտնվող ամեն խաչ, գիշերային քամու ամեն հառաչ իր հետ բերում է զարմանահրաշ մի բան: Հավատացյալ մարդու համար բնությունը մշտական մի հրաշալիք է: Եթե նա կարիք ունի վերստին տեսնելու իր մեկ ազգականին կամ բարեկամին, ապա ուխտ է անում, վերցնում է ուխտավորի իր ցուպը, կտրում-անցնում Ալպյան կամ Պիրենյան լեռները, այցելում Աստվածամոր կամ սուրբ Հակոբոս առաքյալի՝ եկեղեցին Գալիցիայում<sup>2</sup> և աղոթում սրբին, որ վերադարձնի իրեն իր որդին (գուցե ծովերի վրա թափառող մի խեղճ նավաստի), երկունքի ցավերից ազատի իր կնոջը և երկարի իր հոր կյանքի օրերը: Նրա սիրտը թեթևանում է: Նա մեկնում է վերադառնալու համար իր խրճիթը: Բեռնավորված ծովային խեցիներով՝ նա իր հետ բերած մեծ շեփորի ձայնով լցնում է շրջակա գյուղերն ու ավանները և ժողովրդական միամիտ ու տխուր մի երգով գովաբանում Աստվածամոր բարությունը: Ամեն մարդ ուզում է ունենալ ուխտավորին պատկանող ինչ-որ բան: Որքա՛ն ցավեր, որոնք բուժվել են սրբագործված մի կտոր ժապավենով: Ուխտավորը ժամանում է իր գյուղը: Առաջին անձը, որ ընդառաջ է գնում նրան, ծննդաբերությունից նոր վեր կացած իր կինն է կամ իր վերադարձած որդին, իր երիտասարդացած հայրը:

Երջանիկ են, երիցս երջանիկ են նրանք, ովքեր հավատում են: Նրանք ժպտում են, որովհետև հավատում են, որ մի՛շտ պիտի ժպտան. լաց են լինում, որովհետև մտածում

են, որ իրենց արցունքները շուտով վերջ պիտի գտնեն: Այդ արցունքները չեն կորչում բնավ. կրոնը դրանք վերցնում դնում է իր սափորի մեջ և ներկայացնում Աստծուն:

Ճշմարիտ հավատացյալի քայլերը երբեք առանձին չեն լինում. մի բարի հրեշտակ միշտ հսկում է նրա կողքին, խորհուրդներ է տալիս նրա երազների մեջ և պաշտպանում չար հրեշտակի դեմ: Երկնքում բնակվող այս բարեկամն այնքան նվիրված է նրան, որ համաձայն է նրա համար նույնիսկ աքսորվել երկրի վրա:

Հների մոտ ոչինչ այնքան հիացման արժանի չէր, որքան այն բազում սքանչելի սովորությունները, որոնք անցյալում գործ էին ածվում կրոնի մեջ: Եթե նրանք անտառի մի անկյունում հանդիպում էին սպանված մի մարդու մարմնին, մի խաչ էին տնկում այնտեղ ի նշան ողորմության: Այդ խաչը բարի սամարացուց<sup>3</sup> խնդրում էր մի կաթիլ արցունք այդ դժբախտ մարդու համար, իսկ քաղաքի հավատացյալ բնակչից՝ մի բերան աղոթք իր եղբոր համար: Եվ հետո, գուցե այդ ճանապարհորդը մի օտարական էր, որ ընկել էր իր երկրից հեռու, ինչպես այն հոչակավոր Անծանոթը, որ գոհվեց մարդկանց ձեռքով՝ հեռու իր երկնային հայրենիքից: Ինչպիսի՛ հարաբերությունն Աստծու և մեր միջև, ինչպիսի՛ վեհությունն է հաղորդում դա մարդկային բնությունը, ինչպիսի՛ զարմանալի համարձակությունն, որ փորձում է նմանություններ գտնել մեր մահկանացու օրերի և աշխարհի Տիրոջ հավերժական գոյություն միջև:

Մենք չենք խոսելու հնադարյան զվարճալի խաղերին փոխարինող այն հոբելյանական տարիների<sup>4</sup> մասին, որոնք քրիստոնյաներին ընկղմում են զղջումի ավազանի մեջ, նորոգում խղճմտանքը և մեղավորներին հրավիրում կրոնական հավաքական թողություն. ոչ էլ ասելու ենք, թե ինչպես համընդհանուր աղետների ժամանակ մեծերն ու փոք-

րերը ոտաբոբիկ գնում էին եկեղեցուց եկեղեցի՝ մեղմացնելու համար Աստուծոց ցասումը: Հոգևոր հովիվը, պարանը վզին, քայլում էր նրանց առջևից, որպես անձնուրաց խոնարհ զոհ իր հոտի փրկութեան համար:

Բայց ժողովուրդը վախ չէր զգում բնավ այդ աղետներից, քանի որ իր հարկի տակ ունեւր եբենոսե փայտից պատրաստված Քրիստոսի խաչելութեան յուր, օրհնված դափնին կամ ընտանիքի հովանավոր սրբի պատկերը: Քանի՜-քանի՜ անգամ նրանք ծնրադրել են այդ մասունքների առաջ՝ խնդրելու համար այն օգնութեանը, որ չէին ստացել մարդկանցից:

Ո՞վ չի ճանաչում Անտառների Աստվածամորը՝ հին փշենու բնում կամ աղբյուրի մամռակալած խոռոչում ապրող այդ բնակչուհուն: Իր գործած հրաշքներով նա մեծ անուն ունի այս ավանում: Բազմաթիւ մեծահասակ կանայք կասեն ձեզ, որ իրենց երկունքի ցավերն այնպես սաստիկ չեն եղել, օգնութեան են աղերսել Անտառների բարի Աստվածամորից: Այն աղջիկները, որոնք կորցրել են իրենց նշանածներին, հաճախ, լուսնի լույսի տակ, տեսել են այդ երիտասարդների հոգիները այս մենավոր վայրերում: Նրանք ճանաչել են նրանց ձայնը աղբյուրի հառաչանքի մեջ: Աղավնիները, որոնք խմում են այդ աղբյուրի ջրից, միշտ ձվեր են ունենում իրենց բնի մեջ, և այն ծաղիկները, որոնք աճում են նրա եզերքներին, միշտ բողբոջներ են ունենում իրենց ցողունների վրա: Շատ բնական է, որ անտառների Սրբուհին կատարեր այդպիսի հրաշքներ, որոնք սիրում են, ինչպես այն մամուռները, որոնց մեջ բնակվում է նա, և հրապուրիչ, ինչպես այն ջրերը, որոնք ծածկում են նրան:

Կյանքի մեծ իրադարձութեանների ժամանակ է, որ կրօնական սովորութեանները մխիթարութեան են տալիս դժբախտներին: Մի անգամ մենք ականատես եղանք նավաբեկութեան ենթարկված մարդկանց: Հասնելով ծովե-

զերք, նրանք հանեցին իրենց հագուստները՝ իրենց վրա պահելով միայն իրենց թրջված տաբատներն ու շապիկները: Փոթորկի ժամանակ նրանք ուխտ էին արել Աստվածամորը: Թափոր կազմելով՝ նրանք ուղղվեցին դեպի մի փոքրիկ մատուռ, որ նվիրված էր սուրբ Թովմաս առաքյալին<sup>5</sup>: Նրանց առջևից գնում էր նավապետը, իսկ ժողովուրդը հետևում էր նրանց՝ երգելով «Ողջու՛յն ծովի աստղին»: Քահանան մատուցեց նավաբեկյալներին նվիրված պատարագը, և նավաստիները ծովի ջրով թրջված իրենց հագուստները, որպես էքսվոտո<sup>\*</sup>, կախեցին մատուռի պատերից: Փիլիսոփայությունը կարող է հոյակապ խոսքերով լցնել իր էջերը, բայց կասկածում ենք, որ դժբախտացած խեղճ մարդիկ երբևիցե գան իրենց հագուստները կախելու նրա տաճարից:

Մահը, որ բանաստեղծական է (որովհետև վերաբերում է անմահ բաներին) և այնքան խորհրդավոր իր լուսթյան պատճառով, բնականաբար, պիտի ունենար հազար ու մի ձևեր՝ հայտնվելու ժողովրդին: Մարդու վախճանը մերթկանխատեսվում էր ինքն իրեն հնչող զանգի զողանջներով, մերթ այն մարդը, որ պիտի մեռներ, լսում էր, որ երեք հարված են խփում իր սենյակի տախտակամածին: Սուրբ Բենեդիկտոսի<sup>6</sup> մի կրոնավորուհի, որ մոտ էր հրաժեշտ տալու այս աշխարհին, տեսնում էր, որ մի սպիտակ փշե պսակ է դրված իր խուցի սեմին: Երբ մի մայր իր որդուն կորցնում էր հեռավոր մի երկրում, հենց նույն պահին նա այդ իմանում էր իր երազի մեջ: Նրանք, ովքեր ժխտում են նախազգացումները, երեք չեն ճանաչելու այն գաղտնի ճանապարհները, որտեղով միմյանց սիրող երկու սրտեր հաղորդակցվում են իրար հետ աշխարհի մեկ ծայրից մյուսը: Հաճախ սիրելի մի ննջեցյալ, դուրս գալով իր գերեզմանից,

\* Ռիստով եկեղեցուն նվիրված մի պատկեր կամ փորագրված մի ցուցանակ, որ կախում են եկեղեցու պատից (ծնթ. թարգմ.):

ներկայանում էր իր բարեկամին և հանձնարարում նրան աղոթքներ ասել՝ փրկելու համար իրեն դժոխքի բոցերից և առաջնորդելու ընտրյալների երանությանը: Այսպես, ուրեմն, կրոնը բարեկամությունը բաժնեկից էր դարձրել հավիտենական երջանկություն տվող այն գեղեցիկ մենաշնորհին, որ Աստուծուն է պատկանում:

Տարբեր տեսակի, բայց միշտ կրոնական բնույթ ունեցող գաղափարներ ներշնչել են մարդկությանը. դրանք երբեմն այնքան միամիտ են լինում, որ շփոթեցնում են գրողին: Ձեռք տալ ծիծեռնակի բնին, սպանել մի կարկրալանջ, մի թագավորակ\*, մի ծղրիդ, որ գյուղացու օջախի հյուրն է, կամ ծերացած թույլ ու անզոր մի շուն, որ երկար տարիներ ծառայել է ընտանիքին, համարվում էր մի տեսակ սրբապղծություն, որ անպայման, ասում էին, իր հետևից բերում է մի դժբախտություն:

Ծերության հանդեպ ունենալով խոր հարգանք՝ մարդիկ հավատում էին, որ տարիքն առած անձանց ներկայությունը բարենշան է տան մեջ, և որ հին ծառան բախտավորություն է բերում իր տիրոջը: Այստեղ մենք տեսնում ենք ընտանեկան օջախի հովանավոր հռոմեական հին աստվածների մատուցված հուզիչ պաշտամունքի որոշ հետքեր և վերհիշում Լաբանի<sup>6</sup> աղջկանը, որն իր հետ էր տանում իր հայրական կուռքերը: Ժողովուրդը համոզված էր, որ ոչ ոք չի կատարի մի վատ արարք առանց իրեն դատապարտելու այն բանին, որ իր կյանքի մնացած մասն անցկացնելու է ուրվականային սարսափելի տեսիլների մեջ: Հնադարյան մարդիկ, որոնք մեզնից ավելի իմաստուն էին, զգուշանում էին քանդել կրոնի, խղճի և բարոյականության այս օգտակար ներդաշնակությունները: Նրանք հավանաբար չէին մերժի նաև այն մյուս գաղափարը, ըստ որի ճշմարիտ էր համարվում, որ վատ ճանապարհով հաջողության հասած

---

\* փոքր մի թռչուն



ամեն մարդ դաշինք է կնքել չար ոգու հետ և իր հոգին կտակել դժոխքին:

Վերջապես քամիները, անձրևները, արևները, եղանակները, մշակույթները, արվեստները, ծնունդ, մանկութուն, ամուսնություն, ծերություն, մահ, ամեն ինչ ունեցել է իր սրբերն ու իր պատկերները, բայց ոչ մի ժողովուրդ այնպես չըջապատված չի եղել բարեհոգի աստվածություններով, ինչպես եղել է քրիստոնյա ժողովուրդը:

Խնդիրը չի վերաբերում այս հավատալիքները մանրամասնորեն քննելուն: Կրոնը, հեռու լինելով դրանց մասին որևէ բան հրահանգելուց, ընդհակառակը, ծառայում էր այն բանին, որ դրանք չհարաշահվեին և ծայրահեղություն չտարվեին: Պետք է միայն գիտենալ, թե դրանց նպատակը բարոյակա՞ն է, թե ոչ, և թե դրանք ի վիճակի՞ են արդյոք ամբոխին դեպի առաքինություն առաջնորդելու ավելի լավ, քան օրենքները: Իսկ խելքը գլխին ո՞ր մարդը կարող է կասկածել այդ մասին: Անընդհատ ճառելով նախապաշարումների դեմ՝ մարդ ի վերջո ճանապարհ է բաց անում ամեն տեսակ հանցագործությունների: Ջարմանալին այն կլինի սոփեստների համար, որ իրենց պատճառած բազում չարիքների մեջ, նրանք նույնիսկ գոհունակությունը չեն ունենա ժողովրդին տեսնելու ավելի անհավատ: Եթե ժողովուրդը դադարի միտքը կրոնին ենթարկելուց, նա կտարվի այլանդակ գաղափարներով: Նրան կպատի մի սարսափ, որ առավել ևս մեծ կլինի հենց նրա համար, որ նա չի իմանա դրա պատճառը: Նա վախից կդողա մի գերեզմանոցի մեջ, որտեղ փորագրված կլինի, թե՛ Մահը հավիտենական քուն է. և, ձևացնելով, թե արհամարհում է Աստուծո գործությունը, կգնա մի գնչուհու մոտ՝ հարցումներ անելու նրան կամ՝ որոնելու իր բախտը խայտաբղետ խաղաքարտերի մեջ:

Մարդուն հարկավոր է հրաշալիք, ապագա, հույսեր, որովհետև նա զգում է, որ ինքը ստեղծված է անմահության

Համար: Մեռելահարցությունը, կախարդությունը, մոգությունը ժողովրդի մոտ ուրիշ բան չեն, եթե ոչ բնազդական մի մղում դեպի կրոնը և ամենացայտուն ապացույցներից մեկը պաշտամունքի անհրաժեշտություն: Մարդ պատրաստ է ամեն ինչի հավատալու, երբ ոչինչի չի հավատում, նա գուշակներին է մեծարում, երբ այլևս մարգարեներ չունի, կախարդությունների հետևից է գնում, երբ հրաժարվում է կրոնական արարողություններից, և բաց է առնում վհուկների որջերը, երբ փակում է Տիրոջ տաճարները:



## ՀԻՍՈՒՍ ԳՐԻՍՏՈՍԻ ԵՎ ՆՐԱ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Երկրի վրա Փրկչի երևմանը նախորդող ժամանակաշրջանում ազգերն սպասում էին մի երևելի անձի գալստյանը: «Մի հին և հաստատուն կարծիք էր տարածվել Արևելքում, ասում է լատին պատմագիր Սուետոնուսը<sup>1</sup>, որ մի մարդ պիտի հայտնվեր Հուդայի երկրում և պիտի տիրանար ամբողջ կայսրությունը»: Նույն բանն է վկայում Տակիտոսը<sup>2</sup> գրեթե նույն բառերով: Ըստ այս պատմիչի՝ «հրեաների մեծ մասը համոզված էր, որ իրենց քահանայական հին գրքերում պահպանված աստվածային մի պատգամի համաձայն, այդ ժամանակաշրջանում (վեսպասիանոս<sup>3</sup> կայսեր ժամանակ - ծնթ. ճեղ.) Արևելքը պիտի գորանար, և մի մարդ պիտի ելներ Հուդայի երկրից ու իր իշխանությունը տարածեր ամբողջ աշխարհում»: Հովսեփոս Ֆլավիոսը<sup>4</sup>, խոսելով Երուսաղեմի կործանման մասին, հիշատակում է, որ հրեաները ապստամբության մղվեցին հռոմեացիների դեմ գլխավորապես մթին մի մարգարեության պատճառով, որը հայտնում էր իրենց, թե այդ ժամանակաշրջանում «մի մարդ պիտի ելներ իրենց միջից և իրե՛ն պիտի ենթարկեր ամբողջ աշխարհը»:

Նոր կտակարանում նույնպես որոշ ակնարկություններ կան Իսրայելում տարածված այդ հույսի մասին. օրինակ՝ դեպի անապատ վազող ամբոխը հարցնում է սուրբ Հովհաննես Մկրտչին, թե ի՞նքն է արդյոք երկար ժամանակ սպասված մեծ Մեսիան՝ Աստծու Օծյալը: Էմմավուսի<sup>5</sup> աշակերտները տխրությունք են համակվում, երբ իմանում են, որ Հովհաննեսն այն մարդն չէ, որ պիտի փրկի Իսրայելը: Դանիելի<sup>6</sup> յոթանասուն շաբաթները կամ Երուսաղեմի տաճարի վերակառուցման 490 տարիները լրացել էին: Վերջապես

Որոգիներս<sup>7</sup>, հիշատակելուց հետո հրեաների այս ավանդույթունները, ավելացնում է, որ «նրանց միջից մեծ թվով մարդիկ ընդունեցին Հիսուս Քրիստոսին որպես մարգարեների կողմից խոստացված ազատարարի»:

Այսուհանդերձ երկինքը պատրաստում էր մարդու Որդու ճանապարհները: Ազգերը երկար ժամանակ բաժանված լինելով իրարից իրենց բարքերով, վարչական համակարգով և լեզվով՝ ժառանգաբար պահպանել էին իրենց հին թշնամույթունները միմյանց հանդեպ: Եվ, ահա, հանկարծ զենքերի աղմուկը դադարում է, և ժողովուրդները, հաշտված կամ պարտված, զանգվածորեն կորչում են հռոմեացի ժողովրդի մեջ:

Մի կողմից կրոնը և մարդկանց բարքերը հասել էին ապականության այնպիսի մի աստիճանի, որը առաջ է բերում մարդկային գործունեությունների փոփոխություն անհրաժեշտություն, մյուս կողմից սկսում էին տարածվել միաստվածություն և հոգու անմահություն վարդապետությունները: Այսպիսով ճանապարհ էր բացվում ավետարանական ուսմունքի համար, որի տարածմանը պիտի ծառայեր համաշխարհային մի լեզու:

Հռոմեական այս կայսրությունը բաղկացած էր բազմաթիվ ազգերից, ոմանք՝ վայրենի, ուրիշներ՝ քաղաքակրթված, իսկ մեծ մասը՝ ծայրահեղորեն դժբախտ: Քրիստոսի պարզությունը առաջինների համար նրա բարոյական առաքինությունները երկրորդների համար, իսկ բոլորի համար նրա ողորմածությունն ու զթասարտությունը միջոցներ էին փրկության, որը վերապահված էր երկնքում: Եվ այդ միջոցներն այնքան ազդեցիկ ու արդյունավետ էին, որ Մեսիայի գալստից երկու դար հետո Տերտուղիանոսն<sup>8</sup> ասում էր Հռոմի դատավորներին. «Մենք երեկվաններն ենք, բայց մենք լցնում ենք ամեն ինչ՝ ձեր քաղաքները, ձեր կղզիները, ձեր ամրոցները, ձեր գաղութները, ձեր հարկե-

րը, ձեր դասակները, ձեր խորհրդաժողովները, ձեր պալատը, ձերակուլտը, ֆորումը, մենք ձեզ թողնում ենք միայն ձեր տաճարները»:

Բնական այս բազում նախապատրաստութիւններին միանում է զարմանահրաշ նշանների փայլը. ճշմարիտ պատգամախոսները, որոնք երկար ժամանակ լուել էին Երուսաղեմում, վերստին բարձրացնում են իրենց ձայնը, իսկ կեղծ մարգարեուհիները՝ հատուկ կանայք, լուում են. Արևելքում երևում է մի նոր աստղ, Գաբրիել հրեշտակապետն իջնում է երկնքից կույս Մարիամի մոտ, և երանելի հրեշտակների խումբը գիշեր ժամանակ երգում է երկնքի բարձունքից. «Փա՛ռք Աստծուն, խաղաղութիւն՝ մարդկանց»:

Հանկարծ աղմուկ է տարածվում, որ մի Փրկիչ է ծնվել Հուդայի երկրում: Նա չի ծնվել ծիրանագույն հանդերձների մեջ, այլ՝ չքավորութեան օթևանում: Նրա ծնունդը չի ծանուցվել մեծերին և գոռոզամիտ անձանց, այլ հրեշտակները նրա ծննդի մասին հայտնել են խոնարհ ու պարզ հոգիներին: Նրա օրորոցի շուրջը չեն հավաքվել այս աշխարհի երջանիկները, այլ՝ աղքատ և թշվառ մարդիկ, և նրա կյանքի առաջին գործը եղել է իրեն հայտնել ավելի շուտ որպէս թշվառների Աստված:

Այստեղ կանգ առնենք մի պահ և անենք հետևյալ խորհրդածութիւնը. դարերից ի վեր մենք տեսնում ենք, որ թագավորները, հերոսները, երևելի մարդիկ դառնում են ազգերի աստվածներ: Բայց, ահավասիկ, մի հյուսնի որդին, Հրեաստանի մի խուլ անկյունում ներկայանում է մեզ որպէս վշտերի և թշվառութեան օրինակ: Նա հրապարակավ խոշտանգվում է և հյուծվում տանջանքների մեջ: Նա իր աշակերտներին ընտրում է հասարակութեան ամենախոնարհ խավերից. քարոզում է միայն զոհողութիւն, հրաժարում աշխարհի շքեղութիւններից, հաճույքներից, իշխա-

նությունից. նախընտրում է ստրուկը՝ տիրոջից, աղքատը, հարուստից, բորոտը՝ առողջ մարդուց. ով ողբում է, ով վերքերով է պատած, ով լքված է աշխարհից ու մարդկությունից, արժանանում է նրա սիրուն ու կարեկցանքին. իշխանությունը, հարստությունն ու անհագ երջանկությունը, ընդհակառակը, ենթակա են նրա սպառնալիքներին: Նա տապալում է բարոյականի ընդհանրացած հասկացությունները, հաստատում նոր հարաբերություններ մարդկանց միջև, մարդկային նոր իրավունք, հասարակական նոր հավատ: Այսպիսով նա վեր է հանում իր աստվածությունը, նշավակում Կեսարների կրոնը, նստում նրանց գահի վրա և նվաճում երկիրը: Օ՛, ո՛չ, եթե ամբողջ աշխարհի ճայնը բարձրանար Հիսուս Քրիստոսի դեմ, եթե բոլոր փրկսոփայական գիտությունները ի մի գային ընդդեմ նրա ուսմունքի, երբեք մեզ չէին կարողանա համոզել, որ նման հիմքի վրա խարսխված մի կրոն մարդու կողմից ստեղծված կրոն է: Նա, ով կարողացավ պաշտել տալ խաչը, ով մարդկանց առաջարկեց, որ տառապող մարդկությունը, հալածված առաքինությունը լինեն պաշտամունքի առարկա, այդպիսի մեկը, երզվում եմ, կարող էր միայն Աստված լինել:

Հիսուս Քրիստոս երեւաց մարդկանց մեջ՝ լի շնորհով և ճշմարտությամբ: Նրա խոսքի գորությունն ու քաղցրությունը հմայում հափշտակում էին նրանց: Նա եկավ լինելու մահկանացուների մեջ ամենադժբախտը: Նրա բոլոր զարմանահրաշ գործերը թշվառների համար էին: «Նրա հրաշքները, - ասում է Բոսյունեն<sup>9</sup>, - բխում էին ավելի շուտ նրա բարությունից, քան նրա գորությունից»: Իր պատգամներն ուսուցանելու համար նա ընտրեց բարոյախրատական խոսքը կամ առակը, որը հեշտությամբ էր դրոշմվում ժողովրդի մտքի մեջ: Նա իր դասերը տալիս էր դաշտերում և գյուղերում շրջելիս: Տեսնելով դաշտային ծաղիկներ՝ հորդորում էր իր աշակերտներին, որ հույս ունե-

նա նախախնամող Աստծու վրա, որը վեր է պահում տկար բույսերը և կերակրում փոքրիկ թռչուններին: Նշմարելով ծառերի վրայի մրգերը՝ նա ուսուցանում էր դասել մարդուն ըստ իր գործերի: Երբ նրա մոտ մի երեխա էին բերում, նա հանձնարարում էր անմեղ լինել նրա նման: Գտնվելով հովիվների մեջ՝ նա ինքն իրեն տալիս էր հոգիների հովիվ տիտղոսը և իրեն ներկայացնում որպես մի հովիվ, որ իր ուսերի վրա առած՝ բերում է մոլորված ոչխարը: Գարնանը նա նստում էր մի լեռան վրա, իր շուրջը գտնվող առարկաներ էր վերցնում և դրանցով ուսուցանում իր ոտքերի առաջ նստած ամբոխին: Հենց այդ խեղճ ու դժբախտ ամբոխի տեսքից էլ ծնունդ էին առնում նրա երանիները. «Երանի՛ նրանց, որ սգավոր են..., երանի՛ նրանց, որ քաղցած են ու ծարավ...» և այլն: Նրանք, ովքեր պահում էին այս պատվիրանները, և նրանք, ովքեր արհամարհում էին դրանք, համեմատվում էին երկու մարդկանց հետ, որոնք կառուցում են երկու տներ, մեկը՝ հաստատուն ժայռի վրա, մյուսը՝ շարժուն ավազի: Ըստ որոշ մեկնաբանների՝ Հիսուս այս խոսքերն ասելիս ցույց էր տալիս մի բլրակի վրա բարեշեն մի ավան, իսկ բլրակի ներքևում՝ հեղեղումից ավերված տնակներ: Երբ նա ջուր էր խնդրում սամարացի կնոջից, նրան իր ուսմունքը ներկայացնում էր կենդանի ջրի գեղեցիկ պատկերով:

Հիսուսի ամենակատաղի թշնամիները երբեք չեն համարձակվել հարձակվել նրա անձի վրա: Ցելսուսը<sup>10</sup>, Հուլիանոսը<sup>11</sup>, Վոլուգիանոսն<sup>12</sup> ընդունում են նրա գործած հրաշքները, իսկ Պորփյուրը<sup>13</sup> պատմում է, որ նույնիսկ հեթանոսների պատգամախոսները նրան համարում էին իր բարեպաշտությամբ հռչակված մի մարդ: Տիբերիոսը<sup>14</sup> կամեցել էր նրան դասել աստվածների շարքում: Ըստ Լամպրիդիոսի<sup>15</sup> Ադրիանոսը<sup>16</sup> տաճարներ էր կառուցել նրա պատվին, իսկ Ալեքսանդր Սևերիոսը<sup>17</sup> սրբերի նկարների

կողքին մեծարում էր նաև նրան՝ նրա նկարը գետեղելով Օրփեոսի<sup>18</sup> և Աբրահամի նկարների միջև: Հայտնի է Պլինիոսի<sup>19</sup> նշանավոր վկայությունը այն առաջին քրիստոնյաների անմեղություն մասին, որոնք հավատարմորեն հետևում էին Փրկչի օրինակին: Հնադարի ոչ մի փիլիսոփա չկա, որին մեղադրած չլինեն այս կամ այն արատի, այս կամ այն թերություն համար: Առաջին պատրիարքներն անգամ ունեցել են տկարություններ: Քրիստոսն է միայն անարատ. նա վեհագույն գեղեցկության ամենապայծառ օրինակն է՝ բազմած երկնային գահի վրա: Մաքուր և սուրբ ինչպես Տիրոջ խորանը, ոգեշնչված միայն Աստուծու և մարդկանց սիրով, անհունորեն գերիվեր աշխարհային սին փառքերից՝ նա վշտերի ու ցավերի միջով հետամուտ է լինում մեր փրկության մեծ գործին՝ իր առաքինությունների ազդեցությամբ ստիպելով մարդկանց որդեգրել իր ուսմունքը և ընդօրինակել այնպիսի մի կյանք, որով նրանք կարող էին միայն հիանալ:

Նա ուներ սիրալիր, սրտաբաց և մեղմ բնավորություն, նրա գլխասիրությունն ու բարությունը սահման չունեին: Առաքյալն այդ մասին մեզ գաղափար է տալիս երկու բառով՝ «Նա գնում էր բարիք անելով»: Նրա անտրտուն չպատակությունն Աստուծու կամքին ցայտուն կերպով դրսևորվում է նրա կյանքի բոլոր պահերին: Նա սիրում, ճանաչում էր բարեկամությունը. այն մարդը՝ Ղազարոսը, որին դուրս բերեց գերեզմանից, նրա բարեկամն էր: Կյանքի հանդեպ իր ունեցած մեծագույն զգացումից թելադրված էր, որ նա կատարեց իր այդ ամենամեծ հրաշքը: Հայրենիքի սերը նրա մեջ արտահայտվեց հետևյալ օրինակով. «Երուսաղեմ, Երուսաղեմ, - բացականչում էր նա՝ խորհելով այն դատաստանի մասին, որն սպասում էր այդ մեղավոր քաղաքին, - քանի՜ անգամ կամեցա հավաքել քո մանուկներին, ինչպես հավն է հավաքում իր ձագերին թևերի



տակ, բայց դու չկամեցար»: Բլրի բարձունքից աչքերը հառելով իր ոճիրների համար սոսկալի կործանման դատապարտված այդ քաղաքին՝ նա չկարողացավ զսպել իր արցունքները. «Նա նայեց քաղաքին, - ասում է առաքյալը, - և լաց եղավ»: Նրա ներողամտությունը պակաս ուշագրավ չեղավ, երբ իր աշակերտները խնդրեցին նրան, որ երկնքից կրակ թափի սամարացիների մի գյուղի վրա, որ մերժել էր հյուրընկալել նրան: Նա նրանց պատասխանեց վրդովմունքով. «Դուք չգիտեք, թե ինչ եք պահանջում ինձնից»:

Եթե մարդու Որդին դուրս եկած լիներ երկնքից իր ամբողջ ուժով, վստահաբար նա մեծ դժվարություն չէր ունենա կատարելու այդքան առաքինություններ և կրելու այդքան շատ ցավեր: Բայց հենց այստեղ է փառավոր խորհուրդ. Քրիստոսն զգում էր ցավեր, նրա սիրտը ճմլվում էր ինչպես ամեն մարդու սիրտը, բայց նա զայրույթի ոչ մի նշան ցույց չէր տալիս բնավ, նա զայրանում էր միայն խստասրտության և անզգայության դեմ: Նա մշտապես կրկնում էր. «Սիրեցե՛ք միմյանց»: «Հա՛յր իմ, - բացականչում էր դահիճների կապանքների տակ, - ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում»:

Պատրաստվելով բաժանվել իր սիրելի աշակերտներից՝ նա հանկարծ փղձկաց: Նա խորապես ապրում էր գերեզմանի սարսափն ու խաչի անձկությունները. արյունոտ մի քրտինք հոսեց նրա աստվածային այտերի երկայնքով, գանգատվեց, որ իր հայրը լքել է իրեն: Երբ հրեշտակը բաժակը մոտեցրեց նրան, նա ասաց. «Հա՛յր իմ, եթե կարելի է, այս բաժակը թող ինձնից հեռու անցնի, բայց ոչ՝ ինչպես ես եմ կամենում, այլ՝ ինչպես դու»: Եվ ահա այդ պահին էր, որ հետևյալ խոսքը, որի մեջ զգացվում էր իր վշտի ամբողջ վեհությունը, դուրս թռավ նրա բերանից. «Հոգիս տխուր է մինչև մահ»: Ա՛հ, եթե ամենամաքուր բարոյականությունն ու ամենաքնքուշ սիրտը, եթե սխալների դեմ

կուվելով և մարդկանց ցավերն ամոքելով անցկացված կյանքը աստվածության հատկանիշներ են, ապա ո՞վ կարող է ուրանալ Հիսուս Քրիստոսի աստվածությունը: Լինելով բոլոր առաքինությունների տիպար՝ նրա մեջ բարեկամությունն էր խոսում, երբ նա քնեց սուրբ Հովհաննեսի կրծքի վրա կամ, երբ իր մորը հանձնեց իր այդ աշակերտին. նրա մեջ գթասիրությունն էր արտահայտվում, երբ նա դատում էր պոռնկության մեջ բռնված կնոջը. ամենուրեք գուլթն ու կարեկցանքն էին շարժում նրա սիրտը, երբ նա օրհնում էր թշվառների թափած արցունքները. մանուկների հանդեպ իր ունեցած սիրո մեջ ի հայտ էին գալիս նրա անմեղությունն ու սրտի պարզությունը, նրա հոգու ուժը փայլատակում էր խաչի վրա իր զգացած տագնապների մեջ, իսկ նրա վերջին հառաչանքը ներողամտության հառաչանք էր:



Ա.

Տարբեր գրվածքների մի կուռ ամբողջություն է կազմում այն եզակի Գիրքը, որն սկսվում է Ծննդոցով և վերջանում Հայտնությունը, սկսվում է հստակագույն ոճով և ավարտվում ամենայլաբանական երանգավորությունը: Չէ՞ որ ամեն ինչ մեծ է ու պարզ Մովսեսի գրքում, ուր նկարագրված են աշխարհի ստեղծագործությունն ու նախնական մարդկանց անմեղությունը, և ամեն ինչ զարհուրելի է ու գերբնական վերջին մարգարեական գրքում, ուր ներկայացված են այլասերված հասարակություններն ու աշխարհի վախճանը: Մեր քրիստոնեական բարքերին օտար մյուս ստեղծագործությունները՝ այլակրոն հին ազգերի սրբազան գրքերը, ինչպիսիք են՝ զրադաշտական Զենդ-Ավեստան<sup>1</sup>, բրահմանական Վեդաները<sup>2</sup>, մահմեդականների Ղուրանը, սկանդինավյան ժողովուրդների էդդաները<sup>3</sup>, Կոնֆուկիոսի<sup>4</sup> առածները, սանսկրիտ լեզվով գրված բանաստեղծությունները, մեզ չեն զարմացնում բնավ. դրանց մեջ գտնում ենք մարդկային գաղափարների սովորական շղթան, դրանք ինչ-որ ընդհանուր բան ունեն իրար միջև թե՛ իրենց շարադրանքի և թե՛ մտածման մեջ: Միայն Աստվածաշունչն է, որ նման չէ ոչ մեկին. դա մյուսներից անջատ մի հուշարձան է: Բացատրեցե՛ք այն մի թաթարի, մի քաֆիրի\*, կանադացի մի բնիկի, դրե՛ք այն չինացի կամ ճապոնացի մի քրմի կամ մի գերվիչի ձեռքերի մեջ. նրանք բոլորն էլ կզարմանան: Դա հրաշքի համազոր մի բան է:

\* Քաֆիր (արաբ. =անհավատարիմ) Այսպես էին անվանում եվրոպացիք Աֆրիկայի հարավում ապրող ցեղերին (ծնթ. թարգմ.):

Քսան հեղինակներ, որոնք ապրել են իրարից շատ հեռավոր դարաշրջաններում, աշխատել են այս սուրբ գրքերի վրա: Եվ չնայած, որ նրանք գործածել են քսան տարբեր ոճեր, սակայն այդ ոճերին, որոնք անընդօրինակելի են, մենք չենք հանդիպում ուրիշ ոչ մի ստեղծագործություն մեջ: Նոր Կտակարանը, որն այնքան տարբեր է Հին Կտակարանից իր շարադրանքի ոճով, այնուամենայնիվ բաժանում է Հին հետ այս զարմանալի ինքնատուլությունը:

Սա Սուրբ Գրքին հատուկ արտակարգ միակ փաստը չէ, որի շուրջ մարդիկ համաձայն են միմյանց հետ. նույնիսկ նրանք, ովքեր չեն ուզում հավատալ Աստվածաշնչի վավերականությանը, այնուհանդերձ, հակառակ իրենց, հավատում են ինչ-որ բանի այս նույն Աստվածաշնչում: Աստվածապաշտ թե՛ անաստված, մեծ թե՛ փոքր, հրապուրված չգիտես ինչ անծանոթ բանից, ձեռքից բաց չեն թողնում և անընդհատ թերթատում են այս գիրքը, որով ոմանք հիանում են, իսկ ուրիշներ՝ թերագնահատում այն ու մրտադրում: Կյանքում չկա մի վիճակ կամ մի դրույթ, որի վերաբերյալ Աստվածաշնչում չհանդիպենք մի համարի, որը կարծես թելադրված լինի հատուկ դրա համար: Դժվար թե կարելի լինի մեզ համոզել, որ կյանքում հնարավոր բոլոր իրադարձությունները, բախտավոր կամ դժբախտ, իրենց բոլոր հետևանքներով հանդերձ, նախատեսված լինեն մարդկանց ձեռքով գրված մի գրքում: Արդ, ստույգ է, որ Սուրբ Գրքում գտնում ենք՝

Աշխարհի ծագումը և նրա վախճանի հայտնությունը.

Մարդկային գիտությունների հիմքը.

Քաղաքական բնույթի պատվիրաններ՝ հոր կողմից ընտանիքի կառավարումից սկսած մինչև թագավորական իշխանություն, հովվական ժամանակներից սկսած մինչև բարբերի ապականության դարաշրջան.

Բարոյական բնույթի պատվիրաններ, որոնք վերաբերում են հարստությանն ու թշվառությանը, ժողովրդի ամենաբարձր, ինչպես և ամենախոնարհ խավերի կյանքին:

Վերջապես ոճերի բոլոր տեսակները, որոնք տարբեր գրքերի մեջ մի ամբողջություն են կազմում և սակայն ոչ մի նմանություն չունեն մարդկանց ոճերի հետ:

### **Աստվածաշնչի երեք գլխավոր ոճերը**

1. Պատմողական ոճը, որով շարադրված են «Ծննդոցը», Մովսեսի և Հոբի գրքերը և այլն:

2. Բանաստեղծական ոճը, որը դրսևորվում է սաղմոսներում, մարգարեական գրքերում, բարոյախրատական գրվածքներում և այլն:

3. Ավետարանական ոճը:

Այս երեք ոճերից առաջինը, անասելի մի գրավչությունամբ, մերթ ընդօրինակում է դյուցազներգությանը հատուկ շարադրանքը, ինչպես Հովսեփի պատմության մեջ, մերթ փոխ է առնում այն կշռույթավոր ընթացքը, որը հատուկ է ներբողներին, ինչպես, օրինակ՝ Կարմիր ծովի անցքից հետո նկարագրված գեղեցիկ հատվածը, մի տեղ լսում ենք սուրբ արաբացու եղերերգերի հառաչանքը, մի այլ տեղ՝ Հռութի<sup>5</sup> սրտաշարժ հովվերգությունը:

Այն ժողովուրդը, որի պատմության բոլոր էջերը լի են նորանշան ուշագրավ իրադարձություններով, այն ժողովուրդը, որի համար արևը կանգ էր առնում, ժայռը ջրեր էր հոսեցնում, երկինքը առատ մանանա տեղացնում, այդպիսի ժողովուրդը չէր կարող ունենալ սովորական, ոչ պերճաշուք հանդիսություններ: Արարողությունների ծանոթ ձևերը հատուկ չեն եղել նրան: Նրա պատմական հեղաշրջումները սերնդից սերունդ պատմվել են շեփորներով, քնարներով ու սրինգներով: Նրա պատմության ոճը ինքն

իսկ շարունակական մի հրաշք է. այդ ոճը վկայում է հրաշքների ճշմարտութեան մասին, որոնց հիշատակը նա հավերժացնում է:

Աստվածաշնչի մեկ ծայրից մյուսը ամեն ինչ կատարելապես զարմացնում է մեզ: Ի՞նչ բան կարելի է համեմատել «Ծննդոց»-ի հենց սկզբի տողերի հետ: Լեզվի այդ զարմանալի պարզութունը, հակառակ նկարագրվող եղելութունների շքեղութեանը, մեզ թվում է հանճարի վերջին խոսքը:

«Ի սկզբանէ արար Աստուած գերկին եւ գերկիր: Եւ երկիր էր ամայի եւ թափոյր, եւ խաւար ի վերայ անդնդոց. եւ Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց: Եւ ասաց Աստուած. «Եղիցի լոյս». եւ եղև լոյս: Եւ ետես Աստուած զլոյսն զի բարի է. եւ մեկնեաց Աստուած ի մէջ լուսոյն եւ ի մէջ խաւարին»:

Հնարավոր չէ ցույց տալ, թե նման մի ոճ ինչպե՛ս է գեղեցիկ: Եվ, եթե մեկն ու մեկն այն քննադատի, մարդ չի իմանում ի՞նչ պատասխանել: Մենք կբավարարվենք միայն դիտել տալով, որ Աստված, որը տեսնում է լույսը և իր կատարած գործից գոհ մի մարդու նման ծափահարում է ինքն իրեն և գտնում, որ լույսը լավ է, դա մեկն է այն յուրահատուկ երևույթներից, որ գոյությունն չունեն մարդկային գործերի կարգի մեջ: Դա բնական կերպով չի ընկնում մարդու մտքում: Հոմերոսն ու Պլատոնը, որոնք այնքան վսեմորեն են խոսում աստվածների մասին, ոչինչ չունեն, որ նման լինի այս սքանչելի, այս տպավորիչ միամտութեանը: Աստված է, որ իջնում է ցած և գործածում մարդկանց լեզուն, որպեսզի հասկացնի նրանց իր հրաշալի գործերը:

Երբ մտածում ենք, որ նա ոչ մի առասպել չի խառնել իր պատմութուններին, երբ նրան համարում ենք մի մեծ ժողովրդի ազատարարը, ծանոթ ամենագեղեցիկ օրենսդրութուններից մեկի հեղինակը և ամենասքանչելի գրողը, որ

երբևէ գոյութիւնն է ունեցել, երբ նրան տեսնում ենք իր օրորոցում Նեղոսի ջրերի վրա օրորվելիս, այնուհետև բազում տարիներ անապատներում թաքնվելիս և ապա կրկին անապատ վերադառնալիս, որպեսզի ճեղքի ծովը, ժայռից աղբյուրներ հոսեցնի, ամպերի մեջ խոսի Աստուծու հետ և վերջապես անհայտանա մի լեռան կատարին, մեզ պատում է մի մեծ զարմանք: Բայց, երբ քրիստոնեական տեսանկյունից դալիս ենք այն մտածման, որ իսրայելացիների պատմութիւնը ոչ միայն իրական պատմութիւնն է անցած հին օրերի, այլև հարազատ պատկերը ներկա ժամանակների, որ յուրաքանչյուր եղելութիւն, յուրաքանչյուր փաստ ունի կրկնակի իմաստ և իր մեջ պարունակում է պատմական մի ճշմարտություն և մի խորհուրդ, որ հրեա ժողովուրդը մարդկային ցեղի խորհրդանշական մեկ ամփոփումն է, որի հետ պատահած բոլոր դեպքերը ներկայացնում են այն ամենը, ինչ տեղի է ունեցել, և այն ամենը, ինչ տեղի է ունենակլու աշխարհում, որ Երուսաղեմը միշտ պետք է դիտվի որպես մի ուրիշ քաղաք, Սիոնը՝ մի ուրիշ լեռ, Ավետյաց երկիրը՝ մի ուրիշ երկիր, իսկ Աբրահամի ընտրութիւնը՝ որպես մի ուրիշ ընտրութիւն, ու տակավին, երբ խորհում ենք, որ այս պատմութեան բարոյական մարդը քողարկված է ֆիզիկական մարդու տակ, որ Ադամի անկումը, Աբելի արյունը, Նոյի ծածկված մերկութիւնը և որդուն ուղղված հոր անեծքը դեռ այսօր էլ իրենց արտահայտութիւնն են գտնում կնոջ ցավագին ծննդաբերութեան, մարդու թշվառութեան ու գոռոզութեան, Կայենի եղբայրասպանութիւնից ի վեր մեր երկրագնդի վրա թափված հեղեղանման արյան և Քամից<sup>6</sup> սերված ու աշխարհի ամենագեղեցիկ ցամաքամասերից մեկի վրա ապրող նզովյալ ցեղերի մեջ, վերջապես, երբ տեսնում ենք, որ Դավթին խոստացված որդին դալիս է ճիշտ ժամանակին՝ վերահաստատելու ճշմարիտ բարոյականութիւնն ու ճշմարիտ կրո-

նը, վերամիավորելու ժողովուրդներին, արյունաթաթախ ողջակեզները փոխարինելու ներքին մարդու զոհագործությամբ, ապա բառ չենք գտնում արտահայտվելու կամ պարզապես ուզում ենք բացականչել մարգարեի հետ. «Աստված մեր թագավորն է բոլոր ժամանակներից առաջ»:

Աստվածաշնչի պատմողական ոճը, ինչպես նշեցինք, ամենից ավելի Հոբի գրքում է, որ ստանում է եղերերգի տոնայնություն: Ոչ մի գրող մարդու հոգու տխրությունն իր ծայրակետին չի հասցրել այնպես, ինչպես այն արել է սուրբ արաբացին, ոչ իսկ Երեմիա մարգարեն, որը միակն է, որ կարող է հավասարվել «Վշտի ողբասացություններին», ինչպես նշում է Բոսյունեն<sup>7</sup>: Ճիշտ է, որ հարավային բնությունից փոխ առնված պատկերները՝ անապատային կիզիչ ավազը, մենավոր արմավենին, անբերրի լեռկ լեռները պատշաճում են դժբախտ մի մարդու լեզվին և զգացումներին, բայց Հոբի թախծի ու մելամաղձություն մեջ կա ինչ-որ գերբնական մի բան: Անհատ մարդը, ինչքան էլ դժբախտ լինի, չի կարող իր հոգուց դուրս բերել այդպիսի հառաչանքներ: Հոբը տառապող ամբողջ մարդկության կերպարն է, և ներշնչված գրողը կարողացել է գտնել բավականաչափ ողբեր՝ արտահայտելու համար մարդկային ցեղի միջև բաժանված անթիվ-անհամար ցավերը: Ավելին. քանի որ Աստվածաշնչում ամեն ինչ կապված է Նոր Ուխտի հետ, կարելի է կարծել, որ Հոբի եղերերգերը նախապատրաստում էին նաև Քրիստոսի Եկեղեցու սգո օրերը: Աստված իր մարգարեների միջոցով հորինել էր տալիս մահացած սուրբ քրիստոնյաներին արժանի տխուր օրհներգեր նրանց վախճանումից և հավիտենական կյանքին տիրանալուց երկու հազար տարի առաջ:

«Կորից է օրն յորում ես ծնայ, և գիշերն՝ յորում ասացին, թե՛ ահա արու\*» (Հոբ, Գ, 3):

\* «Թող կորչի այն օրը, երբ ես ծնվեցի, և այն գիշերը, երբ ասվեց, թե արու մի երեխա է սաղմնավորվել»:



Ողբալու ի՛նչ տարօրինակ եղանակ: Այսպես խոսում է միայն Աստվածաշունչը:

«Ընդէ՞ր տուեալ իցէ անձանց դառնացելոց լոյս, և կեանս ցաւագնելոց ոգւովք»\* (Հոբ, Գ, 13):

Մարդու սրտի խորքերից երբեք դուրս չի եկել ավելի ցավագին մի ճիչ, քան այս խոսքերը:

«Այր կանանցածին սակաւակեաց է և լի բազում տառապանօր»\*\* (Հոբ, ԺԴ, 1):

Այստեղ «կանանցածին» բառը թեև ավելորդաբանութիւն է համարվում, բայց իրականում ոճական սքանչելի մի հնարանք է. մարդու բոլոր տկարութիւնները գալիս են իր մոր տկարութիւններից: Ամենահազվագյուտ ոճը կյանքի ունակութիւնն այնպիսի ուժով չէր կարողանա արտահայտել, ինչպես այն արտահայտված է այստեղ քիչ բառերով. «Մարդն ապրում է սակավ օրեր, բայց լեցուն է բազում տառապանքներով»:

Ի դեպ, ամեն ոք ծանոթ է այն հատվածին, որ Աստված բարեհաճում է ցույց տալ իր ամենագորութիւնը Հոբի առջև՝ ի դերև հանելով մարդու բանականութիւնը: Ահա թե ինչու հարկ չենք համարում այդ մասին խոսել այստեղ:

Աստվածաշնչի պատմողական ոճի երրորդ հատկանիշը, որը նկատի պետք է առնենք, նրա հովվերգական հատկանիշն է: Բայց մենք առիթ կունենանք այն լայնորեն քննարկելու հաջորդ գլխում:

Գալով Սուրբ Գրքի համար ընդհանուր երկրորդ ոճին, այն է՝ սրբազան բանաստեղծությունը, մեծ թվով քննադատներ առանձին ուսումնասիրութիւններ գրած լինելով այդ նյութի շուրջ՝ ավելորդ ենք համարում կանգ առնել դրա վրա: Ո՞վ չի կարգացել Եսթերի<sup>8</sup> և Աթալիայի<sup>9</sup> պարերգու-

\* «Ինչո՞ւ է տրվել լոյսը դառնացած անձանց և կյանքը՝ հոգով ցավագնամներին»:

\*\* «Կնոջից ծնված մարդը սակավ օրեր է ապրում, բայց լեցուն է բազում տառապանքներով»:

թյունները կամ Ռուսոյի և Մալերբի<sup>10</sup> ներբողները: Դոկտ. Լովթի աշխատասիրությունը բոլոր գրականագետների ձեռքում է, իսկ Լահարպը<sup>11</sup> տվել է Սաղմոսների մեծապես գնահատված արձակ թարգմանությունը:

Վերջապես Աստվածաշնչի երրորդ և վերջին ոճը նոր Կտակարանի ոճն է: Այստեղ է, որ մարգարեների ոճի վսեմությունը փոխվում է ոչ նվազ վսեմ մի քնքշուծյան, այստեղ է, որ խոսում է աստվածային սերը, այստեղ է, որ Բանն իրապես մարմնացել է: Ինչպիսի՛ք քաղցրություն, ինչպիսի՛ պարզություն:

Յուրաքանչյուր ավետարանչի գործ ունի յուրահատուկ մի դրոշմ, բացի սուրբ Մարկոսից, որի ավետարանը թվում է, թե սուրբ Մատթեոսի ավետարանի համառոտությունն է: Այսուհանդերձ սուրբ Մարկոսը սուրբ Պետրոսի աշակերտն է եղել, և շատերը մտածում են, որ նա կարող էր իր ավետարանը գրած լինել նրա թելադրության տակ: Նկատուման արժանի է այն փաստը, որ նա ևս պատմել է իր ուսուցչի կատարած հանցանքի մասին: Մեծ և հուզիչ մի խորհուրդ է թվում մեզ այն, որ Հիսուս, որպես իր Եկեղեցու առաջնորդ, իր աշակերտներից ընտրել է հատկապես այն միակ մարդուն, որը ուրանալու էր իրեն: Քրիստոնեության ամբողջ ոգին հենց այդտեղ է. սուրբ Պետրոսը նոր Օրենքի Ադամն է, նոր իսրայելացիների մեղավոր և զղջացող հայրն է: Բացի այդ, նրա անկումը մեզ ուսուցանում է, որ քրիստոնեական կրոնը գթության և ողորմածության կրոն է, և որ Հիսուս Քրիստոս իր օրենքը հաստատեց սխալանքի և մոլորության ենթակա մարդկանց մեջ՝ այն էլ ոչ այնքան նրանց անմեղության, որքան նրանց զղջման համար:

Մատթեոսի ավետարանն արժեքավոր է մանավանդ բարոյականության համար: Այս առաքյալն է մեզ փոխանցել զգացումներով զեղուն այն բազմաթիվ պատվիրանները, ո-

ըոնք առատորեն դուրս էին գալիս Քրիստոսի սրտի խորքերից:

Սուրբ Հովհաննեսն ունի ինչ-որ ավելի մեղմ և ավելի քնքուշ մի բան: Նրա ավետարանում մենք ճանաչում ենք այն աշակերտին, որին Հիսուս սիրում էր և որին ուզեց իր կողքին ունենալ Ձիթենյան պարտեզում իր հոգեվարքի ժամանակ: Դա մի մեծ և խոր ընտրություն էր անկասկած, քանզի միայն մեր հոգեհարազատ բարեկամն է, որ արժանի է մտնելու մեր վշտերի խորհրդի մեջ: Հովհաննեսը միակը եղավ առաքյալների մեջ, որ ուղեկցեց Աստվածորդուն մինչև խաչը: Այդտեղ էր, որ Փրկիչը նրան հանձնեց իր մորը՝ ասելով. «Կի՛ն դու, ահա՛ որդի քո: Ապա ասէ ցաշակերտն՝ ահա՛ մայր քո»\* (Հովհ. ԺԹ, 26-27): Ի՛նչ աստվածային, ի՛նչ անպատում խոսք:

Հիսուսի սիրեցյալ աշակերտը, որ ննջել էր Տիրոջ կրծքի վրա, իր մեջ անջնջելի մի պատկեր էր պահել նրանից, ահա թե ինչու նա առաջինը եղավ, որ նրան ճանաչեց նրա հարությունից հետո: Հովհաննեսի սիրտը չսխալվեց իր աստվածային բարեկամի դիմագծերը տեսնելիս. նրա մեջ այդ հավատն առաջացավ իր սիրուց:

Ի դեպ, սուրբ Հովհաննեսի ավետարանի ամբողջ ոգին արտահայտված է այն խոսքի մեջ, որ նա անընդհատ կրկնում էր իր ծերունի ժամանակ: Այս առաքյալը, որն արդեն լրացրած էր իր կյանքի օրերն ու բարի գործերը, այլևս չկարողացավ արտասանել երկար ճառեր Քրիստոսի համար վերափոխված իր ժողովրդին, նա բավարավում էր ասելով նրանց «Իմ փոքր զավակներ, սիրեցե՛ք միմյանց»:

Սուրբ Հերոնիմոսը<sup>12</sup> հաստատում է, որ Ղուկաս ավետարանիչը եղել է բժիշկ (հնադարում բժշկությունը համարվում էր շատ ազնիվ և շատ գեղեցիկ մի մասնագիտու-

\* «Ո՛վ կին, ահա՛ քո որդին: Ապա ասաց իր աշակերտին՝ ահա՛ քո մայրը» (Բնագրում լատիներեն):

թյուն), և որ նրա ավետարանը հոգու բժշկությունն է: Այս առաքյալի լեզուն մաքուր է և վսեմ. երևում է, որ նա գրականությանը հմուտ անձնավորությունն է եղել և քաջածանոթ իր ժամանակի հասարակական գործերին ու մարդկանց: Նա մուտք է գործում իր պատմության մեջ հին պատմագիրների ձևով: Ձեզ թվում է, թե Հերոդոտին<sup>13</sup> էք լսում:

«Քանի որ շատերը ձեռնարկեցին շարադրել մեզ մոտ կատարված դեպքերի պատմությունը, ինչպես մեզ ավանդեցին նրանք, որ սկզբից Խոսրի ականատեսներն ու սպասավորները եղան, ես էլ, որ սկզբից ստուգությամբ հետամուտ էի եղել ամեն բանի, կամեցա կարգով գրել քեզ, ո՛վ գերազանցեա Թեոփիլե, որպեսզի ճանաչես ճշմարտությունն այն խոսքերի, որոնց աշակերտեցիր» (Ղուկ. Ա, 14):

Այսօր մեզ մոտ գիտությունն այնքան է տարածված, որ մեր մեջ գուցե կան գրականագետներ, որոնք կզարմանային իմանալով, որ սուրբ Ղուկասը շատ մեծ գրող է, որի ավետարանն արտահայտում է հունական և եբրայական հնադարի հանճարը: Ի՞նչ կա ավելի գեղեցիկ, քան այն ամբողջ հատվածը, որը նախորդում է Հիսուս Քրիստոսի ծննդին.

«Հրեաստանի Հերովդես թագավորի օրով, Աբիայի քահանայական ընտանիքից Ջաքարիա անունով մի քահանա կար, որի կինը Ահարոնի դուստրերից էր. նրա անունը Եղիսաբեթ էր:

«Նրանք երկուսն էլ Աստծու առաջ արդար էին... որդի չունեին, որովհետև Եղիսաբեթն ամուլ էր, և երկուսն էլ իրենց առաջացած տարիքում էին» (Ղուկ. Ա, 57):

Ջաքարիան զոհ է մատուցում. մի հրեշտակ է երևում նրան՝ խնկերի սեղանի կողքին կանգնած: Նա ասում է Ջաքարիային, որ որդի կունենա, որ այդ որդին կկոչվի Հովհաննես, կլինի Մեսիայի առաջից գնացողը և կմիավորի հայրե-

րի ու որդիների սրտերը: Այնուհետև նույն հրեշտակը գնում է մի կույսի մոտ, որն Իսրայելում էր բնակվում, և ասում է նրան. «Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ. Տերը քեզ հետ է»: Մարիամը գնում է Հուդայի լեռնային շրջանի քաղաքներից մեկը: Նա հանդիպում է Եղիսաբեթին, և երեխան, որ այս վերջինը կրում էր իր որովայնում, սկսում է խայտալ՝ լսելով կույսի ձայնը, որը պիտի ծներ աշխարհի Փրկչին: Եղիսաբեթը հանկարծ լցված Սուրբ Հոգով՝ բարձրացնում է իր ձայնը և ասում. «Օրհնյալ ես դու բոլոր կանանց մեջ, և օրհնյալ կլինի քո որովայնի պտուղը: Որտեղի՞ց է ինձ այս երջանկությունը, որ իմ Փրկչի մայրն ինձ մոտ գա, որովհետև, երբ դու ինձ ողջունեցիր, քո ողջույնի ձայնը դեռ իմ ականջին չհասած՝ երեխաս ուրախությունից սարսուռաց իմ որովայնում» (Ղուկ. Ա, 42-44): Այն ժամանակ Մարիամն սկսում է երգել սքանչելի օրհներգը. «Ո՛վ իմ հոգի, փառավորի՛ր Տիրոջը...»:

Այնուհետև գալիս է մսուրի և հովիվների պատմությունը: Երկնային զորքերի մի բազմություն գիշեր ժամանակ երգում է. «Փա՛ռք Աստծուն երկնքում, խաղաղությունն երկրի վրա և հաճությունն մարդկանց մեջ»: Հրեշտակներին արժանի մի խոսք, որ կարծես ամփոփումը լինի ամբողջ քրիստոնեական կրոնի:

Կարծում եմ, որ մի քիչ ծանոթ եմ անտիկ գրականությանը և համարձակվում եմ վստահեցնել ձեզ, որ դուք կարող եք երկարորեն ուսումնասիրել հին Հունաստանի և հին Հռոմի ամենաբարձր և ամենագեղեցիկ հանճարների ստեղծագործությունները և դուք այնտեղ չեք գտնի այնպիսի մի երկ, որը միաժամանակ լինի այսքան պարզ և այսքան հրաշալի: Ով որ մի քիչ ուշադրությամբ կարդա Ավետարանը, այնտեղ ամեն ըոպե կհայտնաբերի սքանչելի բաներ, որոնք սկզբում վրիպում են մարդու ուշադրությունից իրենց անչափ պարզությունից: Սուրբ

Ղուկասը, օրինակի համար, Քրիստոսի ազգաբանությունը շարադրելիս ետ է գնում մինչև աշխարհի ծագումը: Հասնելով առաջին սերունդներին և շարունակելով անվանել ցեղերին՝ ասում է. «...Կայնանը, որը սերվեց Ենոսից, և սա՝ Սեթից, և սա՝ Ադամից, և սա՝ ԱՍՏՄՈՒՑ»: «Եվ սա՝ ԱՍՏՄՈՒՑ» պարզ բառերը, որոնք նետված են այստեղ հենց այնպես, առանց մեկնության և խորհրդածության՝ պատմելու համար մարդու ստեղծումը, ծագումը, բնությունը, նպատակը, խորհուրդը, մեզ թվում է ոճի բարձրագույնը:

Աստվածամոր՝ Մարիամի Որդու կրոնը զանազան կրոնների էությունն է կազմում կամ այն, ինչ որ կա դրանց մեջ ամենից ավելի երկնային ու աստվածային: Փորձենք մի քանի բառով արտահայտել ավետարանական ոճի յուրահատկությունը. դա հայրական հեղինակության ոճ է՝ միախառնված չգիտես ինչպիսի եղբայրական ներողատություն, աստվածային ինչպիսի հայեցողության հետ, մի Աստված, որ, փրկելու համար մեզ, հանձն առավ դառնալ մարդկանց որդի և եղբայր:

Ասենք վերջում, որ ինչքան շատ ենք կարդում առաքյալների թղթերը, մանավանդ Պողոս առաքյալի թղթերը, այնքան շատ ենք զարմանում. չգիտես ո՛վ է այս մարդը, որը մի տեսակ ընդհանրական քարոզի ձևով վսեմ բառեր է օգտագործում, խորագույնս թափանցում մարդկային սրտի մեջ, բացատրում գերագույն էակի բնությունը և կանխատեսում ապագան:



**ՉՈՒԳԱՀԵՌ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԵՎ ՀՈՄԵՐՈՍԻ  
ՄԻՋԵՎ. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԵԶՐԵՐ**

**Բ**

Այնքան շատ է գրվել Աստվածաշնչի մասին և այնքան շատ է մեկնաբանվել այն, որ նրա գեղեցկություններն զգալ տալու միակ միջոցը, որ մեզ մնում է այսօր, այն մոտեցնելն է Հոմերոսի պոեմներին: Այդ պոեմները, դարերով նվիրագործված լինելով, ժամանակի ընթացքում ստացել են մի տեսակ սրբություն դրոշմ, որն էլ արդարացնում է մեր այս գուգահեռը և վերացնում սրբապղծության ամեն գաղափար: Եթե Հակոբն ու Նեստորը<sup>14</sup> նույն ընտանիքից չեն, համենայն դեպս թե՛ մեկը և թե՛ մյուսը ապրել են աշխարհի առաջին օրերին, և մեզ թվում է, թե մի քայլ է բաժանում միայն Պիլոսի<sup>15</sup> պալատները Իսմայիլի<sup>16</sup> վրաններից:

Ինչո՞վ է Աստվածաշունչն ավելի գեղեցիկ, քան Հոմերոսի ստեղծագործությունները: Որո՞նք են այն նմանություններն ու տարբերությունները, որ գոյություն ունեն Աստվածաշնչի և այս բանաստեղծի գործերի միջև. ահա թե ինչ ենք առաջադրում անել սույն գլխում: Նկատի առնենք գրական այս երկու մեծ հուշարձանները որպես երկու առանձին սյուներ, որոնք գետեղված են Հանճարի տաճարի մուտքին և կազմում են դրա սյունազարդ ճակատը:

Նախ շատ զարմանալի բան է տեսնել, որ աշխարհի ամենահին այս երկու լեզուները դեմ դիմաց կռվում են իրար հետ, լեզուներ, որոնցով Մովսեսն ու Լիկուրգոսը<sup>17</sup> հրապարակել են իրենց օրենքները, իսկ Պինդարոսն<sup>18</sup> ու Դավիթը երգել են իրենց օրհներգերը:

Եբրայերենը, որը սեղմ է, զորեղ և ազդու, որի բառերը գրեթե չունեն ներքին թեքում, և որը մեկ տառի հավելումով արտահայտում է մտածման քսան նրբերանգներ, ա-

ուանձնահատուկ է հրեա ժողովրդին, որը նախնական պարզությանը զարմանալիորեն միացնում է մարդկանց խոր ճանաչողություն: Հունարենը իր անորոշ, խառնիխուռն խոնարհումներով, բայերի ներքին թեքումներով, իր երկարաբան պերճախոսությամբ հատուկ է նմանակող և ընկերական ոգու տեր մի ազգի, որը շնորհալի է և երազկոտ, և որի խոսքերը շուայլ են ու քաղցրաձայն:

Շատ ավելի շփոթեցուցիչ է հունարեն լեզվի ընթացքը. պետք է ի նկատի ունենալ բայական ժամանակների որոշ դեմքերը բնորոշող հատկանիշը, վերջավորությունը, բայարմատի առջև դրված ածականը և բառի նախավերջին վանկը: Այս բոլորն առավել ևս դժվար է լինում ճանաչել, երբ մանավանդ այդ բնութագրող հատկանիշը, այսինքն՝ հայտարար նշանը, կորչում է կամ տեղափոխվում, և կամ դրա վրա ավելանում է անծանոթ մի տառ՝ նայած թե այս վերջինը ո՞ր տառի առջև է դրված:

Եբրայերենի և հունարենի այս երկու խոնարհումները՝ մեկը շատ պարզ և շատ կարճ, մյուսը՝ շատ բարդ և շատ երկար, թվում է, թե իրենց վրա կրում են այս երկու լեզուները կազմավորող ժողովուրդների ոգու և բարքերի կնիքը. առաջինը ցույց է տալիս սեղմ և հստակ խոսվածքը այն հրեա նահապետի, որը մենակ գնում է այցելելու իր հարևանին արմավենու ջրհորի մոտ, երկրորդը հիշեցնում է երկարաբան պերճախոսությունը այն պելասգի<sup>19</sup>, որը ներկայանում է իր հյուրընկալին նրա դռանը:

### **Աստվածաշնչի և Հոմերոսի ստեղծագործությունների Ռամեմատության եզրերը**

*Մեր համեմատության եզրերը կլինեն հետևյալները.  
Պարզությունը.  
Բարքերի վաղեմությունը.  
Շարադրանքը.*



Նկարագրությունը.  
Համեմատությունները կամ պատկերները.  
Վսեմությունը:  
Այժմ քննարկենք առաջին եզրը:

### 1. Պարզությունը

Աստվածաշնչի պարզությունն ավելի կարճ է և ավելի ծանր: Հոմերոսի պարզությունն ավելի երկար է և ավելի զվարթ:

Առաջինը առակավոր է և գրեթե միշտ վերադառնում ու օգտագործում է նույն ասացվածքները՝ արտահայտելու համար նոր երևույթներ:

Երկրորդը սիրում է տարածվել ճոխ խոսքերով և հաճախ նույն նախադասությունների մեջ կրկնում է այն, ինչ արդեն ասել է:

Աստվածաշնչի պարզությունը նման է հին ժամանակների մի քրմի պարզությանը, որը, լի աստվածային և մարդկային գիտություններով, իր սրբարանի խորքից թելադրում է իմաստության հստակ պատգամներ:

Քիոս<sup>20</sup> կղզու բանաստեղծի պարզությունը նման է մի ծեր ճանապարհորդի պարզությանը, որը, նստած իր հյուրընկալի օջախում, պատմում է ինչ որ սովորել է իր երկար կյանքի և թափառումների ընթացքում:

### 2. Բարքերի վաղեմությունը

Արևելքի հովիվների որդիներն իրենց հոտերը պահում են՝ ինչպես Իլիոնի<sup>21</sup> թագավորների որդիները, բայց, երբ Պարիսը<sup>22</sup> վերադառնում է Տրոյա<sup>23</sup>, ապրում է մի պալատում հեշտանքների մեջ՝ ունենալով բազմաթիվ ստրուկներ:

Մի վրան, պարզ և աղքատիկ մի սեղան և գեղջուկ սպասավորներ. ահա այն ամենը, ինչ սպասում էր Հակոբի զավակներին իրենց հոր տանը:

Հոմերոսի ստեղծագործութեան մեջ, եթե մի օտար հյուր է գալիս մի իշխանի մոտ, կանայք և երբեմն նույնիսկ թագավորի աղջիկը օտարականին իսկույն առաջնորդում են բաղնիք, ապա անուշահոտ յուղերով օծում նրան, լվացվելու համար ջուր են բերում ոսկյա և արծաթյա ջրամանների մեջ, հագցնում են ծիրանագույն մի վերարկու, առաջնորդում խնջույքի սրահը, նստեցնում ոտքի գեղեցիկ պատվանդանով զարդարված փղոսկրյա շքեղ մի աթոռի վրա: Ստրուկները գինին և ջուրը խառնում են բաժակների մեջ և նրան ներկայացնում Կերես<sup>24</sup> աստվածուհու ընծաները՝ դրված մի զամբյուղի մեջ: Տանտերը նրան մատուցում է զոհված անասունի մեջքի հյուսիսը մսից մի կտոր՝ հինգ անգամ ավելի մեծ, քան մյուսներին: Բոլորն ուտում են մեծ ուրախութեամբ, և շուտով առատությունը վերացնում է քաղցը: Ճաշի ավարտին խնդրում են օտարականին, որ պատմի իր պատմությունը: Վերջապես մեկնելու պահին նրան տալիս են ճոխ նվերներ, ինչքան էլ սկզբից համեստ երևացած լինի նրա հանդերձանքը, որովհետև ենթադրում են, որ նա մի աստված է, որ, այդպես ծպտված, անսպասելիորեն եկել է հանկարծակի բերելու թագավորներին, կամ էլ թշվառութեան մատնված մի մարդ, ուրեմն՝ Յուպիտերի<sup>25</sup> սիրելին:

Աբրահամի վրանի տակ ընդունելությունը տեղի է ունենում այլ կերպ. տոհմապետը դուրս է ելնում վրանից՝ ընդառաջ գնալու իր հյուրին, ողջունում է նրան և ապա պաշտամունք մատուցում Աստծուն: Շրջապատի տղաները բերում են ուղտերը, և աղջիկները ջուր են տալիս նրանց խմելու: Ապա լվանում են ճանապարհորդի ոտքերը: Նա նստում է գետնին և լուռ ընդունում հյուրընկալների մատուցած ճաշը: Նրան չեն խնդրում պատմել իր պատմությունը, չեն հարցաքննում: Նա, ըստ իր կամքի, մնում է այնտեղ կամ շարունակում իր ճանապարհը: Մեկնելու պա-

Հին ուխտ են կնքում նրա հետ և կանգնեցնում վկայութ-  
թյան խորանը: Այդ խորանը պիտի ասի գալիք դարերին,  
որ Հին օրերում երկու այրեր հանդիպեցին իրար կյանքի  
ճանապարհին և, երկու եղբայրների նման, միասին սեղան  
նստելուց հետո բաժանվեցին իրարից՝ այլևս երբեք միմ-  
յանց չտեսնելու և իրենց գերեզմանների միջև ընդարձակ  
շրջաններ հաստատելու համար:

Ի նկատի ունեցեք, որ Հոմերոսի մոտ անծանոթ հյուրը  
մի օտարական է, իսկ Աստվածաշնչում՝ մի ճանապարհորդ:  
Մարդկայնություն ինչպիսի՞ տարբեր հայացքներ: Հույնը  
գրսևորում է քաղաքական և տեղային վերաբերմունք,  
մինչ հրեան առաջնորդվում է բարոյական և տիեզերական  
զգացումով:

Հոմերոսի մոտ քաղաքային գործերը կատարվում են  
աղմուկ-աղաղակով և մեծ հանդիսավորությամբ. հույն  
դատավորը, հանրային հրապարակի մեջտեղում նստած,  
բարձրաձայն արտասանում է իր դատավճիռները. Նեստո-  
րը ծովափին գոհեր է մատուցում կամ հրապարակային  
հանդիսավոր ճառեր է ասում ժողովրդին: Հունական հար-  
սանիքում գույնզգույն ջահեր են վառվում, հարսանեկան  
երգեր երգվում, ծաղկեպսակներ կախվում դռներին: Թա-  
գավորների հուղարկավորության հանդեսին ներկա է լի-  
նում մի զորաբանակ, մի ամբողջ ժողովուրդ: Երգումները  
կատարվում են հանուն Ֆուրիաների<sup>26</sup>՝ ուղեկցված սարսա-  
փելի անեծքներով և այլն:

Հակոբը, արմավենու տակ, իր վրանի մուտքին արդա-  
րություն է հորդորում իր հովիվներին: «Դի՛ր քո ձեռքը իմ  
բարձոսկրին\*, - ասում է Աբրահամն իր ծառային, - և երդ-

\* Բարձոսկր=ազդրի կամ երանքի ոսկրը: Երդվելու այս սովորությունը միա-  
միտ մի պատկեր է աշխարհի առաջին օրերի բարքերին վերաբերող, երբ դեռ  
մեր երկիրն ուներ անծայրածիր անապատներ, և մարդը մարդու համար հա-  
մարվում էր աշխարհում գոյություն ունեցող ամենագեղեցիկ և ամենամեծ  
բանը: Հույները նույնպես ծանոթ էին այս սովորությանը:

վի՛ր, որ կգնաս Միջագետք»։ Բավական է երկու բառ, որպեսզի ամուսնություն համաձայնություն ձեռք բերվի աղբյուրի մոտ։ Ծառան հարսնացուին տանում է իր տիրոջ որդու մոտ, կամ որդին հանձն է առնում յոթ տարի պահել իր աներոջ ոչխարների հոտը՝ տիրաանալու համար նրա աղջկան։ Ընտանիքի նահապետը իր մահից հետո որդիների կողմից տարվում է իր նախահայրերի գետնադամբանը Եփրոնի դաշտում։ Բարքերն ու սովորություններն ավելի հին են, քան հոմերական սովորությունները, որովհետև ավելի պարզ են։ Սրանք նաև ունեն այնպիսի հանդարտություն և ծանր լրջություն, որ պակասում են առաջիններին։

### 3. Ծարադրանքը

Հոմերոսի երկերի շարադրանքը կտրատված է նյութից դուրս զանազան շեղումներով՝ ճառերով, սափորների, հագուստների, գենքերի, արքայական գայիսոնների նկարագրություններով, ինչպես նաև մարդկանց և իրերի ծագումնաբանություններ և այլն։ Մարդկանց անուններն այնտեղ խճողված են մակդիրներով. հազվադեպ է, որ մի հերոս չլինի «աստվածային», «նման անմահների» կամ «մեծարված ժողովորդներից ինչպես աստված» և այլն։ Մի իշխանուհի օժտված է միշտ «գեղեցիկ թևերով», նա միշտ նման է «Դելոսի»<sup>27</sup> արմավենու ցողունին» և իր վարսերը փոխ է առել «երեք Ծնորհների ամենակրտսերից»։

Աստվածաշնչի շարադրանքն արագընթաց է, առանց շեղումների, առանց ճառերի. հարուստ է իմաստալից ասություններով, և գործող անձինք այստեղ անվանվում են առանց չափազանցված գովասանքի։ Անուններն անվերջ կրկնվում են և քիչ անգամ փոխարինվում դերանուններով, մի հանգամանք, որ միացած որ շաղկապի հաճախակի գործածությունը, իր այդ պարզություններ պատկերում է բնությունը շատ ավելի մոտ կանգնած մի հասարակություն, քան այն հասարակությունը, որ նկարագրված է

Հոմերոսի կողմից: «Ողիսականում» հանդես եկող մարդկանց մեջ ինքնասիրության զգացումն արդեն արթնացած է, մինչդեռ «Մենդոց» գրքի մարդկանց մեջ այն դեռևս քնած վիճակում է:

#### 4. Նկարագրությունը

Հոմերոսի նկարագրությունները երկար են, ինչ բնույթի էլ եղած լինեն դրանք՝ գողտրիկ կամ գարհուրելի, կամ տխուր, կամ հմայիչ, կամ ուժեղ, կամ վսեմ:

Աստվածաշունչը, իր բոլոր սեռերի մեջ, սովորաբար մեկ հատկանշական գիծ ունի միայն, բայց այդ գիծը շատ ուշագրավ է. առարկան ուղղակի բերում դնում է անքերիդ առջև:

#### 5. Համեմատությունները

Հոմերական համեմատությունները երկարաձգված են միջանկյալ բազմաթիվ հանգամանքներով: Դրանք մի տեսակ փոքրիկ նկարներ են, կախված ճարտարապետական մի կառույցի շուրջբոլորը, մեղմացնելու համար նրա գմբեթների վերասլաց տեսքը՝ դիտողի ուշադրությունն ուղղելով դեպի դաշտային բնապատկերներն ու կենցաղային բարքերը:

Աստվածաշնչի համեմատություններն ընդհանրապես արտահայտված են մի քանի սեղմ բառերով՝ ահեղամոռնչ առյուծ, ուղղահոս հեղեղատ, ավերիչ ամպրոպ, լափլիզող հրդեհ և այլն: Այսուհանդերձ կան նաև լայն, մանրամասն համեմատություններ, բայց այս դեպքում շարադրանքն ստանում է արևելյան երանգ և անձնավորում առարկաները, ինչպես՝ հպարտ մայրի և այլն:

#### 6. Վսեմությունը

Վերջապես վսեմությունը Հոմերոսի մոտ սովորաբար ծնունդ է առնում մասերի ամբողջությունից և աստիճանաբար հասնում իր վախճանին:

Աստվածաշնչում այն գրեթե միշտ անսպասելի է. ընկնում է վրադ փայլակի նման, մնում ես ծխածածկ և կայծակնահար՝ առանց իմանալու, թե կայծակն ինչպես հարվածեց քեզ:

Հոմերոսի մոտ վսեմությունը ի հայտ է գալիս նաև բառերի գեղեցկությունից, որոնք ներդաշնակություն են կազմում մտածման վեհություն հետ:

Աստվածաշնչում, ընդհակառակը, բարձրագույն վսեմությունը կամ մեծավայելչությունը հաճախ առաջ է գալիս գաղափարի մեծության և այն արտահայտող բառի անշքություն, երբեմն նույնիսկ գեհեցություն միջև եղած հակադրությունից: Դրանից էլ բխում է հոգու համար անհավատալի մի ներքին ցնցում, ճմլում, որովհետև, երբ հոգին, մտածումից գերազրգուված, սլանում է դեպի բարձրագույն ոլորտները, հանկարծ արտահայտչաձևը, փոխանակ այն վեր պահելու, թողնում է, որ ընկնի երկնքից գետին, Աստուծո գրկից գահավիժի դեպի այս աշխարհի տիղմը: Այս կարգի վսեմությունը, բոլորից ավելի ուժգին, առանձնապես պատշաճում է անչափելի և ահեղ մի էակի, որը կապված է միաժամանակ թե՛ ամենամեծ և թե՛ ամենափոքր բաների հետ:



## ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Մենք ընթերցողներին ներկայացնում ենք երկու հեռանկար. մեկը՝ ծովային, մյուսը՝ ցամաքային, մեկը՝ Ատլանտյան ծովերի մեջտեղում, մյուսը՝ Նոր աշխարհի անտառներում, որպեսզի այդ տեսարանների վեհասքանչ գեղեցկությունը հնարավոր չլինի վերագրել մարդկանց ձեռակերտներին:

Այն նավը, որով մենք գնում էինք Ամերիկա, երբ դուրս եկավ ծովի մեջ երկարած հրվանդաններից, շուտով մեր առջև տարածությունը ձգվեց ծովի և երկնքի կրկնակ կապույտով, նման անսահման մի կտավի, որ պատրաստված է իր վրա ընդունելու ինչ-որ նկարչի ապագա ստեղծագործությունները: Ջրերի գույնը դարձավ ինչպես հեղուկ ապակու գույնը: Արևմուտքից գալիս էր մի հսկայական ալիք, թեև քամին արևելքից էր փչում: Բլրածև վիթխարի ջրակույտեր տարածվում էին հյուսիսից հարավ՝ հովտանման երկար ու նեղ բացվածքներ առաջացնելով օվկիանոսի անապատներում: Այս շարժուն բնապատկերները ամեն ընդամենը փոխում էին իրենց տեսքը. կանաչավուն բազմաթիվ ջրակույտեր մերթ ներկայացնում էին շիրիմների երկար շարքեր անսահման մի գերեզմանոցում, մերթ ջրի տափակ շերտեր, որոնք, փչրվելով և իրենց կատարների վրա առաջացնելով մանր փրփուրներ, նմանվում էին ցախաստանների մեջ ցրված սպիտակ ոչխարների հոտի: Հաճախ տարածությունը թվում էր փակ՝ համեմատության որևէ կետի բացակայության պատճառով: Բայց, եթե մի ալիք էր բարձրանում կամ մի կոհակ կռանում ու փչրվում ինչպես հեռավոր ծովափում, և կամ, եթե շնաձկների մի երամ էր անցնում հեռավոր հորիզոնում, տարածությունն իսկույն

բացվում էր մեր առջև: Տարածություն մասին մենք գաղափար էինք ունենում մանավանդ, երբ թեթև մի մառախուղ էր սողոսկում ծովի մակերեսին և թվում էր ընդարձակել անսահմանությունը: Օ՛հ, այդ ժամանակ օվկիանոսի պատկերն ինչքա՛ն վեհ է լինում ու տխուր: Ինչպիսի՛ երազանքների մեջ է խորասուզում ձեզ, լինի այն ժամանակ, երբ ձեր երևակայությունը թռիչք է առնում հյուսիսային ծովերի սառը մշուշների և փոթորիկների մեջտեղում, լինի երբ նա թևածում է հարավային ծովերի խաղաղ և երանավետ կղզիների վրա:

Պատահում էր հաճախ, որ մենք վեր էինք կենում գիշերվա կեսին և գնում նստում նավի կամրջակի վրա, որտեղ գտնում էինք նավն առաջնորդող սպային և մի քանի նավաստիների, որոնք լուռ ծխում էին իրենց ծխամորճը: Միակ աղմուկը, որ մենք լսում էինք, նավի ցուռի բախումն էր ալիքներին, մինչ սպիտակ փրփուրի հետ կրակի կայծեր էին վազում նավի կողերի երկայնքով: Ո՛վ քրիստոնյաների Աստված, ջրերի անդունդներում և երկնքի խորություններում է մանավանդ, որ դու փորագրել ես քո ամենագորությունն ինչպե՛ս. երկնային գմբեթի մոլորկապույտի մեջ ճառագայթող միլիոնավոր աստղեր, լուսինը երկնակամարի մեջտեղում, անեզր, անսահման ծովը և անհունը երկնքում ու ալիքների վրա: Քո մեծությունը դու ինձ այնպես չես հուզել, ինչպես այն գիշերներին, երբ, աստղերի և օվկիանոսի միջև առկախված, անսահմանությունն էի զգում իմ գլխավերևում, անսահմանությունը իմ ոտքերի տակ:

Ես ոչինչ եմ, ես մի պարզ մենակյաց եմ: Ես հաճախ եմ լսել գիտնականների վեճը գերագույն էակի մասին և երբեք չեմ հասկացել նրանց: Բայց ես միշտ նկատել եմ, որ հատկապես բնություն մեծ տեսարանների առջև է, որ այդ անծանոթ էակը հայտնվում է մարդկանց սրտում:



Մի երեկո, երբ խորը հանդարտութիւնն էր տիրում, մենք գտնվում էինք այն գեղեցիկ ծովի ջրերում, որոնք ուղղում են Վերջինիա նահանգի եզերքները: Բոլոր առագաստները ծալված էին: Ես զբաղված էի կամրջակի ներքեում, երբ լսեցի զանգի ձայնը, որ աղոթքի էր կանչում նավի անձնակազմին: Շտապեցի գնալ և իմ կրոնական մաղթանքները միախառնել ուղեկիցների աղոթքներին: Նավի պաշտոնյաները հավաքված էին նավի հետնամասում գտնվող բարձրադիր սրահում ճանապարհորդների հետ: Քահանա հայրը, մի գիրք ձեռքում, կանգնած էր նրանցից մի փոքր առաջ. նավաստիները ցրված էին այս ու այն կողմ նավի տախտակամածի վրա. մենք բոլորս կանգնած էինք մեր դեմքը դարձրած նավի ցուռկին, որն ուղղված էր դեպի արևմուտք:

Արևի գունդը, որը մոտ էր սուզվելու ալիքների մեջ, նավի պարանների արանքից երևում էր անպարագիծ տարածութիւնների մեջտեղում: Նավախելի համաչափ օրորումներից այդ հրեղեն աստղն ասես ամեն ընդհանրապես հորիզոն էր փոխում: Ամպի մի քանի ծվեններ անկարգ կերպով նետված էին արևելյան կողմում, որտեղից դանդաղորեն բարձրանում էր լուսինը: Երկնքի մնացած մասը անամպ էր ու ջինջ: Դեպի հյուսիս, պրիսմայի գույներով փայլատակող մի պտուտահողմ, արեգակի և լուսնի հետ կազմելով փառավոր մի եռանկյուն, բարձրանում էր ծովից ինչպես բյուրեղյա մի սյուն, որ իր վրա է պահում երկնքի կամարը:

Երիցս ողբալու արժանի կլինեք այն մարդը, որն այսպիսի տեսարանի առջև չճանաչեք Աստու գեղեցկութիւնը: Ինձնից անկախ, արցունքներ հոսեցին աչքերիցս, երբ իմ ընկերները, հանելով իրենց կպրածեփ յուղոտ գլխարկները, սկսեցին խռպոտ ձայնով երգել իրենց պարզ մեղեդին՝ նվիրված Բարեգութ-Օգնական Աստվածամոր՝ ծովայինների Տիրուհուն: Որքա՛ն ազդեցիկ էր այս մարդկանց աղոթ-

քը, որոնք դյուրաբեկ մի լաստակի վրա, օվկիանոսի մեջ-տեղում, դիտում էին արևամուտը ալիքների վրա: Ինչպե՛ս էր մարդու հոգու մեջ թափանցում խեղճ նավաստիների ա-դերսանքը՝ ուղղված վշտակիր Աստվածածնին: Ի տես այս անհունության, մեր փոքրության գիտակցությունը, հեռ-վում կոհակների վրա տարածվող մեր երգերը, իր բազում որոգայթներով մոտեցող գիշերը, մեր նավի հրաշալիքը այդքան հրաշալիքների մեջ, հիացմունքով և երկյուղա-ծովյամբ բռնված բարեպաշտ մի անձնակազմ, աղոթասաց պատկառագրու մի քահանա, անդունդների վրա հակված Արարիչը, որ մի ձեռքով բռնել է արևը արևմուտքի դռնե-րի առջև, մյուսով բարձրացրել է լուսինը արևելքում և անսահմանության միջից ուշադիր ականջ դրել իր արա-րածների ձայնին, ահա այն, ինչ մարդ չի կարող նկարագ-րել, և այն, ինչ մարդու ամբողջ հոգին հագիվ թե բավա-րարի զգալու համար:

Անցնենք ցամաքային տեսարանին:

Մի երեկո ես մոլորվել էի անտառում Նիազարայի ջրվե-ժից ոչ հեռու: Շուտով նկատեցի, որ օրը մթնում է իմ շուր-ջը, և սկսեցի վայելել Նոր աշխարհի անապատների գիշե-րային հիասքանչ տեսարանը իր ամբողջ առանձնության մեջ:

Մայրամուտից մի ժամ անց ծառերի վրայից երևաց լու-սինը հորիզոնի մյուս կողմում: Անուշահոտ գեփյուռը, որ գիշերների այդ թագուհին Արևելքից բերում էր իր հետ, ա-սես, իր թարմ շունչը լիներ, որ իրենից առաջ եկել ողողել էր անտառները: Մենավոր աստղը կամաց-կամաց բարձրա-ցավ երկնքում: Նա մերթ խաղաղորեն շարունակում էր իր ընթացքը կապտագույն երկնքում, մերթ հանգստանում էր ամպերի կոյտերի վրա, որոնք նման էին ձյունով պսակ-ված բարձրաբերձ լեռների կատարներին: Այդ ամպերը, ծալելով և պարզելով իրենց առագաստները, ծավալվում էին իրենց սպիտակ սնդուսե թափանցիկ շերտերով, ցրվում

փրփրանման թեթև ծվեններով կամ երկնքում կազմում բամբակի շլացուցիչ կույտեր, այնքան ակնահաճո, որ կարծես զգացվում էր նրանց փափկությունն ու առածգահանությունը:

Յամաքային այս տեսարանը նվազ գրավիչ չէր: Լուսնի կապտավուն ու թավշային լույսը իջնում էր ծառերի բացվածքներից և լուսեղեն խուրճեր առաջացնում թանձրամած խավարի մեջ: Իմ ոտքերի առջևից հոսող գետակը մեկ անհետանում էր անտառում, մեկ կրկին հայտնվում գիշերային աստղերի բույլով փայլփլուն իր մակերեսով: Գետակի մյուս կողմում, ընդարձակ մի արոտավայրում, լուսնի պայծառ լույսը կարծես անշարժ նիրհում էր մարգարտների վրա: Մեղմ քամուց տարուբերվող կեչիները, այս ու այն կողմ ցրված, ստվերների ծփացող կղզյակներ էին կազմում լույսի այս անշարժ և համատարած ծովի վրա: Շրջակայքում ամեն ինչ լուռ ու հանգիստ կլիներ, եթե երբեմն գետին չթափվեին մի քանի տերևներ, եթե քամին հանկարծակի չփչեր և չլսվեր անտառային բուռի ողբագին հեծեծանքը: Ժամանակ առ ժամանակ հեռվից լսվում էր նիազարայի ջրվեժի խուլ մռնչյունը, որը գիշերային հանդարտության մեջ երկարաձգվում էր անապատից անապատ և մարում մենավոր անտառներում:

Այս տեսարանի վեհությունն ու զարմանալի մելամաղձությունը հնարավոր չէ արտահայտել մարդկային լեզուներով: Եվրոպայի ամենագեղեցիկ գիշերները դույզն իսկ գաղափար չեն կարող տալ դրա մասին: Մեր մշակված դաշտերում մարդու երևակայությունը իզուր փորձում է տարածվել. նա ամեն կողմից հանդիպում է մարդկային բնակությունների: Մինչդեռ այս անմարդաբնակ, այս վայրի շրջաններում հոգին հաճույքով է խորանում անծայրածիր անտառներում, թևածում ջրվեժների վիհի վրա, խոկում լճերի և գետերի եզերքներին և, այսպես ասած, մնում մենակ Աստծու առջև:



## ՀԱՅՐԵՆԻՔԻ ԲՆԱԶԴԸ

Ինչպես բոլոր կենդանիները, այնպես էլ մարդիկ ունեն իրենց բնազդները: Բայց, քանի որ մարդն իր մեջ ամփոփում է Աստուծու ստեղծած տարբեր տեսակի էակների զգացումները, դրանցից ընտրենք այն, որը հատուկ է մարդուն: Արդ, այն բնազդը, որ տրված է մարդուն, բնազդների ամենից գեղեցիկն ու ամենից բարոյականացնողը, *ՌԱՅՐԵՆԻՔԻ ԱՆԵՐՆ Է: Եթե բնության այդ օրենքը պահպանված չլիներ մշտապես գոյատևող մի հրաշքով, որին, ինչպես ուրիշ շատ հրաշքների, ոչ մի ուշադրություն չենք դարձնում, մարդիկ կխուժեին դեպի բարեխառն գոտիներ՝ երկրագնդի մնացած մասը թողնելով ամայի: Կարելի է պատկերացնել, թե ինչպիսի աղետներ կառաջանային երկրի մի կեսի վրա մարդկային ցեղի այդպիսի համախմբումից: Խուսափելու համար այդ դժբախտություններից՝ Նախախնամությունը յուրաքանչյուր մարդու ոտքերը, այսպես ասած, կապել է հայրենի հողին անհաղթելի մի մագնիսով: Իսլանդիայի սառույցները և Աֆրիկայի կիզիչ ավազները բնակիչներից զուրկ չեն եղել բնավ:*

Նկատառման արժանի է նույնիսկ այն պարագան, որ ինչքան մի երկրի հողն անպտուղ է լինում, ինչքան նրա կլիման՝ խիստ ու դաժան, կամ (ինչ որ միևնույնն է) ինչքան մենք տառապած ու հալածված լինենք այդ երկրում, այնքան ավելի նա հրապուրիչ է դառնում մեզ համար: Տարօրինակ, բայց վեհացնող մի բան է այն, որ մի պարզ խրճիթ կորցնող մարդը շատ ավելի է ամոսոսում իր հայրական օջախը: Այս երևույթի պատճառն այն է, որ արգավանդ հողից ստացված առատ բերքը, հարստացնելով մեզ, խորտակում է բնական կապերի պարզությունը, որն առաջ

է գալիս մեր կարիքներից: Երբ դադարում ենք մեր ծնողներին սիրելուց, որովհետև նրանք այլևս մեզ պետք չեն, մենք փաստորեն դադարում ենք մեր հայրենիքը սիրելուց:

Ամեն ինչ հաստատում է այս իրողութեան ճշմարտացիութիւնը: Վայրենի մարդն ավելի կապված է լինում իր փայտաշեն հյուղակին, քան իշխանը՝ իր պալատին: Լեռնաբնակ գյուղացու համար ավելի հրապուրիչ է լեռը, քան դաշտաբնակի համար՝ իր ակոսները: Հարցրե՛ք շոտլանդացի հովվին, թե կցանկանա՞ր իր ճակատագիրը փոխել իր երկրի առաջին իշխանավորի հետ: Հեռանալով իր բնակավայրից՝ ամենուրեք նա պահում է նրա հիշատակը, ամենուրեք փնտրում է իր ոչխարները, իր լեռների հեղեղատները, իր ամպերը: Նա ցանկանում է ուտել միայն գարու հաց, խմել իր այծի կաթը, իր հովտում երգել այն գեղուններն ու երգերը, որ իր պապերն էլ էին երգում: Նա կտկարանա ու կհյուսելի, եթե չվերադառնա իր ծննդավայրը: Նա լեռնային բույս է, նրա արմատը պիտի լինի ժայռի մեջ, նա չի կարող աճել և ուռճանալ, եթե քամիներն ու անձրևները չծեծեն նրան: Հողը, պատսպարանները, դաշտային արևը մեռցնում են նրան: Ինչպիսի՞ ուրախութեամբ նա կրկին կտեսնի ցախի դալար ճյուղերով ծածկված իր կտուրը, ինչպիսի՞ կարոտով կփարվի իր թշվառութեան սուրբ մասունքներին:

Ո՞վ ավելի երջանիկ է, քան էսկիմոսն իր ահավոր հայրենիքում: Ի՞նչ արժեք ունեն նրա համար մեր ծաղիկները Լաբրադորի՝ ձյունների մոտ, մեր պալատները՝ նրա կտրի ծղապատ անցքի մոտ: Գարնանը նա իր կնոջ հետ նստում էր ջրի երեսին լողացող մի առցակտորի վրա և, քչվելով հոսանքից, բաց ծովում առաջ շարժվում՝ բազմած ամպրոպների Աստծու այդ գահի վրա: Լեռը օրորում է ալիքների վրա իր լուսափայլ գագաթներն ու իր ձյունաշեն ծառերը: Ծովագայլերը սիրաբանում են իր հովիտներում, իսկ

կետերը օվկիանոսում հետևում նրա քայլերին: Խիզախ վայրենին, ապաստանած իր շարժուն խուժի վրա, կրծքին է սեղմում իր կնոջը, որ Աստված է տվել իրեն, և նա անծանոթ ուրախություններ է ապրում հեշտանքի և վտանգների այդ խառնուրդի մեջ:

Ի դեպ, այս բարբարոսը շատ պատճառներ ունի նախընտրելու իր երկիրն ու իր վիճակը մեր երկրից և մեր վիճակից: Որքան էլ մեզ անշուք և անարժեք թվա նրա էությունը, պետք է ընդունել, որ թե՛ իր և թե՛ իր կատարած գործերի մեջ, այնուամենայնիվ, կա ինչ-որ բան, որ հայտնում է տակավին իր մարդկային արժանավորությունը: Եվրոպացին նավարկելիս ամեն օր վախից կորցնում է իրեն մի մեծ նավի վրա, որ մարդկային ճարտարվեստի գլուխգործոցն է, այն դեպքում, երբ էսկիմոսը, մի ծովափովի մորթու մեջ մտած, օվկիանոսի ջրերում տարուբերվելիս, ծիծաղում է բոլոր վտանգների վրա: Մերթ նա լսում է օվկիանոսի ջրերի շառաչյունը, որոնք բարձրանում են իր գլխից հարյուր ոտք վերև ու ծածկում իրեն, մերթ ալիքների կատարին բարձրացած՝ իր թևերի մեջ է առնում երկինքը: Նստած իր տիկի մեջ՝ նա խաղ է անում կոհակների հետ, ինչպես մի երեխա, որ ճոճվում է ծառերի իրար միացած ճյուղերի վրա անտառի խաղաղ խորքերում: Աստված այդ մարդուն գետեղելով մրրիկների շրջանում՝ նրա վրա դրել է արքայական մի նշան « Գնա՛, - գոչել է նրան ջրի հորձանքների միջից, - ես քեզ մերկ նետում եմ երկրի վրա, բայց ինչքան էլ որ դու թշվառ ես, որպեսզի մարդիկ չկարողանան ուրանալ քո ճակատագիրը, դու մի պարզ եղեգով պիտի իշխես ծովային բոլոր հրեշների վրա և փոթորիկները պիտի դնես քո ոտքերի տակ»:

Այսպես, մեզ մեր հայրենիքին կապելով, Նախախնամությունը միշտ հաստատում է իր ճանապարհները, և մենք մեր երկրի նկատմամբ ունենում ենք սիրո հազարավոր

պատճառներ: Արաբը երբեք չի մոռանում իր ուխտի ջրհորը, չի մոռանում իր այծյամին և մանավանդ իր ձիուն՝ իր ճանապարհի ընկերոջը: Սևամորթը միշտ հիշում է իր տնակը, իր նիզակը, իր բանանի ծառը և գեբրայի ու փղի նեղ արահետը:

Պատմում են, որ անգլիացի մի կրտսեր նավաստի այնպիսի սիրով էր կապվել այն նավին, որի մեջ ծնվել էր ինքը, որ մի ընդամենը չէր կարողանում բաժանվել նրանից: Երբ ուզում էին նրան պատժել, սպառնում էին՝ ասելով, թե նավից ցած կիջեցնեն: Այն ժամանակ նա վազում թաքնվում էր նավամբարում՝ աղմուկ-աղաղակ բարձրացնելով: Ո՞վ էր տվել այդ պատանուն քամիներից ծեծված հասարակ մի նավի հանդեպ այդ ուժգին սերը: Անտարակույս դա չէր բխում գուտ տեղական և ֆիզիկական սովորույթներից: Միգուցե բարոյական որոշ համանմանություններ<sup>6</sup>ը կային մարդու և նավի ճակատագրերի միջև, կամ ավելի շուտ, պատանին առանձին մի հրապուճյր էր գտնում իր ուրախություններն ու վշտերը կենտրոնացնելով իր այդ այսպես ասած, օրորոցի մեջ: Սիրտը, բնականաբար, սիրում է կծկվել. ինչքան քիչ է ցույց տալիս իրեն դրսից, այնքան քիչ է մակերես հանում իր վերքերը: Ահա թե ինչու, գերզգայուն մարդիկ, ինչպիսին հաճախ լինում են դժբախտները, սիրում են մեկուսանալ, քաշված ապրել խոնարհ տներում: Զգացումը ինչ-որ շահում է իր ուժգնությամբ, կորցնում է տարածվելով: Երբ Հռոմեական հանրապետությունը Ավենտին<sup>2</sup> բարձունքից այն կողմ չէր անցնում, նրա զավակները ուրախությամբ էին մեռնում նրա համար, բայց երբ նրա սահմանները հասան մինչև Ալպյան և Տավրոսյան լեռները, նրանք դադարեցին նրան սիրելուց: Այս կարգի մի պատճառ էր անկասկած այն, որ անգլիացի պատանու մեջ առաջ էր բերում այդ նախասիրությունը իր հայրական նավի նկատմամբ: Լինե-



լով անծանոթ մի անցորդ կյանքի օվկիանոսի վրա՝ նա տեսնում էր, որ ծովեր են բարձրանում իր և մեր վշտերի միջև: Երանի՛ նրան, որ հեռվից էր նշմարում միայն աշխարհի տխուր եղերքները:

Քաղաքակրթված ժողովուրդների մոտ հայրենիքի սերը հրաշքներ է գործել: Աստծու ծրագրերի մեջ միշտ անընդհատականություն կա. բնություն մեջ նա հաստատել է սեր ծննդավայրի հանդեպ: Կենդանին որոշ չափով բաժանում է այդ բնագրը մարդու հետ: Բայց մարդն այն ավելի հեռու է մղում. նա առաքինություն է վերածում այն, ինչը սովորույթ դարձած ընդհանրական մի զգացում էր սոսկ: Այսպես տիեզերքի ֆիզիկական և բարոյական օրենքները կապված են միմյանց հիանալի մի շղթայով: Առանց հայրենիքի սիրո մենք կասկածում ենք, որ հնարավոր լինի ունենալ ճշմարիտ առաքինություն և ճշմարիտ տաղանդ: Պատերազմում, մանավանդ, այդ սերը հրաշքներ է գործում: Գրականության մեջ նա ծնունդ է տվել Հոմերոսին և Վիրգիլիոսին: Կույր բանաստեղծը նախընտրում է նկարագրել Հոնիայի<sup>3</sup> իր ծննդավայրի բարքերը, իսկ Մանտովայի<sup>4</sup> կարապը ոգեկոչում է միայն իր հայրենի երկրի հիշատակները: Վերջինս ծնվել է մի խրճիթում և զրկվել իր նախնիների ժառանգությունից: Այս երկու հանգամանքները, թվում է, առանձնապես ազդել են իր հանճարի վրա. դրանք նրա ստեղծագործություններին տվել են թախծի այն երանգը, որ այդ հանճարի գլխավոր հրապույրներից մեկն է կազմում: Նա անընդհատ մտաբերում է այդ իրադարձությունները, և երևում է, որ նա միշտ քաղցրությամբ է վերհիշում այն Արգոսը<sup>5</sup>, ուր անց է կացրել իր երիտասարդությունը:

Բայց քրիստոնեական կրոնը եկավ իր պատշաճ չափի մեջ դնելու հայրենիքի սերը: Հների մոտ այս զգացումը պատճառ է դարձել բազում ոճիրների, որովհետև այն

տարված էր չափազանցության: Քրիստոնեությունը այն դարձրեց գլխավոր սեր և ոչ թե այլամերժ սեր: Ամենից առաջ նա մեզ ուսուցանում է լինել արդար: Նա ուզում է, որ մենք մեր հոգու չափ սիրենք Ադամի ընտանիքին, որովհետև այն մե՛ր ընտանիքն է, թեև մեր հայրենակիցները իրավունք ունենան սպասելու, որ մեր սերը նախ իրե՛նց վրա տարածվի: Այս բարոյականությունը անծանոթ էր մարդկությանը քրիստոնյաների օրենսդիր առաքինությունից առաջ: Հանիրավի են պնդում, որ նա ուզում է ոչնչացնել սիրո ուժգին զգացումները. Աստված չի փչացնում իր գործը: Ավետարանը սրտի մահը չէ, նա սրտի օրենքն է: Նա այն է մեր զգացումների համար, ինչ որ ճաշակն է արվեստների համար: Նա մեր զգացումներից պոկում հանում է այն, ինչ չափազանցված է, սխալ, հասարակ, գոեհիկ, և թողնում է այն, ինչ գեղեցիկ է, ճշմարիտ, իմաստուն: Ճիշտ ըմբռնված քրիստոնեական կրոնը հենց նախնական բնությունն է՝ մաքրված սկզբնական արատից:

Երբ հեռու ենք գտնվում մեր երկրից, այն ժամանակ ենք զգում մանավանդ այն բնագոյը, որ մեզ կապում է մեր հայրենիքին: Իրականության բացակայության պատճառով ձգտում ենք երազներով սնվել: Սիրտը խաբուսիկ բաների փորձառությունն ունի: Ով կնոջ գրկից դուրս չի եկել, նա խմել է պատրանքների բաժակից: Մերթ մի խրճիթ է, որ ծառայել է մեզ որպես պապական օջախ, մերթ մի անտառ է, մի ձորակ, մի բլուր, որոնցից յուրաքանչյուրը հայրենիք քաղցր անունով ենք հորջորջել: Անդրոմակեն<sup>6</sup> Սիմոն<sup>7</sup> անունն է տալիս սովորական մի առվի: Ի՛նչ հուզիչ ճշմարտություն կա այդ փոքրիկ առվակի մեջ, որ հայրենի երկրի մեծ գետի պատկերով է դրսևորում: Երբ հեռու ենք այն փերից, որ մեր ծնունդն են տեսել, բնությունը կարծես նվազում փոքրանում է, և մեզ թվում է, թե նա սոսկ ստվեր է այն բնության, որը մենք կորցրել ենք: Հայրենի-

քի բնագրի մեկ ուրիշ խաբկանքն էլ այն է, որ մենք մեծ գին ենք տալիս մի առարկայի, որն ինքնին այնքան էլ արժեքավոր չէ, բայց, որը մեր երկրից է գալիս, և մենք այն մեզ հետ ենք տարել այնտեղից հեռանալիս: Մեր հոգին ասես տարածվում է մինչև իսկ անշունչ անկենդան բաների վրա, որոնք բաժանել են մեր ճակատագիրը: Մեր կյանքի մի մասը կապված է մնում հողի այն շերտին, ուր անցել է մեր երջանկությունը, և մանավանդ այն շերտին, որը մեր թշվառությունն է տեսել:

Նկարագրելու համար հոգեկան այն լքվածությունը, որ մարդ գգում է հայրենիքից հեռու, ժողովուրդն ասում է. «Այս մարդը հայրենիքի ցավով է տառապում»: Դա իսկապես մի ցավ է, որ կարող է բուժվել միայն վերադարձով: Բայց բացակայությունը ինչքան էլ ոչ երկար, միայն մի քանի տարի տևած լինի, վերադառնալիս ի՞նչ ենք գտնում այն վայրերում, ուր ծնվել ենք: Քանի՞սն են կենդանի մնացել այն մարդկանցից, որոնց թողեցինք այդ վայրերում: Այստեղ, ուր պալատներ կային, հիմա գերեզմաններ են. այնտեղ, ուր գերեզմաններ կային, հիմա պալատներ են: Հայրական արտը տատասկներով է լցված, կամ հողը օտար մի արոր է ակոսում: Եվ այն ծառը, որի տակ կերակուր ենք կերել, կտրվել դեն է գցվել:

Լուրագանիայի նահանգում<sup>8</sup> կային երկու կանայք՝ մի սևամորթ և մի տեղաբնիկ վայրենի կին, որոնք երկու հարևան գաղութարարների մոտ ստրուկներ էին: Այս երկու կանանցից յուրաքանչյուրը մի երեխա ուներ. սևամորթ կինը՝ երկու տարեկան մի աղջիկ, իսկ հնդկուհին՝ նույն տարիքի մի տղա: Որոշ ժամանակ անց՝ տղան մահանում է, և երկու մայրերը, համախորհուրդ, մի հարմար վայր են որոշում անապատում և երեք գիշեր հաջորդաբար գնում են այնտեղ: Մեկը տանում էր իր մեռած որդուն, մյուսը՝ իր կենդանի աղջնակին. մեկը՝ իր Մանիտոի<sup>9</sup>, մյուսը՝ իր Ֆե-

տիշիւ<sup>10</sup>: Նրանք չէին զարմանում բնավ, որ այդպիսով նույն հավատն են դավանում՝ երկուսն էլ լինելով թշվառ: Հնդկուհին վերջին հարգանքն էր մատուցում առանձնութեան մեջ. «Սա իմ երկրի ծառն է, - ասում էր նա իր ընկերուհուն, - նստի՛ր և լա՛ց եղիր»: Այնուհետև, վայրենիների մոտ գոյութիւն ունեցող սովորութեան համաձայն, նրանք իրենց երեխաներին կախում էին մի թխկու կամ մի սարդենու ճյուղերից և օրորում՝ յուրաքանչյուրն իր երկրի երգերը երգելով:

Մայրական այս խաղերը, որոնք հաճախ քնեցնում էին անմեղ երեխային, դժբախտաբար չէին կարող արթնացնել մեռածին: Այսպիսով մխիթարվում էին այս երկու կանայք, որոնցից մեկը կորցրել էր իր երեխային և իր ազատութիւնը, մյուսը՝ իր ազատութիւնը և իր հայրենիքը: Նրանք մխիթարվում էին արցունք թափելով:

Ասում են, որ մի Փրանսիացի, Փրանսիական մեծ հեղափոխութեան բռնապետական շրջանի<sup>11</sup>, ստիպված լինելով փախչել իր երկրից, իր ունեցած մի քանի արծաթ դահեկանով մի նավակ էր գնել Հռենոս գետի վրա և նրա մեջ էր բնակվում իր կնոջ և երկու երեխաների հետ: Դրամ չունենալով՝ նա ոչ մի տեղ չէր հյուրընկալվում: Երբ նրան վտարում էին գետի մի ափից, նա առանց տրտնջալու անցնում էր մյուս ափը, իսկ հաճախ երկու ափերից էլ հետապնդվելով՝ ստիպված էր լինում խարխախ գցել գետի մեջտեղում: Նա ձուկ էր որսում կերակրելու համար իր ընտանիքին, բայց մարդիկ ուզում էին նրան զրկել Նախախնամութեան այդ օգնութիւնից էլ: Գիշերները նա գնում չոր խոտ էր հավաքում մի քիչ կրակ վառելու համար, և մինչև նրա վերադարձը կինը տանջվում էր սաստիկ անձկութիւնների մեջ: Ստիպված լինելով վայրենու կյանք վարել քաղաքակիրթ չորս ազգերի միջև՝ այս ընտանիքը ընդարձակ երկրագնդի վրա մի հողակտոր չունենր, որի վրա

Համարձակվեր ոտք դնել: Այսպես թափառելով Ֆրանսիայի շրջակայքում՝ նրա ամբողջ մխիթարանքն այն էր, որ կարողանար երբեմն ազատ շնչել այն օդը, որ իր երկրի վրայով էր անցել: Եթե մեզ հարցնեին, թե որո՞նք են այն ուժեղ կապերը, որոնցով մենք շղթայվել ենք մեր ծննդավայրին, մենք կըժվարանայինք պատասխանել: Գուցե դա մի մոր, մի հոր կամ մի քրոջ ժպի՞տն է, գուցե մեր հին ուսուցչի հիշատա՞կը, որը մեզ կրթել ու դաստիարակել է, մեր մանկուժյան ընկերնե՞րը, կամ գուցե այն խնամքը, որ մենք ստացել ենք մի դայակից, մեծահասակ մի սպասավորից, որոնք ընտանեկան օջախի էական մասն են կազմում, և վերջապես, գուցե կյանքի ամենապարզ, եթե ուզում եք՝ նույնիսկ ամենահասարակ հանգամանքնե՞րն ու դեպքե՞րն են գիշերը դաշտում հաչող շունը, ամեն տարի մրգաստան վերադարձող սոխակը, ծիծեռնակի բույնը պատուհանի վրա, ծառերի վերևից երևացող եկեղեցու զանգակատունը, մենավոր սոճին գերեզմանատանը, գոթական ոճի դամբարանը, ահա՛ այս ամենը: Բայց այս մանր ու աննշան բաները լավագույնս ապացուցում են Նախախնամության իրականությունը նրանով, որ դրանք չէին կարող դառնալ աղբյուրը հայրենիքի սիրո, ինչպես նաև այն բարձր առաքինությունների, որոնց ծնունդ է տալիս այդ աղբյուրը, եթե գերագույն մի կամք այդպես տնօրինած չլիներ:





**ԻՆՉ ԿԼԻՆԵՐ ԱՅՍՕՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ, ԵԹԵ  
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՉԼԻՆԵՐ  
ԵՐԿՐԻ ՎՐԱ**

Այս կարևոր հարցի ուսումնասիրությունը մեր նպատակն է ցույց տալ, թե ինչ ենք պարտական քրիստոնեությունը, որպեսզի սովորենք ավելի լավ գնահատել այս հրաշալի կրոնը:

Օգոստոս<sup>1</sup> կայսրը իշխանություն հասավ ոճիրների միջոցով և իշխեց առաքինությունների քողի տակ: Նա հաջորդեց աշխարհակալ մի կայսրի և, տարբերվելու համար նրանից, ապրեց խաղաղ կյանքով:

Չկարողանալով դառնալ մեծ մարդ՝ ուզեց լինել երջանիկ մի իշխանավոր: Նա երկարատև խաղաղություն պարգևեց իր հպատակներին: Եվ, ահա, ապականված մի մեծ հասարակություն ընկավ թմբիրի մեջ. այդ խաղաղությունը կոչվեց բարգավաճում: Օգոստոս կայսրը հանգամանքներից օգտվելու հանձարն ուներ. նա քաղեց այն պտուղները, որ պատրաստել էր իսկական հանձարը: Նա հետևում էր նրան, բայց միշտ չէր ուղեկցում:

Տիբերիոս<sup>2</sup> կայսրը շատ էր արհամարհում մարդկանց և մանավանդ շատ էր ցույց տալիս այդ արհամարհանքը: Միակ զգացումը, որի մեջ անկեղծություն դրեց, հենց այն զգացումն էր, որ նա պետք է ծածկեր, բայց դա ուրախություն այնպիսի մի ճիշ էր, որ նա չէր կարող չարձակել՝ տեսնելով, որ հռոմեացի ժողովուրդն ու ծերակույտը ավելի ստոր են, քան իր սեփական սրտի ստորությունը:

Հռոմը սիրեց Ներոնին<sup>3</sup>: Այս բռնակալի մահվանից դեռ երկար ժամանակ անց, նրա ուրվականները ուրախացնում և հուսադրում էին կայսրությանը: Այստեղ է, որ պետք է կանգ առնել՝ խորապես ըմբռնելու համար հռոմեական

բարքերը: Ո՛չ Տիտոսը<sup>4</sup>, ո՛չ Անտոնիոսը<sup>5</sup>, ո՛չ Մարկոս Ավրելիոսը<sup>6</sup> չկարողացան փոխել դրանց խորքը. դա կարող էր անել միայն Աստված:

Հռոմեացի ժողովուրդը միշտ եղել է զարհուրելի ժողովուրդ: Այն մոլություններն ու հոռի բարքերը, որոնց մեջ թավալվեց նա իր տիրակալների օրոք, չէին կարող ի հայտ գալ առանց բնածին որոշ այլասերվածության և սրտի խորքում անթեղված ախտավորության: Ապականված Աթենքը երբեք զարչելի չեղավ. նույնիսկ երկաթե կապանքների մեջ՝ նա մտածեց միայն ուրախանալու մասին: Նա գտավ, որ օտար նվաճողները ամեն ինչ չէին խլել իրենից, քանի որ թողել էին Մուսաների տաճարը:

Եթե Հռոմն առաքինություններ ցույց տվեց, ապա դրանք եղան հակաբնական առաքինություններ: Առաջին Բրուտոսը խեղդամահ արեց իր որդիներին, իսկ երկրորդն սպանեց իր հորը: Կան դիրքի հետ կապված առաքինություններ, որոնք շատ հեշտությամբ կարելի է ընդհանուր առաքինությունների տեղ ընդունել, և որոնք սոսկ տեղական բնույթ ունեն: Ազատ Հռոմը նախապես ժուժկալ էր, որովհետև աղքատ ու խեղճ էր: Նա քաջասիրտ էր, որովհետև նրա հաստատությունները երկաթե կապանք էին դնում նրա ձեռքերին, և, որովհետև նա ավազակների քարայրից էր դուրս գալիս: Նա վայրագ էր, դաժան, անարդար, ագահ, պերճասեր: Նրա հանճարն էր միայն գեղեցիկ, նրա նկարագիրն ատելի էր, տհաճ:

Տասնապետության շրջանի իշխանության ղեկավարները ոտքի կոխան են անում Հռոմը: Կայոս Մարիոսը<sup>7</sup> հաճույքով է թափում ազնվականների արյունը, իսկ Սուլլան՝ ժողովրդի արյունը: Որպես վերջին նախատինք, այս վերջինը հրապարակավ ուրանում է բռնապետությունը: Կատիլինայի<sup>8</sup> դավալիցները հանձն են առնում սպանել իրենց հարազատ հայրերին և շատ հեշտությամբ տապալում են մեծ Հռոմը, որ Յուգուրթան<sup>9</sup> մտադրվել էր գնել:



Ապա գալիս են եռապետության շրջանի առաջնորդները՝ առանց դատաստանի ու քննության իրենց սահմանած մահապատիժներով: Օգոստոս կայսրը հրամայում է, որ հայրերն ու որդիները իրար սպանեն, և հայրերն ու որդիները սպանում են միմյանց: Ծերակույտն իրեն չափազանց վատ է դրսևորում նույնիսկ Տեբերիոսի նկատմամբ: Ներոն աստծու համար տաճարներ են կառուցում: Էլ չենք խոսում այն մատնիչների մասին, որոնք դուրս էին եկել պատրիկյան առաջնակարգ ընտանիքներից, չենք մատնանշում միևնույն դավադրության պարագլուխներին, որոնք իրար էին մատնում ու փողոտում, չենք հիշատակում հենց Ներոնի զեխությունների ժամանակ առաքինության մասին ճառող փիլիսոփաներին՝ հայրասպանությունն արդարացնող Սենեկային<sup>10</sup> նույն հայրասպանությունը, միաժամանակ գովաբանող ու որբացող Բուռհոսին<sup>11\*</sup>, չենք թվարկում Գալբայի<sup>12</sup>, Վիտելիոսի<sup>13</sup>, Դոմիտիանոսի<sup>14</sup>, Կոմմոդոսի<sup>15</sup> օրոք գործադրված այն ստոր արարքները, որոնց մասին հարյուր անգամ կարդացել ու լսել ենք, և, որոնք միշտ էլ զարմացնում են մեզ: Առանց անդրադառնալու այս բոլորին, հատկանշական մի դեպք միայն մեզ ցույց կտա հռոմեական ստորության չափը. Սևերոս կայսրի<sup>16</sup> նախարար Պլատոսոսը, ամուսնացնելով իր աղջկանը կայսրի ավագ որդու հետ, ամորձատել տվեց հարյուր ազատ հռոմեացիների, որոնցից մի քանիսն արդեն ամուսնացել և ընտանիքի հայրեր էին դարձել, «որպեսզի, - ասում է պատմագիրը, - իր աղջիկը արևելյան թագուհու արժանի իրեն հետևող ներքինիներ ունենա»<sup>\*\*</sup>:

\* Տակիտոս, Տարեգրություններ, հատ. ԺԳ, գլ. ԺԵ: Պապինիանոսը, որը հռոմեական կայսերական ատյանում հմուտ իրավագետ էր և չէր հավակնում փիլիսոփայել, ի պատասխան Կարակալլա<sup>21</sup> կայսրի, որը հրամայում էր նրան արդարացնել իր եղբոր՝ Գետայի սպանությունը, ասում է. «Ավելի հեշտ է հայրասպանություն կատարելը, քան այն արդարացնելը»:

\*\* Դիոն Կասիոս, հատ. 76, էջ 1271:

Նկարագրի այս ստորությանը միացրե՛ք բարքերի սարսափելի մի ապականություն: Լրջմիտ Կատոնը<sup>17</sup> գալիս է ներկա լինելու Ֆլորա<sup>18</sup> աստվածուհուն նվիրված պոռնիկական խաղերին: Նա Մարսիա անունով իր կնոջը, որը հզի էր, զիջում է Հորտենսիոսին<sup>19</sup>: Որոշ ժամանակ անց՝ Հորտենսիոսը մահանում է, և քանի որ նա Մարսիային էր թողել իր ամբողջ ունեցվածքը, Կատոնը նորից կնության է առնում նրան՝ ի վնաս Հորտենսիոսի որդու: Յիցերոնը<sup>20</sup> բաժանվում է իր Տերենտիա կնոջից՝ ամուսնանալու համար իր խնամակալությանը հանձնված որբուհու՝ Պուբլիլիայի հետ: Սենեկան մեզ տեղեկացնում է, որ Հռոմում կային կանայք, որոնք իրենց տարիներն այլևս չէին հաշվում մեկ տարվա համար ընտրված հյուպատոսներով, այլ՝ իրենց ամուսինների թվով: Ներոնը հրապարակավ ամուսնանում է Պիթագոր անունով ազատագրված մի ստրուկի հետ, իսկ Հելիոգաբալը<sup>22</sup> տոնախմբում է իր ամուսնությունը Հիերոկլեսի հետ:

Արդեն քանի անգամ հիշատակված այս նույն Ներոնն էր, որ հաստատեց Յուվենալյան\* տոնակատարությունները: Ասպետները, ծերակուլյտի անդամներն ու կանայք, որոնք գրավում էին թատրոնի առաջին շարքը, կայսրի օրինակով ստիպված էին բարձրանալ բեմ և երգել լիտի երգեր՝ ընդօրինակելով խեղկատակների շարժումները: Ագրիպպայի<sup>23</sup> ջրավազանի մոտ, լճի եզերքին կառուցել էին տներ, որտեղ հռոմեացի ամենաազնվական կանայք նստում էին մերկամարմին, վայելչագեղ պոռնիկների դեմհանդիման: Երբ գիշերն իջնում էր, ամեն կողմ լուսավորում էին, որպեսզի գեխություններն առանձին իմաստ ունենան և լինեն նվազ քողարկված:

---

\* Երիտասարդության աստվածուհի Յուվենտայի պատվին կազմակերպված տոնակատարություններ Հռոմում (ծնթ. քարգմ.):

Մահը էական մաս էր կազմում այս հնադարյան զվարճություններին: Նա միշտ ներկա էր այնտեղ որպես հակադրություն՝ առավել ցայտուն դարձնելու համար կյանքի հաճույքները: Որպեսզի կերուխումն ավելի զվարթ անցներ, բերել էին տալիս գլադիատորներ, որոնց ընկերակցում էին հանրային կանայք և սրնգահարներ: Դուրս գալով անառակ կանանց թևերի միջից՝ մարդիկ գնում էին տեսնելու, թե վայրի մի գազան ինչպես է խմում մարդկային արյունը: Պոռնկության մի տեսարանի ներկա լինելուց անմիջապես հետո գնում էին դիտելու վերջին շունչը փչող մի մարդու մարմնի ցնցումներն ու մկանների կծկումները: Օ՛հ, ինչպիսի՜ ահավոր ժողովուրդ է եղել հռոմեացի այս ժողովուրդը, որ նախատինքի առարկա է դարձրել թե՛ ծնունդը և թե՛ մահը և բեմահարթակի վրա բարձրացրել բնության այդ երկու մեծ խորհուրդները՝ միանգամից անպատվելու համար Աստծու ողջ ստեղծագործությունը:

Հողի վրա աշխատող ստրուկները մշտապես երկաթե շղթաներ էին կրում իրենց ոտքերին: Որպես սնունդ՝ նրանց տալիս էին միայն մի քիչ հաց, ջուր և աղ: Գիշերը նրանց արգելափակում էին գետնափոր նկուղների մեջ, ուր օդ էր մտնում միայն այդ խավարչտին զնդանների կամարածև երգիկի վրա բացված մի նեղ լուսամուտից: Կար մի օրենք, որ արգելում էր սպանել առյուծներին, որոնք վերապահված էին Հռոմի հրապարակային խաղերին: Եթե մի գյուղացի իր կյանքի պաշտպանության համար փորձեր կուվել այդ կենդանիներից մեկի դեմ, ապա խստորեն կպատժվեր: Երբ դժբախտ մի մարդ կատաղի հովազից պատռոտվելով կամ վայրի մի եղջերվի եղջյուրներից խոցոտվելով ընկնում մահանում էր կրկեսում, որոշ հիվանդներ իսկույն վազում էին թաթախվելու նրա արյան մեջ և այն լակելու իրենց անհագ շրթունքներով: Կալիգուլան<sup>24</sup> ուզում էր, որ հռոմեացի ժողովուրդն ունենար միայն մեկ

գլուխ, որպեսզի սրի մի հարվածով թրատեր այն: Այս նույն կայսրը, կրկեսի խաղերին սպասելիս, առյուծներին կերակրում էր մարդկային մսով, իսկ ներոնն ստիպում էր մի եգիպտացու, որը հայտնի էր իր որկրամոլությամբ, ուտել կենդանի մարդկանց: Տիտոսն իր հոր՝ Վեսպասիանոսի տոնը նշելու համար երեք հազար հրեաների հոշոտել տվեց գազաններին: Տիբերիոսին խորհուրդ էին տալիս, որ սպանել տա իր վաղեմի բարեկամներից մեկին, որը, հալումաշեղած, տանջվում էր բանտում. «Ես չեմ հաշտված նրա հետ», - պատասխանում է բռնակալը մեկ բառով, որն արտահայտում է հին Հռոմի ամբողջ ոգին:

Շատ սովորական բան էր, որ ամեն խավի, ամեն սեռի և ամեն տարիքի հինգ հազար, վեց հազար, տասը հազար, քսան հազար մարդիկ սրախողխող արվեին կայսրի մի պարզ կասկածանքի պատճառով. իսկ զոհերի ծնողները իրենց տները զարդարում էին տերևախիտ ոստերով, համբուրում էին կայսրաստծու ձեռքերը և ներկա լինում նրա կազմակերպած տոնակատարություններին: Սեթանի<sup>25</sup> ինը տարեկան աղջիկը, որն ասում էր՝ այլևս չեմ անի, և բանտ տարվելիս խնդրում էր, որ մտրակեն իրեն, պղծվեց դահճի կողմից և ապա խեղդամահ արվեց: Ահա թե ինչպիսի՛ հարգանք ունեին այս «առաքիների» հռոմեացիները օրենքների հանդեպ...: Կլաուդիոս<sup>26</sup> կայսրի իշխանության ժամանակ (և Տակիտոսն<sup>27</sup> այս դեպքը հիշատակում է որպես մի գեղեցիկ ներկայացում) տասնինը հազար մարդիկ փողոտեցին միմյանց Ֆուլցին լճի վրա՝ զվարճացնելու համար հռոմեացի խաժամուժ ամբոխին: Նախքան ձեռնամարտի անցնելը ռազմիկները ողջունում էին կայսրին՝ գոչելով. «Ո՛վ մեծդ կեսար, ովքեր մեռնելու են, ողջունում են քեզ»: - մի խոսք, որ որքան զգվելի է, նույնքան և հուզիչ:

Բարոյական զգացողության բացարձակ վերացումն էր, որ հռոմեացիներին թույլ էր տալիս հեշտությամբ զնալ

դեպի մահ, և դա հիացման էր արժանացել այնքան հիմարաբար: Ինքնասպանությունները միշտ էլ ընդհանուր երևույթ են եղել ապականված ժողովուրդների մոտ: Անբան անասունի բնազդին վերածված մարդը անտարբերությամբ է մեռնում, ինչպես անասունը: Մենք չենք խոսի տակավին հռոմեացիների մյուս հոռի կողմերի մասին, ինչպիսիք են՝ մանկասպանությունը, որը թույլատրվեց Ռոմուլոսի<sup>28</sup> կողմից և վավերացվեց Տասներկու աղյուսակների օրենքով<sup>29</sup>, ինչպես նաև այն զագրելի ընչաքաղցությունը, որը հատուկ է եղել այս նույն անվանի ժողովրդին: Սկապտիոսը Սալամինայի ծերակույտին փոխ էր տվել որոշ մի գումար: Վերջինս, չկարողանալով այդ գումարը վերադարձնել նշված ժամկետին, Սկապտիոսը իր ձիավորներով այնքան երկար ժամանակ պաշարման մեջ պահեց ծերակույտը, որ բազմաթիվ ծերակուտականներ քաղցից մահացան: Ստոյիկ Բրուտոսը, ինչ-որ գործարքի մեջ մտնելով այս հարստահարչի հետ, հետաքրքրվում է նրա անձով Յիցերոնի մոտ, որը, իմանալով այդ մասին, չի կարողանում զսպել իր զայրույթը:

Եթե հռոմեացիները հետագայում ստրկության մեջ ընկան, ապա դրա համար նրանք պետք է մեղավոր համարեին միմիայն իրենց բարքերը: Ստորությունն է, որ նախ ծնում է բռնակալությունը և, բնական մի հակազդեցություն, բռնակալությունն այնուհետև երկարաձգում է ստորությունը: Չգանգատվենք բնավ հասարակության ներկա վիճակից. արդի ամենաայլասերված ժողովուրդն անգամ խելոք ժողովուրդ է հեթանոս ազգերի համեմատությամբ:

Եթե ենթադրենք մի պահ, որ հների քաղաքական կարգն ավելի գեղեցիկ է եղել, քան մերը, նրանց բարոյական կարգը, սակայն, երբեք չմոտեցավ այն բարոյական կարգին, որին քրիստոնեությունը ծնունդ տվեց մեր մեջ:

Եվ, վերջապես, քանի որ բարոյականությունը, վերջին հաշվով, ընկերային ամեն հաստատության հիմքն է կազմում, մենք բնավ չենք հասնի հնադարի բարքերի ապականությունն այնքան ժամանակ, որ կմնանք քրիստոնյա:

Երբ քաղաքական կապերը խորտակվեցին Հռոմում և Հունաստանում, ի՞նչ արգելակ էր մնում սանձելու համար մարդկանց կրքերը: Այդքան անարգ աստվածությունների պաշտամունքը կարո՞ղ էր միթե անխաթար պահել այնպիսի ազնիվ բարքեր, որ օրենքներն ի վիճակի չէին պահպանելու այլևս: Այդ պաշտամունքը, հեռու լինելով դարմանելու ապականությունը, ընդհակառակը, դարձավ ապականության ամենաուժեղ ազդակներից մեկը: Սարսուռ պատճառող ծայրահեղ մի դժբախտություն է այն, որ աստվածների գոյություն գաղափարը, որը մնում դաստիարակում է առաքինությունը մարդկանց մեջ, պահում և խորացնում էր հոռի գծերը հեթանոսների մոտ և թվում էր տևականացնել հանցագործությունը՝ հավերժական սկզբունքի վերածելով այն:

Մարդկանց չարագործությունների ավանդություններ են մնացել մեզ մոտ, և սարսափելի աղետներ մշտապես հետևել են բարքերի ապականությանը: Հնարավոր չէ՞ր արդյոք, որ Աստված տիեզերքի Ֆիզիկական և բարոյական կարգը դասավորեր այնպես, որ մի տակնուվրայություն այս վերջինի մեջ իր հետևից բերեր անհրաժեշտ փոփոխություններ մյուսի մեջ, և մեծ հանցագործությունները բնական կերպով առաջացնեին մեծ հեղափոխություններ: Միտքը, մտածումը ներգործում է մարմնի վրա անբացատրելի կերպով. մարդը գուցե տիեզերքի մեծ մարմնի մտածումն է: Դա շատ կպարզացներ բնությունը և մեծապես կընդարձակեր մարդու հնարավորությունների ոլորտը: Դա նաև կլիներ բանալի՝ բացատրելու համար հրաչքները, որոնք կմտնեին իրերի բնական ընթացքի մեջ: Եթե ջրհե-

ղեղները, մեծ հրդեհները, պետութիւնները տապալուած տեղի ունեցած լինելին մարդու բարոյական արատների պատճառով, եթե ոճիրն ու պատիժը աշխարհի բարոյական և ֆիզիկական կշեռքի երկու թաթերի մեջ դրված երկու շարժիչ կշռաքարերը եղած լինելին, հարաբերակցութիւնը կլիներ գեղեցիկ և կկազմեր սոսկ մեկ և ամբողջական մի ստեղծագործութիւն, որ առաջին հայացքից թվում է երկակի:

Կարող է պատահել, որ հռոմեական ապականված կայսրութիւնը քաջած բերած լինի իրենց անապատների խորքից բարբարոսներին, որոնք առանց իմանալու ամեն ինչ կործանել-ոչնչացնելու իրենց առաքելութիւնը, բնագրով իրենց կոչել էին Աստծու պատիժը: Ի՞նչ կդառնար աշխարհը, եթե քրիստոնեութիւն մեծ տապանը փրկած չլիներ մարդկային ցեղի մնացորդներին այդ նոր ջրհեղեղից: Ինչպիսի՞ բախտ կսպասեր արդյոք գալիք սերունդներին, որտե՞ղ կպահպանվեին գիտութիւն լույսերը:

Բազմաստվածյան կրօնի քրմերը, բացի Պարսկաստանից և Եգիպտոսից, գրագետ մարդկանցից բաղկացած մի դասակարգ չէին կազմում: Բայց եգիպտացի մոգերն ու քրմերը, որոնք, ի դեպ, իրենց գիտութիւնը չէին հաղորդում ռամիկներին, բարբարոսների ներխուժման ժամանակ արդեն որպէս դասակարգ գոյութիւն չունեին այլևս: Գալով Աթենքի և Ալեքսանդրիայի փիլիսոփայական աղանդներին՝ դրանք գրեթե ամբողջութեամբ կենտրոնացել էին հիշյալ երկու քաղաքներում և ամենաշատը բաղկացած էին մի քանի հարյուր հետտորներից, որոնք հավանաբար խողխողվեցին այդ քաղաքների մնացած բնակչութիւն հետ:

Հավատարմութիւն ոչ մի ձգտում չէր մնացել այլևս հնէրի մոտ. ոչ մի ջերմեռանդութիւն ուսուցանելու. ոչ մի մենաստան անապատներում՝ ապրելու համար այնտեղ Աստծու հետ և փրկելու գիտութիւնները: Յուպիտերի<sup>30</sup> ո՞ր քրմապետը պիտի համարձակեր քայլել Ատտիլայի<sup>31</sup>

առջևից՝ կասեցնելու համար նրան, կամ ո՞ր դետացի քահանան պիտի համոզեր Ալարիկին<sup>32</sup>, որ իր զորքերը հետ քաշեր Հռոմից: Հռոմեական կասրություն մտնող բարբարոսներն արդեն կիսով չափ քրիստոնյա էին. բայց տեսե՛ք, թե ինչպես էին քայլում նրանք սկանդինավյան աստծու կամ թաթարների արյունոտ դրոշի տակ՝ իրենց ճանապարհին չհանդիպելով ո՛չ կրոնական զսպող մի ուժի, որ ստիպեր նրանց հարգել որևէ բան, ո՛չ էլ արմատավորված կայուն բարքերի, որոնք նոր էին սկսում կազմավորել հռոմեացիների մոտ քրիստոնեության միջոցով: Չկասկածենք բնավ, նրանք ամեն ինչ կկործանեին: Դա նույնիսկ Ալարիկի ծրագիրն է եղել. «Իմ մեջ զգում եմ, - ասում էր այս բարբարոս թագավորը, - ինչոր բան, որ ինձ մղում է այրելու Հռոմը»: Նա ավերակների վրա բարձրացած մի մարդ էր և թվում էր վիթխարի:

Այն բազմազան ժողովուրդներից, որոնք ներխուժեցին հռոմեական կայսրություն, թվում է, թե գոթերը միակն էին, որոնց մոտ թույլ էր ավերելու ոգին: Մեծն Թեոդորիկը<sup>33</sup> Օդոակր<sup>34</sup> թագավորին պարտության մատնողը, մեծ իշխանավոր էր, բայց նա քրիստոնյա էր. նրա նախարարացետ Բոետիուսը<sup>35</sup> նույնպես քրիստոնյա գրող էր: Այս փաստը, սակայն, ի դերև է հանում բոլոր ենթադրությունները: Ի՞նչ կանեին, օրինակ, կոապաշտ գոթերը. նրանք, անտարակույս, քարոլքանդ կանեին ամեն ինչ, ինչպես մյուս բարբարոսները: Արդեն շուտով նրանք այլասերվեցին: Եվ, եթե Հիսուս Քրիստոսին պաշտելու փոխարեն, նրանք սկսեին պաշտել Պրիապին<sup>36</sup>, Վեներային<sup>37</sup> և Բակոսին<sup>38</sup>, ինչպիսի՛ գարհուրելի խառնուրդ առաջ կգար Օդինի<sup>39</sup> արյունալի կրոնից և Հունաստանի լկտի առասպելներից:

Բազմաստվածությունը այնքան անընդունակ էր պահպանելու որևէ բան, որ ինքն իսկ փուլ էր գալիս ամեն կողմից: Մաքսիմինն<sup>40</sup> ուզեց քրիստոնեական ձևեր տալ նրան՝



կանգուն պահելու համար այն: Այս կայսրը յուրաքանչ-յուր նահանգում նշանակեց մի ղևտացու որպես քահանայապետ, որ համապատասխանում էր քրիստոնյա եպիսկոպոսին և ներկայացնում մայրաքաղաքային կրոնական իշխանությունը: Հուլիանոսը<sup>41</sup> հիմնեց հեթանոսական վանքեր և Բաաղի<sup>42</sup> պաշտոնյաներին քարոզել տվեց իրենց տաճարներում: Քրիստոնեությունից ընդօրինակված այս խարխուլ կառույցը շուտով փլուզվեց, որովհետև այն չէր պաշտպանված առաքինության ոգով և չէր հենվում մաքուր բարքերի վրա:

Հեթանոսներից հարգված միակ պարտված դասակարգը քահանաների դասակարգն էր: Վանքերն ու մենաստանները դարձան մեծ թվով օջախներ, որտեղ արվեստների սրբազան կրակը պահպանվեց հունարեն և լատիներեն լեզուների հետ: Կարելի է պատկերացնել այն անդունդը, որի մեջ մենք թաղված կլինեինք այսօր, եթե հեթանոսները բազմաստվածության տակ պահած լինեին աշխարհը ազգերի ներկա վիճակով, որտեղ քրիստոնեությունը հանգած է: Մենք բոլորս կլինեինք թուրք ստրուկներ կամ ավելի վատ մի բան, որովհետև մահմեդականությունը գոնե ունի բարոյական ինչ-որ հիմք, որ գալիս է քրիստոնեական կրոնից, որի շատ հեռավոր մեկ աղանդն է նա վերջին հաշվով: Բայց ինչպես որ առաջին Իսմայիլը<sup>43</sup> եղավ աստվածաշնչական Հակոբի թշնամին, երկրորդ Իսմայիլը նույնպես նորի հալածիչն է:

Շատ հավանական է, ուրեմն, որ առանց քրիստոնեության՝ հասարակության և գիտության կործանումը ամբողջական լիներ: Չենք կարող հաշվել, թե քանի դարեր անհրաժեշտ կլինեին մարդկային ցեղին՝ դուրս գալու համար տգիտության և ապականված բարբարոսության ճահճից, որի մեջ նա կմնար թաղված: Բավական էր միայն երկրագնդի երեք ցամաքամասերում ցրված և նույն նպատա-

կի համար միասնաբար աշխատող վանականների մի մեծ խումբ՝ պահպանելու համար այն կայծերը, որոնք արդի մարդկության մեջ վերստին վառեցին գիտությունների ջահը: Մի անգամ ևս կրկնենք, որ հեթանոսական հասարակության քաղաքական, փիլիսոփայական կամ կրոնական ոչ մեկ համակարգ չէր կարող կատարել այն անգնահատելի ծառայությունը, որ կատարեց քրիստոնեական կրոնը հօգուտ մարդկության: Նախնիների գրվածքները, ցրված լինելով վանքերում և մենաստաններում, մասամբ զերծ մնացին գոթերի ավերածություններից: Վերջապես բազմաստվածությունը, քրիստոնեության նման, գրագետ մի կրոն չէր (եթե թույլ տրվի մեզ այսպես արտահայտվել), որովհետև նրա նման նա բնագանցությունն ու բարոյականությունը չէր միացնում կրոնական ուսուցումներին: Իրենց սեփական միջոցներով գրքեր հրատարակելու անհրաժեշտությունը, որի առաջ կանգնեցին քրիստոնյա հոգևորականները՝ լինի իրենց հավատը տարածելու, լինի հերետիկոսության դեմ պայքարելու համար, մեծապես նպաստեց գիտությունների պահպանմանն ու վերածննդին:

Երևակայելի բոլոր վարկածները ի նկատի ունենալով՝ դարձյալ ու միշտ գտնում ենք, որ Ավետարանը կանխել է հասարակության կործանումը. որովհետև, ենթադրելով մի պահ, որ նա բնավ երևան եկած չլինեք երկրի վրա, իսկ մյուս կողմից՝ բարբարոսները մնացած լինեին իրենց անտառներում, հռոմեական աշխարհը, նեխվելով իր ապականված բարքերի մեջ, կգտնվեր զարհուրելի քայքայման սպառնալիքի տակ:

Կասեք, թե ստրուկները կապստամբեի՞ն այդ դեպքում: Բայց նրանք նույնքան այլասերված էին, որքան իրենց տերերը: Նրանք բաժանում էին նույն հաճույքներն ու ամոթը, դավանում էին նույն կրոնը, և այդ մոլեռանդ կրոնը խորտակում էր բարոյական սկզբունքներում փոփոխու-

թյան ամեն հույս: Գիտություններն այլևս առաջ չէին գնում, նահանջում էին. արվեստներն անկում էին ապրում. փրկիսոփայությունը ծառայում էր միայն անկրոնության տարածմանը, անկրոնություն, որ սակայն չէր առաջնորդում կուռքերի ոչնչացմանը, այլ մեծահասակների մեջ առաջ էր բերում անաստավածության բոլոր ոճիրներն ու դժբախտությունները, իսկ անչափահասների մեջ՝ սնոտիապաշտություն: Մարդկային ցեղն արդյոք առաջադիմություն<sup>6</sup> ան արձանագրեց նրա համար, որ Ներոնն այլևս չէր հավատում Կապիտոլի<sup>44</sup> աստվածներին և արհամարհանքով պղծում էր աստվածների արձանները:

Տակիտոսը վկայում է, որ հռոմեական նահանգների խորքում դեռևս պահպանվում էին մաքուր բարքեր: Բայց այդ նահանգներն սկսել էին դառնալ քրիստոնյա: Եվ մենք ենթադրելով տրամաբանում ենք. իսկ ի՞նչ կլինեք, եթե քրիստոնեությունը ծանոթ չլինեք նրանց, և բարբարոսները դուրս ելած չլինեին իրենց անտառներից: Գալով հռոմեական բանակներին՝ նրանք, ամենայն հավանականությամբ, կանդամահատեին կայսրությունը, որովհետև զինվորները նույնքան այլասերված էին, որքան մնացած քաղաքացիները: Նրանք շատ ավելի այլասերված կլինեին, եթե գորակոչված չլինեին զոթերի և գերմանական ցեղերի կողմից: Ինչ որ կարող ենք ենթադրել այս ամենից, այն է, որ քաղաքացիական երկար պատերազմներից և ընդհանուր ապստամբությունից հետո, որը կարող էր տևել երկար դարեր, մարդկային ցեղը վերածված կլինեք ավերակների վրա թափառող սակավաթիվ մարդկանց: Բայց քանի՞ք անի՛ տարիներ հարկավոր կլինեին ժողովուրդների այս նորատունկ ծառին, որպեսզի իր ճյուղերը տարածեք ավերակների այդքան բեկորների վրա: Որքա՛ն ժամանակ անհրաժեշտ կլինեք մոռացված կամ կորստյան մատնված գիտություններին՝ վերածնվելու համար, և մանկական ինչպիսի վիճակում կլինեք հասարակությունը դեռ այսօր:

Ինչպես որ քրիստոնեությունը փրկեց մարդկությունը ամբողջական կործանումից՝ դարձի բերելով բարբարոսներին և հավաքելով քաղաքակրթության և արվեստների մնացորդները, այնպես էլ նա կփրկե հռոմեական աշխարհն իր իսկ ապականությունից, եթե այդ աշխարհն ընկած չլինե՝ օտար զորքերի իշխանության տակ: Միայն կրոնը կարող է վերանորոգել և փրկել ժողովրդին իր ամատներից: Քրիստոնեական կրոնն արդեն վերահաստատում էր բարոյական բոլոր հիմքերը: Հներն ընդունում էին մանկասպանությունը և ամուսնական կապի խզումը, որը, իրականում, առաջին կապն է ընկերային կյանքում: Նրանց ուղղամտությունն ու արդարությունը առնչվում էին հայրենիքի գաղափարի հետ, դրանք չէին անցնում իրենց երկրի սահմաններից այն կողմ: Ժողովուրդները խմբովին ունեին ուրիշ սկզբունքներ, քան առանձին քաղաքացին: Ամոթխածությունը և մարդկայնությունը դասվում էին առաքիչությունների շարքին: Ամենաբազմամարդ դասակարգը ստրուկների դասակարգն էր: Հասարակությունները մշտապես տարբերվում էին ժողովրդական իշխանության և բռնապետության միջև: Ահա այն չարիքները, որոնց դեմ քրիստոնեությունը բերում էր ստույգ դարմաններ, ինչպես նա այդ ապացուցեց՝ նշված չարիքներից փրկելով ժամանակակից հասարակությունները: Առաջին քրիստոնյաների խստակրոնության ծայրահեղությունն իսկ անհրաժեշտ էր. պետք է, որ լինեին ժուժկալ կյանքի մարտիրոսներ, երբ ամենուրեք կային ժողովրդական պոռնկություններ. պետք է, որ լինեին մոխրով և մազեղենով ծածկված ապաշխարողներ, երբ օրենքը թուլատրում էր մեծագույն հանցագործությունները բարքերի դեմ, եղբայրասիրության հերոսներ, երբ կային բարբարոս հրեշներ: Վերջապես, ամբողջ մի ժողովուրդ պոկել դուրս բերելու համար կրկեսների անարգ մրցամարտերից, պետք է, որ

կրոնն ունենար, այսպես ասած, իր ըմբիշներն ու իր ներկայացումները Թեբայիդի<sup>45</sup> անապատներում:

Ուրեմն Հիսուս Քրիստոս, նյութական իմաստով, ամենայն իրավամբ կարող է կոչվել աշխարհի փրկիչը, ինչպիսին որ նա է հոգևոր իմաստով: Նրա երևումը երկրի վրա, մարդկային պատմության տեսակետից, ամենամեծ եղելությունն է, որը երբևէ պատահած լինի մարդկանց, քանի որ Ավետարանի քարոզությունը է, որ սկսվեց աշխարհի վերանորոգումը: Շատ ուշագրավ է Մարդու Որդու գալստյան պահը. եթե դա լիներ մի քիչ ավելի շուտ, նրա բարոյախոսությունը բացարձակապես անհրաժեշտ չէր լինի, ժողովուրդները կշարունակեին դեռ մնալ իրենց նախկին բարքերի և օրենքների մեջ. իսկ եթե լիներ մի քիչ ավելի ուշ, աստվածային Մեսիան աշխարհ եկած կլիներ հասարակություն կործամումից հետո միայն:

Մենք պարծենում ենք այս դարում, որ գիտակ ենք փիլիսոփայությունը, բայց հիրավի, այն թեթևամտությունը, որ ցուցաբերում ենք քրիստոնեական հաստատությունների նկատմամբ, բոլորովին էլ փիլիսոփայական չէ: Ավետարանը, ամեն տեսանկյունից, փոխել է մարդկանց, նրանց հսկայական քայլ է կատարել տվել դեպի կատարելություն: Դիտեցեք այն որպես մի մեծ կրոնական հաստատություն, ուր մարդկային ցեղը վերածնվել է. և ահա բոլոր մանր-մունր առարկությունները, հակակրոնական բոլոր արհամարհոտ բանասարկություններն անհետանում են: Ստույգ է, որ հեթանոս ազգերը մի տեսակ բարոյական մանկության մեջ էին՝ համեմատած այն վիճակի հետ, որ մենք ներկայացնում ենք այսօր: Որոշ հին ժողովուրդների մոտ նկատվող արդարության առանձին գեղեցիկ գծեր չեն ժխտում այս ճշմարտությունը և չեն այլափոխում իրողությունների խորքը: Քրիստոնեությունը, անտարակույս, մեզ բերել է նոր հայտնություններ: Դա մի կրոն է, որ

պատշաճում է այն ժողովրդին, որին հասունացրել է ժամանակը. դա, եթե համարձակվենք այսպես ասել, աշխարհի ներկա տարիքին բնորոշ կրոն է, ինչպես որ աստվածաշնչական դեմքերի իշխանությունը պատշաճում էր սկզբնական շրջանի Իսրայելին: Քրիստոնեությունը երկնքում դրեց միայն մեկ Աստված, իսկ երկրի վրա վերացրեց ստրկությունը: Մյուս կողմից, եթե դուք նայեք նրա խորհուրդներին որպես բնության օրենքների սկզբնատիպ, դրանցում տխրեցնող կամ վհատեցնող ոչինչ չկա մեծ մտածողի համար. քրիստոնեության ճշմարտությունները, հեռու լինելով բանականության հնազանդություն պահանջելուց, ընդհակառակը, պահանջում են մտքի բարձրագույն գործունեություն: Այս դիտողությունն այնքան ճիշտ է, և քրիստոնեական կրոնը, որը մարդիկ ուզեցին ցույց տալ որպես բարբարոսների կրոն, այնքան խորապես փրկիսոփաների կրոն է, որ կարող ենք ասել, թե Պլատոնը համարյա այդ կանխագուշակել էր: Սոկրատի աշակերտի ոչ միայն բարոյագիտությունը, այլև նրա վարդապետությունը ակնբախ նմանություններ ունի Ավետարանի վարդապետության հետ: Դասիեն<sup>46</sup> դա ամփոփում է այսպես.

«Պլատոնն ապացուցում է, որ Բանը կարգավորեց և տեսանելի դարձրեց այս տիեզերքը, որ Բանի ճանաչումն այս աշխարհում խոստանում է երջանիկ կյանք և մահվանից հետո ապահովում հավիտենական երանություն, որ հոգին անմահ է, որ մեռելները հարություն են առնելու, որ տեղի է ունենալու բարի և չար մարդկանց համար վերջին դատաստան, որտեղ մարդիկ երևալու են իրենց առաքինություններով ու հոռի կողմերով, որոնք և պատճառ են դառնալու նրանց հավիտենական երջանկության կամ դժբախտության»:

«Վերջապես, - ավելացնում է Թարգմանիչը, - Պլատոնն այնքան մեծ և այնքան ճիշտ գաղափար ուներ գերագույն

արդարութեան մասին, այնքան լավ էր ճանաչում մարդկանց այլասերվածութիւնը, որ նա ցույց է տվել, որ, եթե գերազանցապէս արդար մի մարդ գար երկրի վրա, նա այնքան հակառակութիւններ կգտներ աշխարհում, որ կբանտարկվեր, կծաղրվեր, կանարգվեր, կմտրակվեր և վերջապէս կխաչվեր նրանց կողմից, ովքեր, անարդարութեամբ լեցուն լինելով հանդերձ, կնկատվեին որպէս արդար մարդիկ»:

Քրիստոնեութեան մասին չարախոսողները գտնվում են այնպիսի դրութեան մեջ, որ նրանց համար դժվար է չընդունել իրենց սխալը. եթե նրանք պնդում են, որ քրիստոնեութիւնը գոթերի և վանդալների կողմից ձեւավորված կրոն է, ապա նրանց հեշտութեամբ կարելի է ապացուցել, որ Հունաստանի դպրոցներն ունեցել են քրիստոնեական ուսմունքից բավականաչափ տարբեր գաղափարներ, իսկ, եթե նրանք, ընդհակառակը, պաշտպանեն այն տեսակետը, թե ավետարանական վարդապետութիւնը սոսկ հների փիլիսոփայական վարդապետութիւնն է, ինչն<sup>օ</sup>, ուրեմն, մերժում են այդ վարդապետութիւնը: Նույնիսկ նրանք, ովքեր քրիստոնեութեան մեջ տեսնում են միայն վաղնջական երկնային այլաբանական պատկերներ, մոլորակներ, նշաններ և այլն, չեն համարձակվում խորտակել այս կրոնի մեծութիւնը: Դրանից հետևում է միշտ, որ քրիստոնեութիւնը խոր է ու հիասքանչ իր խորհուրդների մեջ, հին է ու սրբազան իր ավանդութիւնների մեջ, ավանդութիւններ, որոնք գնում հասնում են մինչև աշխարհի սկիզբը: Տարօրինակ է, անտարակույս, որ անհավատների բոլոր մեկնաբանութիւնները ի վիճակի չեն թեկուզ փոքր կամ միջակ որևէ բան տալու քրիստոնեութեանը:

Գալով ավետարանական բարոյականութեանը՝ բոլորն ընդունում են դրա գեղեցկութիւնը: Այդ բարոյականութիւնն ինչքան ավելի ճանաչվի և գործադրվի, այնքան մարդիկ ավելի կգիտակցեն իրենց երջանկութիւնն ու ի-

րենց իրական շահերը: Քաղաքական գիտութիւնը չափազանց սահմանափակ է. կատարելութեան վերջին աստիճանը, որին նա կարող է հասնել, ներկայացուցչական այն համակարգն է, որը ծնունդ է առել քրիստոնեութիւնից: Բայց մի կրող, որի պատվիրանները բարոյականի և առաքինութեան դատաստանագիրք են, այնպիսի մի հաստատութիւն է, որ կարող է փոխարինել ամեն ինչի և սրբերի ու իմաստունների ձեռքում դառնալ երջանկութեան համընդհանուր միջոց: Գուցէ մի օր կառավարման զանազան ձևեր, բացի բռնակալութիւնից, անկարևոր կլինան այլևս, և մարդիկ կբավարարվեն բարոյական և կրօնական պարզ օրենքներով, որոնք հանդիսանում են հասարակութիւնների մնացուցիչ հիմքը և մարդկանց կառավարման ճշմարիտ եղանակը:

Նրանք, ովքեր մտածում են հին դարերի մասին և ուզում են մեզ վերադարձնել այդ դարերի հաստատութիւններին, մոռանում են միշտ, որ այսօրվա կարգը նույնը չէ և չի կարող նույնը լինել: Առ ի չգոյե բարոյական մի ուժեղ իշխանութեան, անհրաժեշտ է գոնե արգելակող մի մեծ ուժ մարդկանց մեջ: Հին դարերի հանրապետութիւններում ամբոխը, ինչպես գիտենք, ստրուկ էր. հողը մշակող մարդը պատկանում էր մի ուրիշ մարդու. կային ժողովուրդներ, չկային ազգեր:

Բազմաստվածութիւնը, որ իր բոլոր ձևերով անկատար մի կրօն է, կարող էր համապատասխանել հասարակութեան այդ անկատար վիճակին, որովհետև յուրաքանչյուր ստրկատեր մի տեսակ բացարձակ իշխանավոր էր, որի սարսափելի բռնակալութիւնը ստրուկին մշտապես պահում էր իր պարտականութեան մեջ և կրօնական բարոյական ուժի պակասը լրացնում էր երկաթե կապանքներով: Հեթանոսական կրօնը, չլինելով բավականաչափ կատարյալ՝ խեղճին առաքինի դարձնելու համար, ստիպված էր թողնել, որ նրա հետ վարվեն, ինչպես մի չարագործի հետ:



Բայց իրերի ներկա դրուծյան մեջ, դուք կարո՞ղ եք զսպել ազատ և իշխանավորի աչքից հեռու գտնվող գյուղացիների հսկայական մի զանգված, կարո՞ղ եք մի մեծ մայրաքաղաքի արվարձաններում կանխել խաժամուժ ամբոխի ոճիրները առանց այնպիսի մի կրոնի, որը քարոզում է անհատի պարտականություններն ու առաքինությունները կյանքի բոլոր պայմաններում: Կործանեցեք ավետարանական կրոնը, և ամեն մի գյուղում ձեզ հարկավոր կլինի ունենալ ոստիկանություն, բանտեր, դահիճներ: Եթե երբեք, անհավատալի մի վերադարձով, հեթանոսական կրոնի մոլեռանդ աստվածների խորանները վերականգնվեին արդի ժողովուրդների մոտ, եթե ընկերային այնպիսի մի վարչակարգում, որտեղ վերացվել է ստրկությունը, մարդիկ զնային պաշտելու գող Հերմեսին<sup>47</sup> և պոռնիկ Վեներային, ապա մարդկային ցեղի վերջը եկած կլիներ:

Եվ հենց այստեղ է մեծ սխալն այն մարդկանց, որոնք գովաբանում են բազմաստվածությունը, որ բաժանել է բարոյական ուժերը կրոնական ուժերից: Նրանք, միաժամանակ, պախարակում են քրիստոնեությունը, որ հետևել է հակառակ համակարգից: Նրանք չեն անդրադառնում, որ հեթանոսական կրոնն ուղղված էր ստրուկների հսկայական մի բանակի և, հետևաբար, պետք է վախենար մարդկությունը լուսավորելուց, պետք է ամեն ինչ մատուցեր մարդու զգայարանքներին և ոչինչ չաներ նրա հոգու դաստիարակության համար: Ընդհակառակը, քրիստոնեությունը, որ ուզում էր կործանել ստրկությունը, պետք է մարդկանց բացահայտեր իրենց էություն արժանավորությունը և նրանց ուսուցաներ բանականության և առաքինության հիմունքները: Կարող ենք ասել, որ ավետարանական կրոնը ազատ ժողովրդի կրոնն է հենց միայն նրա համար, որ նա բարոյականությունը միացնում է կրոնին:

Ժամանակն է վերջապես սարսափել այն վիճակից, որի մեջ ապրեցինք մի քանի տարուց ի վեր: Մտածենք այն սերնդի մասին, որը հասակ է առնում մեր քաղաքներում և գյուղերում, այն բոլոր երեխաների մասին, որոնք, ծնված լինելով Հեղափոխության տարիներին, երբեք ոչինչ չեն լսել ո՛չ Աստուծու մասին, ո՛չ իրենց հոգու անմահության մասին և ո՛չ էլ այն ցավերի վարձատրությունների մասին, որ սպասում են իրենց հանդերձյալ կյանքում: Մտածենք, թե ինչ կարող է դառնալ նման մի սերունդ, եթե չչտապենք դեղ դնել բացված վերքի վրա: Արդեն երևան են գալիս ամենատագնապալի ախտանշանները. անչափահաս երեխաներ անմեղություն տարիքը պղծել են իրենց բազմաթիվ հանցագործություններով\*: Փիլիսոփայությունը, որ վերջին հաշվով չի կարող թափանցել աղքատի խրճիթից ներս, թող գոհանա բնակություն հաստատելով մեծահարուստի ապարանքներում և խրճիթները գոնե թող թողնի կրոնին. կամ, ավելի շուտ, լավագույն ձևով առաջնորդվելով և ավելի արժանի լինելով իր անվանը, թող ինքն իսկ խորտակի այն պատեհները, որ ցանկացել էր բարձրացնել մարդու և նրա Արարչի միջև:

Բերենք մեր վերջին եզրակացությունները՝ հենվելով այն հեղինակությունների վրա, որոնք, հուսով ենք, անվստահելի դեմքեր չեն լինի փիլիսոփաների համար: Այսպես՝

«Մի քիչ փիլիսոփայություն, - ասում է Ֆրանսիս Բեկոնը<sup>48</sup>, - հեռացնում է կրոնից, շատ փիլիսոփայություն՝ բերում հանգեցնում է նրան: Ոչ ոք չի ժխտում, որ Աստված կա, բացի այն մարդուց, որի համար շահավետ է, որ Աստված չլինի»:

---

\* Օրաթերթերը արձագանքում են այն բազմաթիվ հանցագործություններին, որոնք կատարվում են տասնմեկ-տասներկու տարեկան դժբախտ երեխաների կողմից: Պետք է, որ վտանգը շատ լուրջ եղած լինի, քանի որ գյուղացիներն իրենք են զանգատվում իրենց երեխաների հոռի վարքից (ծնր. հեղինակի):

Ըստ Մոնտեսկյոյի<sup>49</sup> «ասել, թե կրոնը սանձահարող միջոց է (որովհետև միշտ է, որ նա սանձահարում է), նշանակում է ասել, թե քաղաքացիական օրենքները նույնպես սանձահարող միջոց չեն... Ավելի լավ է, որ որևէ մարդ կամ որևէ ժողովուրդ բոլորովին կրոն չունենա, քան չարաչահի իր ունեցած կրոնը»<sup>\*</sup> :

«Վերջապես, ~ բացականչում է ժան-ժակ Ռուսոն<sup>50</sup>, ~ փախե՛ք նրանցից, ու՛քեր, բնությունը բացատրելու պատրվակով, մարդկանց սրտերում սերմանում են ցավալի ուսմունքներ, և որոնց թվացյալ սկեպտիկությունը հարյուր անգամ ավելի հաստատակամ և ավելի վարդապետական է, քան այն վճռական շեշտը, որ դրսևորում են նրանց հակառակորդները: Այն մեծամիտ պատճառաբանությամբ, թե իրենք են միակ լուսավորյալները, ճշմարիտներն ու ողջամիտները, փորձում են ամբարտավանորեն ենթարկել մեզ իրենց կտրուկ որոշումներին և հավակնում են մեզ տալ, որպես ճիշտ սկզբունքներ, այն անիմանալի դրույթները, որ նրանք կառուցել են իրենց երևակայության մեջ: Եվ, սակայն, տապալելով, կործանելով, ոտնատակ անելով այն ամենը, ինչ մարդիկ հարգում են, նրանք վշտահարներից խլում են իրենց թշվառության վերջին մխիթարանքը, հզորներից և մեծահարուստներից՝ իրենց կրքերի միակ արգելակը, նրանք մարդկանց սրտի խորքից պոկում են խղճի խայթը, առաքինության հույսը և դեռ պարծենում էլ են, թե իրենք մարդկային ցեղի բարերարներն են: Նրանք ասում են, որ ճշմարտությունը բնավ վնասակար չէ մարդկանց: Ես էլ եմ դրան հավատում, և դա, իմ կարծիքով, մի մեծ ապացույց է, որ այն, ինչ նրանք ուսուցանում են, ճշմարտությունը չէ:

Կեղծ փիլիսոփաների խմբի ամենաստվորական սոփեսություններից մեկն այն է, որ նրանք հակադրում են լավ

<sup>\*</sup> Մոնտեսկյո, «Օրենքների ոգու մասին» (Ֆրանս.), հատ. ԻՂ, գլ. Բ:

փիլիսոփաներ ունեցող մի ժողովուրդ վատ քրիստոնյաներից բաղկացած մի այլ ժողովրդի, կարծես թե ավելի հեշտ լիներ ստեղծել լավ փիլիսոփաներ ունեցող մի ժողովուրդ, քան իսկական քրիստոնյաներից բաղկացած մի այլ ժողովուրդ: Երբ հարցը վերաբերում է անհատ մարդկանց, ես չգիտեմ, թե ո՞ր մեկին ավելի հեշտ է գտնել՝ լավ փիլիսոփայի՞ն, թե՞ իսկական քրիստոնյայի: Բայց հենց որ հարցը ժողովրդին է վերաբերում, ես լավ գիտեմ, որ կլինեն ժողովուրդներ, որոնք կչարաշահեն փիլիսոփայությունը առանց կրոնի, ինչպես մերոնք չարաշահում են կրոնը առանց փիլիսոփայության: Եվ ինձ թվում է, որ դա շատ է փոխում հարցի էությունը:

Ի դեպ, հեշտ է գեղեցիկ ասացվածքներ հրապարակել գրքերում, բայց հարցն այն է, թե դրանք ճիշտ համապատասխանո՞ւմ են տվյալ ուսմունքին, անհրաժեշտորեն բխո՞ւմ են դրանից: Եվ հենց դա է, որ բնավ չի երևացել մինչև օրս: Մնում է տակավին գիտենալ, թե փիլիսոփայությունը, իր գահի վրա նստած, հեշտ ու հանգիստ պիտի պարտադրի՞ իր իշխանությունը սնամիտությանը, շահամոլությանը, փառատենչությանը ու մարդկանց մանրամունք կրքերին և պիտի գործադրի՞ արդյոք այն քաղցր մարդասիրությունը, որով նա պարծենում է մեզ գրիչը ձեռքին: Որպես կանոն, փիլիսոփայությունը չի կարող անել այնպիսի լավ բան, որից ավելի լավը չանի կրոնը, իսկ կրոնը կանի շատ լավ բաներ, որ փիլիսոփայությունը չի կարող անել:

Մեր արդի կառավարությունները իրենց ամուր հեղինակությունն ու իրենց ոչ հաճախակի հեղաշրջումները անժխտելիորեն պարտական են քրիստոնեությունը: Քրիստոնեությունը նրանց դարձրել է նվազ դաժան. դա ապացուցվում է, երբ նրանց համեմատենք հին կառավարությունների հետ: Կրոնը, եթե ավելի մոտիկից ճանաչենք այն և մի կողմ թողնենք մոլեռանդությունը, ավելի մեղ-

մուլթյուն է տվել քրիստոնեական բարքերին: Այս փոփոխությունն ամենեւին մշակույթի կամ գրականութեան գործը չէ, որովհետեւ ամենուրեք, ուր գրականությունը փայլել է, մարդկությունն ավելի հարգված չի եղել: Աթենացիները, եգիպտացիները, հռոմեացի կայսրերը, չինացիները վայրագությունները հաստատում են այդ: Բարեգլխութեան ինչպիսի՛ օրինակներ կան, որ պարտական ենք Ավետարանին»:

Ինչ վերաբերում է մեզ, մենք համոզված ենք, որ քրիստոնեութիւնը պիտի հաղթական դուրս գա այն սարսափելի փորձութիւնից, որ վերջերս մաքրագործեց նրան: Այս համոզումը մեզ ներշնչում է, որ նա կատարելապես բռնում է բանականութեան քննութիւնը, և որ ինչքան ավելի խորը ուսումնասիրենք այն, այնքան ավելի խորութիւններ կգտնենք նրա մեջ: Նրա խորհուրդները բացատրում են թե՛ մարդուն և թե՛ բնութիւնը, նրա գործերը հաստատում են նրա պատվիրանները, նրա գլխասիրութիւնը, արտահայտված հազար ու մի ձևերով, փոխարինել է հների վայրագութեանը: Նա ոչինչ չի կորցրել իր նախկին շքեղութիւնից, և նրա պաշտամունքը առավել ևս զոհացնում է մարդու և՛ սիրտը, և՛ միտքը: Մենք ամեն ինչ պարտական ենք նրան՝ գրականութիւն, գիտութիւն, հողագործութիւն, գեղարվեստ և այլն: Նա բարոյականութիւնը միացնում է կրոնին, իսկ մարդը՝ Աստծուն: Հիսուս Քրիստոս՝ բարոյական մարդու Փրկիչը, նաև Փրկիչն է Ֆրգիկական մարդու. Նա եկավ որպէս մի մեծ, մի երջանիկ եղելութիւն՝ հակակռեղու բարբարոսների հորդահոս հեղեղը և բարքերի ընդհանուր ապականութիւնը: Եթե նույնիսկ ժխտենք քրիստոնեութեան գերբնական հրաշքները, նրա բարոյական վեհութիւնից, նրա բարիքների անսահման մեծութիւնից, նրա շլացնող գեղեցկութիւնից տակավին կմնա ինչ-որ բան, որ բավարար չափով կապացուցի, թե նա ամենահրաշալի և ամենամաքուր կրոնն է, որ մարդիկ երբևէ պաշտած լինեն:

«Կան մարդիկ, - ասում է Պասկալը<sup>51</sup>, - որոնք արհամարհանք ունեն կրոնի հանդեպ. այդպիսիներին պետք է սկսել նախ ցույց տալ, որ կրոնը ամենևին հակառակ չէ բանականությանը, հետո՝ արժանի է հարգանքի, հետևաբար պետք է հարգել այն. այնուհետև պետք է այն սիրելի դարձնել և այնպես անել, որ մարդիկ ցանկան, որ կրոնը ճշմարիտ լինի, և ապա անհերքելի ապացույցներով ցույց տալ, որ այն ճշմարիտ է և, վերջապես, պարզել նրա հնությունը ու սրբությունը նրա մեծությունը և վեհությունը»:

Այսպես է այն ճանապարհը, որ գծել է այս մեծ մարդը, և որին մենք փորձեցինք հետևել: Մենք չգործածեցինք քրիստոնեությունից ջատագովների սովորական փաստարկները, սակայն ապացույցների մի ուրիշ շղթայաշարք, այնուամենայնիվ, մեզ բերում է նույն եզրակացություն. և դա կլինի այս գործի\* արդյունքը:

Քրիստոնեությունը կատարյալ է. մարդիկ է, որ անկատար են: Արդ, կատարյալ մի հետևանք չի կարող դուրս գալ անկատար մի սկզբունքից: Ուրեմն, քրիստոնեությունը չի եկել մարդկանցից. եթե նա չի եկել մարդկանցից, ապա կարող է եկած լինել միայն Աստծուց:

Եթե Աստծուց է եկել, մարդիկ կարողացել են այն ճանաչել միայն հայտնությունով:

Ուրեմն, քրիստոնեությունը հայտնությունական կրոն է:



---

\* Խոսքը վերաբերում է հեղինակի «Քրիստոնեության հանճարը» գրքին (ծնթ. թարգմ.):

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԱՏՆԵՐ ԵՎ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Լիկուրգոս*- Սպարտացի օրենսդիր: Ապրել է մեր թվագրություն-  
նից առաջ 9-րդ դարում: Ըստ ավանդության՝ նա իր հաստատած  
խստագույն օրենքների նախնական օրինակները ձեռք է բերել  
Կրետեում, Եգիպտոսում և Ասիայում: Մի այլ ավանդության համա-  
ձայն՝ Սպարտայի սահմանադրությունը նրան թելադրել է դելփյան  
պատգամախոսը: Իր մահից առաջ Լիկուրգոսը երդվեցրել է իր հայ-  
րենակիցներին, որ բնավ չփոխեն այդ սահմանադրությունը: Թվում  
է, թե այս ավանդությունը տարածվել է 7-րդ դարում (մ. թ. ա.)  
սպարտական ազնվականության կողմից՝ հեղինակություն տալու  
համար տվյալ ժամանակաշրջանում սովորության իրավունք ստա-  
ցած այդ օրենքներին:

2. *Կոդրոս*- Աթենքի վերջին առասպելական թագավորը, որը կա-  
նոնի գոհաբերեց իր անձը դորիացիների դեմ կռվի ժամանակ, ո-  
րովիետև մի գուշակ հաղթանակը խոստացել էր երկու ժողովուրդ-  
ներից նրան, որի ղեկավարը սպանվելու էր:

3. *Պուլադես*- Հույն առասպելական հերոս՝ Օրեստի զարմիկն ու  
բարեկամը, որն օգնեց Օրեստին վրեժ լուծելու Ագամեմնոնին  
սպանողներից և ամուսնացավ նրա քրոջ՝ Էլեկտրայի հետ: Այս եր-  
կու հերոսների բարեկամությունը ոգեկոչված է Էսքիլեսի «Օրեստ»  
և Էվրիպիդեսի «Օրեստը և Իֆիգենյան Տավրիդում» ողբերգու-  
թյունների մեջ:

4. *Ռեզուլոս*- Հռոմեացի զորավար և քաղաքական գործիչ, որը  
256 թ. (մ. թ.) ղեկավարեց Աֆրիկայի ճակատամարտը կարթագե-  
նացիների դեմ: 255 թ. գերեվարվելով կարթագենացիներից՝ խոշ-  
տանգվելով սպանվեց Կարթագենում 250 թ.:

5. *Առհիանոս*- (95-175) Հույն պատմաբան և փիլիսոփա, Էպիկ-  
տետի աշակերտը: Մասնակցել է Հյուսիսային Կովկասում ալաննե-  
րի դեմ մղված մի ճակատամարտի, ձեռք է բերել հռոմեական քա-

ղաքացիություն, ապա դարձել կոնսուլ և այնուհետև՝ Կապադովկիայի կառավարիչ: Կյանքի վերջին տարիներն անցկացրել է Աթենքում:

6. **Պյո Գեսկլեն**- Միջնադարի ֆրանսիացի նշանավոր ռազմական գործիչ, մասնակցել է բազմաթիվ ճակատամարտերի, աչքի է ընկել հատկապես Չարյուրամյա պատերազմի ժամանակ անգլիացիների դեմ մղված մարտերում՝ տանելով փայլուն հաղթանակներ և մարմնավորելով ֆրանսիացի ժողովրդի հայրենասիրությունը:

7. **Բայար**- Ազնվական ծագումով միջնադարի ֆրանսիացի հայտնի ռազմական գործիչ, որը հաղթական կռիվներ է մղել իսպանացիների և վենետիկյան իշխանությունների դեմ՝ վաստակելով «Անվեհեր ասպետ» առասպելական անունը:

8. **Ռոնալդ, Օրե, Բրես**- Դաշտավայրեր Ֆրանսիայի տարբեր շրջաններում, ուր միջին դարերում տեղի են ունեցել վճռական ճակատամարտեր:

9. **Սուրբ Ամբրոսիոս**- Ընդհանուր Եկեղեցու նշանավոր Չայրերից մեկը, գրող և բարձրաստիճան պաշտոնյա Չռոմեական կայսրությունում: 374 թ., դեռ նորընծա եկեղեցական, նշանակվել է Միլանի եպիսկոպոս՝ հավատացյալ ժողովրդի ցանկությամբ: 386 թ. քրիստոնյա է մկրտել սուրբ Օգոստինոսին: Գրել է քարոզներ, ճառեր, դամբանականներ, բարոյագիտական աշխատություններ և հորինել մի շարք կրոնական տաղեր, որոնք ծանոթ են «Ամբրոսյան շարականներ» անունով: Ընդհանուր Եկեղեցում նրա հիշատակը տոնվում է դեկտեմբերի 7-ին:

10. **Պյութագորաս (570-480)**- Հույն նշանավոր մաթեմատիկոս և փիլիսոփա, մաթեմատիկական և միստիկական մի դպրոցի հիմնադիր, որի բազմաթիվ աշակերտները նրա մահից հետո կազմեցին գիտական, իմաստասիրական, քաղաքական և կրոնական մի աղանդ և կոչվեցին Պյութագորականներ: Պյութագորասը հավատում էր հոգիների բնակավիճակությանը:



**ԲԱՐՈՑԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՏԱՍՆԱԲԱՆՅԱ  
ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

1. *Մինոս*- Մեր թվագրությունից առաջ երկրորդ հազարամյակում ապրած Կրետե կղզու թագավոր, որի անունը կապված է շատ հարուստ մի առասպելի հետ: Մինոսը համարվել է կրետացիներից քաղաքակրթող մի արդար դատավոր և իմաստուն օրենսդիր:

2. *Զարաթուստրա* կամ *Զորոաստր* (ապրել է մ. թ. ա. 7-ից 4-րդ դարերի միջև)- Իրանցի մարգարե և կրոնական բարեփոխիչ: Նրա ասմունքը, որը դատապարտում էր չարի իշխանությունը և ամրացնում միաստվածությունը, հետզհետե տարածվեց Իրանում, որի պատճառով նա հալածվեց և քսորվեց Աֆղանստան: Նրան են վերագրվում «Ավեստայում» պահպանված *գաթաները* (երգ, տաղ), որտեղ հեղինակը երկխոսության մեջ է մտնում իր աստծու՝ Ահուրա Մազտայի հետ:

3. *Օրմուզդ, Ահրիման*- Մազդեզական կրոնում Ջուրվանի երկվորյակ որդիները, որոնցից առաջինը մարմնավորում է բարու աստվածությունը, իսկ երկրորդը՝ չարի աստվածությունը:

4. *Վիշնու*- Բրահմանական կրոնի երեք աստվածություններից մեկը և հնդկական բազմաթիվ աղանդների գերագույն աստվածը: Վիշնուն պաշտվում էր զանազան ձևերի տակ՝ իր արժանիքները խորհրդանշող հազարավոր անուններով: Նա ընդհանրապես պատկերված է նստած առասպելական մի թռչնի վրա, իր չորս թևերով, որոնցից մեկը կրում է մի սկավառակ, մյուսը՝ ծովային գոգաձև մի մեծ խեցի, երրորդը՝ մի լոտոս, չորրորդը՝ մի մահակ: Վիշնուի պաշտոնն էր հսկել, որ երկնային մարմինների ներդաշնակ կարգավորությունը չխանգարվի, և ապահովվի տիեզերքի պահպանությունը:

5. *Օզիդիս*- Եգիպտական աստված՝ Իսիսի եղբայրը և ամուսինը, որին նախանձում է իր եղբայր Սեթը և նրան գցում Նեղոս գետը: Իսիսը նրան գտնում է Բիբլոսում և ետ բերում, բայց Սեթը նորից է բռնում նրան, ծվատում նրա մարմինը տասնչորս մասի և ցրում ամեն կողմ: Իսիսն սկսում է նորից փնտրել իր ամուսնուն, գտնում է և Անուբիսի օգնությամբ վերակազմում նրա մարմինն ու կյանք պար-

գևում նրան: Այսպիսով հարություն առած այդ աստծուց նա ունեցում է մի որդի՝ Յորուսին, որին գաղտնի մեծացնում է Նեղոսի գետաբերանի ճահիճներում: Յետագայում Յորուսը ժառանգում է իր հոր երկրային թագավորությունը, իսկ այս վերջինը կառավարում է ննջեցյալների ստորերկրյա թագավորությունը: Յարություն առած աստծու այս առասպելի հիման վրա Եգիպտոսում, ապա նաև հունահռոմեական աշխարհում ստեղծվել է հուղարկավորական ծեսերի և վերակենդանացման հավատալիքների մի ամբողջ ավանդություն:

6. *Տիֆոն*- Յունական առասպելաբանության հրեշներից մեկը, որը պատկերված է ամենազարհուրելի գծերով. լեռներից ավելի բարձր հասակ, թևավոր մարմին՝ ծածկված թեփերով կամ իժերով, վիշապների հարյուր գլուխ և բոց ժայթքող աչքեր: Տիֆոնը, որին իր մայրը ծնել էր Ջևահից պարտված իր որդիների վրեժը լուծելու համար, հարձակվում է Օլիմպոսի վրա և փախուստի մատնում օլիմպիական աստվածներին, որոնք, գալով Եգիպտոս, թաքնվում են անապատում՝ ընդունելով կենդանիների կերպարանք: Ջևահը նախ պարտվում, ապա շանթահարում և ճգնում է նրան այն լեռների տակ, որ հրեշն իզուր էր ճգնում արձակել նրա վրա:

7. *Մոլո* (640-558)- Աթենացի անվանի պետական գործիչ, Յունաստանի յոթ իմաստուններից մեկը: Նրա անունը կապված է քաղաքական և ընկերային մի բարենորոգման հետ, որի շնորհիվ մեծապես բարգավաճեց և զարգացավ Աթենքը: Անցնելով իշխանության գլուխ՝ նա քաղաքացիներին բաժանեց չորս դասերի, ըստ որում հարուստները գրավում էին կառավարման բարձրագույն աստիճանները, իսկ աղքատները մասնակցում էին քաղաքացիական խորհուրդներին և մաս կազմում ժողովրդական դատարանին: Սուրբ Ատտիկեում զարգացրեց արիեստագործությունն ու վաճառականությունը:

8. *Տրոֆոնիուս*- Ըստ ավանդության՝ Ապոլոնի տաճարը կառուցող ճարտարապետը, որն ուներ ստորերկրյա մի սրբարան՝ նեղ ու խոր մի քարանձավ, ուր նրա պատգամախոսը տեսիլների և ձայների միջոցով գուշակություններ էր անում, որոնք հետագայում մեկնաբանվում էին քրմերի կողմից:

9. *Յերես*- Յնձի և արգասավորության աստվածուհի, որ պաշտվում էր Հունաստանում մեր թվագրությունից առաջ 6-ից 5-րդ դարերում:

10. *Էլ-գինա* - Քաղաք հին Հունաստանում:

11. *Պելիսիս*- Քաղաք հին Հունաստանում, ուր գտնվում էր Ապոլոնի տաճարը, և ուր Պյութիա պատգամախոսը գուշակություններ էր անում՝ հաճախ երկրհմի, որոնք մեկնաբանվում էին քրմերի կողմից:

12. *Քասադ*- Ըստ քանանացիների և փյունիկեցիների՝ ամպրոպի, անձրևի և արգասավորության աստվածը, որի պաշտամունքը կատարվում էր բարձրադիր մի վայրում:

13. *Սերապիս*- Եգիպտական աստված՝ երիտասարդ և հաղթահասակ, որը գլխավորապես պաշտվում էր Սեմֆիսում, ապա նաև Ալեքսանդրիայում և Հունաստանում:

14. *Թերես*- Քաղաք հին Հունաստանում: 336թ. (մ. Ք.) կործանվեց Ալեքսանդր Մակեդոնացու կողմից:

15. *Յուպիտեր*- Հռոմեական աստված՝ Սատուռնի և Ռեայի որդին, որը միաժամանակ երկնքի հայրն էր ու տերը: Պաշտվել է Կապիտոլի մեծ տաճարում:

16. *Կապիտոլ*- Հռոմի բլուրներից մեկը, որի գագաթին գտնվում էր Յուպիտերի տաճարը:

### **ՄՈՎՍԵՍԻ ԱՎԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՅՈՒՍ ԲՈՂՈՐ ԿՈՍՄՈԳՈՆԻԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

1. *Ջարաթուստրա կամ Ջորոաստր* (ապրել է մ. թ. ա. 7-ից 4-րդ դարերի միջև)- Իրանցի մարգարե և կրոնական բարենորոգիչ: Նրա ուսմունքը, որը դատապարտում էր չարի իշխանությունը և ամրացնում միաստվածությունը, հետզհետե տարածվեց Իրանում, որի պատճառով նա հալածվեց և աքսորվեց Աֆղանստան: Նրան են վերագրում «Ավեստայում» պահպանված *գաթաները* (երգ, տաղ), ո-

րոնցում հեղինակը երկխոսության մեջ է մտնում իր աստծու՝ Ահուրա Մազդայի հետ:

2. *Լուսինն Սամաստեցի* (125-192)- Հույն նշանավոր երգիծաբան, սոփեստների դպրոցի հետևորդ: Մասնագիտությամբ եղել է իրավաբան: Կյանքի վերջին տարիներն անցկացրել է Եգիպտոսում որպես Հռոմեական կայսրության բարձր պաշտոնատար: Հեղինակ է շուրջ 70 աշխատությունների՝ երգիծական գրվածքներ, պամֆլետներ, երկխոսություններ, որոնցից հայտնի են՝ «Մեռելների երկխոսություններ», «Աստվածների երկխոսություններ», «Կուրտիզանների երկխոսություններ» և այլն:

3. *Պլուտարկոս* (շուրջ 50-125)- Հույն կենսագիր և բարոյագետ: Գրել է մեծ թվով աշխատություններ, որոնք խմբված են երկու վերնագրերի՝ «Զուգահեռ կյանքեր» և «Բարոյական երկեր»: Այս վերջիններն ընդգրկում են բարոյագիտական, քաղաքական, մանկավարժական, պատմական և գրական բնույթի աշխատություններ, որոնք հաճախ շարադրված են պլատոնական երկխոսությունների ձևով: Պլուտարկոսը քննադատում է գլխավորապես ստոյիկյաններին և էպիկուրյաններին:

4. *Էդրա*- Այս անունով հայտնի են սկանդինավյան հին ժողովուրդների դիցաբանական և առասպելական ավանդություններին վերաբերող երկու ժողովածուներ՝ «Բանաստեղծական Էդդա», որը 8-ից 13-րդ դարերում ստեղծված ժողովրդական տաղերի մի հավաքածու է, և «Արձակ Էդդա», որը վերագրվում է 13-րդ դարում ապրած Սնորրի Ստուրլուսոն անունով մի հեղինակի:

5. *Թեբես*- Քաղաք հին Հունաստանում, որը 336 թ. (մ. թ.) կործանվեց Ալեքսանդր Մակեդոնացու կողմից:

6. *Թալես*- Հույն մաթեմատիկոս և փիլիսոփա: Ապրել է 7-ից 6-րդ դարերում (մ. թ.): Հռչակավոր դարձավ՝ կանխատեսելով 585 թ. տեղի ունեցած արևի խավարումը: Նրան է վերագրվում ժամանակի առաջին ճշգրիտ չափումը արեգակնային նախնական մի սլաքի միջոցով:

7. *Ջենոն* (335-264)- Կիպրոս կղզում ծնված հույն նշանավոր իմաստասեր: Պատանեկան տարիքից տեղափոխվել է Աթենք և 188

ստեղծագործել այնտեղ: Նրա փիլիսոփայական աշխատություններից միայն պատառիկներ են հասել մեզ: Նրա մահից հետո աթենացիները նրա պատվին կանգնեցրել են նրա բրոնզե արձանը:

8. **Էպիկուր** (341-270)- Հույն փիլիսոփա: Աթենքում հիմնել է իր դպրոցը և ունեցել բազմաթիվ հետևորդներ, որոնք հետագայում կոչվեցին էպիկուրյաններ: Ըստ էպիկուրի՝ մարդու ճանաչողության և բարոյականի չափանիշը նրա զգայություններն են, որոնցից բխում են հաճույքները, որոնք երջանկության սկիզբն են, պայմանով, որ մարդը կարողանա տիրապետել դրանց:

9. **Դեկարտ, Պիրհա-** Պրոմեթևսի որդին: Ըստ առասպելի՝ Դեկարտը և նրա կինը՝ Պիրհան, եղել են միակ արդար մարդիկ, որոնք բրոնզե դարում փրկվել են աշխարհը կործանող ջրհեղեղից: Նրանք մի տապանի մեջ հասնելով Պառնասի գագաթը՝ վերաբնակեցրել են երկիրը իրենց հետևից նետելով իրենց մոր քարացած ոսկորները ըստ աստվածների պատգամի: Դեկարտնի նետած ոսկորները դառնում են տղամարդիկ, իսկ Պիրհայի նետածները՝ կանայք:

10. **Ասկուս, Էմիա-** Ըստ սկանդինավյան ժողովուրդների դիցաբանական ավանդության՝ Ասկուսը և Էմլան եղել են մարդկային ցեղի նախահայրն ու նախամայրը:

11. **Օդին-** Գերմանասկանդինավյան հին ցեղի գլխավոր աստվածը, որը եղել է միականի և ահազդեցիկ: Նրան մատուցվել են մարդկային զոհեր: Օդինը իշխել է պատերազմի, իմաստության և բանաստեղծության վրա: Նա միաժամանակ եղել է հնարողն ու մեծ վարպետը այբուբենի:

12. **Հեներուս, Լեդուր-** Սկանդինավյան դիցաբանական աստվածներ:

### ԽՈՐՀՐԳԻ ԷՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. **Գողոնե-** Հին Հունաստանի քաղաքներից մեկը, որ կարևոր դեր է խաղացել Հունաստանի քաղաքական գործերում Ջևսի հնագույն պատգամախոսներից մեկի շնորհիվ: Քաղաքի քրմերն ու

քրմուհիները աստվածների պատասխանը հայտնում էին՝ մեկնաբանելով սրբազան կաղնիների տերևների սոսափյունը, որն առաջանում էր քամուց կամ աղավնիների թռիչքից:

2. **Գիմնոսֆիստ**- Այսպես էին կոչվում հնդիկ հին փիլիսոփաները, որոնք համարյա մերկ էին շրջում, հրաժարվում մսից ու ամեն տեսակ զրգանքներից և ապրում հայեցողական կյանքով:

### ԵՐՐՈՐԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԳԻ ՄԱՍԻՆ

3. **Հերակլիդես** (388-312 մ. թ.)- Հույն աստղագետ՝ Պլատոնի աշակերտը: Առաջին գիտնականն էր, որ հաստատեց, թե Երկիր մոլորակը թավալվում է իր առանցքի շուրջը:

4. **Պորփյուր** (234-305)- Սիրիական ծագումով հույն փիլիսոփա, Պլատոնի հետևորդ: Գրել է Պյութագորասի կենսագրությունը, ինչպես նաև մեկնություններ Պլատոնի և Արիստոտելի երկերի մասին: Պահպանվել են որոշ հատվածներ նրա «Հոգու վերադարձը Աստծուն» և «Պատգամախոսների մասին» աշխատություններից:

5. **Սերապիս**- Հեթանոսական աստված, որի պաշտամունքը մուսուլմանները գործել էգիպտոս Պտղոմեոս Ա-ի կողմից: Այս աստվածն իր մեջ միավորում էր հունական տարբեր աստվածությունների հատկությունները. նա միաժամանակ թե՛ բուժող աստված էր, թե՛ մեռելների և թե՛ արգասավորության աստված: Նրա պաշտամունքը, բացի Եգիպտոսից, տարածված էր նաև Հունաստանում, Հռոմում և Փոքր Ասիայում:

6. 7. 8. **Մետրիս, Օրոմասիս, Արամիանիս**- Հին իրանական աստվածներ, որոնք խորհրդանշում էին կատարելությունը, ներդաշնակությունը և արևալույսը: Նրանց պաշտամունքը տարածված էր հնդեվրոպական ժողովուրդների մեջ:

9. **Դենիսիոս Կրտսեր** (397-344 մ. թ.)- Սիրակուսացի բռնակալ միապետ, որը Պլատոնին բերել տվեց իր մոտ, որպեսզի կազմակերպի իդեալական մի հանրապետություն: Եղել է մեծ մեկեմաս:

10. **«Լպիանմիս»**- Պլատոնի իմաստասիրական աշխատություններից մեկը:

11. *Տիմաշու Լոկրեսացի*- Յուլյն փիլիսոփա, Պյութագորասի հետևորդ: Ապրել է հինգերորդ դարում (մ. թ. ա.): Մեծ ազդեցություն է ունեցել Պլատոնի մտածողության վրա:

12. *Մարսիլիո Ֆիչինո* (1433-1499)- Իտալացի հումանիստ փիլիսոփա: Հելլենիզմի ներկայացուցիչ այս հոգևորականը եղել է միջնադարյան պլատոնական դպրոցի մեծ վարպետը: Թարգմանել է Պլատոնի երկխոսությունները և նեոպլատոնականներ՝ Պորփյուրի, Պլոտինի և Պրոկլեսի երկերը: Նրա գրչին են պատկանում «Պլատոնական աստվածաբանություն» և «Քրիստոնեական կրոնի մասին» աշխատությունները: Ֆիչինոյի փիլիսոփայությունը ներդաշնակվում էր իր ժամանակի այն մտավորականների բարոյական մտահոգությունների հետ, որոնց ցանկությունն էր կերպարանափոխել քրիստոնեական եկեղեցին:

13. *Յամբլիքոս* (250-330)- Նեոպլատոնական փիլիսոփա, որը իմաստասիրական մի դպրոց էր հիմնադրել Ասորիքում: Նրա մոտ նեոպլատոնիզմը դառնում էր քրիստոնեության հակադիր մի ուսմունք: Գրել է Պյութագորասի կենսագրությունը և մի աշխատություն խորհուրդների մասին:

14. *Մարսիմո Տյուրոսացի*- Յուլյն փիլիսոփա: Ապրել է մեր թվագրության Բ դարի կեսերին: Նա իրեն համարում էր Պլատոնի աշակերտ, հավատում էր գերագույն և անտեսանելի մի Աստծու, հոգու անմահությանը, ինչպես նաև դևերին: Այս վերջինները, ըստ նրա, Նախախնամության գործիքներն են: Տյուրոսացուց մեզ հասել են 41 ճառեր:

15. *Հայր Կալմեստ*- Ֆրանսիացի միսիոներ, որ բազմաթիվ ճանապարհորդություններ է կատարել գլխավորապես Ասիայում և մոտիկից ուսումնասիրել հին հնդկական և չինական կրոնները:

16. *Լամաստասթամ*- Հին հնդկական սրբազան գրքերից մեկը:

17. *Տարտարոս*- Ըստ հունական դիցաբանության՝ աշխարհի ամենախորունկ շրջանը, որը գտնվում էր դժոխքի ներքևում: Աստվածային ծագում ունեցող առաջին սերունդները այստեղ էին նետում իրենց թշնամիներին և հարազատ երեխաներին, ինչպես արեց Ուրանոսը: Ավելի ուշ, Ջևաը այն դարձրեց ըմբոստ աստվածների բան-

տը: Ժամանակի ընթացքում Տարտարոսը շփոթվել է դժոխքի հետ և ցույց է տվել այն վայրը, ուր չարչարվում էին հանցագործները:

18. *Տերտուլիանոս* (155-225)- Լատիներենով ստեղծագործող քրիստոնյա առաջին գրողներից մեկը: Լինելով հեթանոսությունից դարձած կարթագենացի ջերմեռանդ հավատացյալ՝ Յուսիսային Աֆրիկայում նա ծավալել է վարդապետական հսկայական աշխատանք: Իր ստեղծագործություններում նա քննադատում էր հեթանոսությունը («Ազգերին») և միաժամանակ պաշտպանում քրիստոնեությունը («Ձատագովական»)՝ հակադրվելով հատկապես գնոստիկյանների ուսմունքին («Ընդդեմ Մարկիոնի»): Տերտուլիանոսը կարթագենացի Կիպրիանոսի հետ սկիզբ դրեց լատինական աստվածաբանությանը:

19. *Իտալական հին աղանդի ուսմունքը*- Խոսքը վերաբերում է այլութագորյան փիլիսոփայությանը:

### **ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ**

1. *Միլտոն Ջոն* (1608-1674)- Անգլիացի բանաստեղծ, հեղինակ փիլիսոփայական և հովվերգական բազմաթիվ բանաստեղծությունների և ներբողների: Ճանապարհորդելով Ֆրանսիայում և Իտալիայում և ներշնչվելով գլխավորապես Վիրգիլիոսից և Վերածննդի մեծ բանաստեղծներ Դանտեից, Պետրարկայից և Տասսոյից՝ իր սկզբնական շրջանի բանաստեղծությունները գրել է լատիներեն լեզվով և նրանց ազդեցության տակ: Իր հայրենիքում նա եռանդուն պայքար է մղել ի նպաստ Եկեղեցու բարեկարգության և քարոզել վերադարձ դեպի Քրիստոսի սկզբնական Եկեղեցին: Միլտոնը գործուն մասնակցություն է ունեցել նաև իր երկրի քաղաքական գործերում, սակայն 1652 թ. կորցնելով իր տեսողությունը՝ քաշվել է ասպարեզից և ամբողջությամբ նվիրվել գրականությանը՝ հորինելով 12 երգերից բաղկացած իր աստվածաշնչական մեծ պոեմը՝ «Դրախտ Կորուսյալը», որը կոսմիկական մի ողբերգություն է, ուր, որպես գլխավոր հերոս, հանդես է գալիս ոչ թե Ադամը, այլ՝ սատանան:



2. *Մասիյոն Ժան Բասիստ* (1663-1742)- Ֆրանսիացի մեծ քարոզիչ և հռետորական արվեստի դասախոս: Լինելով պերճախոս Եպիսկոպոս՝ նա հաճախ է հրավիրվել Լուդովիկոս ԺԴ-ի արքունիք՝ պալատական մեծ իշխանների և հայտնի մարդկանց մահվան առթիվ արտասանելու դամբանականներ: Հայտնի է նրա «Քարոզներ» ժողովածուն՝ գրված համոզիչ պերճախոսությամբ և պարզ, հղկված լեզվով: Որպես մեծ բարոյագետ, Մասիյոնը քարոզել է խաղաղության և բարության իդեալը՝ համարձակորեն դատապարտելով աղետաբեր պատերազմները: 1719 թ. ընտրվել է ֆրանսիական ակադեմիայի անդամ:

3. *Սուրբ Հովհան Ոսկեբերան* (344-407)- Հունական Եկեղեցու մեծ Հայրերից: Սկզբում եղել է Անտիոքում պարզ քահանա և վարելով ճգնավորական անբասիր կյանք՝ մեծ համբավ է ձեռք բերել և հետագայում բարձրացել ու դարձել Կոստանդնուպոլսի պատրիարք: Որպես քարոզիչ՝ նա փայլել է իր պերճախոսությամբ և ստացել «Ոսկեբերան» մականունը: Եկեղեցական կարգապահությանը վերաբերող նրա խիստ կեցվածքը և Եկեղեցին բարեկարգելու համար նրա ցուցաբերած նախանձախնդրությունը ի վերջո նրա վրա հրավիրեցին քաղաքական և եկեղեցական բարձրաստիճան անձանց թշնամանքը և պատճառ դարձան նրա իշխանազրկմանն ու աքսորին:

Ոսկեբերանի երկերը բաղկացած են ճգնավորական կյանքին վերաբերող աշխատություններից և գրական ու փիլիսոփայական բովանդակությամբ մեծ թվով քարոզներից ու ճառերից: Այդ երկերը իրենց վրա կրում են անտիոքյան մեկնաբանական դպրոցի դրոշմը, և դրանցից շատերը թարգմանված են ոսկեդարյան հայ թարգմանիչների կողմից:

4. *Քլարք Սամուել* (1675-1729)- Անգլիացի փիլիսոփա և աստվածաբան: Քենբրիջի համալսարանում ուսանել է դեկարտյան փիլիսոփայություն, ապա անցել անգլիկան հոգևորականության շարքերը: Նրա «Աստծու գոյության և ստորագելիների մասին» աշխատությունը, որը պարունակում է նրա քարոզների ամբողջությունը, ուղղված է Սպինոզայի փիլիսոփայության դեմ: Ժամանակի և տարածության մասին փիլիսոփա Լայբնիցի հետ փոխանակած իր

հայտնի «Նամականու» մեջ Քլարքը որդեգրել է Նյուտոնի ռեալիստական դիրքը, ըստ որի ժամանակն ու տարածությունը Աստծու ստորոգելիներն են: 1705 թ. Քլարքը հրատարակել է նաև իր կարևոր աշխատություններից մեկը «Ջատագովություն քրիստոնեական կրոնի մասին» վերնագրով :

5. *Պասկալ Բլեզ* (1623-1662)- Ֆրանսիացի ականավոր գրող, փիլիսոփա, մաթեմատիկոս և ֆիզիկոս: 1654 թ. Պասկալն ունեցել է հոգեկան հափշտակության մի գիշեր, որի հետևանքով որոշել է իր կյանքը նվիրել քրիստոնեական հավատին և բարեպաշտությանը: Լինելով խորապես քրիստոնյա՝ նա ձեռնամուխ է եղել գրելու ընդարձակ մի «Ջատագովություն» քրիստոնեական կրոնի մասին, որը դժբախտաբար չի ավարտել իր կանխահաս մահվան պատճառով: Այդ աշխատությունից հրատարակվել են առանձին հատվածներ «Մտածումներ» վերնագրով:

### **ԱՆԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳԸ ԵՎ ԱՆՕԳՈՒՏ ԼԻՆԵԼԸ**

1. *Էպամինոնտաս* (418-362 ն. թ.)- Ջորավար և պետական գործիչ հին Հունաստանում, թերես քաղաքի ժողովրդավարական կուսակցության առաջնորդներից մեկը, որը 371 թ. ջախջախեց սպարտացիներին և ազատեց իր հայրենիքը:

2. *Յինցինատոս*- Գյուղական ծագումով հռոմեացի պարզ զինվոր, որը հետագայում իր փայլուն հաղթանակների համար դարձավ Հռոմի ազգային հերոս: Ապրել է 5-րդ դարում (ն. թ.):

3. *Ճաբինոս* (275-203 ն. թ.)- Հռոմեացի քաղաքական գործիչ: Հինգ անգամ եղել է հյուպատոս: 217 թ. նշանակվել է հռոմեական բանակի գերագույն հրամանատար և երկարատև, մաշեցնող պատերազմ մղել Հաննիբալի դեմ:

4. *Պասպիրիոս Կուրսոր*- Հռոմայեցի ռազմական գործիչ, որը 325 թ. (ն. թ.) նշանակվել է բանակի գերագույն հրամանատար: Հինգ անգամ եղել է հյուպատոս: Մեծ հռչակի է տիրացել որպես քաջ, եռանդուն և խիստ զինվորական:

5. *Էմիլիոս Պատուոս*- Հռոմեացի զորավար, որը 216 թ. (մ. Ք.) պարտվեց և սպանվեց Կաննի (հարավային Իտալիա) ճակատամարտում Հաննիբալի դեմ մղված փյունիկյան երկրորդ ճակատամարտի ժամանակ:

6. *Սցիպիոն Աֆրիկացի* (235-183)- Հռոմեացի զորավար: 202թ. Աֆրիկայում Հաննիբալի դեմ իր տարած հաղթանակով վերջ դրեց փյունիկյան երկրորդ պատերազմին:

7. *Պոմպեոս* (106-48 մ. Ք.)- Հռոմեացի զորավար և պետական գործիչ: 66 թ. ավարտեց հռոմեացիների պատերազմը Պոնտոսի թագավոր Սիիրդատ 6-րդի դեմ իր տարած հաղթանակով և նվաճեց Փոքր Ասիան, Ասորիքը և Պաղեստինը: Վերադառնալով Իտալիա՝ նա Կրասոսի և Կեսարի հետ 60 թ. կազմեց մի եռապետություն: Կրասոսի մահը նրան դեմ առ դեմ կանգնեցրեց Կեսարի հետ, որն այդ ժամանակ գտնվում էր Գալիայում: Այս երկու մարդկանց փառասիրությունը անխուսափելի դարձրեց քաղաքացիական պատերազմը: 48 թ. Ֆարսալի ճակատամարտում Պոմպեոսը պարտվելով՝ քաշվեց Եգիպտոս, որտեղ և սպանվեց:

8. *Սիկստր*- Այս անունով էր կոչվում հին գերմանական ժողովուրդը, որը մեր թվագրության 12 թվականին նվաճվելով հռոմեացիների կողմից՝ քշվեց Բելգիական Գալիա, որտեղ հետագայում խառնվեց ֆրանկների հետ:

9. *Սուրբ Լուդովիկոս* (1214-1270)- Ֆրանսիայի թագավոր՝ Լուդովիկոս 8-րդի որդին, որը 1242 թ. գահ բարձրանալով՝ սկսեց կառավարել երկիրը: Նույն թվականին նա հաղթանակ տանելով Անգլիայի թագավոր Հենրիկոս 3-րդի դեմ՝ Փարիզի դաշնագրով վերջ դրեց ֆրանկոանգլիական հակամարտությանը: Լինելով քրիստոնյա գահակալ՝ նա իր նավատորմիով մասնակցեց խաչակրաց 7-րդ արշավանքին, սակայն Եգիպտոսում պարտվելով՝ բանտարկվեց և Սիրիայում չորս տարի գերի մնալուց հետո ազատվեց մեծ փրկագնով: Ապա խաչակիրների մի նոր արշավանք կազմակերպեց դեպի Զյուսիսային Աֆրիկա, ուր վարակիչ մի հիվանդությունից մահացավ Տունիսի պատերի տակ: Լինելով բարեպաշտ թագավոր՝ նա

ապրեց աղոթքով և պահեցողությամբ և 1297 թ. սրբադասվեց Բոնիֆացիոս 8-րդ պապի կողմից:

10. **Բայար** (1476-1524)- Ֆրանսիացի զինվորական, որը 1503 թ. Իտալիայի դեմ մղված պատերազմի ընթացքում իր քաջագործություններով մեծ հռչակ ձեռք բերեց և ստացավ «անվեհեր ասպետ» մականունը:

11. **Մոնմորանսի**- Ֆրանսիացի ազնվականների հայտնի ընտանիք, որի ներկայացուցիչներից մեկն էր Մոնմորանսիի դուքսը՝ (1493-1567) անվանի սպարապետը և Ֆրանցիսկոս Ա-ի մանկության ընկերն ու խորհրդականը:

### **ԱՆՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՏՃԱՌ ԾԱՅԱԿԻ ԵՎ ՈԳՈՒ ԱՆԿՄԱՆ**

1. **Ռենալ** (1713-1796)- Ֆրանսիացի հայտնի պատմաբան և փիլիսոփա: Եղել է հոգևորական, բայց հետագայում թողել է քահանայական կարգը՝ նվիրվելու համար փիլիսոփայությանը: Նրան մեծ ճանաչում է բերել հատկապես նրա «Եվրոպական հաստատությունների և վաճառականության փիլիսոփայական և քաղաքական պատմությունը երկու Յնդկաստաններում» աշխատությունը, որի հակակրոնական և հակազաղութարարական բովանդակությունը պատճառ է դարձել, որ նա աքսորվի Գերմանիա, ապա՝ Ռուսաստան:

2. **Դիդրո** (1713-1784)- Ֆրանսիացի հռչակավոր գրող, փիլիսոփա, մաթեմատիկոս և արվեստի տեսաբան: Երկար տարիներ աշխատել է «Ֆրանսիական հանրագիտարանի» պատրաստության վրա, որի նախաձեռնողներից մեկը և ապա տնօրենն է եղել: Հեղինակել է գրական, գեղարվեստական, փիլիսոփայական, քաղաքական բովանդակությամբ բազմաթիվ երկեր: Որպես փիլիսոփա, Դիդրոն աստվածաբանությունից անցնելով փորձարարական մատերիալիզմի՝ աշխատեց իրար հետ հաշտեցնել անաստվածությունն ու առաքինությունը՝ իր բարոյագիտությունը հիմնելով երկու մեծ ցանկությունների՝ երջանկության և բարեգործության բավարարման վրա:

3. *Բյուֆոն* (1707-1788)- Ֆրանսիացի ականավոր բնագետ և փիլիսոփա: Համաշխարհային հռչակ է վայելել 36 հատորներից բաղկացած նրա «Բնական պատմություն» աշխատությունը: Երկրագնդի և երկրաբանական դարաշրջանների մանրամասն ուսումնասիրությունը նրան բերել էր այն համոզմանը, որ աշխարհը կազմվել է բարեշրջության օրենքով՝ անցնելով դանդաղ և երկար կերպարանափոխություններից:

4. *Մոնտեսկյո* (1698-1755)- Ֆրանսիացի գրող: Հայտնի է նրա «Պարսկական նամականի» փիլիսոփայական վեպը, որը երևակայական մի նամակագրություն է Եվրոպա ժամանած երկու պարսիկների միջև, որոնց տպավորությունները, իբրև օտարականների, առիթ ծառայեցնելով՝ հեղինակը քննադատել է իր ժամանակի ֆրանսիական հասարակության, մասնավորապես փարիզյան բարքերը: Մոնտեսկյոյի «Օրենքների ոգու մասին» աշխատության հիման վրա հետագայում կազմվեց 1791 թվականի Ֆրանսիայի սահմանադրությունը լիբերալսահմանադրական կառուցվածքով:

5. *Խնամակալություն*- Լուդովիկոս ԺԴ-ի մահից հետո Ֆրանսիայում երկրի կառավարումը ժամանակավորապես հանձնվեց նրա եղբորորդի, Օռլեանի դուքս Ֆիլիպ իշխանին որպես խնամակալ, քանի որ գահի օրինական ժառանգ Լուդովիկոս ԺԵ-ն անչափահաս տարիքում էր: Այս ժամանակաշրջանը, որը տևեց 1715-ից մինչև 1723 թվականը, կոչվեց խնամակալության կամ Իշխանապետության շրջան (ֆրանս. Régence): Խնամակալության ժամանակաշրջանը հատկանշվում է նախորդ՝ բացարձակատիրական վարչակարգի դեմ ազնվական դասակարգի ուժեղ հակազդեցությամբ:

### ՀՈՒՇԱՐՁՁԱՆՆԵՐԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. *Լուի դը Ֆոնտան* (1757-1821)- Ֆրանսիայի բանաստեղծ և քննադատ: Գրել է դասական ոճի բանաստեղծություններ: Եղել է համալսարանի ճանաչված դասախոս և 1803 թ. ընտրվել է ֆրանսիական ակադեմիայի անդամ:

2. *Սուրբ Բրունո* (1030-1101)- Միջնադարի կրոնավոր: 1084 թ. հիմնադրել է Կարտուսյան միաբանության մեծ վանքը Գրենոբլի

մոտ, որը հետագայում դարձավ ճգնաժողովական կարևոր մի կենտրոն:

3. **Պալմիր-** Պատմական բնակավայր Սիրիայում, Դամասկոսի և Եփրատի միջև: Հնում եղել է քարավանների քառուղի: Պալմիրը 634 թ. վերջնականապես կործանվեց արաբների կողմից: Նշանավոր են հռոմեական և հելլենիստական ժամանակաշրջանից մնացած նրա ավերակները:

4. **Հարպոկրատես-** Եգիպտական աստված, որը ներկայացված է մատը ծոող մի երեխայի կերպարանքով: Պատկերում է Հորուս աստծու մանկությունը: Պաշտվել է եգիպտական Իսիս և Օսիրիս աստվածների հետ: Հույներն ու հռոմեացիները որդեգրեցին այն և դարձրին լռության աստված, որին մեծարում էին միստիկ փիլիսոփաները:

5. **Անուրիս-** Շնագայլի գլխով կամ շնագայլի գլուխ ունեցող մարդու կերպարանքով ներկայացված եգիպտական աստված, որը նախագահում էր հուղարկավորության կամ թաղման ծեսերին և պաշտվում որպես մեռելների աստված:

6. **Տամպե-** Հովիտ, որը բաժանում է Օլիմպոսի և Օսսայի բարձրավանդակները, և որի միջով հոսում է Պիմիոս գետը դեպի Եգեական ծով: Հնում Տամպեն հռչակված էր որպես սաղարթագեղ մի գով հովիտ և նվիրված էր Ապոլոնին:

7. **Հեբե-** Ջևահի և Հերայի դուստրը, որը մարմնավորում էր երիտասարդությունը և նեկտար մատուցում աստվածներին: Հեբեն ամուսնացավ Հերակլեսի հետ, երբ վերջինս անցավ աստվածների կարգը:

8. **Մենմոդինա -** Տիտանների վեց քույրերից մեկը, որը մարմնավորում է հիշողությունը: Ըստ հունական դիցաբանության՝ Մենմոդինայի և Ջևահի կենակցությունից ծնվել են ինը մուսաները:

9. **Ֆիլոմելա-** Աթենքի առասպելական իշխանուհի: Նրա զարմիկը, որ Թրակիայի թագավորն էր, բռնաբարում է նրան և ապա կտրում լեզուն, որպեսզի արգելի նրան խոսել: Բայց Ֆիլոմելան գտնում է միջոցը վրեժխնդիր լինելու. նա հյուսում է մի գորգ, որի վրա պատ-

կերում է այդ արարքը և այն ուղարկում իր քրոջը: Խայտառակված թագավորը հետապնդում է երկու քույրերին՝ սպանելու համար նրանց: Բայց աստվածները երկուսին էլ ազատում են՝ մեկին կերպարանափոխելով ծիծեռնակի, իսկ Ֆիլոմելային՝ սոխակի:

10. **Ալկինո-** Ծովային առասպելական թռչուն: Ըստ ավանդության՝ ալկինոնները երբ իրենց բույնը դնում են ծովի վրա, ծովը խաղաղվում է, և նավաստիները այդ համարում են բարենշան:

11. **Կադմոս-** Փյունիկյան ծագումով հույն առասպելական հերոս, Կադմեա բերդաքաղաքի հիմնադիրը: Ըստ ավանդության՝ նա եղել է կադմեացիների թագավորը, ամուսնացել է Արեսի և Աֆրոդիտի դուստր Զերմիոնի հետ, որից ունեցել է բազմաթիվ զավակներ: Զույները նրան վերագրել են քաղաքակրթական մեծ դեր (քաղաքների հիմնադրում, փյունիկյան այբուբենի ստեղծում, հանքերի շահագործում և այլն):

12. **Լեդա-** Ըստ հունական դիցաբանության՝ Սպարտայի թագավոր Տինդարեոսի կինը: Ջնար նրան հրապուրելու համար կերպարանափոխվում է կարապի: Նրանց կենակցությունից ծնվում են երկու զույգ երկվորյակներ՝ Կլիտեմնեստրան և Կաստորը, Զեդիցեն և Պոլուքսը:

13. **Ապելեո-** Զնադարի ամենանշանավոր հույն նկարիչը, որը եղել է Ալեքսանդր Մակեդոնացու բարեկամը և պաշտոնական դիմանկարիչը: Նրա գործերից ոչ մեկը չի պահպանվել: Մնացել են միայն մի քանի որմնանկարներ, որոնցից մեկը՝ Պոմպեյի խճանկարը, պատկերում է Մեծն Ալեքսանդրին Ջնսի կերպարանքով:

14. **Նեպտուն-** Սկզբնապես հռոմեացիների մոտ պաշտվել է որպես ջրի աստված և ձկնորսների ու նավավարների հովանավոր: Նրան նվիրված տոնակատարությունները, որոնք կոչվում էին **նեպտունալիաներ**, տեղի էին ունենում ամռանը, երաշտի ժամանակ: Զետագայում հույները որդեգրում են այն՝ անվանելով Պոսեյդոն և պաշտելով որպես ծովի աստված:

15. **Քրոնոս-** Բաֆին կղզու խորունկ մեկ ծովախորշը, որը գտնվում է հյուսիսում համանուն թերակղզու և հարավում Զալլեյի թերակղզու միջև:

16. *Օրքնեյ*- Բրիտանական կղզեխումբ Շոտլանդիայի հյուսիսում՝ բաղկացած 70 կղզիներից, որոնցից երեսունը բնակեցված են:

17. *Օսիան*- Մեր թվագրության 9 դարում ապրած շոտլանդիացի բանաստեղծ և ռազմիկ, որի դյուցազներգական բանաստեղծությունները բանավոր ճանապարհով հասել են մինչև 18-րդ դար: Անգլիացի բանաստեղծ Ջեյմս Մակֆերսոնը 1760թ. կազմեց և հրատարակեց ութ գրքերից բաղկացած սիրային և ռազմական բովանդակությամբ նրա ստեղծագործությունները, որոնք հորինված են կշռույթավոր արձակով և հարուստ են գեղեցիկ փոխաբերություններով: Օսիանի բանաստեղծությունները մեծ ընդունելության են արժանացել Եվրոպայում:

18. *Ֆինգալ*- Կղզի Շոտլանդիայում: Այստեղ է գտնվում Ֆինգալի հայտնի քարանձավը, որից ներս թափանցելով ծովի ջրերը՝ հորինում են հաճելի մի երաժշտություն: Այդ երաժշտությունից ներշնչված՝ Մենդելսոնը հորինել է իր սիմֆոնիկ մեկ պոեմը՝ հիմնվելով Օսիանի բանաստեղծությունների վրա:

### **ԲԱՐՈՑԱԿԱՆ ՆԵՐԳԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԶԵՐՄԵՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

1. *Սուրբ Հակոբոս Ավագ*- Հիսուսի 12 աշակերտներից մեկը՝ Ձեբեդեոսի որդին և Հովհաննես առաքյալի եղբայրը: Ըստ «Գործք Առաքելոցի» (գլ. ԺԲ, 2)՝ նա Հերովդես Ագրիպայայի հրամանով սպանվել է հավանաբար մեր թվագրության 44 թ.: Համաձայն մի ավանդության՝ նրա մահից հետո նրա աճյունը տարվել է Իսպանիա:

2. *Գալիցիա*- Ինքնավար պատմական մի շրջան Իսպանիայի հյուսիս արևմուտքում, որի մայրաքաղաքն է Սանտիագո դե Կոմպոստելլան: Այստեղ է գտնվում Սբ. Հակոբոս առաքյալի գերեզմանը նրա անունը կրող վեհաշուք տաճարում, որը դարձել է հռչակավոր սրբավայր արևմտյան քրիստոնյաների համար:

3. *Բարի սամարացի*- Ավետարանի առակներից մեկում հիշատակված այն բարեսիրտ անձը (Դուկ. Ժ, 29-37), որը կարեկցելով



խնամեց ավագակների կողմից հարձակման ենթարկված և կիսամեռ վիճակում ճանապարհին ընկած մի մարդու, որին չէին կամեցել օգնել նույն ճանապարհից անցնող մի քահանա և մի ղևտացի:

4. **Հորելյանական տարիներ**- Այսպես էին կոչվում 1300 թ. Հռոմի Բոնիֆացիոս պապի կողմից հաստատված հարյուրամյակները որպես սուրբ տարիներ: Այդ տարիներին զանազան երկրներից ուխտավորներ էին գալիս Հռոմ և ստանում մեղքերի թողություն: Հետագայում մի քանի անգամ կրճատվեց հորելյանական այդ տարիների միջև ընկած ժամանակաշրջանը:

5. **Սուրբ Թովմաս առաքյալ**- Հիսուսի 12 առաքյալներից մեկը: Ըստ ավանդության՝ նա Քրիստոսի Ավետարանը քարոզել է պարսիկներին, մեդացիներին, պարթևներին և գնացել մինչև Հնդկաստան՝ այնտեղ հիմնելով Մալաբարի եկեղեցին, որի հավատացյալներին դեռ այսօր էլ կոչում են «Սբ. Թովմասի քրիստոնյաներ»:  
Քրիստոսի հարության ավետման կապակցությամբ իր ցուցաբերած վերաբերմունքի պատճառով Թովմասը հետագայում խորհրդանշեց այն մարդու կերպարը, որը հավատում է միայն իր տեսածին:

6. **Լաբան**- Աստվածաշնչական կերպար (Ծննդոց, գլ. ԻԴ և ԻԷ-Լ), Ռեբեկայի եղբայրը և Լիայի ու Ռաքելի հայրը: Սա իր երկու դուստրերին կնության տվեց իր քրոջ որդուն՝ Հակոբին: Ռաքելն իր հորից բաժանվելուց առաջ գողացավ նրա կուռքերը:

### **ՀԻՍՈՒՍ ԳՐԻՍՏՈՍԻ ԵՎ ՆՐԱ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ**

1. **Կայուս Սուէտոնուս**- Մեր թվագրության առաջին և երկրորդ դարերում ապրած լատին պատմագիր: Եղել է Ադրիանոս կայսեր քարտուղարը: Հետագայում, շնորհագրկվելով նրանից, առանձնացել է և գրել «Տասներկու կեսարների կյանքը» հայտնի կենսագրական երկը, որը համարվում է Հռոմի նշանավոր կայսերի մասին տեղեկությունների անգնահատելի աղբյուր:

2. **Տակիտոս** (55-120)- Լատին նշանավոր պատմագիր, պաշտոնավարել է Հռոմի ասիական տիրույթներում որպես հյուպատոս: Նրա պատմական երկու կարևոր աշխատություններն են՝ «Տարե-

գրություններ» և «Պատմություններ»: Իր խիտ, հստակ և արտահայտիչ ոճով Տակիտոսը համարվում է լատինական արձակի մեծ վարպետ:

3. **Վեսպասիանոս**- Զոմենացի կայսր. իշխել է 69-79 թվականներին: Նրա իշխանությամբ Զոմոնում վերջ գտավ քաղաքացիական պատերազմը, որն սկիզբ էր առել Ներոնի մահից հետո: Լինելով խաղաղասեր և եռանդուն միապետ՝ նա խաղաղություն հաստատեց Զրեաստանում, Զոմոնում կարգավորեց վարչական գործը, վերահաստատեց տնտեսությունը, սկսեց Կոլիզեի շինարարությունը և Կապիտոլիոնի վերակառուցումը:

4. **Հովսեփոս Ֆլավիոս (37-100)**- Զրեա պատմագիր: Զոմոնի դեմ Զրեաստանի պատերազմի ժամանակ նա ստանձնել էր Գալիլիայի զորքի հրամանատարությունը: Համոզվելով, որ ազատագրական այդ պատերազմն անհույս է, նա անձնատուր եղավ և տարվեց Զոմոն՝ Վեսպասիանոսի մոտ, որի հովանավորությունը կարողացավ ձեռք բերել և ազատվեց ստրկությունից: 70 թվականին նա ակննատես եղավ Երուսաղեմի գրավմանը: Ապա տեղափոխվելով Զոմոն՝ հունարեն լեզվով գրեց «Զրեաների պատերազմը» իր հայտնի աշխատությունը:

5. **Էմմավոս**- Փոքրիկ գյուղ Երուսաղեմի հյուսիսում, որտեղ, ըստ Ղուկաս ավետարանչի, Հիսուս իր հարությունից հետո երևաց իր աշակերտներից Երկուսին, որոնք ճանաչեցին նրան, երբ նրա հետ միասին սեղան էին նստել:

6. **Դանիել**- Աստվածաշնչի մարգարեներից մեկը: Ըստ քրիստոնեական ավանդության, նա համարվում է չորրորդ մեծ մարգարեն: Շատ հրեաների հետ նա ևս քստրվել է Բաբելոն մեր թվագրությունից առաջ 6-րդ դարում: Աստվածաշնչում նրա անունով կա մի գիրք՝ բաղկացած 12 գլուխներից: Բնագիրը, որի հեղինակն անծանոթ է, գրված է մասամբ եբրայերեն և մասամբ արամերեն լեզվով:

7. **Որոգիմես**- Հույն Եկեղեցու նշանավոր աստվածաբան Հայրերից. ապրել է շուրջ 185 թ. մինչև 252/254 թվականները: Ալեքսանդրիայի աստվածաբանական դպրոցում ծավալած իր ուսմունքի պատճառով նա ենթարկվում է հալածանքի և ապաստանում Պա-

ղեստինի Կեսարիա քաղաքում, ուր վերահաստատում է իր դպրոցը: Հռոմի կայսր Դեցիուսի հալածանքներից զոհ դառնալով՝ մահանում է ծանր խոշտանգումներից հետո: Թողել է հարուստ գրական ժառանգություն՝ մեծ մասամբ Աստվածաշնչի գրքերի մեկնություններ, ճառեր, որոնք կարևոր տեղ են գրավում հայրաբանական գրականության մեջ:

8. *Տերտուղիանոս* (155-222)- Լատիներեն լեզվով գրող առաջին աստվածաբաններից մեկը: Կրոնական մեծ աշխատանք է ծավալել Հյուսիսային Աֆրիկայում: Լինելով հեթանոսությունից քրիստոնյա դարձած հեղինակ՝ իր երկերում («Ընդդեմ ազգերի», «Ձատագովական ճառեր», «Ընդդեմ Մարկիոնի») նա քննադատում է հեթանոսությունը և պաշտպանում քրիստոնեությունը:

9. *Ժակ Բ. Բոյոնե* (1627-1704)- Ֆրանսիացի հռչակավոր աստվածաբան, գրող, քարոզիչ, բարոյագետ, որ հովվական մեծ աշխատանք է կատարել իր հայրենիքում որպես կաթոլիկ Եկեղեցու եպիսկոպոս: Թողել է գրական մեծ ժառանգություն՝ մեծ մասամբ կրոնական բովանդակությամբ: 1671 թ. ընտրվել է ֆրանսիական ակադեմիայի անդամ: Բոյոնեի ամենահայտնի երկն է «Դամբանական ճառեր»-ը, որով նա ձեռք բերեց մեծ համբավ և հեղինակություն:

10. *Ցելսուս* (Աուլուս Կոռնելիոս)- Օգոստոս կայսեր ժամանակակից հռոմեացի բժիշկ և հնուտ մտավորական: Ծնվել է Վերոնայում Հուլիոս Կեսարի իշխանության տարիներին:

11. *Հուլիանոս* (331-363)- Հռոմեացի կայսր, որ Կոստանդիանոս կայսեր եղբորորդին էր և Կոստանդ Երկրորդի հաջորդը: Իշխել է միայն երկու տարի: Հուլիանոսը ծանոթ է «Ուրացող» մականունով, որովհետև թողնելով քրիստոնեական կրոնը՝ դարձավ հեթանոս և դրանով էլ նպաստեց հեթանոսության տարածմանը Հռոմում: Հուլիանոսն սպանվեց պարսիկների դեմ մղված մի ճակատամարտի ընթացքում:

12. *Վոլուգիանոս* (Կայուս Վիբիոս)- Հռոմեացի կայսր. իշխել է 251-253 թվականներին: Որդին էր Գալլուս կայսեր: Սրանք՝ հայր և որդի, սպանվեցին իրենց զինվորների կողմից:

13. **Պորփյուր** (234-305)- Ասորական ծագումով հույն փիլիսոփա: Սովորել է Աթենքում, ապա տեղափոխվել Յոն: Գրել է «Պյութագորասի կյանքը», Արիստոտելի «Կատեգորիաների» ներածությունը, ինչպես նաև Պլատոնի և Արիստոտելի երկերի մասին մեկնություններ: Պահպանվել են որոշ հատվածներ նրա «Յոգու վերադարձը առ Աստված» աշխատությունից:

14. **Տիրերիոս**- Յոնեացի կայսր, որ իշխել է 1437 թվականներին: Որդեգիրն էր Օգոստոս կայսեր, որի մահից հետո ժառանգեց նրա գահը: Տիրերիոսի գահակալության ժամանակաշրջանը, հատկապես Սեֆանի սպանությունից հետո (31 թ.), որը տեմչում էր նրա գահին, Յոնի ժերակույտի կողմից ներկայացվել է որպես տեռորիզմի ժամանակաշրջան:

15. **Համպրիդիոս**- Յոնեացի պատմաբան:

16. **Ադրիանոս**- Յոնեացի կայսր. իշխել է 117-138 թթ.: Հաջորդեց Տրայանոս կայսեր, որը որդեգրել էր նրան: Ադրիանոսը եղել է զարգացած, զրագետ տիրակալ և մեծ ճանապարհորդ: Բարեզարդել է Յոնի մերձակայքում գտնվող այն ընդարձակ պալատը, որը նրա անունն է կրում: Յոնում նրա դամբարանը այժմ դարձել է սուրբ Անջելոսի դղյակ:

17. **Ալեքսանդր Սելիդիոս**- Յոնեացի կայսր, որ 222 թ. տասներեք տարեկան հասակում գահ բարձրացավ և իշխեց մինչև 235 թ.: Լինելով զարգացած, բարեհամբույր, բայց թուլական մի մարդ՝ նա կայսրության պատասխանատվությունը թողեց իր տատին և երկու խորհրդականներին, որոնք փորձեցին հաստատել կայուն մի վարչակարգ՝ հենվելով Յոնի ժերակույտի վրա: Արևելքում նա մղեց դժվարին մի ճակատամարտ պարսիկների դեմ, որոնց ի վերջո կարողացավ ետ մղել: Բայց, ավելի ուշ, Յոնոսում նա ի վիճակի չեղավ կռվելու գերմանացիների դեմ և սպանվեց իր մոր հետ:

18. **Օրփենոս**- Յին Յունաստանի առասպելներում հիշատակված բանաստեղծ և երաժիշտ: Ըստ ավանդության՝ նա շանթահարվել է Ջևսի կողմից: Նրա անվան հետ է կապված Յունաստանում 65-րդ դարերում (մ. թ. ա.) առաջացած «Օրփենոսյան բանաստեղծություններ» անունով ծանոթ կրոնական մի շարժում, որ հատկանշվում է

ընկերային կարգուսարքի քննադատությամբ և միստիկական ու ճգնավորական կյանքի որոնումով՝ ի խնդիր հոգու փրկության:

19. **Պլինիոս (Կրտսեր)** (61-114)- Լատին գրող, որ եղել է միա-  
ժամանակ հայտնի իրավաբան և կոնսուլ: Հեղինակել է «Ներքող  
Տրայանոսի» և «Նամականի» վերնագրերով երկու գործեր, որոնք  
արժեքավոր փաստաթղթեր են իր ժամանակի հասարակության  
մասին:

### ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ԵՎ ՆՐԱ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆԸ

1. **Զենդ-Ավեստա**- Ձենդական լեզվով գրված մագդեգական կրո-  
նի սրբազան գրքերի ժողովածու, որի բնագիրը ոչնչացվել է Մեծն  
Ալեքսանդրի արշավանքի ժամանակ և հետագայում վերակազմվել  
բանավոր ավանդության հիման վրա: Ժողովածուի հնագույն մասը  
բաղկացած է *գաթա*-ներից (երգ, տաղ), որոնք ավանդաբար վե-  
րագրվում են Ջարաթուստրային, և որտեղ նա երկխոսության մեջ է  
մտնում Աստծու՝ Ահուրա Մազտայի հետ և իր աղոթքներն է առա-  
քում նրան:

2. **Վեդա**- Սանսկրիտերեն նշանակում է «Իմացություն»: Վեդա-  
ները չորս երկար սրբազան գրքերի մի ամբողջություն են կազմում  
և համարվում են բրահմանական և հինդու կրոնի հիմնական բնագ-  
րերը: Այս գրքերը, որոնք կազմված են մեր թվագրությունից առաջ  
1800-1200 թվականներին, բաղկացած են աղոթքներից, օրհներ-  
գություններից, ծիսական բանաձևերից, որոնք վերաբերում են զո-  
հագործությանը և կրակի պաշտամունքին:

3. **Էդդա**- Այս անունով հայտնի են սկանդինավյան հին ժողո-  
վուրդների դիցաբանական և առասպելական ավանդությունների  
վերաբերող երկու ժողովածուներ՝ «Չափածո Էդդա», որը 8-ից 13-  
րդ դարերում ստեղծված ժողովրդական տաղերի մի հավաքածու է,  
և «Արձակ Էդդա», որը վերագրվում է 13-րդ դարում ապրած Սնորրի  
Ստուրլուսոն անունով մի հեղինակի:

4. **Կոնֆուկիոս**- Չինացի մեծ գրող և իմաստասեր, ապրել է մեր  
թվագրությունից առաջ 551-475 թվականներին: Գրել է բարոյագի-

տական և քաղաքական բովանդակությամբ գործեր: Հետագայում նրա ուսմունքը տարածեցին նրա աշակերտներն ու հետևորդները:

5. *Հոռոթ*- Հին Կտակարանում նովաբացի երիտասարդ այրի մի կին, որ ամուսնացավ Բուզ անունով հարուստ մի մարդու հետ և որից ունեցավ Ովբեդ անունով մի որդի, որ Դավթի նախնին էր:

6. *Քամ*- «Ծննդոց» գրքում Նոյ նահապետի որդիներից էր, որից սերվեցին հին եգիպտացիները, եթովպացիները, սոմալիցիները և աֆրիկյան մյուս ժողովուրդները:

7. *Ժակ Բ Բոսյուն* (1627-1704)- Ֆրանսիացի հռչակավոր աստվածաբան, գրող, քարոզիչ և բարոյագետ, որ հովվական մեծ աշխատանք է ծավալել իր հայրենիքում որպես կաթոլիկ Եկեղեցու եպիսկոպոս: Թողել է գրական մեծ ժառանգություն՝ մեծ մասամբ կրոնական բովանդակությամբ: Նրա ամենահայտնի երկն է «Դամբանական ճառեր»-ը, որով նա ձեռք բերեց մեծ համբավ և հեղինակություն: 1671 թ. ընտրվել է Ֆրանսիական ակադեմիայի անդամ:

8. *Եսթեր*- Հին Կտակարանի համանուն գրքերից մեկը: Եսթերը հրեա գեղանի մի աղջիկ էր, որին աքսորել էին Պարսկաստան: Այստեղ Պարսիկ Արտաշես թագավորը, տեսնելով նրա գեղեցկությունը, ամուսնանում է նրա հետ՝ առանց իմանալու, որ նա հրեա է: Եսթերը, դառնալով Պարսկաստանի թագուհի և վտանգելով իր կյանքը՝ իր հայրենակիցներին փրկում է մի կոտորածից, որ տեղի էր ունենալու իր ամուսնու հրամանով: Ներշնչվելով աստվածաշնչական այս պատմությունից՝ 17-րդ դարի ֆրանսիացի դասական գրող Ռասինը հորինել է իր համանուն ողբերգությունը:

9. *Աթալիա*- Իսրայելի թագավոր Աքաբի դուստրը: Ամուսնանում է Հուդայի թագավոր Հորամի հետ և դառնում թագուհի: Պահելու համար իր իշխանությունը, նա կոտորել է տալիս բոլոր իշխաններին: Կոտորածից փրկվում է միայն իր թոռը՝ Հովասը: Աթալիան վերջում գահազուրկ է լինում և դավադրությամբ սպանվում: Գահին տիրանում է Հովասը: Ռասինը աստվածաշնչական այս պատմությունը ևս վերածել է թատերական ստեղծագործության:

10. *Մալեթ* (1555-1628)- Ֆրանսիացի հայտնի արքունական բանաստեղծ, որ ունեցավ իր հատուկ դպրոցը: Նրա բանաստեղ-

ծությունները հետմահու հավաքվեցին և հրատարակվեցին առանձին մի հատորով:

11. **Ժան Ֆրանսուա դը Լահարպ** (1739-1803)- Ֆրանսիացի բանաստեղծ, թատերագիր, քննադատ: Հեղինակ է մի շարք թատերական գործերի, որոնցից են՝ «Վարվիկ», «Կորիոլան» ողբերգությունները: Հայտնի է նրա «Դասընթաց հին և ժամանակակից գրականության» երկը, որ իր ժամանակին վայելել է համաշխարհային հռչակ: 1776 թ. Լահարպն ընտրվել է Ֆրանսիական ակադեմիայի անդամ:

12. **Սուրբ Հերոնիմոս** (347-420)- Լատինական Եկեղեցու ակաճավոր հայրերից մեկը, որ իր կյանքի մեծ մասն անցկացրել է Արևելքում և եռանդուն մասնակցություն ունեցել իր ժամանակի աստվածաբանական վեճերին: Սիրել է վանական կյանքը և նվիրվել Աստվածաշնչի ուսումնասիրությանը: Նրա գրչին է պատկանում Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունը երբայական բնագրից, որի հիման վրա հետագայում կազմվեց Վուլգատան՝ կաթոլիկ Եկեղեցու կողմից ընդունված Աստվածաշնչի պաշտոնական թարգմանությունը:

13. **Հերոդոտ** (484-420)- Հույն համբավավոր պատմաբան, որ երկար ճանապարհորդություններ է կատարել Ասիայում, Աֆրիկայում և Եվրոպայում: Եղել է աթենացի Պերիկլեսի և Սոֆոկլեսի բարեկամը: Նրա պատմական աշխատությունները հանդիսանում են մեդական պատերազմների ուսումնասիրության գլխավոր աղբյուրը:

**Զուգահեռ Աստվածաշնչի և Հոմերոսի միջև.  
համեմատության եզրեր**

14. **Նեստոր**- Պիլոսի առասպելական թագավորը, որ «Իլիականում» և «Ոդիսականում» հանդես է գալիս որպես իմաստուն ծերունու կերպար: Մասնակցել է Տրոյան Պատերազմին:

15. **Պիլոս** (հունարենում՝ Պուլոս)- Հունական հին քաղաք Պելոպոնեսում: Եղել է միկեյան քաղաքակրթության ամենակարևոր

կենտրոններից մեկը, ուր իշխել է Նեստորը Տրոյան պատերազմների ժամանակաշրջանում:

16. *Խամայի*- Աստվածաշնչում Աբրահամի և նրա եգիպտացի սպասուհու՝ Հագարի որդին: «Ծննդոց» գրքում հիշատակված մի ավանդության համաձայն, նա եղել է անապատաբնակ արաբների նախահայրը, որոնք նրա անունով կոչվել են իսմայելացիներ:

17. *Լիկուրգոս* (390-324)- Աթենացի ճարտասան և քաղաքական գործիչ, որը դաշնակցեց Դեմոստենեսի հետ ընդդեմ Փիլիպպոս Բ Մակեդոնացու:

18. *Պինդարոս* (518-438)- Հույն քնարերգակ բանաստեղծ՝ սերված դորիական ազնվական ընտանիքից: Անադարտ պահպանված նրա չորս գրքերը ներբողներ են՝ նվիրված օլիմպիական խաղերի հաղթողներին:

19. *Պելասգ*- Հույն գրողները այս անունով էին կոչում Եգեական կղզիների նախնական բնակիչներին նախքան հելլենների գալուստը: Պելասգները համարվում էին բնիկ և բարբարոս մի ժողովուրդ կամ թափառաշրջիկ ցեղեր, որոնք հունարեն չէին խոսում և տարածված էին Միջերկրական ծովի ափերի մեծ մասում, մանավանդ Հելլադայում, Իլլիրիայում և այլն:

20. *Քիոս*- Հունական կղզի Եգեական ծովում: Ըստ ավանդության՝ Քիոսը եղել է Հոմերոսի ծննդավայրը:

21. *Իլիոն* (կամ Տրոյա)- Փոքր Ասիայի Հյուսիս Արևմուտքում գտնվող հին քաղաք Եգեական ծովի ափի մոտ:

22. *Պարիս*- Տրոյայի թագավոր Պրիամոսի որդին: «Իլիականում» նա էրիսի նետած ոսկե խնձորը տալիս է երեք աստվածուհիներից ամենագեղեցկին՝ Աֆրոդիտեին, որը նրան խոստացել էր Սպարտայի թագավոր Մենելավոսի կնոջ՝ Հելենի սերը:

23. *Տրոյա*- Այլ անվամբ՝ Իլիոն, ուր հույների և տրոյացիների միջև տեղի ունեցավ Տրոյան հայտնի պատերազմը, որի ընթացքում Պարիսն իր նետով մահացու հարված հասցրեց Աքիլլեսին՝ խոցելով նրա գարշապարը:



24. **Կերես-** Հնձի աստվածուհի, որը պաշտվել է հին Հռոմում մեր թվագրությունից առաջ 5-րդ դարում՝ նույնացվելով հունական Դեմետր աստվածուհու հետ:

25. **Յուպիտեր-** Հռոմեական աստված՝ Սատուռնի և Ռեայի որդին, որը միաժամանակ երկնքի հայրն էր ու տերը: Պաշտվել է Կապիտոլի մեծ տաճարում:

26. **Ջորիաներ-** Վրեժխնդրության դժոխաբնակ աստվածուհիներ՝ ըստ հռոմեական կրոնի:

27. **Դելոս-** Եգեական ծովի ամենափոքր կղզին, որտեղ գտնվում էր Ապոլոնի մեծ սրբավայրը: Դելոսը հռչակված է եղել իր շքեղ պալատներով և սքանչելի ծառուղիներով: Ավերվել է 88 թ. (մ. թ.) Միհրդատի կողմից:

### ՀԱՅՐԵՆԻՔԻ ԲՆԱԶԴԸ

1. **Հաբրադոր-** Անցյալում այս անունով էր կոչվում Կանադայի թերակղզին՝ Ատլանտյան օվկիանոսի, Հուդսոնի ծովախորշի և Սեն Լորանի միջև, որտեղով անցնում էին սառը հոսանքներ: Այսօր նույն անունով ծանոթ է այդ թերակղզու արևելյան մասը միայն:

2. **Ավենտին-** Հռոմի յոթ բլուրներից մեկը, որտեղ 494 թ. (մ. թ.) ամրացավ պատրիկների դեմ ապստամբած հռոմեացի ռամիկ ժողովուրդը իր իրավունքներին տիրանալու համար:

3. **Հոնիա-** Փոքր Ասիայի ծովեզերյա շրջանի կենտրոնական մասը, որտեղ 12-11-րդ դարերում (մ. թ.) բնակվում էին հույները, որոնք Եվրոպայից այնտեղ էին գաղթել դորիական արշավանքների հետևանքով:

4. **Մանտովա-** Իտալիայի հին քաղաքներից մեկը Լոմբարդիայի շրջանում, որտեղ ծնվել ու մեծացել էր իտալացի հռչակավոր բանաստեղծ Վիրգիլիոսը, և որին անվանում էին «Մանտովայի կարապ»:

5. **Արգոս-** Հունաստանի հնագույն քաղաքներից մեկը Պելոպոնեսում, որի անվան հետ են կապված դիցաբանական առասպելներ:

րի երկար շարքեր: Արգոսը մեծ ազդեցություն ձեռք բերեց Հռոմեական, ապա բյուզանդական կայսրության շրջանում:

6. **Անդրոմակե-** Տրոյայի առասպելական իշխանուհին՝ Հելտորի կինը Հոմերոսի «Իլիականում»:

7. **Սիմոիս-** Աննշան մի գետակ Տրոյայում:

8. **Լուիզիանա-** Հյուսիսային Ամերիկայի միացյալ նահանգներից մեկը Մեքսիկայի ծովածոցում:

9. **Մանիտու-** Հյուսիսային Ամերիկայի հնդկացիների որոշ ցեղախմբերի կողմից պաշտված ոգի, որը կարող էր մարմնանալ զանազան օտար անձերի և խորհրդավոր առարկաների մեջ:

10. **Ֆետիշ-** Որևէ առարկայի կամ կենդանու կերպարանք ունեցող կուռք, որին Աֆրիկայի սևամորթները վերագրում էին մոգական օգտակար հատկություններ:

11. **Բռնապետական շրջան-** Ֆրանսիական մեծ հեղափոխությունն ունեցել է բռնապետական երկու շրջան. առաջինը 1792 թ. օգոստոսի 10-ից մինչև սեպտեմբերի 20-ը տևած շրջանն էր, երբ Լուդովիկոս 16-րդը ձերբակալվեց, և տեղի ունեցան սեպտեմբերյան կոտորածները, իսկ երկրորդը՝ 1793 թ. սեպտեմբերից մինչև 1794 թ. երկարող ժամանակաշրջանը, երբ Ժիրոնդեցիների իշխանությունը տապալվեց, և Ֆրանսիայի պաշտպանությունն ապահովելու համար արտաքին և ներքին թշնամիներից՝ շուրջ կես միլիոն մարդ բանտարկվեց, որոնցից 40 000-ը գլխատվեցին:

**ԻՆՉ ԿԼԻՆԵՐ ԱՅՍՕՐ ՄԱՐԳԿԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ, ԵԹԵ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆ ԵՎԱԾ ՉԼԻՆԵՐ ԵՐԿՐԻ ՎՐԱ**

1. **Օգոստոս** (մ. թ. ա. 63-14 մ. թ.)- Հռոմեացի կայսր: Մոր կողմից փոքր զարմիկն էր Հուլիոս Կեսարի, որի մահից հետո պահանջեց Կեսարի ժառանգությունը և հակառակվեց Անտոնինոսին, որը տիրացել էր Հռոմին: 43 թ. Անտոնինոսի և Լեպիտոսի դեմ տարած հաղթանակից հետո դարձավ կայսրության միահեծան տերը՝ ծերակույտը զրկելով իր քաղաքական իշխանության մեծ մասից: Օգոստոս

կայսրը ռազմական նոր նվաճումներից ավելի նախընտրեց իր կայսրության սահմանների ապահովությունը: Նրա իշխանության շրջանը համարվում է Հռոմի պատմության ամենափայլուն ժամանակաշրջաններից մեկը և կոչվում է *Օգոստոսի դար*:

2. *Տիբերիոս* (մ. թ. ա. 42-37 մ. թ.)- Հռոմեացի կայսր՝ Օգոստոսի որդեգիրը և նրա հաջորդը: Նա կայսրության սահմաններն ընդարձակեց և հասցրեց մինչև Հռենոս: 27թ., հիվանդանալով, քաշվեց Կապրի կղզում՝ իր նախարարապետ Սեթանին թողնելով կայսրության գործերի կառավարումը: Տիբերիոսի իշխանության շրջանը, մանավանդ Սեթանի սպանությունից հետո, որը տեմչում էր տիրանալ գահին, ներկայացված է որպես ահաբեկչության ժամանակաշրջան:

3. *Ներոն* (37-67)- Հռոմեացի կայսր՝ Կլաուդիոսի որդեգիրը, որը հաջորդեց նրան՝ ամուսնանալով նրա աղջկա՝ Օկտավիայի հետ: Ներոնի իշխանության սկզբնական տարիները եղան խոստումնալից, սակայն հետագայում նա իր մոր խնամակալությունից ազատվելու համար սպանեց նրան: Մինչև այդ թունավորել էր տվել Կլաուդիոսի որդուն: 62 թ. իր խորհրդականներին ոչնչացնելուց հետո Ներոնն ընկած ծայրահեղ բռնակալության մեջ. մահվան դատապարտեց Հռոմի հարուստ քաղաքացիներին, որպեսզի նրանց ունեցած հարստությամբ լցներ իր թույլ տված խենթությունների պատճառով դատարկված գանձարանը: Նույն թվականին հալածեց և զանգվածաբար սպանել տվեց քրիստոնյաներին Հռոմը հրդեհելու մեղադրանքով: Այս ահաբեկչությունները պատճառ դարձան բազմաթիվ դավադրությունների: Ի վերջո ոտքի կանգնեց բանակը, և Ներոնը, ծերակույտի կողմից հռչակվելով ժողովրդի թշնամի, ինքնասպանությամբ վերջ տվեց իր կյանքին:

4. *Տիտոս* (39-81)- Հռոմեացի կայսր՝ Վեսպասիանոսի որդին: Որպես տիրակալ նա ուզեց դառնալ կայսրության բարերարը և չստորագրեց ոչ մի մահապատիժ իր գահակալության ամբողջ շրջանում: 70 թ. գրավեց Երուսաղեմը: Նրա իշխանության տարիները նշանավորվեցին մեծ կառուցումներով, որոնցից են՝ Կոլիզեոնը, իր անունը կրող Հադթակամարը և այլն: Նրա օրով տեղի ունեցավ Վեզուվի ժայթքումը, որը կործանեց Պոմպեյը և Հերկուլանումը:

5. *Անտոնիոս Մարկոս* (մ. թ. ա. 83-30)- Հռոմեացի գեներալ՝ Հուլիոս Կեսարի տեղակալը Գալիայում: Այս վերջինի սպանությունից հետո հակամարտություն սկսվեց նրա և Օկտավիանոսի՝ ապագա Օգոստոս կայսրի միջև: Երկուսն էլ հավակնում էին դառնալ Կեսարի հաջորդը: Սակայն հասկանալով, որ հակամարտությունն անօգուտ է, Անտոնիոսը համաձայնվեց նրա և Լեպիտոսի հետ, և այսպիսով կազմվեց երկրորդ եռապետությունը: Կայսրության արևելյան մասի ղեկավարությունը տրվեց Անտոնիոսին: Անունանալով Եգիպտոսի թագուհի Կլեոպատրայի հետ՝ Անտոնիոսն իր մայրաքաղաքը հաստատեց Ալեքսանդրիայում: Նրա վարած քաղաքակառուցումն ու փառասիրությունները ի վերջո մտահոգեցին Հռոմը, և Օկտավիանոսը պատերազմ հայտարարեց նրա դեմ: 31 թ. պարտվելով՝ նա ինքնասպան եղավ:

6. *Մարկոս Ավրելիոս* (121-180)- Հռոմեացի կայսր: Նրա իշխանության շրջանն անցավ պատերազմների մեջ. հաղթական արշավանքներ պարթևների, ապա գերմանացիների դեմ: Մարկոս Ավրելիոսը փիլիսոփա կայսր էր, ուսումնասիրել էր ստոյիկյան փիլիսոփայությունը: Սակայն, հակառակ իր մարդասիրությանը, նա ոչինչ չարեց բարեւավելու համար քրիստոնյաների վիճակը իր կայսրությունում: Իր կյանքի վերջին տարիներին նա հունարեն լեզվով գրեց իր հայտնի «Մտածումները», որոնք հանդիսանում են վերջին մեծ վկայությունը հնադարյան ստոյիկոսության մասին:

7. *Կալոս Մարիոս* (մ. թ. ա. 157-86)- Հռոմեացի գեներալ և քաղաքական գործիչ: 107 թ. նա ստանձնում է հռոմեական կայսրության աֆրիկյան բանակի հրամանատարությունը: Նրա տեղակալն էր Սուլլան՝ հայտնի գեներալ և պետական գործիչ, որին նա հետագայում ապօրինաբար պաշտոնազրկեց՝ պատճառ դառնալով, որ նրանց միջև առաջանա թշնամանք:

8. *Կատիլինա* (մ. թ. ա. 108-62)- Հռոմեացի հայտնի քաղաքական գործիչ: Նրա դավադրությունը հռոմեական ժերակույտի դեմ բացահայտվեց Ցիցերոնի կողմից, և նա ջախջախվեց Պիստոյայի ճակատամարտում:

9. *Յուզուրթա* (մ. թ. ա. 160-104)- Նումիդիայի թագավորը, որը կռվեց Յոնի դեմ և 107 թ. պարտվելով Կայոս Մարիոսի կողմից՝ հանձնվեց Սուլլային: Մահացավ բանտում:

10. *Սենեկա* (մ. թ. ա. 265 մ. թ.)- Լատին փիլիսոփա՝ Ներոնի դաստիարակը, որին մեղադրեցին դավադրության մեջ և ստիպեցին, որ ինքնասպանություն կատարի՝ բաց անելով իր երակը: Սենեկան ջատագովել է ստոյիկյան ճգնավորությունը՝ քարոզելով հրաժարում երկրային բարիքներից: Նրանից մնացել են բարոյագիտական մի շարք աշխատություններ, գիտական մի աշխատասիրություն «Բնագիտական հարցեր» վերնագրով, ինչպես նաև մի քանի ողբերգություններ հունական դիցաբանությունից վերցված:

11. *Քուրնուս*- Յոնի դատական ատյանի նախագահ: Սենեկայի հետ նա ստանձնեց Ներոնի դաստիարակությունը: Իր հետևողական խստապահանջության շնորհիվ նա կարողացավ յոթ տարի խաղաղությամբ կառավարել Յոնը և զսպել պատանի Ներոնի վատ արարքները:

12. *Գալբա* (5-69)- Յոնի կայսրության իսպանական մասի կառավարիչը: 68 թ. նա ծերակույտի կողմից ճանաչվեց որպես Յոնի կայսր, և դա պատճառ դարձավ Ներոնի ինքնասպանությանը: Գալբան իր խստության և ժլատության պատճառով հետագայում իրենից հեռացրեց Յոնի վարձու լեգեոնականներին՝ հրաժարվելով դրան բաշխել նրանց և սպանվեց կայսերական գվարդիայի կողմից:

13. *Վիտելիոս* (15-69)- Յոնեացի կայսր: 68 թ. Գալբայի կողմից նա ստացավ Յոնոսյան կայսրության գերմանական մասի բանակի հրամանատարությունը: Գալբայի մահից հետո, վայելելով մեծ ժողովրդականություն իր զինվորների շրջանում, նրանց կողմից հռչակվեց կայսր: Կայսրության Արևելքի բանակը, իր հերթին, կայսր էր հռչակում իր առաջնորդ Վեսպասիանոսին: Կրեմնում Վիտելիոսը 69 թ. պատերազմելով Վեսպասիանոսի դեմ՝ պարտվեց և Ֆորոմում խեղդամահ արվեց ամբոխի կողմից:

14. *Դոմիտիանոս* (51-96)- Յոնեացի կայսր՝ Տիտոսի եղբայրը և նրա հաջորդը: Նա վերականգնեց 64 և 80 թվականներին տեղի ու-

նեցած հրդեհների պատճառով ավերված Հռոմը և գեղեցկացրեց քաղաքը բազմաթիվ նոր կառույցներով (Օդեոն, մրցադաշտ և այլն): Դառնալով ծերակույտի տեղը՝ Դոմիտիանոսը հաստատեց բացարձակատիրական վարչակարգ, հալածեց ազնվականներին, մտավորականներին, քրիստոնյաներին, պատմագիրներին, որի հետևանքով դավադրություն կազմվեց նրա դեմ, որին մասնակցեց նաև նրա կինը: Նա սպանվեց ազատագրված իր ստրուկներից մեկի կողմից:

15. *Կոմմոդոս* (161-192)- Հռոմեացի կայսր՝ Մարկոս Ավրելիոսի որդին, որը ծուլ, կոպիտ և արտակարգ ուժի տեր մի մարդ էր: Նրա զեխ կյանքը և վայրագությունները ի վերջո պատճառ դարձան, որ նա սպանվի:

16. *Սևերոս*- Հռոմեացի կայսր, իշխել է 193-211թվականներին:

17. *Կատոն* (մ. թ. ա. 93-46)- Հռոմեացի պետական քաղաքական գործիչ, պաշտպան Հռոմի հանրապետական իշխանության և կատաղի ստոյիկյան: Լինելով ծերակուտական՝ նա հակադրվեց Կրասոսին, Կեսարին և Պոմպեոսին, բայց հետո վերջնականապես դաշնակցեց Պոմպեոսի հետ: Վերջինիս պարտությունից և մահից հետո աֆրիկյան պատերազմում նա ինքնասպանությամբ վերջ տվեց իր կյանքին:

18. *Ջլորա* - Բուսականության աստվածուհի, որը նախագահում էր ծաղկող ամեն ինչի: Պաշտվել է Հռոմում, ապա՝ Հունաստանում:

19. *Հորտենսիոս* (մ. թ. ա. 114-50)- Հռոմեացի հռետոր՝ մեծարված Հռոմի պահպանողական կուսակցության կողմից: Սկզբում նա հակադրվեց Ցիցերոնին, սակայն հետո ջատագովեց նրան և գործակցեց նրա հետ:

20. *Ցիցերոն* (մ. թ. ա. 106-43)- Հռոմեացի քաղաքական գործիչ և մեծ հռետոր: 63 թ. լինելով հյուպատոս՝ նա բացահայտում է Կատալինայի դավադրությունը և սպանել է տալիս նրա դավակիցներին: Հարում է նախ Պոմպեոսի կուսակցությանը, բայց վերջինս պատմությունից հետո միանում է Կեսարին: Կեսարի մահից հետո ուժգնորեն հակառակվում է Անտոնիոսին՝ պաշտպանելով Օկտավիանոս կայսրին: Կյանքի վերջում հալածվելով երկրորդ եռապե-

տության կողմից՝ սպանվում է: Ցիցերոնը, եթե եղավ միջակ քաղաքական գործիչ, սակայն, որպես հռետոր, նա լատինական պերճախոսությունը հասցրեց իր գագաթնակետին: Նրա ատենախոսություններն ու ճառերը օրինակ ծառայեցին լատինական ամբողջ հռետորական արվեստին: Նրա փիլիսոփայական աշխատություններով մուտք գործեցին լատինական գրականության մեջ հունական բնագանցությունն ու բարոյագիտությունը: Պահպանված է նրա նամակների մեծ մասը:

21. *Կարակալլա* (188-217)- Հռոմեացի կայսր Սևերոսի որդին: Նա պարտության մատնեց գերմանացիներին և պարթևներին: Սպանեց իր եղբորը՝ Գետային և ազատվեց իր հակառակորդներից, այդ թվում՝ Պապինիանոսից: Կարակալլան փորձեց միավորել կայսրությունը՝ հռոմեական քաղաքացիություն տալով կայսրության բոլոր ազատ հպատակներին: Իր անունով կառուցեց բազմաթիվ հուշարձաններ և ջրաբուժիչ հսկայական կայաններ: Հռոմեացի շատ կայսրերի նման նրա կյանքը ևս ընդհատվեց սպանությամբ:

22. *Հելիոգաբալ* (204-222)- Հռոմեացի կայսր՝ Կարակալլայի զարմիկը, Բաադ աստծու քուրմը: Կայսր հռչակվեց տասնչորս տարեկան հասակում Հռոմի սիրիական բանակի կողմից: Արյունալի սպանություններից հետո նա նվիրվեց արևի կրոնի կազմակերպմանն ու պաշտամունքին: Նրա իշխանությունը եղավ անկարգությունների և բռնությունների մի շարան, իշխանություն, որը փաստորեն վարում էին նրա մայրն ու նրա տատը: Հելիոգաբալն սպանվեց իր մոր հետ, և նրանց մարմինները նետեցին գետը:

23. *Ագրիպպա* (մ. թ. ա. 63-12)- Հռոմեացի զորավար և քաղաքական գործիչ՝ Օգոստոս կայսրի լավագույն խորհրդականը, որը կազմակերպեց իր համար պետության խնամակալի մի տեսակ արժանավարություն: Նա բաց արեց Հռոմում կայսերական ժամանակաշրջանի վիթխարի հուշարձանը՝ Պանթեոնը, և կառուցեց թատրոններ, կամարակապ դահլիճներ, ջրմուղներ, բաղնիքներ և այլն:

24. *Կալիգուլա* (12-41)- Հռոմեացի կայսր Տիբերիոսի հաջորդը: Լինելով մտավոր անհավասարակշռությամբ տառապող արյունար-

բու անձ, իշխեց որպես բռնապետ՝ գործադրելով բազմաթիվ սպանություններ և ոճիրներ: Սպանվեց երիտասարդ հասակում:

25. *Սեժան*- Յոնեացի քաղաքական գործիչ, կայսերական ատյանի նախագահ և Տիբերիոս կայսրի խորհրդականն ու սիրելի անձը: Նա խորհուրդ տվեց կայսրին հիվանդության պատճառով քաշվել Կապրի կղզում՝ ինքը մնալով կայսրության փաստական տերը: Որպեսզի ապահովի իր վերելքը դեպի իշխանություն, նա օգտագործեց Տիբերիոսի դեմ կազմակերպված դավադրությունները. թունավորել տվեց նրա հարազատ որդուն, հեռացրեց Ագրիպպինին և բանտարկեց նրա երկու որդիներին: Տեղեկանալով այս բոլորի մասին՝ Տիբերիոսը վերադարձավ Յոնե և պատժելու համար իր խորհրդականին՝ նրան հանձնեց ծերակույտի դատին: Սեժանը մահվան դատապարտվեց և սպանվեց իր ամբողջ ընտանիքով:

26. *Կլաուդիոս* (մ. թ. ա. 10-54 մ. թ.)- Յոնեացի կայսր: Ջարգացրեց կայսրության կենտրոնական վարչությունը և ուժեղացրեց կայսերական իշխանությունները ի հեճուկս ծերակույտի: Նվաճեց Բրիտանիան (այժմյան Մեծ Բրիտանիան) և Թրակիան: Լինելով զարգացած, բայց թույլ անձնավորություն՝ նա ենթարկվեց իր կնոջ՝ Ագրիպպինայի իշխանությանը և թունավորվեց նրա կողմից:

27. *Տակիտոս* (55-120)- Յոնեացի պատմագիր, որը վարչական գործունեության ասպարեզ մտավ Վեսպասիանոսի օրոք: Նշանակվեց Յոնեական կայսրության ասիական տիրույթների հյուպատոս: Իր պերճախոսությամբ արդեն տիրացել էր մեծ համբավի նախքան պատմագրության նվիրվելը: Նրա պատմական մեծ գործերն են՝ «Տարեգրություններ» և «Պատմություններ»: Տակիտոսն ունի արտահայտիչ, սեղմ և հստակ ոճ, որով նա համարվում է լատինական արձակի մեծ վարպետ:

28. *Ռոմուլոս*- Յոնեի առասպելական հիմնադիրն ու առաջին թագավորը, որ Մարսի և նրա կնոջ՝ Ռեայի որդի էնեասի սերնդից էր, Նրա հորեղբայրը Ռոմուլոսին և նրա երկվորյակ եղբայր Ռեմոսին դրեց մի կողմի մեջ և թողեց Տիպեր գետի վրա: Մի էգ գայլ երկու եղբայրներին դուրս հանեց գետից և իր կաթով կերակրեց նրանց: Որոշ ժամանակ հելուզակությամբ զբաղվելուց հետո



նրանք որոշեցին հիմնել մի քաղաք՝ ապագա Հռոմը: Ռոմուլոսը, որը մի կռվի ժամանակ սպանել էր իր եղբորը՝ այդ քաղաքում բնակեցրեց բազմաթիվ փախստականների: Նա իշխեց 33 տարի և կորստյան մատնվեց մի փոթորկի ժամանակ: Հին հռոմեացիները պաշտում էին նրան որպես աստված:

29. *Տասներկու աղյուսակների օրենք* Հռոմեական օրենքների ցուցակ՝ գրված տասներկու տախտակների վրա:

30. *Յուպիտեր* Հռոմեական աստված՝ Սատուրնի և Ռեայի որդին, որը միաժամանակ երկնքի հայրն էր ու տերը: Դառնալով գերագույն աստված՝ նա նույնացվել է հունական Ջևս աստծու հետ: Յունոնի և Միներվայի հետ պաշտվել է Կապիտոլի մեծ տաճարում:

31. *Ատտիլա*- Հռոմերի թագավորը: Իշխել է 434-453 թվականներին: Նա նախ ավերեց Արևելքի Հռոմեական կայսրությունը, ապա ներխուժեց Գալիա, սակայն 451 թ. պարտվեց Կատալոնական դաշտերում հռոմեացի էտիուս զորավարի կողմից: 452 թ. նա կողպուտի մատնեց Իտալիան, բայց խնայեց Հռոմին Լևոն Ա պապի խնդրանքով: Նրա մահից հետո փուլ եկավ նրա կայսրությունը:

32. *Ալարիկ Ա* (370-410)- Վիզիգոթների թագավորը: Սա ավերեց Հռոմեական կայսրության բալկանյան շրջանները և գրավեց Իտալիան: Իր զորքերով Հռոմի այս կողոպտիչը ցնցեց Արևմուտքի հռոմեական ամբողջ կայսրությունը: Ալարիկ Բ-ն՝ Վիզիգոթների մյուս թագավորը, 507 թ. իր բանակներով ջախջախվեց և սպանվեց Ֆրանկների Կլովիս թագավորի կողմից, որից հետո վիզիգոթները ստիպված եղան քաշվել Իսպանիա:

33. *Մեծն Թեոդորիկ* (454-526)- Օստրոգոթների թագավորը: Մեծանալով Կ. Պոլսում և ներծծված հունահռոմեական մշակույթով՝ նա որոշ ժամանակ վերածնեց Արևմուտքի Հռոմեական կայսրությունը: 493 թ. Օդոակրից գրավելով Իտալիան՝ դարձավ ամբողջ թերակղզու տերը: Նա փորձեց միավորել հռոմեացիներին և գոթերին, բայց հաջողություն չունեցավ: Նրա իշխանության օրոք Ռավեննան դարձավ հիասքանչ մայրաքաղաք:

34. *Օդոակր* (434-493)- Սկանդինավյան ծագումով գերմանական ժողովրդի թագավոր: 476 թ. նա գահազուրկ արեց Ռոմուլոս

Աուգուստուլին կայսրին և վերջ տվեց Արևմուտքի Յոնեմեական կայսրությանը: Արևելքի Ջենոն կայսրը, մտահոգված նրա զորությամբ, նրա դեմ ուղարկեց Մեծն Թեոդորիկին: Օդոակրը իր զորքով պաշարվելով Ռավեննայում՝ անձնատուր եղավ և սպանվեց:

35. **Բռնախոս** (480-524)- Յոնեմեացի փիլիսոփա և քաղաքական գործիչ: Իր գիտական և փիլիսոփայական ուսումն ստացել է Աթենքում ու Մեծն Թեոդորիկի օրոք դարձել հյուպատոս: Սակայն մեղադրվելով դավադրության և մոգության մեջ՝ բանտարկվել է: Սպանվելուց առաջ գրել է իր գլխավոր գործը՝ «Փիլիսոփայության մխիթարանքի մասին»: Լինելով հունական մշակույթի ժառանգորդ՝ նա աշխատում էր այն փոխանցել արևմտյան աշխարհին: Լատիներեն լեզվով թարգմանել և մեկնաբանել է Արիստոտելի աշխատությունները:

36. **Պրիսպ**- Արգասավորության աստված հունական դիցաբանության մեջ, Դիոնիսիոսի և Աֆրոդիտեի որդին, որին հանձնված էր այգիների և մրգաստանների պահպանությունը:

37. **Վեներա**- Բուսականության և այգիների շատ հին աստվածուհի, որ պաշտվել է Իտալիայում: Բ դարում (մ. թ. ա.) նույնացվել է Յունաստանում սիրո և գեղեցկության աստվածուհի Աֆրոդիտեի հետ:

38. **Բակոս**- Յոնեմեացիները նախընտրաբար այս անունով են պաշտել Դիոնիսոսին: Դիոնիսյան տոները Յոնեմեացիներին շվարտանքների և զեղությունների ձևով:

39. **Օդիս**- Յին գերմանացիների գլխավոր աստվածը Ասերի ընտանիքից: Օդիսն իշխում էր պատերազմի, իմաստության և բանաստեղծության վրա: Նա միականի էր և ընդունում էր մարդկային զոհեր:

40. **Մաքսիմին Ա**- Յոնեմեացի կայսր, որ եղել է թրակիացի նախկին հովիվ և ապա դարձել հեծելազորի բարձրագույն սպա: Նա կայսր հռչակվեց իր բանակի կողմից Ալեքսանդր Սևերիոսի սպանությունից հետո: Լինելով ռազմական առաջնորդ՝ հաջողությամբ մարտնչեց ֆրանկների դեմ, սակայն հետագայում սպանվեց իր սեփական զինվորների կողմից:

41. **Հուլիանոս** (331-363)- Հռոմեացի կայսր՝ Մեծն Կոստանդինացու եղբոր որդին և Կոստանոս Բ-ի հաջորդը: Նա ծանոթ է «Ուրացող» մականունով, որովհետև ուրացավ քրիստոնեական կրոնը և դրանով նպաստեց հեթանոսության վերածննդին: Սպանվեց պարթևների դեմ մղված մի արշավանքի ժամանակ:

42. **Բասաղ**- Ըստ քանանացիների և փյունիկեցիների՝ ամպրոպի, անձրևի և արգասավորության աստվածը, որի պաշտամունքը կատարվում էր բարձրադիր մի վայրում:

43. **Իսմայիլ**- Աստվածաշնչում Աբրահամի և նրա եգիպտացի սպասուհու՝ Հագարի որդին: «Ծննդոց» գրքում հիշատակված մի ավանդության համաձայն, նա եղել է անապատաբնակ արաբների նախահայրը, որոնք նրա անունով կոչվել են իսմայելացիներ:

44. **Կապիտոլ**- Հռոմի բլուրներից մեկը, որի գագաթին գտնվում էր Յուպիտերի տաճարը:

45. **Թեբայիդ**- Այս անունով էր կոչվում հին Եգիպտոսի հարավային մասը, որի մայրաքաղաքն էր Թեբեսը: Մեծ թվով քրիստոնյաներ հալածանքներից փախչելով՝ ապաստանեցին Թեբեսի արևելյան և արևմտյան կողմերում գտնվող անապատներում՝ այնտեղ ապրելու համար ճգնավորական կյանքով:

46. **Անդրե Դասիե** (1651-1722)- Ֆրանսիացի հմուտ մտավորական: Թարգմանել է հռոմեացի և հույն հեղինակների բազմաթիվ գործեր, հատկապես Հորացիոսի և Արիստոտելի ստեղծագործությունները: 1708 թ. նշանակվել է արքայական գրադարանի գրադարանավար: Ընտրվել է ֆրանսիական ակադեմիայի անդամ:

47. **Հեթմես**- Հունական աստված՝ Չևսի և Մայայի որդին, Յուպիտերի պատգամաբերը: Նույնացվել է հռոմեացիների Մերկուրիոս աստծու հետ: Անձնավորում էր հատկապես խորամանկությունն ու ճարպկությունը: Բազմաթիվ են նրա հատկանիշները. նա աստվածն էր գողության և ստի, հովանավորն էր հռետորների և վաճառականների, հնարողը կշռի ու չափի և այլն:

48. **Ֆրանսիս Բեկոն** (1561-1626)- Անգլիացի նշանավոր փիլիսոփա և քաղաքական գործիչ: Գիտությունները դասակարգելիս նա

մեկնում էր այն սկզբունքից, որ բնությունը ճանաչելու և հասկանալու համար պետք է հիմնվել փորձարկումների վրա: Նա հաստատում էր, որ փորձարկման կանոնները նախապես ճշտելով միայն կարելի է հասնել ճշմարիտ գիտությանը՝ «պատճառների գիտությանը»:

49. *Մոնտեսկյո* (1689-1755)- Ֆրանսիացի ականավոր գրող: Հայտնի է նրա «Պարսկական նամականի» փիլիսոփայական վեպը, որը երևակայական մի նամակագրություն է Եվրոպա ժամանած երկու պարսիկների միջև, որոնց տպավորությունները իբրև օտարականների, առիթ ծառայեցնելով՝ հեղինակը քննադատել է իր ժամանակի ֆրանսիական հասարակության, մասնավորապես փարիզյան բարքերը: Մոնտեսկյոյի «Օրենքների ոգու մասին» աշխատության հիման վրա հետագայում կազմվեց 1791 թվականի Ֆրանսիայի սահմանադրությունը լիբերալ-սահմանադրական կառուցվածքով: 1734 թ. Մոնտեսկյոն հրատարակեց պատմական մի էսսե «Նկատողություններ հռոմեացիների մեծության և նրանց անկման պատճառների մասին» վերնագրով:

50. *Ժան Ժակ Ռուսո* (1712-1778)- Շվեյցարական ծագումով ֆրանսիացի գրող և փիլիսոփա: Դիդրոյի առաջարկությամբ աշխատակցել է ֆրանսիական Հանրագիտարանին երաժշտության մասին զանազան հոդվածներով: Նրա նշանավոր երկերն են՝ «Ատենախոսություն գիտությունների և արվեստների մասին», «Ատենախոսություն անհավասարության ծագման մասին», որտեղ ապացուցում է, որ բնական վիճակից հասարակական վիճակի անցնելը քայքայում է ներդաշնակությունը մարդկանց միջև, և որ օրենքներով պաշտպանված սեփականությունը ծնում է ընկերային անհավասարություն և անարդարություններ: Այնուհետև նա հաջորդաբար հրատարակում է «Նոր Էլիզա», «Ընկերային դաշինք», «Էմիլ» մանկավարժական վեպը և վերջապես «Խոստովանություններ» ինքնակենսագրական աշխատությունը, որը, ըստ հեղինակի, նրա «հոգու պատմությունն է»: Ռուսոն եղել է անհատի ազատության երգիչը, վերանորոգել է դաստիարակության և քաղաքականության մասին գոյություն ունեցող գաղափարները և նախապատրաստել

18-րդ դարի ֆրանսիական Յեղափոխության բերած մեծ փոփոխությունները՝ ազդվելով Կանտի փիլիսոփայությունից:

51. *Պասկալ* (1623-1662)- Ֆրանսիացի ականավոր գրող, փիլիսոփա, մաթեմատիկոս և ֆիզիկոս: 1654 թ. Պասկալը ունենում է հոգեկան հափշտակության մի գիշեր, որի հետևանքով որոշում է իր կյանքը նվիրել քրիստոնեական հավատին և բարեպաշտությանը: Լինելով խորապես քրիստոնյա՝ նա ձեռնամուխ է լինում գրելու ընդարձակ մի «Ձատագովություն քրիստոնեական կրոնի մասին», որ դժբախտաբար չի կարողանում ավարտել իր կանխահաս մահվան պատճառով: Այդ աշխատությունից հրատարակվել են առանձին հատվածներ «Մտածումներ» վերնագրով:





## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Շատրքրիանի կյանքը և գրական, քաղաքական գործունեությունը .....	5
Բարոյական արատներ և առաքինություններ .....	17
Հավատի, հույսի և սիրո մասին .....	21
Բարոյական օրենքների և Տասնաբանյա պատվիրանների մասն .....	29
<b>Սուրբ Գրքի ճշմարտությունները</b>	
<i>Մովսեսի ավանդության գերազանցությունը մյուս բոլոր կոսմոգոնիաների (տիեզերածնությանց) նկատմամբ .....</i>	39
<i>Մարդու անկումը. օձը. եբրայերեն մի բառ.....</i>	44
<b>Խորհրդի էության մասին .....</b>	51
<i>Երրորդության խորհրդի մասին .....</i>	54
<i>Փրկագործության խորհրդի մասին .....</i>	61
<b>Հոգու անմահությունը՝ ապացուցված բարոյականով և գգացումով</b>	
<i>Ա. Երջանկության ցանկությունը մարդու մեջ .....</i>	71
<i>Բ. Խղճի խայթի և խղճմտանքի մասին .....</i>	75
<i>Գ. Եթե չկա հանդերձյալ կյանք, ապա չկա բարոյականություն .....</i>	79
<i>Անաստվածության վտանգը և անօգուտ լինելը .....</i>	82
<i>Անհավատությունը գլխավոր պատճառ ճաշակի և ոգու անկման .....</i>	89
<b>Հուշարձանների ավերակների մասին .....</b>	97
<i>Ա. Ավերակների գրավիչ գեղեցկությունը .....</i>	101
<i>Բ. Քրիստոնեական հուշարձանների ավերակները .....</i>	104
<i>Բարոյական ներդաշնակություններ և ժողովրդական ջերմե- նանդություն .....</i>	107
<b>Հիսուս Քրիստոսի և նրա կյանքի մասին .....</b>	115
<i>Ա. Սուրբ Գիրքը և նրա գերազանցությունը .....</i>	123
<i>Զուգահեռ Աստվածաշնչի և Հոմերոսի միջև. Համեմատության եզրեր Բ .....</i>	135
<i>Բնության երկու հեռանկարներ .....</i>	143
<i>Հայրենիքի բնագրը .....</i>	149
<i>Ինչ կլինեք այսօր մարդկային հասարակության վիճակը, եթե քրիստոնեությունը երևան եկած չլինեք երկրի վրա .....</i>	159
<b>Ծանոթագրություններ .....</b>	183

**ՇԱՏՈՔՐԻԱՆ**  
**ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՆՃԱՐԸ**  
(ընտիր հատվածներ)

*Ֆրանսերենից թարգմանեց*  
*և ծանոթագրեց Պարզև Շահբազյանը*  
*Սրբագրիչ՝ Էմիո-Դիանա Ադիբեկյան*  
*Համակարգչային աշխատանքները՝ Հրատարակչական բաժնի*

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ – 2008